«ԱԶԳ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅՐԵՆԻՔ. ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ»

ԵՐՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ (ԵՐԵՎԱՆ, 04.05.2018) ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

“NATION, STATE, MOTHERLAND, IDEOLOGY OF STATE”

THIRD INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE (YEREVAN, 04.05.2018) MATERIALS OF CONFERENCE

«НАЦИЯ, ГОСУДАРСТВА, ОТЕЧЕСТВО: ИДЕОЛОГИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ”

ТРЕТЬЯ МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ МАТЕРИАЛЫ КОНФЕРЕНЦИИ

ԵՐԵՎԱՆ YEREVAN ЕРЕВАН
2018

ՀՏԴ
ԳՄԴ
Հ

Հրատարակվում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշմամբ

Published by decisions of the Council of Faculty of History and Law of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

Опубликовано решениями Научного совета факультета истории и правоведения Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна

Հ 362 «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության գաղափարը» երրորդ միջազգային գիտաժողովի (Երևան, 04.05.2018) նյութերի ժողովածու.- Եր.: 2018.- 420 էջ:

Միջազգային գիտաժողովը նվիրված էր Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին: Նպատակն էր քննարկել քննարկել պետականության հետ առնչվող խնդիրները, զարգացնել համագործակցությունը տարբեր երկրների գիտնականների միջև: Գիտաժողովի նյութերի հրատարակումը օգտակար կլինի պատմությամբ, իրավագիտությամբ, սոցիոլոգիայով, հոգեբանությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN 978-99941-69-51-1

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Պողոսյան Սամվել - պ.գ.դ., դոցենտ, ***գլխավոր խմբագիր***), ՀՊՄՀ, Հայաստան

Փիլիպոսյան Աշոտ - պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՊՄՀ, Հայաստան

Շիրինյան Լևոն - ք.գ.դ., պրոֆեսոր, ՀՊՄՀ, Հայաստան

Հովհաննիսյան Էդգար - պ.գ.թ., դոցենտ, ՀՊՄՀ, Հայաստան

Գրեկյան Երվանդ - պ.գ.դ., դոցենտ, ՀՊՄՀ, Հայաստան

Սահակյան Արմեն - ս.գ.դ., պրոֆեսոր, ՀՊՄՀ, Հայաստան

Սաբոլչ Սուրոմի – ա.գ.դ., պրոֆեսոր, Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարան, Հունգարիա

Խոսե Մանուել Սոբրինո Հերեդիա - ի.գ.դ., պրոֆեսոր, Կորունայի համալսարան, Իսպանիա

Մկրտիչյան Արտակ - ի.գ.դ., պրոֆեսոր, Կորունայի համալսարան, Իսպանիա

Յոհան Յուրգեն Տուբախ - պ.գ.դ., պրոֆեսոր, Մարտին Լյութեր համալսարան, Գերմանիա

Սոկոլովսկի Մարեկ - ս.գ.դ., պրոֆեսոր, Վարմայի և Մազուրիայի համալսարան, Լեհաստան

Սինովա Իրինա - պ.գ.դ., պրոֆեսոր, Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարան, Ռուսաստան

EDITORIAL BOARD

Poghosyan Samvel - Doctor of Historical Sciences, Associate Professor, ASPU (Chief Editor), Armenia

Piliposyan Ashot - Doctor of Historical Sciences, Professor, ASPU, Armenia

Shirinyan Levon - Doctor of Political Sciences, Professor, ASPU, Armenia

Hovhannisyan Edgar - Doctor of History, Associate Professor, ASPU, Armenia

Grekyan Ervand - Doctor of Historical Sciences, Associate Professor, ASPU, Armenia

Sahakyan Armen - Doctor of Sociological Sciences, Professor, ASPU, Armenia

Sabolch Szuromi - Doctor-Professor, Rector of Pázmány Péter Catholic University, Hungary

José Manuel Sobrino Heredia – Doctor of Law, Professor, University of A Coruña, Spain

Mkrtichyan Artak - PhD in Law, Professor, University of A Coruña, Spain)

Johann Jürgen Tubach - Doctor-Professor, Martin Luther University, Halle-Wittenberg, Germany

Sokołowski Marek - Chair of Sociology University of Warmia and Masuria in Olsztyn, Poland

Sinova Irina - Doctor of Historical Sciences, Professor, State Economic University of Saint Peterburg, Russia

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Погосян Самвел -***главный редактор***, доктор исторических наук, доцент, АГПУ, Армения

Пилипосян Ашот - доктор исторических наук, профессор, заведующий кафедрой армянской истории, АГПУ, Армения

Левон Ширинян - доктор политических наук, профессор, заведующий кафедрой политологии и истории права, АГПУ, Армения

Оганнисян Эдгар - кандидат исторических наук, доцент, декан факультета истории и правоведения, АГПУ, Армения

Грекян Ерванд - доктор исторических наук, доцент, АГПУ, Армения

Саакян Армен - доктор социоологических наук, профессор, заведующий кафедрой социологии и социальной работы, АГПУ, Армения

Саболч Суроми - доктор-профессор, ректор Католического университета им. Пазмани Петера, Венгрия

Хосе Мануэль Собрино Эредия - доктор юридических наук, профессор, Университет Ла-Корунья, Испания

Мкртчян Артак - доктор юридических наук, профессор, Университет Ла-Корунья, Испания

Иоганн Юрген Тубач - доктор-профессор, Университет Мартина Лютера, Галле-Виттенберг, Германия

Соколовски Марек - доктор социоологических наук, профессор, кафедра социологии Университета Вармии и Мазурии в Ольштыне, Польша

Синова Ирина- доктор исторических наук, профессор, кафедры международных отношений, медиалогии, политологии и истории Санкт-Петербургского государственного экономического университета, Россия

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ – СОДЕРЖАНИЕ - CONTENTS

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ
HISTORY

1. **Պողոսյան Սամվել,** Միացյալ Հայաստանի հարցը 1918 թ. վերջին
2. **Վիրաբյան Վանիկ**, ՀՀ հետախուզական ծառայության ներդրումը Զանգեզուրում Ադրբեջանի զինուժի դեմ տարած հաղթանակում (1919 թ. վերջ -1920 թ. սկիզբ):
3. **Մալոյան Արման**, Արևմտյան Հայաստանում հայոց պետականության դրսևորումների առաջացման և գոյատևման հանգամանքների շուրջ (XVIII դարի վերջին քառորդ):
4. **Ստեփանյան Խաչատուր,** Հայաստանի անկախության գաղափարի քննարկումը ՀՅԴ և ՌԱԿ պաշտոնաթերթերում (1920-1930-ական թթ.):
5. **Պողոսյան Էդիկ,** Վ. Ա. Պոտոյի «Ղարաբաղի առաջին կամավորները ռուսական տիրապետության հաստատման շրջանում: (Մելիք-Վանի և Հակոբ-Յուզբաշի Աթաբեկովները)» ուսումնասիրության հայագիտական նշանակությունը:
6. **Ծատրյան Հարություն**, Սիմոն Վրացյանի քաղաքական դիմագիծը՝ ըստ «Մշակ», «Ժողովուրդ» և «Յառաջ» լրագրերի հրապարակումների. քաղաքական իմիջի դրսևորումը հայկական մամուլում 20-րդ դարասկզբին:
7. **Հովհաննիսյան Էդգար,** Երևանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:
8. **Եփրիկյան Արմինե,** Կաթոլիկ համայնքի դերակատարումը Նախիջևանում XVII-XVIII դարերում:
9. **Մկրտչյան Գևորգ**, Պատմական Հայաստանում պետություն-եկեղեցի հարաբերությունների մի քանի հարցեր:
10. **Հովհաննիսյան Գայանե**, Ցեղասպանության հոգեբանական հետևանքները և նժդեհյան գաղափարախոսության սկզբնավորումը:
11. **Մարտիրոսյան Արման,** Ֆրանսիայի մանդատային քաղաքականությունը Սիրիայում 1920-1930-ական թթ. և թուրք-սիրիական սահմանային հիմնախնդիրները:
12. **Նազարյան Հայկ**, Ուժերի ռազմավարական հարաբերակցությունը Մերձավոր Արևելքում 1916 թվականին և «Սայքս-Պիկո-Սազոնով» համաձայնագրի ձևավորումը:
13. **Гаспарян Ангелина**, В поисках исторической правды (На основе рассмотрения исторических и современных реалий армяно-российских отношений).
14. **Բադալյան Միքայել**, Առյուծի և ցուլի որսի տեսարանները ուրարտական պատկերագրության մեջ:
15. **Կոնրադ Հեյկո,** Այգեպանները պատերազմ չ'են վարում: Իհարկե վա-

րում են

16. **Johann Jürgen Tubach,** Ships and Seafaring in the Psalms of Thomas. A Contribution to the Origin of the Psalms.
17. **Grigoryan Sona,** The problem of localisation of Heartland of Biainili-Urartu according to Grigor Kapantsyan
18. **Alexander Tidemann**, Views on Apollonios of Tyana: Eusebios of Caesarea About an Alleged Divine Man.
19. **Grigor Grigoryan**, Some Considerations Concerning the Date of the Translation into Armenian of Timothy Aelurus' Refutation of the Decrees of the Council of Chalcedon known as Contra eos qui dicunt duas naturas (CPG 4575)
20. **Rocio da Riva**, Buildings and Empires: the Evidence from the Neo-Babylonian Royal Inscriptions
21. **Кузенкова Марина**, Молодежь ленинграда по оказанию помощи населению в период блокады
22. **Андриайнен Станислав**, Русская армия как инструмент модернизации закавказья в XIX в.
23. **Синова Ирина,** Роль Российской Федерации в урегулировании сирийского кризиса в 2014-2018 гг.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ЮРИСПРУДЕНЦИЯ
JURISDICTION

24. **Anselm Sabolch Szuromi,** Idoneity for Holy services since the new testament to the early period of the church
25. **José Mauel Sobrino Heredia,** Europe at the Crossroads
26. **Gabriela Oanta,** Dignity Rights and the European Union
27. **Mkrtichyan Artak**, Landlocked States and the Law of the sea.
28. **Մանուկյան Սահակ**, Փախստականի կարգավիճակ ունեցող անձանց կողմից հանրային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու հիմնախնդիրները

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
СОЦИОЛОГИЯ И ПСИХОЛОГИЯ
SOCIOLOGY AND PSYCHOLOGY

29. **Sokołowski Marek**, Polish pioneers of film education. A contribution to the history of Polish film sociology
30. **Եղիազարյան Սյուզաննա**, Հայ երիտասարդության հասարակական-քաղաքական սոցիալականացման առանձնահատկությունների փոխա-

կերպումները:

31. **Петросян Ануш,** Общественное мнение как фактор обеспечения стабильности семьи в Республике Армения.
32. **Մկոյան Գոհար, Եփրիկյան Արմինե,** Նախիջևանի պատմության լուսաբանման մանկավարժական խնդիրը դպրոցահասակների շրջանում:
33. **Виленский Игорь**, Влияет ли сокращение налогов на экономический рост? Миф или реальность?.
34. **Смолева Елена**, Межличностное отчуждение как показатель психологического состояния Российского общества.
35. **Морев Михаил,** К актуальности вопроса о формировании социального капитала в современном Российском обществе.
36. **Уханова Юлия**, Вовлеченность регионального сообщества в практики гражданского участия.
37. **Быстрянцев Сергей,** Русская интеллигенция об общественном идеале.

ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ 1918 Թ. ՎԵՐՋԻՆ

ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.դ.

Բանալի բառեր՝ *միացյալ Հայաստան, Պողոս Նուբար, Հայաստանի Հանրապետություն, Մուդրոսի զինադադար:*

1918 թ. վերջերին ակնհայտ էր Օսմանյան կայսրության պարտությունը Առաջին համաշխարհային պատերազմում, և հայ գործիչներն անհրաժեշտ էին համարում քայլեր ձեռնարկել իրականացնելու միացյալ Հայաստանի գաղափարը: Ինչպես գիտենք, 1918 թ. մայիսին ստեղծվել էր Հայաստանի Հանրապետությունը, սակայն այն ուներ չափազանց սահմանափակ տարածք և ճանաչվել էր միայն օսմանյան պետության կողմից:

Դեռևս 1912 թվականից Եվրոպայում գործող Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը 1918 թ. հոկտեմբերի 18-ին պաշտոնապես դիմեց Անտանտի երկրներին հայերին պատերազմող կողմ ճանաչելու համար[1]: Դա միջազգային իրավունքի տեսանկյունից կատարված ճիշտ և խորապես մտածված քայլ էր: Նա լավ էր պատկերացնում միջազգային այն չափանիշները, ըստ որի՝ միջազգային իրավունքի սուբյեկտ են ճանաչվում ոչ միայն ինքնիշխան պետությունները, այլև՝ ազգային-ազատագրական շարժումները՝ հանձին իրենց ղեկավար մարմինների: Այդպիսին կարող էր ճանաչվել Ազգային պատվիրակությունը կամ փաստացի գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը, որը դեռևս միջազգայնորեն ճանաչված պետություն չէր: Այսպիսով՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ հանդես գալու համար անհրաժեշտ էր, որ հայերը ճանաչվեին պատերազմող կողմ:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում ստորագրված զինադադարով թուրքերն անձնատվության ենթարկվեցին: Մի քանի հոդվածներ անմիջականորեն առնչվում էին հայկական շահերի հետ:

«Հոդված 4. Բոլոր դաշնակցային ռազմագերիները, բոլոր հայ ռազմագերիները և ներկալվածները պետք է ժողովվեն Կ. Պոլսում, որպեսզի առանց որևէ պայմանների հանձնվեն դաշնակիցներին:

Հոդված 10. Տավրոսի թունելների համակարգի գրավում դաշնակիցների կողմից:

Հոդված 11. Թուրքական զորքերը անմիջապես հետ են քաշվելու

1 Աճէմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց 1925, Աղեքսանդրիա, 1924, էջ 87:

հյուսիսարևմտյան Պարսկաստանից մինչև նախապատերազմյան սահմանը: Թուրքական զորքերն արդեն ստացել են Անդրկովկասի մի մասը էվակուացնելու հրաման, ընդ որում՝ մնացած զորքերը կհեռացվեն, եթե տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ:

Հոդված 16. Հեջազում, Ասիրում, Եմենում, Սիրիայում և Միջագետքում գտնվող բոլոր թուրքական կայազորներ պետք է հանձնվեն մոտակա դաշնակցային հրամանատարությանը, բոլոր զորքերը դուրս են բերվելու Կիլիկիայից, բացառությամբ նրանցից, որոնք անհրաժեշտ են կարգը պահպանելու համար, ինչը կարող էր որոշվել համաձայնագրի 5-րդ հոդվածով:

Հոդված 24. Հայկական վեց վիլայեթներում անկարգություններ ծագելու դեպքում, դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունք»[2]:

Փաստորեն՝ Մուդրոսի զինադադարով Հայաստանի մեծ մասը թողնվում էր թուրքական զորքերի վերահսկողության տակ, որը հետագայում հանգեցրեց Հայկական հարցի ձախողմանը: Զինադադարի պայմաններից դրական էր Կիլիկիայից թուրքական զորքերի հեռացման պահանջը, չնայած այստեղից նույնպես ամբողջապես չէին հեռանալու, ինչպես նաև Տավրոսի լեռնահամակարգի թունելների գրավումը:

Ինչպես տեսնում ենք, ոչ միայն հայկական վեց վիլայեթների հսկողությունը թողնված էր թուրքերին, այլ նույնիսկ Անդրկովկասի մի մասում կարգուկանոնի պահպանությունը իրականացնելու պատրվակով թուրքական զորքերը չէին հեռանալու մինչև «տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ»:

Այդ պայմանագրից երևացին հայերին խաբելու «դաշնակիցների» քաղաքականության առաջին քայլերը, որն ավարտվեց Լոզանով: Սակայն այս շրջանում հայ քաղաքական գործիչները դեռևս չափազանց ոգևորված էին, և նրանց թվում էր, որ մի քանի դար տևած անկախության կորստից հետո արդեն մոտ էր ազատ, անկախ, միացյալ հայրենիք ունենալու հնարավորությունը: Ցավոք, այդ գեղեցիկ հեռանկարը հետագա ամիսներին մոտենալու փոխարեն հետզհետե հեռացավ:

Հոկտեմբերի 31-ին Բեռլինում Հ. Օհանջանյանի ղեկավարած ՀՀ

2 Frederick Maurice, The Armistices of 1918, Oxford University Press, 1943, pp. 85-87. Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 537-539:

պատվիրակությունը խորհրդակցություն գումարեց, որին ներկա էին Մ. Աճեմյանը, դոկտոր Գրինֆելդը, Ավետիսյանը, Ուկրաինայում ՀՀ ներկայացուցիչ Գ. Զամոյանը: Քննարկելով միջազգային իրավիճակը, նրանք եկան այն եզրահանգմանը, որ անհրաժեշտ էր միավորել Ռուսահայաստանը և Թուրքահայաստանը միասնական անկախ պետության մեջ, որը հայտարարելու էր հավերժական չեզոքություն: Եթե միավորումը անհնար լիներ, ապա պետք է ստեղծվեր անկախ Հայաստան՝ արևմտահայկական նահանգների ու Կիլիկիայի հենքի վրա՝ ծովային ելքերով Միջերկրական և Սև ծով՝ Տրապիզոնով[3]:

Օգտվելով միջազգային բարենպաստ իրադրությունից՝ և՛ արևելահայ և՛ արևմտահայ գործիչները հետզհետե սկսում էին բարձրաձայնել միասնական և անկախ հայկական պետությունը վերականգնելու անհրաժեշտության մասին: Այդ տեսակետը պաշտպանություն էր գտնում նաև որոշ օտար քաղաքական գործիչների կողմից:

Ֆրանսիական պետական գործիչ Դենի Կոշենը, «Ֆիգարո» պարբերականում անդրադառնալով Հայաստանի ապագային, արդարացի էր համարում Կովկասից մինչև Կիլիկիա ձգվող հայկական անկախ պետության կազմավորումը[4]:

Պ. Նուբարը նոյեմբերի 7-ին և 12-ին դաշնակից տերություններին բողոքի նոտաներ հղեց Մուդրոսի զինադադարի համաձայնագրով հայկական տարածքներում կարգի պահպանությունը թուրքերին թողնելու առթիվ, նշելով, որ այդպիսով հայ գաղթականները չեն կարողանա վերադառնալ իրենց օջախները, իսկ թուրքերը կվայելեն երիտթուրքերի «արիւնռուշտ քաղաքականութեան պտուղը»[5]: Նա պահանջեց հայկական տարածքներն անմիջապես գրավել դաշնակից զորքերի և Արևելյան լեգեոնի ուժերով:

1918 թ. նոյեմբերին Պ. Նուբարը ֆրանսիական մամուլին տված հարցազրույցում ներկայացրեց այն սկզբունքները, որոնց հիման վրա պետք է լուծվեր Հայկական հարցը՝

1. Այլևս ոչ մի կապ թուրքական պետության հետ,

2. Հայկական պետությունն ունենալու էր հանրապետական վարչաձև և դրվելու էր ազատարար ազգերի պաշտպանության տակ, որոնցից մեկը ստանձնելու էր Հայաստանի խնամակալությունը մինչև այն կազմակերպվի և կարողանա ինքնուրույն գոյատևել,

---

3 Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 328:
4 «Վերածնունդ», Փարիզ, 1918, թիւ 23, էջ 447:
5 Աճէմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց 1926, Բ տարի, Աղեքսանդրիա, 1925, էջ 101:

3. Հայաստանի մեջ են մտնելու վեց վիլայեթները և Կիլիկիան: Պ. Նուբարը նշեց «ռուսական» Հայաստանի նկատմամբ որևէ պահանջ չունենալու մասին, սակայն հույս հայտնեց, որ նոր սկզբունքներ որդեգրած Ռուսաստանը, որը հայտարարել էր լեհական ու ֆինլանդական խնդիրները լուծելու մասին, այս հարցում ևս արդարացի մոտեցում կցուցաբերի[6]:

1918 թ. նոյեմբերի 30-ին Պ. Նուբարն ի լուր աշխարհի հայտարարեց «Ամբողջական Հայաստանի» անկախությունը[7]: Հայտարարության մեջ նշված էր, որ հայ ազգի միակամ փափագի համաձայն Ազգային պատվիրակությունը հայտարարում է Ամբողջական Հայաստանի (ներառյալ Կիլիկիայի – Ս.Պ.) անկախությունը: Իսկ "La Voix de l'Armenie" թերթում տպագրած հոդվածում Պ. Նուբարը շեշտեց «Թուրքա» և «Ռուսա» Հայաստանների միավորմամբ Միացյալ Հայաստանի ստեղծման կենսական անհրաժեշտությունը: «Հայաստանը պետք է ըլլայ մէկ, ամբողջ, ազատ, անկախ,- գրում էր նա,- այս է ահա Հայ արիւնոտ դատի միակ արդար լուծման միակ հաստատուն գրավականը»[8]:

Այդ սկզբունքները Պ. Նուբարը զարգացրեց 1918 թ. դեկտեմբերին հրապարակած «Հուշագիր Հայկական հարցի մասին» գրքույկում[9]: Նա անհրաժեշտ էր համարում վեց վիլայեթներից, Կիլիկիայից ու Մարաշի սանջակից կազմել հայկական պետություն, որը մինչև վերջնական կազմակերպվելը կդրվեր որևէ պետության խնամակալության տակ: Պ. Նուբարը նշում էր, որ այդ պետությանը կմիանար նաև Արարատյան Հանրապետությունը, և Հայաստանը պատնեշ կհանդիսանա պանթուրքիզմի ճանապարհին:

Նա շատ դժգոհ էր Անտանտի երկրների գործողություններից, որոնք արդեն հակասում էին նախկինում տրված խոստումներին[10]:

Այսպիսով՝ Ազգային պատվիրակության նախագահը հետզհետե դնում էր միացյալ հայկական պետականության ստեղծման գործընթացի սկիզբը, սակայն հետագա իրադարձությունները թույլ չտվեցին իրականացնել հայ ժողովրդի դարավոր իղձը և կազմավորել ընդարձակ ու կենսունակ անկախ պետություն:

1918 թ. դեկտեմբերի 10-ին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբե-

6 «Վերածնունդ», 1918, թիւ 21-22: «Ճակատամարտ», 1919, թիւ 43:
7 ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 46, թ. 1: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 58:
8 «Ճակատամարտ», 1919, թիւ 40:
9 Memorandum on The Armenian Question. Presented by the Armenian National Delegation. Paris. 1918.
10 ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 46, թ. 1:

րությունների հանձնաժողովի նախագահ Հենրի Լոջը ԱՄՆ կոնգրեսի քննարկմանը ներկայացրեց բանաձև Անկախ Հայաստանի ստեղծման մասին: Հայաստանի կազմի մեջ էին մտնելու Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի բոլոր հայկական տարածքները՝ Կիլիկիայով հանդերձ: Նորանկախ պետության հովանավորությունը սենատորն առաջարկում էր, որ ստանձնի ԱՄՆ-ը[11]:

Ինչպես տեսնում ենք, Հ. Լոջը առաջարկում է հայկական միասնական պետության մեջ մտցնել ոչ միայն ռուսական և թուրքական, այլ նաև Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայկական տարածքները: Պետք է խոստովանել, որ հայ գործիչներից որևէ մեկը նման ձգտումներ դեռ չէր բարձրաձայնել: ԱՄՆ գործիչներից շատերն էին հետաքրքրված վերցնելու մեծ Հայաստանի հովանավորությունը: Նրանք հասկանում էին, որ Հայաստանը տնտեսական ու ռազմավարական առումով կենսունակ ու պաշտպանված լինելու համար պետք է զբաղեցներ ամբողջ հայկական լեռնաշխարհը և Կիլիկիան:

Այսպիսով՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո բավական իրատեսական էր թվում հայկական բոլոր տարածքների միավորմամբ պետականության ստեղծումը: Սակայն հետագա իրադարձությունները, հատկապես Անտանտի դաշնակից տերությունների իմպերիալիստական նկրտումները, հակասություններն ու մրցակցությունը, թույլ չտվեցին ստեղծելու միասնական հայկական պետություն:

SUMMARY

QUESTION OF THE UNITED ARMENIA AT THE END OF 1918

SAMVEL POGHOSYAN

After the defeat of Turkey in the First World War, Armenian politicians began to voice the need to restore a united and independent Armenian state. They considered it necessary to unite Eastern and Western Armenias, as well as Cilicia in a unified independent state, which would declare eternal neutrality. However, subsequent events, especially imperialist ambitions, controversies and rivalries of the Allied Powers, did not allow the creation of a united Armenian state.

Key words: *United Armenia, Boghos Nubar, Republic of Armenia, Mudros Armistice.*

11 Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 58:

РЕЗЮМЕ
ВОПРОС О ОБЪЕДИНЕННОЙ АРМЕНИИ В КОНЦЕ 1918

САМВЕЛ ПОГОСЯН

После поражения Турции в Первой мировой войне армянские политики стали говорить о необходимости восстановления единого и независимого армянского государства. Они сочли необходимым объединить Восточную и Западную Армению, а также Киликию в единое независимое государство, которое объявит вечный нейтралитет. Однако последующие события, особенно империалистические амбиции, споры и соперничество союзных держав, не позволили создать объединенное армянское государство.

Ключевые слова: *Объединенная Армения, Погос Нубар, Республика Армения, Мудрос скоеперемирие.*

ՀՀ ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԻՆՈՒԺԻ ԴԵՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ (1919 Թ. ՎԵՐՋ -1920 Թ. ՍԿԻԶԲ)

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ
ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.դ.

Բանալի բառեր՝ *Հայաստանի Հանրապետություն, Զանգեզուրի գավառ, Գ. Նժդեհ, ադրբեջանական բանակ, հայկական հեւրախուզական ծառայություն, կապիտան Տ. Դեվոյանց:*

Արխիվային փաստաթղթերով և այլ վավերագրերով (չնայած և բավականին սուղ) հաստատվում է այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության հակահետախուզությունն իր կադրուժը և ներկայացուցիչներն ուներ Հայաստանի տարբեր շրջաններում: Ավելին, հակահետախուզության մարմինները գործում էին նույնիսկ Լեռնային Հայաստանում (Սյունիք-Զանգեզուրում), որի ղեկավարը հայտնի Յապոնն էր (Արմենակ Հովհաննեսի Պարոնյանը), իսկ աշխատակիցն էր Ավետիս Դադայանցը[12]:

Հետախուզական բաժանմունքի 1919 թ. նոյեմբերի ամփոփա-

12 Տե՛ս ԵՖ ՄՆՒՈՒ - XXI век.-1998, No 07-08, сентябрь-октябрь, стр. 8 - 13, ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 131, թ. 24:

գրերից մեկում տվյալներ են հաղորդվում Ադրբեջանի իշխանությունների մեքենայությունների մասին հայաբնակ տարածքների բնակչության նկատմամբ, և մասնավորապես ակտիվ նախապատրաստությունների մասին Զանգեզուրի վրա հարձակվելու համար, ինչի համար դոկտոր Սուլթանովը ձգտելով «խաղաղ» ճանապարհով նվաճել Զանգեզուրը, երեք լեզուներով թռուցիկներ էր տարածել՝ կոչ անելով միանալ Ղարաբաղին[13]: 1920 թ. մարտի 20-ի ամփոփագիրը դարձյալ փաստում է Ադրբեջանի կողմից իրականացվող հակահայկական քաղաքականության մասին, նշելով, որ գեներալ-մայոր Նովրուզովի գլխավորությամբ էքսպեդիցիոն կորպուս է ուղարկվել Զանգեզուր՝ մոտ 5000 հոգի (երեք զորատեսակի)՝ ունենալով 6 դաշտային, 8 լեռնային թնդանոթներ[14]: Ադրբեջանը համառորեն ձգտում էր տիրել նաև Զանգեզուրին, ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով, կաշառելով տեղական թաթարական առաջնորդներին, երբեմն էլ՝ դիմելով Թուրքիային: Այսպես, 1919 թ. հոկտեմբերի 20-ին Հետախուզական բաժանմունքը հաղորդում է, որ սեպտեմբերի վերջերին ադրբեջանական զորքերի և տեղական ավազակախմբերի կողմից հարձակում է ձեռնարկվել Զանգեզուրի վրա՝ Կարաբաբա, Ագարակ, Եղվարդ և Ուջանիս գյուղերի ուղղությամբ, սակայն ադրբեջանական զորքերը ետ են շպրտվել, որի հետևանքով սկսվել է դասալքություն, ուստի Ադրբեջանի կառավարությունը որոշում է կայացրել նոր զորահավաք անցկացնել[15]:

1919 թ. նոյեմբերի 9-ի հետախուզական ամփոփագիրն էլ ավելի ցայտունորեն է ներկայացնում Ադրբեջանի մեքենայությունները Զանգեզուրում, որն այնտեղ է ուղարկում նոր մեծաքանակ ուժեր՝ 1 հետևակային դիվիզիա (3 գունդ՝ ամեն մեկում՝ մոտ 3-5 հազար մարդ), 2 հեծյալ գունդ (800-ական սվին), 8 թեթև, 4 հաուբիցային թնդանոթ և 400 հեծյալ քուրդ, զորքերին գլխավորում էր գեներալ Ալի աղա Իսմայիլ օղլի Շիխլինսկին[16], իսկ հեծելազորը՝ գեներալ Եդիգարովը, իսկ քրդերին՝ դոկտոր Սուլթանովի եղբայրը՝ Սուլթան բեկ Սուլթանովը, հայտնելով, որ ասկյարների թիվը հասնում է 400-ի՝ 3 գնդացիրներով և 2 լեռնային թնդանոթներով[17]: 1919 թ. նոյեմբերի 4-ի ամփոփագիրը դարձյալ փաստում է Ադրբեջանի հետամտած

13 Տե՛ս ՀԱԱ,, Ֆ.Պ. -199, ց. 1, գ. 73 (71), թ. 168:
14 Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 33, թ. 12:
15 Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, թ. 29:
16 Շիխլինսկի Ալի աղա Իսմայիլ օղլի [23 ապրիլի, 1865 թ. - 18 օգոստոսի, 1943 թ.], Ադրբեջանի բանակի գեներալ:
17 ՀԱԱ, ֆ. Պ- 204, ց. 1, գ. 133,, թ. 31:

նպատակների մասին Զանգեզուրի շրջանում, ընդհանուր եզրեր ձեռք բերելով Թուրքիայի հետ իրենց համատեղ ռազմավարության իրականացման խնդրում[18]: Կապիտան Մուրադյանը նշում էր, որ ձգտելով հարձակվել Զանգեզուրի վրա, դոկտոր Սուլթանովը զանգեզուրյան գործողությունների ղեկավարությունը վստահել է Էնվեր և Նուրի փաշաներին՝ փորձելով կապ հաստատել Ադրբեջանի և Թուրքիայի միջև[19]: Ահա այսպիսի պատկառելի ուժեր էր օգտագործում Ադրբեջանը Զանգեզուրին տիրելու համար, որը ՀՀ տարածքային ամբողջականության և աշխարհաքաղաքական միջանցքի, հետևապես՝ ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից կարևոր ռազմավարական նշանակություն ուներ: Կապիտան Վ. Մուրադյանը 1920 թ. մայիսի 20-ի գաղտնի ամփոփագրում հայտնում էր, որ Ադրբեջանի գործողությունները ուղղորդվում են Բայազետից եկած թուրք գործակալների կողմից, որոնք ձգտում են ՀՀ տարածքում ապրող մահմեդականներին դրդել ընդհանուր ապստամբության[20]:

Հարկ է ընդգծել, որ միանգամայն անընդունելի են և ապացուցողական առումով թույլ, ոչ ճշգրիտ և միակողմանի այն պնդումները, որոնք հանգում են նրան, որ մերկապարանոց ժխտեն ՀՀ հատուկ ծառայությունների գոյությունը և ծավալած որոշակի գործունեությունը, չնայած մեր իսկ կողմից նշված ՀՀ հետախուզական բաժանմունքի սխալներին և սայթաքումներին, որոնք բնորոշ պետք է լինեին կայացման գործընթացներ ապրող հայկական պետությանն ամբողջությամբ վերցված, և դրանք սքողելու կամ առավել ևս մերկապարանոց ժխտելու մտադրություն ամենևին էլ չկա: Հետևապես, ամփոփելով ասվածը, մենք մերժելի ենք համարում «պնդումները» հայկական հետախուզական ծառայության ինչպես չգոյության, միանշանակ գործության և բացարձակ անգործության վերաբերյալ, այնպես էլ, վերջիններիս լիովին անհասու լինելու մասին «թշնամի Թուրքիայի ծրագիրներուն և հաշիվներուն», թուրքական զորուժի քանակական կազմի և պլանների վերաբերյալ, որ Թուրքիայում Հայաստանի Հանրապետությունը գործակալներ չուներ, և այլն, ինչը միանշանակ և բազմաթիվ փաստերի անառարկելի ճնշման տակ ժխտվում է մեր կողմից հրապարակված մենագրություններում: Չնա-

18 ՀԱԱ, Ֆ.Պ - 276, g. 1, գ.183, թ. 53. «Յառաջ», 10 դեկտեմբերի, 1919 թ., «Азербайджань», 6 декабря, 1919 г.

19 Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ер., изд-во АН Армении, 1992, с. 350:

20 Там же, с. 386:

յած արտահայտված տեսակետների որոշ ռացիոնալ հատիկներին, դրանք երբեմն այնքան հակասական են և նպատակային առումով անորոշ, որ կարող են շփոթության մեջ գցել ոչ փորձառու ընթերցողներին, և թյուր կարծիք ստեղծել Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի, և մասնավորապես հետախուզական ծառայության պատմության վերաբերյալ, բերելով սխալ եզրահանգման հայկական պետականության չգոյության վերաբերյալ: Անտեսելով Ադրբեջանի, Վրաստանի հանրապետությունների և այլ ուժերի դեմ երիտասարդ հայկական հետախուզության գործունեության վերաբերյալ առկա փաստերը, և հատկապես բանակաշինության բնագավառում անհաջողությունների և սայթաքումների, հայկական բանակի պարտությունների պատճառահետևանքային արմատները, փնտրելով միմիայն ՀՀ հետախուզական ծառայության գործունեության ծալքերում, ինչը չի կարելի անել՝ հենվելով գրեթե բացառապես հուշագրային բնույթ կրող և այլ լիովին չստուգված աղբյուրների վրա:

Ըստ այդմ անելով կամայական եզրահանգումներ բանակային հիմնախնդիրների և հետախուզության գործունեության վերաբերյալ, ինչպես կարելի է անտեսել այն հանգամանքը և ակներև պատմափաստը, որ, ինչքան էլ չկազմակեպված և թույլ լիներ հայկական հետախուզությունը, ինչպես պնդում են ՀՀ հետախուզական ծառայութունների չգոյության որոշ «կողմնակիցներ» և պարզապես «պոլիտիկան ժխտարարներ», հենց կայացման բարդ և ոչ միանշանակ գործընթացներ ապրող, սովի և քայքայման գործոնների դժվարին պայմաններում ծնվող և համառորեն կայանալու ձգտող հայկական հետախուզական ծառայության ջանքերով է որոշակիորեն, գործնականում հաջողվել կանխել Ադրբեջանի Հանրապետության ագրեսիան Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից սկսած մինչև 1920 թ. ապրիլը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած տևական և համառ մարտերում[21] (նշված հիմնախնդիրը հայ պատմագիտության բոլորովին, բացարձակապես չուսումնասիրված հարցերից է), ինչի շնորհիվ նաև հայկական զինուժը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ կարևոր և վճռորոշ հաղթանակ տարավ և դրանով իսկ ապահովագրեց ՀՀ տարածքային անձեռնմխելիությունը Հայաստանի ռազմավա-

21 1919 թ. վերջին ադրբեջանական 2 զորաբանակ՝ գեներալներ Ալի աղա Իսմայիլ Աղա օղլի Շիխլինսկու (23 ապրիլի, 1865 թ. - 18 օգոստոսի, 1943 թ.) և Սամեդ բեկ Սադիխ բեկ օղլի Մեհմանդարովի (16 հոկտեմբերի, 1855 թ. – փետրվար,

րական տեսանկյունից այդ կարևոր տարածքային սահմանահատվածում: Ինչպես պարզ է դառնում հայտնի հայ հետախույզ Տ. Դեվոյանցի հուշագրությունից, որը հալած յուղի տեղ չենք ընդունում, սակայն անտեսել էլ չենք կարող, քանզի այն բացահայտորեն վկայում է հայկական հետախուզության օգտաշատ գործունեության մի չափազանց կարևոր փաստի՝ պատմադրվագի մասին, որն ըստ էության ուղղակիորեն և գործնական առումով որոշակիորեն նպաստել է Գ. Նժդեհի[22] գլխավորությամբ խիզախող Հայոց զորքին ջարդել և վտարել Ադրբեջանի ագրեսոր բանակին Զանգեզուրից, ինչպես դա ժամանակին արել է անկոտրում հայրենասեր զինուժը Դավիթ Բեկի գլխավորությամբ: Այս կապակցությամբ Տ. Դեվոյանցը շատ հստակ պնդում է. «Հայաստանի հետախուզական բաժանմունքը 200,000 րուբլիով կաշառեց Նժդեհի դէմ գտնուող Ազրբէյջանի բանակի սպայակոյտի պետին, որը դասաւորեց իր զօրքերը, թնդանօթները եւ գնդացիրները մեր ուզած ձեւով եւ, երբ կռիւը սկսուեց, Նժդեհի ուժերը ջախջախեցին Ազրբէյջանեան շատ աւելի ուժեղ բանակը, գրաւեցին կամ ոչնչացրին թշնամու ուժեղ հրետանին եւ գնդացիրները:

1931 թ.) հրամանատարությամբ [Шихлинский А., Мои воспоминания, Баку, Азернешр, 1984: Ибрагимов Д., Генерал Али Ага Шихлинский, Баку, Азер, гос. изд-во, 1975], ներխուժեցին Զանգեզուր: Գ. Նժդեհը Գորիսի տակ կազմակերպեց հակագրոհ, ...թշնամին խուճապահար փախուստի դիմեց դեպի Ավդալար [այժմ՝ Լաչին]: Այս պարտությունից հետո ադրբեջանցիները մինչև 1920 թ. ապրիլը չհամարձակվեցին հարձակվել Զանգեզուրի վրա: Ադրբեջանը օգտագործեց նաև թուրքական ուժերը, որոնք 1920 թ. ապրիլին Նուրի փաշայի գլխավորությամբ փորձեցին գրավել Կապանը, սակայն ջախջախիչ պարտություն կրեցին Որոտանի կիրճում: Ապրիլի վերջերին Նժդեհը ոչ միայն ետ մղեց թշնամու բոլոր գրոհները, այլև Դրոյի հետ անցավ Արցախ և օգնություն հասցրեց հերոսական արցախահայությանը// Տես Մելքոնյան Ա., Հայոց պատմություն. Դասախոսությունների ձեռնարկ, Եր., «Հայագիտակ», 1998, էջ 217. Տես Դանիելյան Է. Լ., Մելքոնյան Ա. Ա., Հայոց պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, «Զանգակ-97», 2008, էջ 297-299: - Հենց այս իրադարձությունների կապակցությամբ և Զանգեզուրում 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից սկսած մինչև 1920 թ. ապրիլը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած տևական և համառ մարտերի ընթացքում Արսեն Շահմազյանի, Գարեգին Նժդեհի և այլ ազգային նվիրյալների, անվանի ռազմական գործիչների ծավալած հերոսական գործունեության կապակցությամբ վերն արծարծվում է հայ պատմագիտության բացառապես չլուսաբանված և անհայտ էջերից մեկը՝ կապված հայկական հետախուզության, և առաջին հերթին այն ուղղորդող ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր Շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի դերակատարման հետ Հայաստանի Հանրապետության համար չափազանց կարևոր այդ իրողություններում, ինչն ամենևին էլ ստվեր չի գցում նշանավոր զորավար Գարեգին Նժդեհի ռազմաքաղաքական գործունեության վրա. - Վ. Վ.

22 Նժդեհ - Գարեգին Եղիշեի Տեր-Հարությունյան (1.01.1886 - 21.12.1955 թթ.) – Ազգային-քաղաքական, ռազմական և պետական ականավոր գործիչ, Սյունիք-Զանգեզուրի հերոսամարտի գլխավոր կազմակերպիչներից:

Ազրբէյջանի այդ շրջանի զօրքերի սպայակոյտի պետը ազգութեամբ վրացի էր:

Դրանից յետոյ էր, որ Գարեգին Նժդեհը դարձաւ սպարապետ...»[23]:

Որպեսզի տպավորություն չառաջանա, որ մենք մի կողմից պահանջում ենք քննադատական վերաբերմունք հուշագրական գրականության նկատմամբ, իսկ մյուս կողմից ինքներս ենք վկայակոչում միայն հենց այդ բնույթի աղբյուրները, վերոնշյալ վկայությունները հաստատելու համար դիմենք նաև արխիվային փաստերի օգնությանը: Արխիվային մի շարք կարևոր փաստաթղթեր օգնում են լույս սփռել ակնհայտորեն անբավարար կամ ավելի ճիշտ բոլորովին չուսումնասիրված հիմնախնդիրների վրա, դրանով իսկ հաղթահարելով մի շարք քարացած կաղապարամտքեր, կաղապարացված եզրահանգումներ ու դատողություններ:

Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական կցորդի, ասել է թե՝ հետախուզության գծով գործերի կոորդինատորի և ղեկավարի՝ գեներալ-մայոր Հովսեփ Արտեմի Քիշմիշյանի հետ կապված առաջին իսկ փաստաթղթերը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հենց վերը ներկայացված հարցադրումների տեսանկյունից, չնայած իրենց մեջ պարունակած տեղեկատվության որոշ հակասականությանը: Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ չնայած հայկական հետախուզությունը դեռևս բավականաչափ երիտասարդ էր, անփորձ, ընդսմին էլ առաջին քայլերն էր անում լուրջ ծառայություն դառնալու ճանապարհին, սակայն դա բարոյաքաղաքական առումով խոչընդոտ չհանդիսացավ նրա կողմից հայթայթվող տեղեկատվության օգտակարության գործակցի տեսանկյունից: Ստորև բերվող փաստաթուղթը դրա լավագույն և անառարկելի ապացույցներից մեկն է, ինչը հաստատում է Տ. Դեվոյանցի վերոնշյալ պնդումը հայ հետախույզների արգասաբեր գործունեության մի հիրավի շատ հետաքրքիր պատմաէջի մասին, փաստելով նաև այն մասին, որ նրա գործունեությունն ամենևին էլ այնքան դժգույն չի եղել, ինչպես այդ մասին «փորձում են վկայել» որոշ ականատես և ժամանակակից հեղինակներ: Այսպես, Թիֆլիսում Հայաստանի հատուկ ծառայության ղեկավարը՝ Հ. Քիշմիշյանը, 1920 թ. հունվարի 17-ի իր զեկուցագրում (№ 33) ուղղված ՀՀ Զինվորական նախարարին, տեղեկացնում էր, որ լիովին վստահության արժանի անձը՝ Բոգդան Դավիդովիչ Ավան-Յուզբաշի Խան Սագ-

23 Տիգրան Դէոյեանց, Կեանքիս դրուագներից// «Հայրենիք» (Բոստոն), 1944, N0 6 (245), նոյ.- դեկտ., էջ 75:

նախսկին (որին Թիֆլիսում Հայաստանի զինվորական ներկայացուցչության շրջանում համարում էին իրենց հավատարիմ մարդ) իր կողմից ղեկավարվող վարչության հանձնարարությամբ համաձայնության գալով Զանգեզուրում գործելու «իրավունք» ստացած ադրբեջանական զորքերի ջոկատի շտաբի պետ փոխգնդապետ իշխան Էրիստովի[24] հետ, վերջինից խոստում է ստացել 200-300 հազար ռուբլու դիմաց իրենց տրամադրել ադրբեջանական բանակի շիֆրը (ծածկագիրը, գաղտնագիրը), ողջ գաղտնի գրագրությունը, ադրբեջանական զորքերի դիսլոկացիան (տեղաբաշխումը) և Զանգեզուրի վրա ենթադրվող հարձակման պլանը, պարտավորվելով նաև մարտական հրամանը կազմել իրենց համար ցանկալի իմաստով և մշակել օպերացիայի ողջ պլանը՝ համաձայն հայկական կողմի ցուցումների, միաժամանակ պահպանելով մշտական կապ, տեղյակ պահելով Ադրբեջանի բոլոր ռազմական գործողությունների մասին: Ինչպես տեսնում ենք, շատ հետաքրքիր տեղեկատվություն է, որն անշուշտ, միանշանակ չի կարելի ընդունել, չի կարելի անտեսել նաև ադրբեջանական հետախուզության նմանատիպ մտադրությունները և նախապատրաստվող ձեռնարկումները, չնայած գեներալ Քիշմիշյանը տեղեկատվության մեջ վստահորեն ավելացնում էր, որ Խան Սագնախսկին իրենց վստահեցրել էր հաղորդած տեղեկությունների հավաստիության մեջ, ավելացնելով, որ այն տեղ կհասցվի փոխգնդապետ Էրիստովի միջոցով, ընդ որում դրամը կվճարվի միայն վերոհիշյալ փաստաթղթերի ստուգումից հետո: Ըստ երևույթին, գրեթե լիովին համոզվածություն արտահայտելով, որ ադրբեջանական այս սպաներն արդեն լիովին կարելի է կաշառված կամ իրենց կողմը գրաված համարել, գեներալ Քիշմիշյանը այս խիստ հետաքրքիր զեկուցագրում նաև նշում էր, որ իր կարծիքով անհրաժեշտ է անհապաղ Թիֆլիս գործուղել կապիտան Վ. Գ. Մուրադյանին դրամի հետ միասին, որպեսզի վերջինս անմիջական հարաբերության մեջ մտնի հիշյալ փոխգնդապետ Էրիստովի հետ բոլոր հանգամանքների մանրազնին պարզաբանման համար: Քիշմիշյանը հայտնում էր, որ կապիտան Մուրադյանի գործուղման նախօրյակին անհրաժեշտ

24 Էրիստով, Էրիսթավի Քսանսկի, Ալեքսանդր Նիկոլայի (5.07.1873 թ.- 10,02.1955 թ.) – իշխան, 1917 թ. օգոստոսի 23-ից գեներալ-լեյտենանտ: Ծառայել է մենշևիկյան Վրաստանի բանակում: Մենշևիկյան կառավարության պատվիրակության կազմիմ ուղարկվել է Թուրքիա, ուր և մնացել է մինչև 1921թ., որից հետո տարագրվել է Ֆրանսիա: Տես Залесский А.К, Ктобыл кто в Первой мировой войне. Биографический энциклопедический словарь, М., изд-во «Астраль», 2—3, с. 712-713:

է հարցում անել զորքերի շտաբի պետին այն հարցերի մասին, որոնք անհրաժեշտ է տեղյակ պահել փոխգնդապետ Էրիստովին՝ 1) զորքերի թվաքանակի, 2) դրանց խմբավորումների, 3) ռազմական գործողությունների ուղղությունների, 4) օժանդակ օպերացիաների մասին: Այս հետաքրքիր զեկուցագրի վերջնամասում գեներալ Քիշմիշյանը հայտնում էր, որ կապիտան Մուրադյանը պետք է տեղեկացվի իր աշխատանքի համար անհրաժեշտ մանրամասն և սպառիչ հրահանգով, որի մեջ և կմտնի բոլոր տեղեկությունների ստուգումը: Բացի այդ, Քիշմիշյանը տեղեկացնում էր, որ բանավոր զեկույցի համար այդ նպատակով իր կողմից Երևան է գործուղվել Թիֆլիսի հետախուզական ցանցի լավագույն աշխատակիցներից մեկը՝ պորուչիկ Եղիազարովը: Փաստաթղթի վրա կա նաև համապատասխան գրառում (№ 34) Զինվորական նախարարի անունով այն մասին, որ 200-300 հազար ռուբլով կարելի է ձեռք բերել շիֆրը, և ադրբեջանական զորքերի տեղաբաշխման ողջ գաղտնի գրագրությունը[25]:

Վերջին հաշվով, այստեղ կարևորն այն է, որ չնայած կարելի է մտածել, որ հայկական հետախուզությունը միամտություն ուներ հավատալու ադրբեջանական բանակի սպաներին նման կարևոր հարցերում, այնուամենայնիվ, հարկ է հատուկ արձանագրել, որ հայ հետախույզները այս պարագայում պարզապես հաջող գործեցին և ձեռք բերեցին կարևորագույն տեղեկատվություն, որ կարող էր ծառայել Հայաստանի անվտանգության և պաշտպանունակության ապահովման հարցերին [նման օրինակների կարելի է հանդիպել նաև այլ երկրների պրակտիկայում], դիմելով անգամ կաշառքի և կարևոր տեղեկատվություն ձեռք բերելու այլ միջոցների ու եղանակների՝ գործնականում ծառայեց Գ. Նժդեհի կողմից գլխավորվող զորամասերի Ադրբեջանի դեմ տարած վճռորոշ հաղթանակին: Հարկ է կրկին հավաստել, վկայակոչելով Տ. Դեվոյանցին, որ երբ Ադրբեջանը խոշոր քանակությամբ զորքեր էր կենտրոնացնում Զանգեզուրի դեմ, ի դեմս հայկական հետախուզական ծառայության, ՀՀ կառավարությունը կարողացավ ձեռք բերել ռազմավարական մեծ արժեք ներկայացնող տեղեկատվություն, ինչն օգնեց հակառակորդի հետ ռազմաքաղաքական հակամարտությունում հասնել ծանրակշիռ արդյունքների: Այդ մասին Տ. Դեվոյանցը ուղղակի շեշտում է հետևյալը. «Հայաստանի կառավարութիւնը կարողացաւ կաշառել Ատերբէյճանի զօրքերի սպայակոյտի պետին, որ մի վրացի գնդապետ էր: Վերջինս ոչ միայն տուեց մեզ Ատերբէյճանի զօրքերի դասաւորութիւնը,

25 ՀԱԱ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 184, թ. 3-4:

այլեւ դասաւորեց թաթարական զօրամասերը այնպիսի ձեւով, ո՝ր մեր բանակը շատ հեշտութեամբ ջարդեց նրանց եւ գրաւեց նրանց թնդանօթները, գնդացիրները եւ բաւական ռազմամթերք»[26]: Կարծում ենք, լրացուցիչ և հավելյալ բնույթի մեկնաբանություններն այստեղ ավելորդ են և անտեղի:

Այն, որ Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները իրենց ընձեռնված հնարավորությունների և առկա ուժերի, կադրային ռեսուրսների պայմաններում հնարավորինս ձգտել են աշխատել, ձգտել են լավագույն կողմերից դրսևորվել, դա երևում է մի շարք այլ փաստաթղթերի փաթեթի մանրազնին ուսումնասիրությունից: Այլ բան է, որ նրանք ի վիճակի չեղան քիչ թե շատ շոշափելի առավելության հասնել, հենց թեկուզ թուրքական հատուկ ծառայությունների (մասնավորապես հակահետախուզության դեմ) դեմ պայքարում, որոնք իրենց ավելի վստահ ու ապահով էին զգում, և որոշ իրավիճակներում ավելի նախաձեռնող ու համարձակ էին: Մի կողմից՝ հզոր աշխարհակալ կայսրության դարավոր փորձը (թեկուզև ասիական տարբերակի, վայրագ ու նենգ), կադրերի ու ռեսուրսների առկայությունը, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի նոր կազմավորվող պետության դերում գտնվելը, կադրային սովը, որը նա զգում էր, եղածն էլ անչափ երիտասարդ, չթրծված և օպերատիվ աշխատանքի մեծ փորձ չունեցող: Այդ ծառայությունների կայացման վրա բացասաբար էր ազդում նաև կտրվածությունը Ռուսաստանից, նրա ուսումնական ու ռազմաօժանդակ կառույցներից, աշխարհաքաղաքական մեկուսացվածությունը, ինչպես նաև իշխող արևմտամետ տրամադրությունները, որոնք հետո բումերանգի նման հարվածեցին՝ մերկացնելով թիկունքը: Եվ այնուամենայնիվ, գոյություն ունեցող հայկական հատուկ ծառայությունները ստեղծված իրավիճակում էլ փորձում էին կանխել թշնամու գործակալներին, հայրենիքի համար ծայրահեղ լարված պահերին զորավիգ լինել հանրապետության անվտանգությանը ինչպես մասնավորապես Սյունիք-Զանգեզուրում, որտեղ հայկական զորքը արժանի հակահարված տվեց ադրբեջանական հրոսակներին և Գ. Նժդեհի գլխավորությամբ տպավորիչ հաղթանակ տարան Ադրբեջանի հետ ռազմական առճակատումում, այնպես էլ 1918 թ. դեկտեմբերյան հայ-վրացական պատերազմում՝ Լոռու և հարակից շրջանների համար, Զոդ-Բասարգեչարում, Բոյուք-Վեդիում և Զանգիբասարում և Հայաստանի այլ շրջաններում:

26 Տիգրան Դէոյեանց, Կեանքիս դրուագներից// «Հայրենիք» (Բոստոն), 1945, N0 4 (249), յուլիս-օգոստոս, էջ 83:

SUMMARY
THE HISTORICAL-POLITICAL LESSONS OF THE ACTIVITY INTELLIGENCE SERVICE OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

VANIK H. VIRABYAN

In this article shows concrete practical activity of the Armenian Intelligence and Counterintelligence services in disclosing and suspending of hostile schemes of Armenian territories in 1918-1920.

This also includes the role of Armenian Intelligence Service from the end of 1919 till the beginning of 1920 in military-political events of the region of Zangezur, where under the leadership of G. Njdeh a decisive and deserving victory was gained against the Azerbaijani army, which created secure conditions for the inseparability of Zangezur and territory of the Republic of Armenian. In particular for the first time in Armenian historical science the activity of Armenian intelligence Service in this significant Zangezur events is revealed, summariyed the historical-political results and main lessons.

Keywords *- Republic of Armenia, Armenian Intelligence and Counterintelligence service, Armenian Intelligence Service, Zangezur, G. Njdeh, Azerbaijani army, victory, event, historical-political results, lesson, Captain Tigran Devoyants*

РЕЗЮМЕ
ИСТОРИКО-ПОЛИТИЧЕСКИЕ УРОКИ ДЕЯТЕЛЬНОСТИ РАЗВЕДЫВАТЕЛЬНОЙ СЛУЖБЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ВАНИК Г. ВИРАБЯН

Являясь составной частью государственной системы безопасности РА, Разведывательное и контрразведывательное отделения Главного штаба МО РА, в 1918-1920 гг. внесли достойную лепту в обеспечение национальной безопасности страны.

Армянская разведывательная служба сыграла неоценимую роль в победе армянских войск под командованием Г. Нжде в Зангезуре в конце 1919 - в начале 1920 года, что обеспечило территориальную целостность Зангезурского уезда и Республики Армения. Впервые в армянской исторической науке раскрыта деятельность армянской разведывательной службы, подитожаны историко-политические ре-

зультаты и важнейшие уроки.

Ключевые слова *– Республики Армения, Армянская разведывательная служба, Г. Нжде, Зангезур, Зангезурский уезд, армянская историческая наука, историко-политические результаты, важнейшие уроки, разведгруппа, капитан Т. Девоянц.*

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ (XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ)

ԱՐՄԱՆ ՄԱՆՈՒԿԻ ՄԱԼՈՅԱՆ
ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի
հայագիտական և սոցիալ-մշակութային առարկաների բաժնի
գլխավոր մասնագետ, պ.գ.թ.

Բանալի բառեր: *Պետականություն, կիսանկախ իշխանություն, ինքնավար համայնք, իշխանապետություն, Սասուն, Իսյան, Սավուր, Մոկս, Շատախ, Խոտորջուր, Արևմտյան Հայաստան, քրդեր, Օսմանյան կայսրություն:*

Հայոց պետականության ոսկե շղթան, պատմական հանգամանքների բերումով, թեև հաճախակի թուլացել է, բարակել, սակայն երբեք չի կտրվել: Հայ ժողովրդի կազմավորման օրից պետականության գաղափարը՝ ազգային անկախ, ինքնիշխան պետություն ստեղծելու և զարգացնելու մտայնությունն ու ձգտումը, մշտապես ուղեկցել է հայ ժողովրդին: Մեր պետականության պատմությունն ընթացել է մաքառումների ճանապարհով, ու թեև հաճախակի ունեցել ենք վերելքների դարաշրջաններ, սակայն չենք խուսափել նաև անկումներից ու վրիպումներից: Այո՛, երբեմն կորցրել ենք մեր պետական անկախությունը, ինքնիշխանությունը, ոգու արիությունն ու միասնականությունը, սակայն երբեք չենք կորցրել պետականությունը, որը, զանազան դրսևորումներով (նախարարական համակարգ, իշխանապետություն, մելիքություն և այլն), հարատևել է՝ միասնական համահայկական պետության բացակայության դժնդակ պայմաններում: Այսինքն՝ պետականությունը յուրաքանչյուր ազգի, ժողովրդի, էթնիկ հանրույթի ինքնակազմակերպման և քաղաքական անկախության անհրաժեշտության գաղափարի գիտակցումն է, իսկ պետությունը՝ այդ գաղափարի իրականացումը: Պետականության զանազան

դրսևորումները՝ խլյակների կամ մարմնացում-առհավատչյաների ձևով հարաճուն վառ են պահել պետականության գաղափարը, որպեսզի, նպաստավոր պայմանների առկայության դեպքում, անհապաղ կյանքի կոչենք, միս ու արյուն տանք մեր գիտակցության մեջ և արյան բջիջներում անթեղված ազգային երազանքին ՝ անկախ և միացյալ Հայաստանի երկունքին:

1045 թ. Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո Հայաստանի տարբեր տարածաշրջաններում իրենց գոյությունը շարունակեցին պահպանել մի շարք պետական կազմավորումներ:

Երկարատև ու արյունալի թուրք-պարսկական պատերազմներից հետո, 1639 թ. կնքված Կասրե Շիրինի պայմանագրով, Օսմանյան կայսրության վարչական սահմանների մեջ ներառվեց Հայաստանի մեծագույն հատվածը, որը հետագայում ստացավ «Արևմտյան Հայաստան» անվանումը:

Սույն զեկուցման մեջ, որը նվիրված է հայոց պատմության՝ համեմատաբար քիչ ուսումնասիրված ժամանակահատվածներից մեկին՝ XVIII վերջին քառորդին, ներկայացրել և լուսաբանել ենք Արևմտյան Հայաստանում հայոց պետականության դրսևորումների առաջացման ու գոյատևման հանգամանքները:

XVII դարում իր հզորության գագաթնակետին հասած Օսմանյան կայսրությունը XVIII դարի երկրորդ կեսին, ըստ էության, շարունակում էր գոյություն ունենալ միայն ձևականորեն: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին պետության մեջ տեղի էին ունենում նահանգային փաշաների անջատողական, կենտրոնախույս ձեռնարկումներ, անիշխանությունն ու կամայականությունները, ինչպես նաև ավազակությունը հասել էին աննախընթաց չափերի: Որոշ խոշոր ավատատերեր իրենց ձեռքում կենտրոնացրին տվյալ տարածքի ամբողջ իշխանությունը: Նրանք այնքան ինքնագլուխ էին դարձել, որ նույնիսկ սեփական բանակ ստեղծեցին[27]: Բ.Դուռն անկարող էր ճնշել այդ ապստամբությունները և գոհանում էր նրանով, երբ հասնում էր այն բանին, որ ապստամբները ճանաչում էին սուլթանի գերիշխանությունը և հարկ էին վճարում: Եգիպտոսում փաստական իշխանությունը պատկանում էր մամլյուք բեյերին: Սիրիայում սուլթանի կողմից նշանակված Ակրայի փաշա Ահմեդ Ջեզզարը նույնպես ինքնուրույն դարձավ և իր ձեռքում կենտրոնացրեց մեծ հարստություն և

27 См.: Новичев А.Д., История Турции. Том I. Эпоха феодализма (XI-XVIII века). Ленинград, 1963, с. 241; Миллер А.Ф., Мустафа паша Байрактар. Оттоманская империя в начале XIX века. Москва-Ленинград, 1947, с. 59.

ռազմական ուժ: Բաղդադում իշխում էր ծագումով վրացի Սուլեյման փաշան: Շուտով նա իր իշխանությանը ենթարկեց Միջագետքը և Բաղդադի վալիի պաշտոնը դարձրեց ժառանգական: Շնորհիվ իր ռազմական հզորության, հարստությունների, արքունիքի ճոխության՝ նա մեծարվեց որպես «Սուլեյման Մեծ»[28]: Սուլթանի առջև լուրջ դժվարություններ ծագեցին Արաբիայում, որտեղ տարածվել էր վահաբիների կրոնական աղանդը: Արդեն XVIII դարի վերջին վահաբիների իշխանությունը տարածվում էր Նեջդից մինչև Հալեպ ու Դամասկոս, Հիջազից մինչև Պարսից ծոց: Վահաբիները սպառնում էին Իրաքին, Սիրիային և Հիջազի մահմեդական սուրբ քաղաքներին[29]: Նմանօրինակ իրադրություն էր տիրում նաև Բալկաններում[30]: Հեռավոր Մաղրիբում (Ալժիր, Թունիս, Տրիպոլի) սուլթանը միայն անվանապես էր գերագույն տիրակալ ճանաչվում: Անջատողական ձգտումներ ունեին նաև Ռումելիի ավատատերերը: Նրանք երկար ժամանակ պայքարում էին կենտրոնական իշխանության դեմ: Նրանց մեջ իրենց ուժով և ազդեցությամբ առանձնանում էին Սկյուտարի սանջակբեյ Կարա Մահմուդ փաշան, այաններ Իսմայիլ Թիրսինիկլին, Յըլըկօղլու Սուլեյմանը[31], Իսմայիլ բեյը և այլք:

Նույնիսկ Փոքր Ասիայում, որտեղ ավատատերերը դեռևս բացեիբաց հանդես չէին գալիս Բ.Դռան դեմ, ստեղծվել էին փաստացի անկախ ավատատիրական կազմավորումներ: Կարաօսմանօղլուների ավատական տունն իշխում էր Իզմիրի և ամբողջ Փոքր Ասիայի Էգեյան-միջերկրածովյան շրջանում, Չափանօղլուները՝ Անկարայի, Յոզգատի, Չորումի, Ամասիայի շրջաններում[32], Բատալները՝ Սամսունի և Տրապիզոնի շրջաններում[33]: Փոքր Ասիայի արևելյան և դրան սահմանակից շրջաններում իշխում էին քուրդ ավատատերերը, Արևմտյան Հայաստանի հյուսիսային շրջանները գտնվում էին

28 Адамов А., Ирак Арабский. СПб., 1912, с. 384-385, 387-388; Mantran R., Bagdad à l'époque Ottoman. – "Arabica", Leiden, 1962, p. 315-318, см. так же: Миллер А.Ф., Мустафа паша Байрактар, с. 60.

29 См.: Адамов А., Ирак Арабский, с. 373, 392-393.

30 См.: Погодин А.Л., История Болгарии. СПб., 1910, с. 167-169; История Болгарии. Том 1, Москва, 1954, с. 238-240; Миллер А.Ф., Краткая история Турции. Москва, 1948, с. 39. См. так же: Pouqueville F. C. H. L., Mémoire sur la vie et la puissance d'Ali Pacha, visir de Janina. Paris, 1820.

31 См.: Новичев А.Д., История Турции, т. 1, с. 241; Грачев В.П., Балканские владения Османской империи на рубеже XVIII-XIX вв. Москва, 1990, с. 36-37; ավելի մանրամասն տես Uzunçarşili İ. H., Meşhur Rumeli âyanlarindan Tirsinikli İsmail, Yilik oğlu Süleyman ağalar ve Alemdar Mustafa paşa. İstanbul, 1942.

32 Տես Երեմեև Դ., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 212:

33 См.: Миллер А.Ф., Мустафа паша Байрактар, с. 61; Миллер А.Ф., Краткая история Турции, с. 40.

Էրզրումի փաշայի տիրապետության տակ: Այս ավատատերերը սեփական զորք ունեին, իրենց կողմից թիմարներ և զեամեթներ էին բաժանում. սուլթանական կառավարության նշանակած փաշաները չէին կարող միջամտել նրանց գործողություններին:

Այսպիսով՝ XVIII դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը գտնվում էր զարգացման ցածր մակարդակի վրա. դա միջնադարյան հետամնաց մի կայսրություն էր, որը հոգեվարք էր ապրում ներպետական հակասություններից, և ռազմաավատական կարգերի քայքայման փուլում գտնվող այդ պետության դժվարին դրությունից օգտվում էին կենտրոնախույս տարրերը, որոնք, կայսրության տարբեր շրջաններում, չընդունելով կենտրոնական իշխանության ներկայացուցչի գերիշխանությունը, ստեղծում էին նոր ինքնավար պետական կազմավորումներ կամ շարունակում էին կառավարել նախկին ինքնագլուխ, կիսանկախ կարգավիճակով: Այսպես, Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում XVIII դարի երկրորդ կեսին գոյություն ունեին քրդական անկախ կամ կիսանկախ իշխանություններ, ինչպես օրինակ Բիթլիսի, Խոշաբի, Ջուլամերիկի, Խիզանի, Սպարկերտի, Մոկսի, Շիրվանի, Հզուի (Խզու), Աթակի, Թերջիլի, Միհրանիի, Խուլփի, Ճապաղջուրի, Ջերմուկի, Սաղմանի, Բերդակի, Բալուի, Էկիլի, Գենջի էմիրություններն ու օջաքլըք-հյուքյումեթությունները, որոնց նկատմամբ սուլթանի իշխանությունը միայն անվանական էր. դրանք կառավարվում էին առանձին քրդական իշխանապետերի կողմից և նրանց կախվածությունը կենտրոնական կառավարությունից արտահայտվում էր նրանով, որ ամեն տարի սուլթանական գանձարան էին մուծում որոշակի հարկ և պատերազմի դեպքում սանջակբեյերի հրամանատարությամբ մասնակցում պատերազմներին[34]:

Հայկական կիսանկախ իշխանությունները պահպանվել էին հիմնականում լեռնային դժվարամատչելի շրջաններում, որտեղ թուրքական կառավարությունը և քրդական ցեղապետերը չէին կարողացել հաստատել իրենց տիրապետությունը: «Միայն մնացած էին մի քանի լեռներ, - գրում է Ա. Ալպոյաճյանը, - որոնց վրայ հայ մարդիկ զէնքի ոյժով կը պահպանէին իրենց ազատութիւնը: Այսպէս, քանի մը լեռնային փոքրիկ գաւառներու մէջ պահուած էին հայկական կիսանկախութիւններ»[35]: XVIII դարի երկրորդ կեսին իրենց գոյությունը պահպանած հայկական այդ կիսանկախ իշխանությունները Սասու-

34 Տե՛ս Բայբուրդյան Վ. Ա., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, Երևան, 1989, էջ 28, 60:

35 Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 85:

նում, Սավուրում, Իսյանում, Մոկսում, Շատախում, Ճապաղջրում, Խնուսում, Բաղլուում, Դերսիմում և այլուր[36] ընդգրկում էին ոչ մեծ տարածք և շարունակում էին հարատևել Օսմանյան պետության թուլացման, ազատատենչ ոգու և քուրդ բեկերի ապստամբությունների շնորհիվ: Չի բացառվում նույնիսկ այն հանգամանքը, որ տեղ-տեղ քուրդ բեկերը ձգտում էին օգտագործել հայկական իշխանությունների ռազմական ուժը կառավարության դեմ[37]:

Այդ հայկական իշխանություններից ամենազորեղն արծվաբույն Սասունն էր, որը թեև վարչականորեն մտնում էր Վանի էյալեթի կազմի մեջ, բայց սասունցիներն «ի սկզբանէ անտի միշտ եղեն ինքնագլուխ, ոչ ումեք ծառայելով. և ոչ ոք ի փաշայից կամ պէյից կարող գտաւ զսոսա նուաճել. սակս զօրութեան ուժոյ սոցա, և սակս ամուր վայրացն, յորս ապաստանեալ ոչ ումեք թողուն մուտս առնել: Ունին իւրեանց մասնաւոր պէյ ինքնագլուխ»[38]:

Հայկական կիսանկախ իշխանություններից էր Ամիդից հարավ, Մարդինի մոտ գտնվող Սավուրը, որի մասին Ղ. Ինճիճյանը գրում է հետևյալը. «Գաւառ ինքնագլուխ և անկախ. բնակիչք նորա ըստ մեծի մասին յազգէս հայոց, որք են արք հզօրք և սաստիկ պատերազմօղք. իսկ ի քրդաց սակաւք»[39]:

Հայկական կիսանկախ իշխանություն էր Իսյանը կամ Իսքյանը, որի բնակչությունն արդեն ուծացման փուլում էր: Իսյանն էր «գաւառ ինչ ինքնագլուխ ապստամբ ի փաշայէն Տիարպէքիրոյ: ...Են ի սմա պէսպէս գիւղօրէք, որոց բնակիչք գրեթէ առհասարակ հայք, այլ սակաւք են որք խօսին հայերէն... Իսկ հասարակ լեզու նոցա է քրդերէն»[40]: 1782 թ. Դիարբեքիրի փաշան ևս երկու այլ փաշաների հետ 4500- հոգանոց զորքով արշավում է Իսյանի վրա, սակայն 8-օրյա մարտերից հետո, 500 զինվոր զոհ տալով, ձեռնունայն վերադառնում է: 1785 թ. ավելի պակաս թվով զորք է ուղարկում, որը չի համարձակվում գրոհել և ետ է դառնում[41]:

1777 թ. Ուզուն Աբդուլլա փաշան 30000-անոց զորքով մտել էր

36 Ավելի մանրամասն տես Բադալյան Գ. Մ., Հայկական կիսանկախ իշխանություններն ու մելիքությունները Արևմտյան Հայաստանում և Լեռնային Կիլիկիայում (17-րդ դար – 19-րդ դարի 2-րդ կես) – Վէմ համահայկական հանդես, Գ (Թ) տարի, թիվ 3 (35), հուլիս-սեպտեմբեր, 2011, էջ 137-153:

37 Տես Զուլալյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 189:

38 Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 200:

39 Նույն տեղում, էջ 230:

40 Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 243:

41 Տես Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ասիոյ. Եւրոպիոյ. Ափրիկոյ. և Ամէրիկոյ, Մասն Առաջին, Ասիա, Հատոր Ա., Վէնէտիկ, 1806, էջ 245:

Իսյանի հարևան Միհրանի[42] գավառ՝ նպատակ ունենալով հնազանդեցնել տեղի քուրդ և հայ բնակիչներին. սակայն ապստամբները փակում են սանջակը դրսի աշխարհին կապող ելումուտի միակ ճանապարհը, պաշարում փաշայի զորքն ու գրեթե գլխովին ջախջախում[43]:

Իսյանի և Սավուրի հայ և քուրդ բնակիչները 1782, 1785, 1798 թթ. ջախջախել և հետ են շպրտել Դիարբեքիրի փաշայի զորքերին: Թուրքական զորքերին միայն 1849 թ. է հաջողվել հպատակեցնել Իսյանը:

Հայկական կիսանկախ իշխանություն էր Մոկսը: Նախկինում այն ենթարկվում էր Ջեզիրեի բեյին, իսկ հետո՝ Ջուլամերիկի բեյին. «սակայն միշտ ոմն ի հայոց մէլիք և գլխաւոր հրամանատար եղեալ հրամանաւ Ճուլամերկի պէյին, զամենայն իշխանութիւն ի գործ ածէ, բաց ի յարեանհեղութենէ»[44]:

Մոկսի նման Ջուլամերիկի գավառի Շատախի վիճակը ևս կիսանկախ էր, «ուր նստի մէլիք յազգէս հայոց. և ի գործ ածէ զամենայն իշխանութիւն և զդատաւորական պաշտօն. զի ոչ թողուն քուրդ պէյից նստիլ աստէն, որպէս և ի Մոկս: ...Ունի այս վիճակ բազմութիւն գիւղօրէից ըստ մեծի մասին բնակեալ ի հայոց և ի սակաւուց քրդաց. և են թեմ Աղթամարայ»[45]:

Հայկական կիսանկախ իշխանություն էր Ճորոխի ավազանում գտնվող Խոտորջուրը, որի մասին Ինճիճյանը գրում է, որ «Բաց ի հայոց օտար ազգ ոչ գտանի ի Խոտրջուր. ո՛չ օսմանեանք, ո՛չ քուրդք, և ո՛չ լազք. միայն ի գարնան ժամանակի ընդ այս ճանապարհորդեն լազք ի գնալն յԷրզիռում. բայց բնակիչքն ամի ամի տան իբրև 200 կամ 300 ղուռուշ լազ տէրէպէյիին՝ որ բռնացեալ է յայն կողմանս»[46]:

Վերոհիշյալ հայկական կիսանկախ իշխանությունների բնակչությունը թուրքական կառավարության՝ այդ կիսանկախ իշխանություններն իրենց ենթարկելու փորձերին դիմակայելու համար ստիպ-

---

42 Միհրանին Դիարբեքիրի սանջակներից էր, բարձրաբերձ լեռներով շրջապատված, որն ուներ ելումուտի միայն մի ճանապարհ: Բնակիչներն էին «քուրդք և հայք ինքնագլուխք և ապստամբ ի փաշայէն»: Տե՛ս Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 222-223: XV դ. երկրորդ կեսին Միհրանին կազմել է Զրոըխիկ-Թարջիլի մի մասը (կազա): Ավելի ուշ՝ XVI դ., այն առանձնանալով կազմել էր քրդական զրոըկցի ցեղի ճյուղերից մեկի օջաքլըքը: Տե՛ս Բադալյան Գ., Տարոնի Ս. Հովհաննեսի (Եղդուտի) վանքի 1445 թվականի կոնդակը (պատմա-աշխարհագրական ակնարկ), - «Էջմիածին», N Ժ, 1997, էջ 93:

43 Տես Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 223:

44 Նույն տեղում, էջ 161:

45 Նույն տեղում, էջ 163:

46 Նույն տեղում, էջ 133:

ված էր դաշնակցել դրացի քրդական իշխանապետությունների ու աշիրեթների հետ: Այդ « ...մի քանի գաւառներու Հայերը, իբրեւ քաջ եւ պատերազմասէր լեռնականներ՝ ազատութիւնը կը պահէին Քիւրտերուն հետ միացած», - գրում է Ա. Ալպոյաճյանը[47]: Քաղաքագետ ու հեռատես որոշ հայ գործիչներ և քուրդ ցեղապետեր հասկանում էին, որ ատելի թուրքական լծից ազատագրվելու միակ ուղին միավորվելն ու համատեղ պայքարելն է:

Այսպիսով, թեև Արևմտյան Հայաստանում Օսմանյան պետությունը հետևողականորեն և մեծագույն նպատակասլացությամբ իրականացնում էր ազգային կազմի բռնի կերպով փոփոխության քաղաքականություն, սակայն նույնիսկ այդ պայմաններում Արևմտյան Հայաստանը XIX դարի սկզբին դեռևս շարունակում էր մնալ գերազանցապես հայաբնակ[48]: Իրենց պատմական հայրենիքի որոշ նպաստավոր շրջաններում հայերը պահպանել էին մի քանի իշխանապետություններ: XVIII դարի երկրորդ կեսին այդ իշխանապետություններից Սասունը, Իսյանն ու Սավուրը, Մոկսը, Շատախը և Խոտորջուրը կիսանկախ էին. վերջինս տարեկան որոշ գումար (200-300 ղուրուշ) էր տալիս լազ դերեբեյին: Հայկական իշխանապետություններից Մոկսի և Շատախի իսկական տերերն էին հայ մելիքները, որոնց ձեռքում էր կենտրոնացած ռազմական և վարչական իշխանությունը, դատավարությունը: Կիսանկախ և ինքնավար շրջանների հայությունը զերծ էր մնում բռնաճնշումներից, նրա վրա չէր տարածվում սուլթանական հրովարտակների ազդեցությունը: Քրդահպատակ գավառներում, կիսանկախ ու ֆերմանլը մարզերում հայերը, ասորիները զենք էին կրում, մասնակցում պարբերական արշավանքներին, հագնվում այնպես, ինչպես ցանկանային: Այստեղ հարգվում էր ուժը, որը և նվաճում էր իրավունք[49]: Բերենք Ղ. Ինճիճյանի վկայությունը Զեյթունի մասին, որը բնորոշ է նաև հայկական կիսանկախ մյուս իշխանություններին. «Բնակիչք նորա առհասարակ հայք... արք կորովիք քաջասիրտք պատերազմօղք ի մանկութենէ, յաջողակ ի զինաշարժութիւնս, և ընտիր այրուձիք: Գոլով այսպէս զօրաւորք զօրութեամբ և տեղեաւ, ապստամբ են ի փաշայէն Մարա-

47 Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 85:

48 Տե՛ս Մելքոնյան Ա., Սուլթանական կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և արևմտահայ ժողովրդագրական տեղաշարժերի միտումները, - Հայկական հարց, Հայկական հարցի միջազգայնացման 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2000, էջ 50:

49 Տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967, էջ 136:

շոյ. ոչ տան նմա հարկս, ոչ սովորական տուրս, ագանին արգելեալ զգեստս, ինչեցուցանեն համարձակ զանգակս ի յեկեղեցիս, և ինքեանք դատին զամենայն դատաստան իւրեանց նաև զդատաստան արեան… »[50]:

Այսպիսով՝ հայկական կիսանկախ իշխանությունները և ինքնավար համայնքները պահպանվել էին հիմնականում լեռնային դժվարամատչելի շրջաններում, որտեղ թուրքական կառավարությունը և քրդական ցեղապետերը չէին կարողացել հաստատել իրենց տիրապետությունը: Այսօրինակ պետական կազմավորումների առաջացման և գոյատևման գլխավոր նախապայմանը Օսմանյան կայսրության ներքին անկայուն, վատթար իրավիճակն էր: Կենտրոնական իշխանության թուլության և անկարողության պայմաններում կենտրոնախույս ավատատերերի՝ միմյանց և կենտրոնական իշխանության դեմ բախումները կայսրությանը պատճառում էին նյութական մեծ կորուստներ, բացասաբար էին ազդում բանակի մարտունակության վրա, օժանդակում էին դասալքությանը, գցում էին առանց այդ էլ ընկած կենտրոնական իշխանության հեղինակությունը, նպաստում էին պալատական խմբավորումների միջև ծագած գահակալական պայքարի սրմանը, ավելի շիկացնում ներքաղաքական լարված մթնոլորտը: XVIII դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը գտնվում էր զարգացման ցածր մակարդակի վրա. դա միջնադարյան հետամնաց մի կայսրություն էր, որը հոգեվարք էր ապրում ներպետական հակասություններից, և ռազմաավատական կարգերի քայքայման փուլում գտնվող այդ պետության դժվարին դրությունից օգտվում էին կենտրոնախույս տարրերը, որոնք, կայսրության տարբեր շրջաններում, չընդունելով կենտրոնական իշխանության ներկայացուցչի գերիշխանությունը, ստեղծում էին նոր ինքնավար պետական կազմավորումներ կամ շարունակում էին կառավարել նախկին ինքնագլուխ, կիսանկախ կարգավիճակով: Հայկական կիսանկախ իշխանությունների և ինքնավար համայնքների գոյությանը նպաստող պայմաններից էին միատարր բնակչության առկայությունը, ինքնաբավ բնատնտեսական կացութաձևը, խոշոր հոգևոր կենտրոնի առակայությունը կամ մերձավորությունը, դաշնակից դրացի քրդական իշխանապետությունների ու աշիրեթների առկայությունը: Հայկական կիսանկախ իշխանություններում և ինքնավար համայնքներում գործել են սովորութային իրավունքն ու նահապե-

50 Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 375:

տական օրենքները:

Հետագայում, սակայն, Օսմանյան կայսրությունը վարում էր կենտրոնական իշխանության ուժեղացման քաղաքականություն, ձգտում էր իր ազդեցությունն ու տիրապետությունն իրական դարձնել կայսրության ողջ տարածքում: Ի վերջո՝ Օսմանյան պետական կենտրոնական իշխանության զորեղացման և ամբողջ կայսրության տարածքում լիակատար տիրապետության հաստատման հետևանքով, ինչպես նաև կիսանկախ իշխանությունների և ինքնավար համայնքների համար մի շարք աննպաստ գործոնների առկայության պայմաններում (հաղորդակցության վատ պայմաններ, հատվածականություն և ինքնամեկուսացում, սահմանափակ մարդկային ու նյութական ռեսուրսներ և պաշարներ, հարևան քրդական ցեղերի փոփոխություն կամ հարևան քրդական ցեղերի վերաբերմունքի փոփոխություն, թշնամական օղակ և այլն) հայկական պետականության դրսևորումները՝ կիսանկախ իշխանություններն ու ինքնավար համայնքները, աստիճանաբար թուլացան ու անկում ապրեցին:

РЕЗЮМЕ
ОБ ОБСТОЯТЕЛЬСТВАХ ВОЗНИКНОВЕНИЯ И СУЩЕСТВОВАНИЯ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ (ПОСЛЕДНЯЯ ЧЕТВЕРТЬ XVIII ВЕКА)

Доклад посвящен истории Армении последней четверти XVIII века (сравнительно малоизученного периода), где освещены вопросы возникновения и существования армянской государственности в Западной Армении. Полузависимые армянские княжества и автономные общины сохранились в основном в труднодоступных горных районах, где турецкое правительство и курдские вожди племен не могли установить свое господство. Условия, которые способствовали выживанию этих государственных формаций, – однородный состав населения, прочный уклад натурального хозяйства, наличие или близость крупного духовного центра, наличие союзнических соседских курдских княжеств и племен.

Ключевые слова: *государственность, полузависимое княжество, автономная община, княжество, Сасун, Исьян, Савур, Мокс, Шатах, Хоторджур, Западная Армения, курды, Османская империя.*

SUMMARY

ON THE CIRCUMSTANCES OF FORMATION AND PERSISTENCE OF MANIFESTATIONS OF ARMENIAN STATEHOOD IN WESTERN ARMENIA (IN THE LAST QUARTER OF XVIII CENTURY)

The report attempts to elucidate the circumstances of the formation and persistence of manifestations of Armenian statehood in Western Armenia towards the end of the 18th century, a period relatively less studied. Armenian semi-independent and autonomic communities endured mainly in mountainous regions, where the Turkish government and Kurdish chieftains had been unable to establish dominance. Factors in favor of their endurance had been the homogenous population, self-sufficient economy, existence of big spiritual centers as well as of allied Kurdish princedoms and Ashirets.

Key words: *statehood; semi-independent government, autonomic community; princedom; Sassoun, Isyan, Savour; Moks, Shatakh; Khotorjur, Western Armenia, Kurds; Ottoman Empire.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՀՅԴ ԵՎ ՌԱԿ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԵՐՈՒՄ (1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.)

ԽԱՉԱՏՈՒՐ ՌՈՍՏՈՄԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պ. գ. դ.

Բանալի բառեր՝ *Հայաստան, անկախություն, սփյուռքահայ մամուլ, Դաշնակցություն, Ռամկավար-ազատական կուսակցություն:*

Հայաստանի առաջին Հանրապետության անկումից և Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո սփյուռքահայ մամուլը լայն քննարկման առարկա դարձրեց Հայաստանի անկախության վերականգնման գաղափարը: Այս ընթացքում նաև անկախության գաղափարի շուրջն էին տեղի ունենում հայ քաղաքական մտքի շերտավորումն ու բյուրեղացումը: Սա շատ բնական էր, որովհետև անկախության գաղափարի տեսական ըմբռնումով էր պայմանավորված նաև հարցի գործնական լուծումը:

Սփյուռքում Հայաստանի անկախության գաղափարի հիմնական և ամենաեռանդուն ջատագովը դաշնակցական մամուլն էր: Հայաստանի անկախության անկումից և քաղաքական ղեկավարության

տարագրությունից հետո Դաշնակցության հետագա գործունեության համար ուղենիշային դարձավ 1924 թ. նոյեմբերից մինչև 1925 թ. հունվար տեղի ունեցած կուսակցության 10-րդ Ընդհանուր ժողովը[51]: Ի թիվս այլ որոշումների՝ առավել կարևոր էր Անկախ և Միացյալ Հայաստանի մասին բանաձևի ընդունումը: Մեկնելով 10-րդ Ընդհանուր ժողովի որոշումից՝ դաշնակցական մամուլը ձեռնամուխ եղավ Հայաստանի անկախության վերականգնման գաղափարի քարոզչությանը:

Կուսակցության պաշտոնաթերթ «Դրոշակ»-ը, առանց Հայաստանի անկախության անկարելի է համարում Արևմտյան Հայաստանի կենսական խնդրի լուծումը: Անկախ խորհրդային իշխանությունների հետ ունեցած հակասություններից, հանուն վաղվա անկախ Հայաստանի կարևորվում է Խորհրդային Հայաստանի հզորացումը: «Դրօշակ»-ն իր 1925 թ. հունիսի խմբագրականում նշում է, որ անկախ Հայաստանի փաստն ավելի առարկայական է դարձնում Հայ դատի պահանջը: «Հայաստանի Հանրապետութեան հռչակումով եւ փաստով այլեւս վերանում են մեջտեղից Հայկական Դատի զանազան ձեւակերպումները, ինչպէս օրինակ բարենորոգումների ծրագիր, հայկական ինքնավարութիւն, ֆեդերասիոն Տաճկաստանի եւ Ռուսաստանի սահմաններում եւ այլն, որոնք տարբեր ժամանակներում, մեծ մասամբ արտաքին պայմանների ազդեցութեամբ, առաջ էին քաշւում իբրեւ հարցի լուծման գործնական միջոցներ: Այս բոլորի տեղը ներկայումս տիրականօրէն բռնում է Թուրքահայաստանը եւ Ռուսահայաստանը մէկ անկախ մարմնի մէջ միացնելու գաղափարը, մի գաղափար, որ նւիրագործւած է միջազգային ակտերով եւ հայ ժողովրդի անկախ պետական կեանքի փաստով»- գրված է խմբագրականում[52]: Ըստ էության պարբերականն արձանագրում է այն, որ Հայաստանի առաջին Հանրապետությունը, չնայած իր կարճատև կյանքին, սահմանեց նախընթաց ժամանակաշրջանում հայ քաղաքական մտքի կողմից հայ ժողովրդի ազատագրական պայքարի վերջնակետի հստակեցումը: Անկախ պետականության վերականգնումը համարվեց այն գլխավոր թիրախը, որին պետք է սևեռված լինի հայ քաղաքական միտքը:

Բոստոնի դաշնակցական «Հայրենիք» օրաթերթի խմբագրական հոդվածներում նույնպես հանգամանորեն քննարկվում է Հայաստա-

51 Քիւրքչեան Յ., Ուրուագիծ Հ.Յ.Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի, «Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ», Պէյրութ, Դ տարի, 1973 թ., թիւ 44, էջ 701:

52 «Դրօշակ», 1925, թիւ 1, էջ 1:

նի անկախության գաղափարը: Թերթի կողմից որևէ տարակուսանք չի եղել վառ պահելու Հայաստանի անկախության գաղափարը և անվերապահ հավատով, միասնականությամբ ու զոհաբերության գնալու պատրաստակամությամբ նվիրվելու դրա իրականացմանը: Անկախության գաղափարը կարող էր հանդիսանալ այն կռվանը, որի շուրջ պետք է համախմբվեին հայ տարագիր բոլոր հասարակական-քաղաքական ուժերը: Թերթի կարծիքով հայ քաղաքական միտքը պետք է պտտվի «Մայիսի 28-ի առանցքի շուրջը»[53]: «Հայրենիք»-ի պատկերացմամբ անկախ կարող է համարվել այն ժողովուրդը, որն իրավական ազատություն և փաստացի հնարավորություն ունի ինքնուրույն սեփական կառավարություն կազմելու՝ առանց որևէ չափով ենթարկվելու օտար որևէ ուժի հարկադրանքին կամ թելադրանքին[54]: Թերթը կարևորում է ինքնուրույն և հոժարակամ արտաքին հարաբերություններ մշակելու և դաշինքներ կնքելու ժողովուրդների իրավունքը: Թերթի պատկերացմամբ անկախությունը հայ ժողովրդի՝ սեփական հողի վրա ապրելու, զարգանալու, առաջադիմելու և իր ճակատագիրն ինքնուրույն վարելու անբռնաբարելի իրավունքն է[55]: Ինչպես տեսնում ենք, «Հայրենիք»-ը մեկնաբանում է այն կարևոր հանգամանքները, որոնց առկայությունը ենթադրում է անկախության գոյություն: «Հայրենիք»-ը գտնում է, որ «Խորհրդային Հայաստանը պետական եւ ազգային տեսակէտով ֆիզիքական պատուանդան մըն է միայն, որ ապագային, աւելի նպաստաւոր պայմաններու տակ կարող է դառնալ եւ պիտի դառնայ հայ ազգային բաղձանքներուն ու գաղափարներուն համապատասխան իրականութիւն մը: Սակայն այդ նպատակին հասնելու համար հայ ժողովուրդը պարտաւոր է պատրաստուիլ»[56]: Ազգային նպատակների իրականացման համար պետք չէ հրաժարվել անկախության գաղափարից: Ըստ դաշնակցական պարբերականի, պետք է փայփայել գոյություն ունեցող հայրենիքը և միաժամանակ հարատև ու հետևողական պայքարի նախապատրաստվել հանուն այդ հայրենիքի անկախության:

Հայաստանի անկախության գաղափարի արծարծման վերաբերյալ պակաս կարևոր չէին նաև Կահիրեի «Հուսաբեր»-ի խմբագրականները: «Հուսաբեր»-ի խմբագիրը սոփեստություն է համարում իրենց ընդդիմախոսների այն փաստարկը, թե բացարձակ անկա-

53 «Հայրենիք», 1933, 28 մայիսի:
54 Տե՛ս «Հայրենիք», 1926, 7 մայիսի:
55 Տե՛ս «Հայրենիք», 1929, 1 նոյեմբերի:
56 «Հայրենիք», 1931, 28 մայիսի:

խություն գոյություն չունի (նույնիսկ Անգլիան բացարձակ անկախ չէ), հետևաբար Հայաստանն էլ կարող է անկախ չլինել կամ լինել այնքան անկախ, որքան է Խորհրդային Միության կազմում[57]: Ի դեպ, Հայաստանի անկախության գաղափարի կողմնակիցները հաճախ էին ստիպված լինում պատասխանել նմանատիպ փաստարկներին: «Հուսաբեր»-ը խմբագրականներից մեկում անդրադառնում է դաշնության և անկախության սկզբունքներին՝ նշելով, որ դրանք չեն կարող հակասել միմյանց: Ավելին, դաշնության գաղափարը, ըստ թերթի, ավելի ամուր հիմքի վրա է դնում «դաշնակցող ազգերու անկախութեան շէնքը»[58]: Փաստորեն թերթը փորձում է հասկացնել, որ դաշնությունը չի կարող արգելք հանդիսանալ ժողովուրդների անկախության ճանապարհին: Անկախությունը հայ ժողովրդի գոյապահպանության տեսակետից պետք է համարել քաղաքական իդեալ: «Ցեղապահպանումի հուրը, անոր յարատեւումի մշտաբեղուն կիրքը, ծլարձակող եւ յաւերժորէն կենսառոյգ ու անսասան բունը ցեղի մը քաղաքական իտէալն է՝ ազատ եւ անկախ կեանքի դիւթիչ ու բեղուն տենչը: Անկախ՝ սեփական հողերուն վրայ, եւ ազատ՝ հարազատ իշխանութեան տակ»,- ահա այսպիսի գեղեցիկ նկարագրությամբ է թերթը հիմնավորում իր պնդումը[59]: Նշենք, որ «Հուսաբեր»-ը նման ունկնահաճո և ականահաճո ոճով հաճախ է արթնացրել իր ընթերցողների հույզերը: Սփյուռքում հիմնականում Դաշնակցությանն ընդդիմադիր տրամադրված շրջանակներում Խորհրդային Հայաստանի ստեղծումով ավարտված էին համարում հայ ժողովրդի քաղաքական պայքարը: Սակայն թերթը կարծում է, որ Խորհրդային Հայաստանով պետք չէ ավարտված համարել գաղութաբնակ թուրքահայության քաղաքական դերը[60]: Փաստորեն թերթը պնդում է ոչ միայն Խորհրդային Հայաստանի անկախության վերականգնման համար իր պայքարի հաստատակամությունը, այլև այդ պայքարում կարևոր դեր է վերապահում տարագիր արևմտահայությանը: Մեր կարծիքով արդարացված է արևմտահայության դերի արժևորումը: Համայն հայության ջանքերով Հայաստանի անկախության վերականգնման գաղափարն ավելի ազդեցիկ կլիներ, բացի դրանից, պետք չէր մոռացության մատնել Արևմտահայաստանի խնդիրը, որի համար պետք էր միշտ արժևորել հաղորդել տարագիր արևմտահայությանը՝

57 Տե՛ս «Յուսաբեր», 1924, 20 նոյեմբերի:
58 «Յուսաբեր», 1926, 2 օգոստոսի:
59 «Յուսաբեր», 1931, 17 յունուարի:
60 Տե՛ս «Յուսաբեր», 1931, 26 հոկտեմբերի:

որպես քաղաքական գործոնի:

Հայաստանի անկախության գաղափարը քննարկեց նաև Փարիզի «Հառաջ»-ը: Խմբագրականներից մեկում թերթը համարում է, որ հայոց ներկա պատմության կիզակետը Հայաստանի անկախությունն է: Թերթը հայ ժողովրդի հավաքական քաղաքական դիմագիծը բնորոշում է իր անկախության ձգտումով: Առանց անկախության հայ ժողովուրդը զուրկ է հավաքականությունից[61]: Ըստ էության թերթը կոչ է անում ոչ միայն չհուսահատվել, այլև պնդում է, որ հանուն ապագա միասնական գաղափարների հիմնակետ ընդունվի անկախության ձգտումը:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. դաշնակցական մամուլն իր քարոզչության գլխավոր թիրախներից մեկը դարձրեց Հայաստանի անկախության վերականգնման տեսլականը: Անկախ գոյություն ունեցող ուժերի իրական դասավորությունից և Հայաստանի անկախությունը վերականգնելու միջազգային աննպաստ իրավիճակից, ՀՅԴ-ի համար անկախությունը մնում էր գերագույն արժեք: Այդ գաղափարի շուրջ համախմբվում էր տարագիր հայությունը, որին սպառնում էր ձուլման վտանգը: Անկախ պետությունը վերականգնելու հույսով բազում հայորդիներ ոչ միայն համախմբվեցին, այլև կարևոր շարժառիթ ունեցան՝ հայ մնալու և իրենց սերունդներին հայ դաստիարակելու համար: Դաշնակցական թերթերը տեսական լուրջ հիմնավորումներով ապացուցում էին, որ հայ ժողովրդի շարունակականությունը երաշխավորելու տեսակետից անկախ պետականությունն այլընտրանք չունի:

Հայաստանի անկախության գաղափարը բոլորովին հակառակ մեկնաբանությունների արժանացավ ռամկավար-ազատական մամուլի կողմից: ՌԱԿ ժողովներում Հայաստանի անկախության դեմ և Խորհրդային Ռուսաստանի հովանավորությանը սատարելու կողմ արտահայտվելու հիմնական պատճառաբանությունները ֆիզիկական անվտանգության երաշխիքն էին: Հայաստանի աշխարհագրական բարդ դիրքով պայմանավորված՝ ռամկավարները գտնում էին, որ պետք է հրաժարվել անկախություն երազելուց, երկրի պաշտպանությունը վստահել Խորհրդային Ռուսաստանին, փոխարենը մեր ներուժը կենտրոնացնել երկրի տնտեսական կրթամշակութային զարգացման վրա[62]: Խնդիրն այնքան էր խորացել, որ ՌԱԿ քարոզչամիջոցները հաճախ էին դեմ արտահայտվում նույնիսկ Մայիսի 28-ի

61 Տե՛ս «Յառաջ», 1932, 29 մայիսի:
62 Տե՛ս «Արեւ», 1923, 15 մայիսի, 1931, 7 յուլիսի, 24 սեպտեմբերի, «Ապագայ», 1924,

տոնակատարությանը: Ռամկավար պաշտոնաթերթերից Բոստոնի «Պայքար»-ը, խոսելով այդ օրվա մասին, գրում է, որ այն «անկախութեան տօն մը չէ, այլ սխալ ու մոլորեցնող մեկնութիւնն է պատմական իրողութեան մը եւ վտանգաւոր նշանացոյց մը՝ ապագայ քաղաքական ուղղութեան մը, որուն կը կապէ ինքզինք այդ կուսակցութիւնը» [63]: Ըստ էության կուսակցական ատելությունից կուրացած պարբերականը չի ընդունում Հայաստանի անկախության տոնը: Թերթի կարծիքով Մայիսի 28-ի տոնակատարությունը ոչ թե անկախության գաղափարի փառաբանություն է, այլ Հայաստանը գերեզմանի դուռ տանելու արկածախնդրություն[64]: Պարբերականը գիտակցաբար է ընկել մոլորության մեջ՝ փաստացի անարգելով մեր ազգային ինքնությունը խորհրդանշող տարրերից մեկը՝ Անկախության օրը:

Խորհրդային Հայաստանի անկախության հարցը քննարկվեց նաև ռամկավար-ազատականների «Ապագա» պաշտոնաթերթի խմբագրական հոդվածներում: Այսպես, մի տեղում կարծիք է հայտնվում, որ նույնիսկ «գեղեցիկ իտէալի մը անունով «Միացեալ եւ անկախ Հայաստան»ի տարեդարձեր տօնելը» նշանակում է շեղվել իրատեսության ճանապարհից և ժողովրդին սին հույսերով փայփայել[65]: Մի առիթով ռամկավար պարբերականի խմբագիրը նշում է, որ իրենց կուսակցությունն ընդունում է անկախության գաղափարը, սակայն այդ պահի դրությամբ դա անիրականանալի է համարում: «Ռամկ. Ազատ. Կուսակցութիւնը ընդունելով հանդերձ թէ անկախութեան մէջ միայն ազգ մը կրնայ լիովին վայելել իր ազատութիւնը եւ ներդաշնակօրէն զարգացնել իր հոգեկան մտաւոր եւ տնտեսական ոյժերը, բայց ան դէմ է երազանքներուն անձնատուր ըլլալուն: … Անկախութիւնը նպատակ չէ, այլ՝ միջոց ժողովուրդները բախտաւորցնելու համար: Այսօրուան պայմաններուն մէջ այժմու Հայաստանի ժողովուրդը չի կրնար իր մտածման առարկայ ընել Հայաստանի անկախութեան հարցը…»,- ասված է թերթի առաջնորդող հոդվածում[66]: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես թերթն իր երկվության պատճառով փորձում է մոլորության մեջ գցել ընթերցողներին: Նախորդ խմբագրականի շարունակության մեջ թերթը քաղաքական անհրաժեշտություն է համարում Հայաստանի «կապակցութիւնը» Խորհրդային Միության հետ և, դրանից ելնելով, անիմաստ և վտանգավոր է հա-

23 փետրուարի, 1938, 1 յունուարի:
63 «Պայքար», 1928, 18 օգոստոսի:
64 Տես նույն տեղում:
65 Տես «Ապագայ», 1929, 1 յունիսի:
66 «Ապագայ», 1931, 24 յունուարի:

մարում այդ կապը խանգարելու ցանկացած ճիգ և միտք[67]: Այստեղ թերթն իր գաղափարախոսությանը հակասող խորհրդամետ դիրքորոշումն արդարացնելու և Հայաստանի անկախության գաղափարի դեմ խոսելու նպատակով գրում է գոյություն չունեցած ինչ-որ «ըմբոստության» մասին: Հայտնի է, որ հակառակորդ հռչակված Հ.Յ.Դաշնակցությունը բազմիցս է հայտարարել խորհրդային իշխանության դեմ միայն քաղաքական պայքար տանելու և ուժի գործադրման բոլոր մեթոդները մերժելու մասին: Ընդ որում դաշնակցականների այս քայլը պայմանավորված էր ոչ միայն և ոչ այնքան ուժերի բացահայտ անհավասարությամբ, որքան սեփական ժողովրդին ավելորդ կորուստներից զերծ պահելու մտահոգությամբ: Մեր կարծիքով ռամկավար պարբերականը Դաշնակցությանը քարկոծելու համար անկախության գաղափարն այդքան չպետք է նսեմացներ:

Մերթընդմերթ ռամկավար-ազատականների փարիզյան պարբերականը նաև դրական է արտահայտվել անկախության գաղափարի և Մայիսի 28-ի մասին: Օրինակ՝ 1932 թ. մայիսի 28-ի խմբագրականում այդ օրը որակվում է որպես մեր ժամանակակից տարեգրության պատմական խոշորագույն թվական՝ Հայաստանի անկախության հռչակման օր[68]: Սակայն երկու տարի անց թերթը շարունակում է քարկոծել Անկախության օրը. «Բայց ոմանք մայիս 28-ին կուտան արժէք մը, որ իրողութեան չի համապատասխաներ: Անոնք զանազան նկատումներով կը ջանան եղելութիւնները վերիվայր շրջել եւ մինչեւ անգամ մը կը պնդեն թէ այսօրուան Խորհ. Հայաստանը իր գոյութիւնը կը պարտի մայիս 28-ին: Ճշմարտութիւնը ճիշտ ատոր հակառակն է: Եթէ մենք չհարկադրուէինք ենթարկուիլ մայիս 28-ին, այսօր կունենայինք աւելի ընդարձակածաւալ Հայաստան, աւելի մեծ թիւով ժողովուրդ Հայաստանի հողին վրայ (եւ Անդրկովկասի մէջ) եւ աւելի զօրաւոր ձայնով հայկական խորհրդային կառավարութիւն մը Անդրկովկասի մէջ ու Մոսկուայի առջեւ»[69]: Մի քանի օր անց «Ապագայ»-ի խմբագիրը Դաշնակցականների կողմից անկախության տարեդարձը նշելը որակում է որպես «դերասանական շարժուձեւ»[70]: Թերթը չի ուզում որևէ կապ տեսնել 1918 թ. մայիսյան հաղթանակների և անկախության հռչակման հետ: «Կա՛յ, գոնէ հիւլէի մը չափ ճշմարտութիւն իրենց կուսակցական այն սնապարծ խօս-

67 Տե՛ս «Ապագայ», 1931, 28 յունուարի:
68 Տե՛ս «Ապագայ», 1932, 28 մայիսի:
69 «Ապագայ», 1934, 2 յունիսի:
70 «Ապագայ», 1934, 12 յունիսի:

քերուն մէջ թէ «եռագոյն դրօշին տակ անկախ Հայաստան ստեղծելու համար կռուեցանք Սարդարապատի եւ Ղարաքիլիսէի առջեւ»[71]: Ցավոք, թերթը չի պարզաբանում իր այս պնդումները, ինչպես նաև երկու տարի առաջ արտահայտած տեսակետին ճիշտ հակառակ տեսակետ արտահայտելը: Կարծում ենք՝ թերթի այս վերափոխումները պայմանավորված են խմբագրի և կուսակցության ղեկավարության կողմից ՀՅԴ ղեկավարության հետ ունեցած առօրեական հարաբերություններով:

Ընդհանուր առմամբ Հայաստանի անկախության գաղափարի վերաբերյալ նույն գնահատումներն ուներ Եգիպտոսի «Արև»-ը: Թերթի խմբագիրը կարծում է, որ անկախության գաղափարի քարոզը Դաշնակցության կողմից արվում է միայն ժողովրդի ազգայնական զգացումները գրգռելու և այս կերպով «միամիտների» շարքերի համակրանքը շահելու համար: Թերթը թերահավատորեն է մոտենում անկախության պայմաններում հարևան բոլոր ժողովուրդների հետ համերաշխ ապրելու հավանականությանը[72]: Փաստորեն թերթն ակամայից խոստովանում է, որ Խորհրդային Միությունը շահագրգռված է Հայաստանի և հարևանների միջև լարված հարաբերություններով, որովհետև դրանց առկայության պայմաններում հայ իրականության մեջ որոշ խավեր կհրաժարվեն անկախության գաղափարից: Կարծում ենք սա հեռու չէ իրականությունից: Սակայն սրա մեղավորը ոչ թե անկախության ձգտող ուժերն են կամ անկախության գաղափարն ինքնին, այլ տարածաշրջանում թշնամությունը խրախուսող ուժերը: «Արև»-ն անիմաստ է համարում անկախության մասին մտածելը, քանի որ «սկզբունքով Խորհրդային Հանրապետութիւններու Միութեան մաս կազմող իւրաքանչիւր ազգը անկախ է, որովհետեւ ուզած պահին ազատ է բաժնուելու համադաշնակցութենէն եւ անջատօրէն տնօրինել իր ճակատագիրը եւ կամ ուրիշ խմբակցութեան միանալ»[73]: Հետո ավելացնում է, որ Հայաստանն ինքնուրույն չի կարող գոյատևել որպես անկախ պետություն: Հայաստանն ունի այնքան անկախություն, որքան իրեն անհրաժեշտ է: Իսկ բացարձակ անկախություն գոյություն չունի, թերթը նաև փորձում է համոզել, որ «Հայաստան երբեք անկախ եղած չէ»[74]: Ինչպես տեսնում ենք, «Արեւ»-ը նույնպես հաճախ է հակասական մեկնաբա-

71 Նույն տեղում:
72 Տե՛ս «Արեւ», 1923, 20 յունիսի:
73 «Արեւ», 1923, 20 սեպտեմբերի:
74 «Արեւ», 1924, 2 մայիսի:

նություններով հանդես գալիս, որի պատճառը ոչ այնքան նրանց տեսակետների փոփոխությունն է, որքան Դաշնակցության հետ ունեցած հարաբերությունների լարվածության աստիճանը: Ինչպես տեսնում ենք, Եգիպտոսի ռամկավար պարբերականը իր կոչմանը ոչ հարիր վախվորածություն է ցուցաբերում անկախության խնդրի հանդեպ: Անկախության մասին չխոսելու իր դիրքորոշումն արդարացնելու համար թերթի խմբագիրն անիմաստ է համարում մայիսի 28-ին կորսված անկախության տոնը նշելը, հատկապես որ 1918 թ. մայիսի 28-ի հայտարարության մեջ անկախություն բառը չկա[75]: Մեր խնդրից դուրս է անկախության մասին հայտարարության բովանդակությունը քննարկելը, սակայն կարծում ենք, որ թերթը հանրությանը չգոհացնող նոր պատճառներ է փնտրել՝ իրեն ծանր վիճակից դուրս բերելու համար:

Փաստորեն սփյուռքում գործող ռամկավար-ազատական կուսակցության հիմնական թերթերը ոչ միայն իրատեսական չէին համարում Հայաստանի անկախությունը, այլև անիմաստ էին գտնում այդ գաղափարի քննարկումը: Սփյուռքահայ մամուլի այս հատվածն իր մոտեցումը հիմնավորում էր Հայաստանի ժողովրդի անվտանգության վերաբերյալ ունեցած մտահոգություններով:

Այսպիսով, սփյուռքահայ մամուլի երկու կարևոր՝ դաշնակցական և ռամկավար-ազատական հատվածները Հայաստանի անկախության գաղափարի քննարկման հարցում ունեին բաժանված և միմյանց հակադիր մոտեցումներ, որոնք անշուշտ բխում էին այդ կուսակցությունների ընտրած ռազմավարական և մարտավարական ուղղություններից:

SUMMARY

THE DISCUSSION OF INDEPENDENT IDEAS OF ARMENIA IN THE ARF AND DLP (RAK) OFFICIALS (1920-1930-s)

KHACHATUR ROSTOM STEPANYAN
Associate Professor of the Chair
of the History of Armenia of ASPU, Doctor of History

Summing up the discussions of the 1920-1930 Armenian Diaspora Press on Armenia's independence can be concluded: a)The main views were divided into two groups, supporters of Armenia's independence and

75 Տես «Արեւ», 1932, 8 յունիսի:

supporters to stay within the USSR, b) Independence supporters were mainly Dashnak newspapers, which believe it will be possible only in conditions of independence to pursue the development of the Armenian people, the preservation of national identity, the final solution of the Armenian Cause, c) Those (Ramkavar-Azatakans) having opposite idea claimed that aiming independence for that moment was more emotive. To their opinion security and economic development pledge of Armenia was to remain as part of the Soviet Union.

Key words: *Armenia, Independence, Armenian Diaspora Press, ARF Dashnaktsutiun, Democratic-Liberal (Ramkavar-Azatakan) Party.*

РЕЗЮМЕ

ОБСУЖНЕДИЕ ИДЕИИ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ В ОРГАНАХ АРФ И ДЛП (РАК) (1920-1930-ЫЕ ГГ.)

ХАЧАТУР РОСТОМОВИЧ СТЕПАНЯН
Доцент кафедри Истории Армении АГПУ, д. и. н.

Подводя итоги обсуждения идеи независимости в прессе армянской диаспоры 1920-1930-х годов, можно сделать следующие выводы: а) Основные взгляды были разделены на две группы - сторонники независимости Армении и сторонники Сторонники членства СССР, б) Сторонники независимости были в основном дашнакские газеты, которые считают, что только в условиях независимости возможно продолжать развитие армянского народа, сохранение национальной идентичности, окончательное решение Армянского Вопроса, в) Те (Рамкавар-Азатаканцы), имеющие противоположную идею, утверждали, что стремление к независимости в этот момент было более эмоциональным. По их мнению, для обеспечения безопасности и экономического развития Армении было обязательством оставаться в составе Советского Союза.

Ключевые слова: *Армения, независимость, пресса армянской диаспоры, АРФ Дашнакцутюн, демократическая-либеральная партия (Рамкавар-азатакан).*

Վ.Ա.ՊՈՏՏՈՅԻ «ՂԱՐԱԲԱՂԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ: (ՄԵԼԻՔ-ՎԱՆԻ և ՀԱԿՈԲ-ՅՈՒՋԲԱՇԻ ԱԹԱԲԵԿՈՎՆԵՐԸ)» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՊՈՂՈՍՅԱՆ ԷԴԻԿ
ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պ. գ. դ.

Բանալի բառեր՝ *Ռուսական կովկասագիտություն, պատերազմ, Ղարաբաղի կամավորներ, ռազմական համագործակցություն, հայ-ռուսական բարեկամություն:*

Ռուսական կովկասագիտական դպրոցի նշանավոր ներկայացուցիչ Վասիլի Ալեքսանդրովիչ Պոտտոն ի թիվս Կովկասի, հատկապես 19-րդ դ. սկզբի, պատմության ուսումնասիրության հարցում ունեցած արժեքավոր այլ ծառայությունների իր գիտական ժառանգությամբ էական նպաստ է բերել նաև այդ շրջանի հայոց պատմությանը ուղղակիորեն առնչվող բազմաթիվ կարևոր հիմնահարցերի լուսաբանման և հնարավորինս անաչառ արժևորման խնդրում:

Պոտտոն Կովկասի նոր շրջանի պատմության ուսումնասիրության բնագավառի ամենահեղինակավոր դասականներից է:

19-րդ դ. սկզբի կովկասյան պատերազմներին նվիրված, քիչ թե շատ լուրջ, բնույթի գրեթե բոլոր հետազոտություններում բազմատաղանդ ռազմական պատմաբան Վ. Ա. Պոտտոյի խնդրո առարկա հիմնահարցին վերաբերող աշխատությունները բացառիկ սկզբնաղբյուրային նշանակություն ունեն:

Վ. Պոտտոյի գործունեությունը հատկապես բեղնավոր էր այն բանից հետո, երբ 1899 թ. արդեն գեներալ-մայորի աստիճանով նա նշանակվեց կովկասի ռազմական օկրուգի ռազմա-պատմական բաժնի պետ[76]:

Վ. Պոտտոն (1836-1912 թթ.) ճանաչված ռուս ազնվականական տոհմից էր: Ռազմական պատմության բնագավառում ուսումնասիրություններ կատարելու նրա ունակությունները դրսևորվեցին տակավին վաղ պատանեկության շրջանից՝ դեռևս ազնվականական գնդի կադետական կորպուսում ծառայելու տարիներին: Պոտտոյի բացառիկ ունակությունները աննկատ չմնացին ցարական իշխանությունների կողմից, որով էլ պայմանավորվեց նրա, որպես ռազմական պատմաբանի բացառիկ հաջողված կարիերան: Վ. Ա. Պոտտոյի, որ-

76 Հովհաննիսյան Հ. , Հայագիտությունը Ռուսաստանում (պատմագիտություն, XIX դար),: Եր. -2004. , էջ 177

պես անխոնջ հետազոտողի և գիտության հմուտ կազմակերպչի լավագույն հատկությունները դրսևորվեցին նրա պաշտոնեական, բավականին արագ առաջընթացի ողջ ժամանակահատվածում:

Պոտտոյի ռուսական կովկասագիտությանը նվիրված հիմնարար աշխատանքը «Կովկասյան պատերազմը առանձին ակնարկներում, դիպվածքներում, փառաբանումներում և կենսագրություններում» վերնագրով մեծածավալ ուսումնասիրությունն է[77]: Այն նվիրված է 19-րդ դ. սկզբի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների և Անդրկովկասը Ռուսաստանին միացման հիմնահարցերի լուսաբանմանը:

Գեներալ Պոտտոյի խորապես ռազմահայրենասիրական բնույթի աշխատությունները, ժամանակակիցների վկայությամբ ներգործուն դաստիարակչական ազդեցություն ունեին ռուսաստանյան հասարակության բոլոր սոցիալական շերտերի վրա: Ինչպես ժամանակակիցներն են վկայել. - «Չկար մի զորամաս ու գրադարան, որտեղ չլինեին Պոտտոյի աշխատությունները. . . Նրա գործերը կարդում էին կայսրից սկսած մինչև շարքային զինվորը[78]»:

Վերը հիշատակված ինչպես նաև մյուս աշխատություններում, ինչպես օրինակ «Հին կովկասցիների հիշատակին[79]», «Գեներալ-ադյուտանտ Իվան Դավիդովիչ Լազարև[80]» և այլն հեղինակի նպատակն է եղել կովկասյան պատերազմների ժողովրդականացումը, «. .այդ պատերազմների հանրամատչելի շարադրանքը ուշագրավ պատմությունների, զրույցների, իրադարձությունների ու կենսագրությունների տեսքով[81]»:

Պոտտոն, իր իսկ վկայությամբ, իիր ուսումնասիրություններում հետապնդել է երկու հիմնական նպատակ: Նախ հեղինակը ցանկացել է իր աշխատություններով հեռու պահել կովկասյան պատերազմները մոռացության վտանգից: Պոտտոյի հաջորդ հիմնական նպատակն է եղել կովկասյան պատերազմների պատմության շարադրանքում հատուկ կերպով շեշտադրել ծավալված իրադարձու-

77 Потто В.А., Кавказская война въ отдельныхъ очеркахъ, эпизодаъ, легендахъ и біографияхъ, Т III, персидская война 1826-1828 г.вып. III, изд. Второе, С-Петербургъ 1888, Кавказская война в отдельныхъ очеркахъ,эпизодахъ, легендахъ и биографияхъ, Турецкая война, изд. второе, вып. 1, С-Петербургъ 1887 г., вып. 2 1887 г., вып. 3, 1888 г., вып. 4., 1888г.

78 Հովհաննիսյան Հ. , Հայագիտությունը Ռուսաստանում (պատմագիտություն, XIX դար), Երևան. 2004, էջ 177.

79 Потто В.А., Памяти старых кавказцев, Тифл., 1897:

80 Потто В.А.,Генерал-адютант Иван Давидович Лазарев, Тифл., 1900:

81 Потто В.А., Кавказская войное въ отдельныхъ очеркахъ, эпизодаъ, легендахъ и легендахъ и біографияхъ, вып. 1, СПБ1887, с1.

թյուններում ռազմահայրենասիրական մոտիվները: Թերևս հենց դրանով են պայմանավորված Վ. Պոտտոյի հեղինակած գրքերի յուրօրինակ, այդ շրջանում գոյություն ունեցող կարծրատիպերից հեռու, արտաքնապես հրապարակախոսական բնույթի վերնագրերը:

Իր նպատակադրումները կենսագործելու համար հեղինակը փորձել է. - «. . . պատմության մեջ առաջին պլան մղել մարդուն, որպես պատերազմի կարևոր տարր, ցույց տալ նրա տառապանքները, նվաճումներն ու անհաջողությունները[82]»:

Չնայած Վ. Պոտտոյի հեղինակած աշխատությունների հանրամատչելի բնույթին դրանք գիտական լուրջ արժեք ներկայացնող պատմագիտական հետազոտություններ են:

Դա պայմանավորված է հատկապես նրա հետազոտությունների աղբյուրագիտական հարուստ հենքով: Հեղինակը իր գործերում լայնորեն օգտագործել է Կովկասի հնագիտական հանձնաժողովի հրատարակած փաստաթղթերը, արխիվային նյութեր, պարբերական մամուլի հրապարակումներ, կովկասյան կնճռոտ հիմնահարցերին վերաբերող գիտական գրականությունը, դեպքերին անմիջական մասնակիցների հուշերը և այլն:

Պոտտոյի ստեղծագործության առանձնահատկությունը նրանում է, որ հեղինակը պատմագիտական նյութի բծախնդիր ուսումնասիրությամբ և գիտական իր ժամանակի համար, բավականին անաչառ վերլուծությամբ, փորձել է դեպքերին ակտիվորեն մասնակցած անձանց գործունեությունը վեր հանելով, կոնկրետության մեջ, ներկայացնել պատերազմների ընթացքում Կովկասում ծավալված դրամատիկ իրադարձությունների այս կամ այն ժամանակահատվածի պատմությունը, ռազմական այդ առճակատմանը առանձին անհատների մասնակցության լուսաբանմամբ ձևավորել պատմական տվյալ ժամանակաշրջանի խճանկարը:

Խորագիտակ պատմաբանի և քաջահմուտ հրապարակախոսի որդեգրած եզակին ելակետ ընդունելու, մասնավորի միջոցով ընդհանուրը ներկայացնելու մեթոդի կիրառումը ավելի քան շահեկան է քննարկվող ժամանակահատվածում Կովկասում Ռուսաստանի մղած պատերազմներին հայերի, հասկանալի պատճառով, թեև քանակապես համեմատաբար քիչ, բայց անչափ ակտիվ մասնակցության լուսաբանման առումով:

---

82 Потто В.А., Кавказская войное въотдельныхъочеркахъ, эпизодаъ, легендахъ и легендахъ и біографияхъ, СПБ1887, с2.

Եթե դրան էլ ավելացնենք այդ –պատերազմներին հայ ժողովրդի մասնակցությունը օբյեկտիվորեն լուսաբանելու Պոտտոյի հայանպաստ սկզբունքայնությունը, ապա ակնհայտ է դառնում պատմագեղարվեստական ոճով գրված այդ հետազոտությունների նաև անուրանալի հայագիտական արժեքը:

Պոտտոն Հայաստանին ու հայ ժողովրդին նվիրված բազմաթիվ հրապարակումների հեղինակ է, ինչպես օրինակ «Արարատի երկիրը (Հայաստան)[83]», «Կարսի պաշարումն ու առումը 1828 թ. [84]», «Շուշիի հերոսական պաշտպանությունը[85]», «Երևանի նվաճումը[86]» «Էջմիածնի գրավումը[87]», «Դ. Վ. Դավիդովը Երևանի սահմանին[88]», «Բայազետի հերոսական պաշտպանությունը 1829թ[89]. » ևայլն:

Պոտտոն կովկասյան պատերազմներին նվիրված իր աշխատություններում հիմնավորում է այն գաղափարը, որ հայերը հնարավոր ամեն ինչով, շատ դեպքերում, նույնիսկ վճռորոշ օգնություն էին ցուցաբերում ռուսական զորքերին: Նրա աշխատանքներում փաստառատ նյութի մատուցմամբ, հայերը ներկայացվում են որպես Ռուսական կայսրության գործին անսահմանորեն նվիրված ժողովուրդ[90]: Խոսելով ադրբեջանցիների մասին, որոնց այդ շրջանից սկսած, ռուսական կողմի մատուցմամբ, հապճեպորեն սկսեցին, առաջին մոտավորությամբ, կոչել կովկասյան թաթարներ. Վ. Պոտտոն բազմաթիվ փաստերով հիմնավորում է, որ նրանք մշտապես համագործակցում էին թշնամական ուժերի հետ՝ պատեհ պահին թիկունքից հարվածելով ռուսական զորքերին, որը շատ հաճախ դրսևորվում էր նաև ռուսներին անդավաճանորեն սատարող հայերին ոչնչացնելու փորձի մեջ[91]:

«Այն բանից հետո, ինչ Հայաստանը վերջնականապես կորցրեց իր քաղաքական անկախությունը, «Կովկասյան պատերազմը առանձին ակնարկներում, դիպվածքներում, փառաբանումներում և կեն-

83 Потто В.А., Страна Арарата. (Армения). Изд. 2-е. Санкт Петербург.1905.
84 Потто В.А.,Осада и штурм Карса 1828 г. Солдатская библотека, СПБ. 1900
85 Потто В.А., Геройская оборона крепасти Шуши, 2-е издание, Санкт Петербург 1903.
86 Потто В.А., Покорение Эривани, Солдатская библиатека. СПБ 1900.
87 Потто В.А., Взятие Эчмиадзина.Солдатская библиотека, СПБ. 1900.
88 Потто В.А.,Д.В. Давидов на эриванской граници. Солдатская библиатека. СПБ 1900.
89 Потто В.А., Геройская защита Баязета 1829г. , Солдатская библиотека, СПБ. 1901.
90 Потто В.А.,Геройская оборона крепасти Шуши, 2-е издание, Санкт Петербург 1903, с. 7.
91 Նույն տեղում, էջ 9.

սագրություններում», աշխատություններում գրում է Վ. Պոտտոն,- հայ ժողովրդի համար սկսվեց անվերջանալի տառապալի պայքար հանուն հավատի ու ազգային ինքնության պահպանման. . .

Հայերը ոչ մի կողմից օգնություն չէին կարող ակնկալել: Արևելքից, հարավից ու արևմուտքից անշարժ պայի նման կանգնած էին մահմեդական երկրները, որոնք իրենց հսկայական տարածքներով հայ ժողովրդին անհուսալիորեն կտրել էին քրիստոնեական աշխարհից. . . և միայն Կովկասյան լեռնաշղթայից այն կողմ ձևավորվում էր այնքան հզոր մի պետություն, որը կարողացել էր ջախջախել թաթարներին և իր տիրապետությունն էր հաստատել հսկա Վոլգայի ակունքներից մինչև Կասպից ծովի ափերը: Եվ ահա Հայաստանի հայացքը ավելի ու ավելի էր ուղղվում դեպի հյուսիս, դեպի հզորացող Ռուսիան[92]:

Իհարկե, անընդունելի է շահերի համընկումը ներկայացնել որպես հայերի, իբր, ծայրահեղ անելանելի կացության արդյունք: Պատմական փաստերը անհերքելիորեն վկայում են, որ ազգային կյանքով ապրող հայությունը, մասնավորապես Արցախում, պարսկական պետականության շրջանակներում օգտվում էր ընդգծված ինքնավարությունից: Հայերը ունեին իրենց ազգային արմատական շահերին սատարող ներկայությունը պետական կառավարման գործընթացներում[93] և այլն:

Իր «Կարսի պաշարումն ու առումը 1828 թ. » ուսումնասիրությունում մեծանուն պատմաբանը ընդհանրացնելով հայերի մասնակցությունը ռուս-թուրքական 1828-1829 թթ. պատերազմնին գրում է «Ամենուր, ինչը հաստատվեց հետագայում, կրկնվում էին միևնույն տեսաբանները»: Հայերն ամեն ինչով օգնում էին ռուսական զորքերին[94]: Այս տողերը վստահաբար կարելի է դարձնել վաստակաշատ պատմաբանի ու ջերմեռանդ հրապարակախոսի ստեղծագործությունում հայ ժողովրդին վերաբերող յուրաքանչյուր հետազոտության, վերնագրի ու էջի բնաբանը:

Որպես իրատես և ուղղամիտ հետազոտող Պոտտոն ամենևին էլ չի թաքցնում, չի սքողում հայերի նման ռուսամետության դրդապատճառները: Նա հիմնավորապես հերքում է որոշ ռուսական իշ-

92 Потто В., Кавказская война въотдельныхъ, эпизодахъ, легендахъ и биографияхъ, III, вып. IV, издание второе, ц-Петербургъ 1888. С. 713-714:

93 Բալայան Վ. , Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրեր. -Եր. : 2002, էջ 167-168:

94 Потто В.А. Осада и штурм Карса 1828 г. Солдатская библиотека, СПБ.1900 С 11.

խանավորների ու պաշտոնական պատմագրության այն գրչակների ստահոտ ու ծայր աստիճան ցինիկ պնդումները, որ իբր ռուսների նկատմամբ հայերի նվիրվածության բուն պատճառը դա Ռուսական կայսրության նկատմամբ նրանց ունեցած վախն էր[95]: Վ. Պոտտոն, իրավմամբ, հավատակից ռուս ժողովրդի նկատմամբ հայության համակրանքի ակունքները տեսնում էր ռուսական պետության և հայ ժողովրդի, ըստ իրեն, արմատական շահերի համընկման մեջ:

Վ. Պոտտոյի հայագիտական բնույթի ուշագրավ հետազոտություններից է նաև «Ղարաբաղի առաջին կամավորները ռուսական տիրապետության հաստատման շրջանում: (Մելիք-Վանի և Հակոբ-Յուզբաշի Աթաբեկովները)» գիրքը, որը առաջին անգամ 1902 թ. լույս է տեսել Թիֆլիսում: Գրքում հեղինակը Անդրկովկասը կայսրությանը միացնելու համար ծավալված 1804-1813թթ. և 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմների ընդհանուր ֆոնի վրա հետազոտել-լուսաբանել է Ղարաբաղի մելիքներ Հովհաննես և Հակոբ Աթաբեկովների և բազմաթիվ ուրիշ հայ կամավորների այդ պատերազմներում Ռուսաստանին մատուցած բացառիկ ծառայությունները, տարածաշրջանը Ռուսական պետությանը միացնելու գործում նրանց անուրանալի վաստակը:

Ինչպես և հատուկ է հմուտ պատմաբանին, գրքի սկզբում, Պոտտոն մի հակիրճ անդրադարձ է կատարել Ղարաբաղի պատմական անցյալին: Հեղինակը հատուկ շեշտել է, որ Ղարաբաղը դա պատմական Հայաստանի տարածք է և որ երկրամասի աբորիգենները հենց հայերն են: Ամփոփելով 18-րդ դարում Ղարաբաղում ծավալված իրադարձությունները Պոտտոն միանգամայն իրավացիորեն նկատում է, որ եթե չլինեին Ղարաբաղի մելիքների ներքին տարաձայնությունները, ապա . ինչպես գրում է հեղինակը. - Ջևանշիր ցեղի առաջնորդ Փանահը իր քոչվոր թաթարների հետ երբեք չէր տիրի երկրամասին[96]:

Գրքում Պոտտոն հատկապես բարձր է գնահատում Ղարաբաղում Նադիր շահի վարած հեռատես հայանպաստ քաղաքականությունը[97]:

Ներկայացնելով Աղա Մահմեդի ավերիչ արշավանքները Հեղինակը օգտագործելով փաստերը, հիմնավորում է, որ այդ ընթացքում

95 Հովհաննիսյան Հ. , Հայագիտությունը Ռուսաստանում (պատմագիտություն, XIX դար). - Եր. -2004, էջ 200:

96 Потто В.А., Первые добровольцы Карабага въ оэпоху бодвореія русскаго владычества (Меликъ-Вани и Акопъ-Юзбаши Атабековы). Тифлись. 1902.

97 Նույն տեղում, էջ 3:

Ղարաբաղի հայությունը նվազեց մոտ 40 հազար ծխով[98]: Որպես ռազմական գործի մասնագետ գեներալ Պոտտոն առանձնացնում է Արցախի աշխարհագրական յուրահատկությունները, որոնցով էլ պայմանավորված էին տարածաշրջանում վարվող ռազմական գործողությունների առանձնահատկությունները:

Հեղինակը հատուկ ընդգծում է նման տեղանքում ռազմական հաջողությունների հասնելու գործում տեղաբնիկների աջակցության կենսական նշանակությունը: Պոտտոն հանգամանորեն քննարկում է, հատկապես, Շուշիի ստրատեգիական դիրքը: Անհետաքրքիր չի լինի նշել, որ մինչ օրս ռազմական գործի մեկ այլ հմուտ մասնագետի Դրոյին վերագրվող այն միտքը որ ով տիրել է այդ ամրոցին, նա էլ իշխել է երկրամասում իրականում, առաջին անգամ հենց «Ղարաբաղի առաջին կամավորները ռուսական տիրապետության հաստատման շրջանում (Մելիք-Վանի և Հակոբ Յուզբաշի Աթաբեկովներ)» գրքում ճիշտ և ճիշտ նույն ձևակերպմամբ արտահայտել է Պոտտոն[99]: Գրքում հանգամանորեն ներկայացված է Ղարաբաղի խանության միացումը Ռուսաստանին: Եվ կրկին այդ արված է միայն իրեն՝ պատմաբան Պոտտոյին հատուկ ոճով: Այդ գործը ղեկավարած ու նրանց աջակցած անհատների կենսագրությունների, ճակատագրերի լուսաբանման միջոցով: Փաստական նյութի մանրակրկիտ ուսումնասիրմամբ գրքում, իրադարձությունների ծավալուն ֆոնի վրա լուսաբանված են գեներալներ Ցիցիանովի, Պասկևիչի, Երմոլովի, բարձրաստիճան սպաներ՝ Իլյաշենկոյի, Կարյագինի, Կոտլյարևսկոն և ռուսական զորքերի տարբեր մակարդակների այլ զորահրամանատարներից յուրաքանչյուրի ներդրումը երկրամասը ռուսաստանին միացնելու գործում: Ամենահանգամանալից կերպով ներկայացված են նաև այդ բանում Ռուսական զորքերին ակտիվորեն աջակցած հայերի գործունեությունը ու հատկապես Ջրաբերդցի հարյուրապետ Հարություն Աթաբեկովի որդիներ Հովհաննես (Վանի) և Հակոբ Աթաբեկովների գործունեությունը: Գրքում բերված են բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ տարածաշրջանում իրենց գերիշխանության հաստատումը ռուսները հենց սկզբից էլ կապել են հայերի հետ, այդ հարցում ակնկալել նրանց աջակցությունը և մեծապես, օգտվել դրանից:

Այսպես 1804 թ. Գյանջայի խանությունը գրավելուց հետո այն-

98 Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русскаго владычества (Меликъ-Вани и Акопъ-Юзбаши Атабековы). Тифлисъ, 1902, с. 7-8.
99 Նույն տեղում, էջ 4:

տեղ իրենց դիրքերը ամրապնդելու, հենարան ստեղծելու նպատակով գեներալ Ցիցիանովի հրամանով մայոր Լիսաննիչը ռեպրեսալիա կատարեց այդ ժամանակ դեռ պարսկաստանին պատկանող Ղարաբաղի խանությունում և այնտեղից դուրս բերելով 250 հայ ընտանիքներ նրանց բնակեցրեց Գյանջայում[100]:

Սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրմամբ հեղինակը գալիս է այն համոզման, որ 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմում հայ կամավորները մշտապես գտնվել են ռազմական գործողությունների առաջավոր բնագծերում, վտանգելով իրենց օգնել ռուսներին դուրս գալու ամենադժվարին կացություններից: Այդ հետևությունը, գրքում, հիմնավորված է բազմաթիվ փաստերով: Այսպես, Պոտտոն մանրամասնորեն ներկայացնում է այն անգնահատելի ծառայությունը, որ մատուցեց հարյուրապետ Հովհաննես Աթաբեկովը ռուսական բանակին, դուրս բերելով գնդապետ Յարդգինի Ասկերանի կիրճի մոտ շրջափակման մեջ հայտնված զորախումբը: Խոսելով այդ դեպքերի մասին հեղինակը մասնավորապես գրում է. -«Բարեբախտաբար ռուսական ջոկատին պահապան կանգնեց նախախնամությունը: Կարյագինի ջոկատում կար մի կամավորական հայ՝ հարյուրապետ Հովհաննես անունով: Եվ այդ մարդը միայնակ Կարյագինին ավելի շատ օգուտ բերեց, քան կարող էին այդ անել մի քանի հարյուր հեծյալներ[101]»: Այնուհետև գրքում մանրամասն ներկայացված է այդ զորաջոկատի թշնամու թիկունքում փորձություններով լի ոդիսականը մինչև ռուսական հիմնական ուժերին միանալը: Իրադարձությունների կենտրոնական դեմքը Հովհաննես Աթաբեկովն էր իր կրտսեր եղբոր հարյուրապետ Հակոբի հետ: Նրանք գնդապետ Կարյագինի և նրանց միացած մայոր Կոտլարևսկու զորաջոկատների և ուղեկցորդներն էին, և կապավորները, և հետախույզները, և պարեն հայթայթողները: Եվ երբ թվում էր, որ կացությունը ուղղակի անելանելի է ռուսները նորից ու նորից ապավինում էին իրենց փորձված, անդավաճան բարեկամների՝ Հովհաննես և Հակոբ հարյուրապետների հնարամտությանն ու փորձառությանը և չէին սխալվում: Գրքում նկարագրելով ռուսական զորախմբի ռազմերթի ընթացքում ստեղծված բազմաթիվ բարդ իրավիճակներից մեկը Պոտտոն, մեջբերում անելով ականատեսի հիշողություններից, գրում է . -«Թշնամու հետ առճակատումը օգուտ չի տա: Մեզ կոչնչացնեն,-խորհուրդ

100 Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русскаго владычества (Меликъ-Вани и Акопъ-Юзбаши Атабековы). Тифлисъ, 1902, с. 9-10.
101 Նույն տեղում, էջ 15:

էր տալիս Հովհաննես Աթաբեկովը Կարյագինին և Կոտլյարևսկուն . - Վստահեցինք ինձ: Ես Ղարաբաղը 5 մատիս պես գիտեմ և ձեզ կտանեմ այնպիսի արահետներով որոնցով դեռ ոչ ոք չի անցել. . . Ես կփրկեմ և մարդկանց և հրանոթները[102]», վերջում ավելացնում է Հարյուրապետ Հովհաննեսը: Այդ անգամ էլ ռուսները առանց վարանելու իրենց ճակատագիրը վստահեցին երիտասարդ հային և ինչպես ցույց տվեցին դեպքերի հետագա ընթացքը միանգամայն ճիշտ վարվեցին: Մելիք Հովհաննեսի ուղեկցությամբ նրանք շրջանցեցին բազմաթիվ պարսկական հենակետեր և անակնկալ գրոհով տիրացան Շահ-Բուլաղի ամրոցին[103]: Մեկ այլ դրվագում ներկայացնելով Ղարա-Բաբայի ճակատամարտի մանրամասները, Պոտտոն ռուս ժողովրդի նկատմամբ հայերի անմնացորդ նվիրվածությունը ընդգծելու նպատակով առանձնացնում է այն փաստը, որ հարյուրապետ Հովհաննես Աթաբեկովի և նրա հայ զինակիցների մոտ ռուսների հանդեպ հավատարմություն չերերաց անգամ այն պահին, երբ հենց ռուսների շարքերում բույն դրած դավաճանության արդյունքում 50 զինվորներ իրենց հրամանատարի՝ պորուչիկ Լիսենկոյի գլխավորությամբ դասալքեցին և փախան հակառակորդի ճամբար[104]: Գրքում փաստառատ նյութի օգտագործմամբ հեղինակը հիմնավորում է, որ ռուսական հրամանատարությունը միշտ էլ բարձր է գնահատել հայերի մասնակցությունը այդ պատերազմներին և ռուսները պատեհ առիթներով չեն հապաղել իրենց երախտագիտությունը հայտնել հայ զինակիցներին: Բերված բազմաթիվ փաստերից 1-ը պատմում է այն մասին, թե ինչպես հերթական հաջող ռազմական գործողությունից հետո անձամբ գեներալ Ցիցիանովը զինվորական շարքի առջև իր խորին շնորհակալությունն է հայտնում կռվում աչքի ընկած Հովհաննես Աթաբեկովին և նրան նվիրում իր արծաթյա ժամացույցը[105]: Գրքում ամբողջությամբ բերված են միայն Հովհաննես Աթաբեկովին գեներալներ Ռտիշչևի, Գուդովիչի, Կոտլյարևսկու, Երմոլովի և այլոց կողմից տրված մեկ տասնյակի հասնող շնորհակալագրերի տեքստերը, որոնցում վերջիններս իշխանությունների անունից շնորհակալություն են հայտնում հարյուրապետին ռազմական գործողու-

102 Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русскаго владычества (Меликъ-Вани и Акопъ-Юзбаши Атабековы). Тифлисъ, 1902, с. 20-21.

103 Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русскаго владычества (Меликъ-Вани и Акопъ-Юзбаши Атабековы). Тифлисъ, 1902, с. 22.

104 Նույն տեղում, էջ 19:

105 Նույն տեղում, էջ 29:

թյունների ընթացքում ռուսական զորքերին մատուցած բացառիկ ծառայությունների համար:

Ռուս-պարսկական (1804-1813 թթ.) 1-ին պատերազմի ավարտից քիչ առաջ քաջասիրտ Մելիք Հովհաննեսին նվիրական ու անբասիր ծառայության համար շնորհվեց ռուսական բանակի պրապորշիկի կոչում, և նշանակվեց 200 ռուբլի տարեկան թոշակ, իսկ արդեն 1821 թ. նա պարգևատրվեց «Արիության համար» ոսկե մեդալով[106]:

Պոտտոն գրքում հանգամանորեն անդրադառնում է պատերազմին Աթաբեկով եղբայրների մասնակցության յուրաքանչյուր դրվագի, վերլուծում ու արժեքավորում է դրանք: Այսպես հեղինակը բազում փաստերով հաստատում է, որ ռուս-պարսկական պատերազմի ամենաբարդ շրջանում՝ 1806 թ. Հովհաննես և Հակոբ հարյուրապետները մի քանի այլ ղարաբաղցիների հետ վճռորոշ օգնություն են ցուցաբերել Նեբոլսինի ջոկատին:Կամ էլ խոսելով պատերազմի ավարտական շրջանի մասին Պոտտոն ցույց է տալիս, թե ինչպես 1812 թվականին Աթաբեկով եղբայրները անխուսափելի թվացող կործանումից փրկեցին մայոր Իլյաշենկոյի 200 հոգանոց զորաջոկատը[107]: Իր գրքում բերելով վերոհիշյալ և նման բազմաթիվ այլ փաստեր Պոտտոն հանգում է այն եզրակացությանը, որ եթե չլիներ հայերի գործուն աջակցությունը Ռուսական զորքերին, ապա ռուսները հավելյալ մեծ դժվարություններ պիտի դիմագրավեին այդ պատերազմում: Այդ միտքը ավելի հիմնավորելու համար, իր գրքում, Պոտտոն ներկայացնում է 1826 թ. հուլիսին Զանգեզուրում շրջափակման մեջ հայտնված փոխգնդապետ Նազիմկայի գլխավորած 1000 հոգանոց 42-րդ եգերական գնդի երեք վաշտերի անփառունակ վախճանի պատմությունը: Ավարտելով սարսափելի եղելության նկարագրությունը հեղինակը գրում է. - «Նրանք կարող էին փրկվել, եթե միայն հրամանատար փոխգնդապետ Նազիմկան վստահեր հայերին, որոնք առաջարկելով իրենց ծառայությունը խոստացան, հրանոթները գյուղում թաքցնելուց հետո, ռուսական ջոկատին լեռնային արահետներով հասցնել Շուշի: Նազիմկան չընդունեց այդ առաջարկությունը և 1000 հոգուց փրկվեց միայն 8 մարդ[108], եզրափակում է Պոտտոն: Ինքը գոռոզամիտ փոխգնդապետ Նազիմկան գերի ընկավ պարսիկներին[109]»:

106 Նույն տեղում, էջ 46-50:
107 Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русскаго владычества (Меликъ-Вани и Акопъ-Юзбаши Атабековы). Тифлисъ, 1902, с. 46.
108 Նույն տեղում, էջ 59-60.
109 Потто В.А., Геройская оборона крепасти Шуши, Санкт Петербург 1903. С. 15.

Պոտտոն հատուկ շեշտում է այն փաստը, որ ռուսական բազմամարդ ջոկատից երկու սպաներն ու վեց շարքայինները փրկվեցին այն բանի շնորհիվ, որ հայերը հասցրեցին թաքցնել նրանց իրենց գյուղում, «… որտեղ նրանք ընդունվեցին որպես ցանկալի հյուրեր, իսկ Ղարաբաղից պարսիկներին վտարելուց հետո նրանք բարեհաջող միացան իրենց գնդի հետ»[110]:

Գրքում առատորեն ներկայացված ռուսական իշխանությունների կողմից առավել աչքի ընկած հայ կամավորներին տրված պաշտոնական բնութագրերը բացառիկ նշանակություն ունեն այդ շրջանի հայ-ռուսական հարաբերությունների պատմության լուսաբանման համար:

Անդրադառնալով 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին Պոտտոն փաստերով ներկայացնում է հայերի ամենակտիվ մասնակցությունը Շուշիի հերոսական պաշտպանությանը: «Հայերը,- գրում է հեղինակը.- իհարկե, կարող էին իրենց հնազանդությունը հայտնել և աղ ու հացով դիմավորել պարսիկներին, ինչպես որ այդ արեցին թաթարները: Այդ դեպքում նրանք կապահովեին և իրենց կյանքը և կփրկեին ունեցվածքը: Սակայն հայերը չդավաճանեցին ռուսներին[111]» .- եզրափակում է Պոտտոն:

Շուշին պաշտպանող բազմաթիվ հայերի մեջ բացառիկ քաջությամբ ու հնարամտությամբ կրկին աչքի էր ընկնում իր կյանքի արդեն 5-րդ տասնամյակը բոլորող Հովհաննես հարյուրապետը:

Նրա ջանքերով կապ էր հաստատվել բերդի պաշտպանների և շրջակա հայկական գյուղերի միջև, որտեղից շրջապատված ամրոցը պարեն էր ստանում:

Փաստառատ նյութով ներկայացնելով Ասլանբեկ Աթաբեկովի, Բարութչի Պողոսի, Հարություն Ալթունովի, Սաֆար և Ռոստոմ Թարխանյանների, Հովսեփ Բեգլարյանի և էլի ուրիշ շատ ու շատ հայ կամավորների սխրանքները Շուշիի պաշտպանության ընթացքում Պոտտոն առաջիններից մեկը իրավացիորեն հանգել է այն տեսակետին, որ հերոս ամրոցը կանգուն մնաց մեծապես նաև հայերի արիության շնորհիվ:

Պոտտոյի գրքում կարմիր թելի նման անցնում է այն գաղափարը, որ հայ ու ռուս ժողովուրդների բարեկամությունը, ոչ թե ինչ որ

110 Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русскаго владычества (Меликъ-Вани и Акопъ-Юзбаши Атабековы). Тифлисъ, 1902, с. 60.

111 Նույն տեղում, էջ 61:

վերացական մի հասկացություն է, այլ նախ և առաջ անհատների, առանձին կոնկրետ մարդկանց սրտաբուխ ու անկեղծ հարաբերություն: Գրքում բերված են այդ միտքը հաստատող բազմաթիվ փաստեր: Երկու ժողովուրդների, բազում փորձություններով անցած, ջերմ ու սրտառուչ փոխհարաբերությունների առումով ավելի քան խորհրդանշական է, գրքում, 1849 թ. Ղարաբաղ կատարած իր այցելության ժամանակ կովկասի փոխարքա իշխան Միխայիլ Սեմյոնավիչ Վորոնցովի Հովյաննես հարյուրապետ Աթաբեկովի հետ հանդիպման ականատեսների վկայությունների վրա հիմնված, նկարագրությունը: «Վորոնցովը Հովհաննես Աթաբեկովին գիտեր դեռ Ցիցիանովի ժամանակներից,- գրում է Պոտտոն,- փոխարքան Հովհաննեսի հետ վերաբերվում էր որպես մարտական մերձավոր ընկերոջ: Լինելով Կարյագինի և Կոտլյինսկու սխրանքների ականատեսն ու մասնակիցը նա լավ գիտեր Աթաբեկովների ընտանիքը և շտապեց իր ցավակցությունը հայտնել Հակոբի անժամանակ մահվան կապակցությամբ: Հետո, իշխանը իր մոտ կանչեց Հովհաննեսի ու Հակոբի կրտսեր զավակներին գրկեց, գուրգուրեց նրանց ու ճոխ նվերներ տվեց: Իսկ 3 տարի անց Վորոնցովի հրամանով նրանցից 3-ին ընդունեցին Թիֆլիսի գիմնազիային կից ազնվական պանսիոն: Աթաբեկովների գերդաստանի այդ 3 ներկայացուցիչների պանսիոնում ուսման բոլոր ծախսերը հոգում էր հենց ինքը Կովկասի փոխարքան[112]:

Ամփոփելով ասվածը կարող ենք վստահորեն նշել, որ ինչպես Պոտտոյի ուրիշ հետազոտությունները, այնպես էլ նրա «Ղարաբաղի առաջին կամավորները ռուսական տիրապետության հաստատման շրջանում (Մելիք-Վանի և Հակոբ-Յուզբաշի Աթաբեկովները)» գիրքը էական ներդրում են 19-րդ դարի հայագիտության մեջ: Հայ և ռուս ժողովուրդների մարտական եղբայրության, նրանց զինակցության պատմության լուսաբանումը Պոտտոյի հետազոտություններում այսօր մոտ 2 դար անց էլ չի կորցրել հրատապությունը և իր մեջ մի առանձին խորհուրդ է պարունակում հատկապես մեր բարդ ու առանց բացառության, երկու ժողովուրդների համար էլ ճակատագրական ժամանակներում:

112 Նույն տեղում, էջ 70-71:

SUMMARY

THE ARMENOLOGICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH BY V.P.POTTO "THE FIRST VOLUNTEERS OF KARABAGH IN THE AGE OF ESTABLISHING RUSSIAN DOMINANCE (MELIK-VANI AND AKOP-YUZBASHI ATABEKOVS)"

E.V.POGHOSYAN

In his research on the Caucasian Caucasology, classic V. Potto studied and highlighted the exceptional merits of the Armenian volunteers in Russia in the Russian-Persian wars of 1804-1813 and 1826-1828, regarding the annexation of Transcaucasus to the Russian state. The book cites numerous facts that indicate that the Russians initially established their power in this territory with the help of the Armenians, received all the support from their side and very willingly used it.

Having carefully studied the original sources, the author comes to the conviction that in the war between Russia and Persia, the Armenian volunteers were always on the front line of military operations. V.A. Potto emphasizes the essential importance of helping the local population in conducting successful military operations in an area like Karabakh. In his research, the author shows that the Russian commanders always highly appreciated the active assistance of the Armenians to the Russian troops.

Key words: *Russian Caucasian science, war, Karabakh volunteers, military cooperation, Armenian-Russian Friendship.*

РЕЗЮМЕ

АРМЕНОВЕДЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ИССЛЕДОВАНИЯ В.А.ПОТТО ''ПЕРВЫЕ ДОБРОВОЛЬЦЫ КАРАБАГА ВЪ ЭПОХУ ВОДВОРЕНИЯ РУССКАГО ВЛАДЫЧЕСТВА (МЕЛИКЪ-ВАНИ И АКОПЪ-ЮЗБАШИ АТАБЕКОВЫ)"

Э.В. ПОГОСЯН

В своём исследовании классик руского кавказоведения В.Потто изучил-осветил исключительные заслуги перед Россией армян добровольцев в Русско-персидских войнах 1804-1813 г.г. и 1826-1828 г.г., в деле присоединения закавказья к российскому государству. В книге приводятся многочисленные факты, свидетельствующие о том, что установление своей власти на данной территории русские изначально связывали с армянами, получали с их стороны всяческую

поддержку и весьма охотно пользовались ею.

Тщательно изучив первоисточники, автор приходит к убеждению, что в войне России с Персией добровольцы армяне всегда находились на передовой линии военных действий. В. И. Потто особо подчёркивает существенную важность помощи местного населения в проведении успешных военных действий в такой местности как Карабах. В исследовании автор показывает, что российское командование всегда высоко оценило деятельную помощь армян русским войскам.

Ключевые слова: *Российские кавказская наука, война, добровольци Карабаха, военное сотрудничество, Армяно-российская дружба.*

ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱԳԻՇԸ՝ ԸՍՏ «ՄՇԱԿ», «ԺՈՂՈՎՈՒՐԴ» ԵՎ «ՅԱՌԱՋ» ԼՐԱԳՐԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՄԻՋԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՎԵՆԻ ԾԱՏՐՅԱՆ
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր
և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի ասպիրանտ,
դասախոս

Բանալի բառեր՝ *Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, հայկական մամուլ, Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Մշակ լրագիր, քաղաքականություն, մամուլի պատմություն, քաղաքական իմիջ, Յառաջ լրագիր, Ժողովուրդ լրագիր, քաղաքական գործընթաց, պատմական գործընթաց:*

Հայաստանի Հանրապետությունը քաղաքական ու տնտեսական խորը ճգնաժամի մեջ էր 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Անսպասելի բռնկված պատերազմը[113] թույլ չէր տալիս նույն տարվա

113 1920 թ. նոյեմբերի սկզբին անսպասելիորեն Հայաստանի Հանրապետության հողում էր հայտնվել թուրքական բանակը: Քեմալական զորքերը կարողացել էին պարտության մատնել հայկական ոչ կանոնավոր բանակին, որոշակի տարածքներ վերցնել, այդ թվում և Կարսի մարզը, շարժվել դեպի Ալեքսանդրապոլ: Հայկական կողմին խիստ դժվարությամբ և ծանր պայմաններով հաջողվել էր զինադադար կնքել նոյեմբերի 18-ին, չնայած այն հաճախ էր խախտվում: Ստեղծվել էր հատուկ հանձնախումբ Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ: 1920 թ. նոյեմբերի 24-ից սկսած այն պետք է բանակցություններ վարեր թուրքական կողմի հետ, որը որպես հաղթություն տարած կողմ անընդհատ նոր պայմաններ էր թելադրում:

մայիսին հաստատված դաշնակցականների բյուրո-կառավարությանը՝ Համազասպ Օհանջանյանի գլխավորությամբ, գործողությունների հստակ ծրագրեր առաջ քաշել և մտածել դրանց իրագործման մասին: Իրադարձություններն արագ էին ծավալվում, ինչը հնարավորություն չէր ստեղծում խաղաղ պայմաններում քաղաքական գործունեություն իրականացնել:

1918 թ. մայիսի 28-ին հիմնադրված Հայաստանի Հանրապետության օրհասական օրերի վերջին՝ չորրորդ վարչապետը դարձավ Սիմոն Վրացյանը, որը ժամանակի ոչ դաշնակցական մամուլում ներկայացվում էր որպես կուսակցության ձախակողմյան թևի ընդգծված ներկայացուցիչ[114]: «Աշխատավորներ» էին պիտակավորվում բոլոր այն դաշնակցական գործիչները, որոնք հարում էին կուսակցության ձախակողմյան թևին: Այդպիսի ձախակողմյան ներկայացուցիչ չորս նախարարներ և երկու էսէռներ՝ սոցիալիստական կուսակցության ներկայացուցիչներ, Սիմոն Վրացյանի առաջարկով կազմեցին կոալիցիոն կառավարություն, որն ընդամենը 8 օր կարողացավ ղեկավարել ծանրագույն իրավիճակում հայտնված երկիրը:

Նախկին դաշնակցական բյուրո-կառավարությունը Համազասպ Օհանջանյանի վարչապետությամբ հիասթափեցրել էր իր գործողություններով հատկապես Երևանում լույս տեսնող «Ժողովուրդ»-ի խմբագրությանը[115]: Նոր կառավարության ձևավորումը մեծ հույսեր էր արթնացրել ինչպես Հայ ժողովրդական կուսակցության մամուլի օրգանում, այնպես էլ ժամանակի հայաստանյան, թիֆլիսյան և Կ. Պոլսի մամուլի ներկայացուցիչների շրջանում, քանի որ դա առաջին հերթին պայմանավորված էր Համազասպ Օհանջանյանի կառավարությունում գյուղատնտեսության, պետական գույքերի և աշխատանքի նախարար Ս. Վրացյանի՝ միայն սեփական նախաձեռնությամբ, առանց այլոց միջամտությամբ և «անձամբ իր կառավարության կաբինետը ձևավորելու» հանգամանքով: Հայաստանի պառլամենտում Ս. Վրացյանի՝ վարչապետի թեկնածությունը միակն էր և այն ընդունվեց բացարձակ մեծամասնության կողմից (նիստին մասնակցող 35 պատգամավորներից միայն մեկը ձեռնպահ քվեարկեց): Նորանշանակ վարչապետը 24 ժամ էր խնդրել պատգամավորներից և առաջարկել էր կոալիցիոն կառավարություն ստեղծել: Սա լրագրերում

114 «Ժողովուրդ», օրգան հայ ժողովրդական կուսակցության, 1920 թ., նոյեմբերի 23-ի թողարկում, №191, Երևան

115 «Ժողովուրդ», օրգան հայ ժողովրդական կուսակցության, 1920 թ., նոյեմբերի 21-ի թողարկում, №190, Երևան

դիտարկվել էր որպես ստեղծված բարդ իրավիճակի արագ լուծման ամենաիրատեսական հնարավորություն[116]:

Մինչև Սիմոն Վրացյանի կազմած կոալիցիոն կառավարությունը գործի կանցներ 1920 թ. նոյեմբերի 25-ից սկսած, դեռևս առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին էր փորձել նորանկախ երկրի բարօրության համար բազմակուսակցական կառավարություն ստեղծել, սակայն հանգամանքների բերումով և Հ.Յ. Դաշնակցության կենտրոնական բյուրոյի ակտիվ ազդեցությամբ այդպես էլ չէր ստեղծվել կոալիցիոն կառավարություն: Այնպես չէր, որ Ս. Վրացյանի կազմած նոր կառավարությունը հանգեցրեց ծոներգի, բոլորի ուրախությանը, սակայն այն զգալիորեն ավելի լավ ընդունվեց լրագրերի կողմից, քանի ամսիներ առաջ՝ 1920 թ. մայիսին, ընդունվել էր դաշնակցական բյուրո-կառավարության կազմը, որտեղ բոլոր ներկայացուցիչները մեկ կուսակցության անդամներ էին՝ դաշնակցականներ:

Չնայած Հայաստանը պարենավորման, տնտեսական, քաղաքական ու ռազմական խորը ճգնաժամի մեջ էր, սակայն այդ շրջանում թե Երևանում, և թե Թիֆլիսում հայերեն հրապարակվող առաջատար, բազմաթիվ ընթերցողներ ունեցող լրագրերում Հայաստանի կառավարության փոփոխությունը, կոալիցիայի կազմումը սոցիալիստական կուսակցության հետ և նորակազմ կառավարությունում երկու սոցիալիստների ներկայությունը դիտարկվում էր որպես իրադարձություն, որը կարող է հետագա հաջողությունների գրավականը դառնալ, դուրս բերել ծանր իրավիճակից երկիրը: Բացի այդ Սիմոն Վրացյանը ներկայացվում էր որպես քաղաքական գործիչ, որն ի վերջո կշտկի նախկին կառավարությունների գործած բացթողումները[117]:

Տարիներ շարունակ քաղաքական խոշոր գործընթացների ժամանակ լրատվամիջոցների դերը մշտապես բարձր է: Ինչպես ներկայում, այնպես էլ հարյուրամյակ առաջ լրագիրները կարող էին աջակցություն ցույց տալ, սատարել քաղաքական գործիչներին՝ կառուցելով վերջիններիս դրական քաղաքական իմիջը: Քիչ չեն դեպքերը, երբ մամուլը ծաղրի ու պարսավանքի է ենթարկել կուսակցություններին և քաղաքական գործիչներին՝ թույլ չտալով հանրային անհրաժեշտ աջակցություն: Մինչև Ս. Վրացյանի վարչապետի պաշտոնում հաստատվելը ակտիվորեն լուրեր էին շրջանառվում մամուլում, թե իբր Պառլամենտի նախագահ Հովհաննես Քաջազնունին,

116 Տես «Ժողովուրդ», №190, նույն տեղում
117 «Մշակ», 1920թ., նոյեմբերի 26-ի թողարկում, №146, Թիֆլիս

դեռ տարիներ առաջ կողմնակից լինելով կոալիցիոն կառավարության, կրկին պարտություն է կրել Դաշնակցության ձախ թևին, որը սկզբում դեմ էր եղել կոալիցիա կազմելուն: Ոչ դաշնակցական մամուլում նշվում էր, որ Ս. Վրացյանը կուսակցության կենտրոնական բյուրոյից «լիազորված է կազմելու սեփական կաբինետը այնպես, որ այն հիմնականում բաղկացած կլինի առաջին հերթին դաշնակցականներից»[118]: Հաղորդվում էր, թե Ս. Վրացյանի կառավարությունում ընդգրկվելու էին Բ. Թոփչյանը՝ որպես ներքին գործերի մինիստր, և Կ. Ղազարյանը որպես արտաքին գործերի մինիստր, սակայն հաջորդիվ տեղի ունեցած իրադարձությունները փաստեցին որ մամուլում շրջանառվող անուններն անելիք չեն ունենալու նոր կառավարության կազմում:

Ս. Վրացյան քաղաքական գործիչը մամուլում մեծապես առանձնացավ 1920 թ. նոյեմբերի 24-ին Պառլամենտում հնչեցրած նոր կառավարության դեկլարացիայի արդյունքում: Եթե նախկին վարչապետերի կողմից տրվում էին խոստումներ, ապա Ս. Վրացյանի ելույթում խոստում չկար, նորընտիր նախարարապետը միայն երկրին անձնվիրաբար ծառայել էր խոստացել[119]: «Պետք էր մի կառավարություն՝ հեղինակավոր և ուժեղ, որն ի վիճակի լիներ անհողդողդ կամքով և երկաթե վճռականությամբ հավաքել իր շուրջը մեր երկրի բոլոր առողջ և կենսունակ տարրերը, նրանց միջոցով կենաց ու մահու մայքար մղել մեր ժողովրդի ու պետության ներքին ու արտաքին թշնամիների դեմ, ամենակարճ ժամանակում բարեկանգնել խարխլված կարգը Հայաստանում և կասեցնել Հայաստանին սպառնացող արտաքին վտանգը»,- գրում էր «Յառաջ»-ը՝ ներկայացնելով իրավիճակը, որի ժամանակ Ս. Վրացյանը իր ուսերին վերցրեց նոր կառավարության ղեկավարումը: Այս կերպ ընդգծվում է քաղաքական գործչի վճռականությունը անգամ ամենադժվար պահին երկրի կողքին լինելու առումով: Պատահական չէ, որ բացի վարչապետ լինելուց Ս. Վրացյանը համակարգելու էր նաև արտաքին գործերի նախարարությունը՝ միաժամանակ լինելով ներքին գործերի ժամանակավոր

118 «Մշակ», 1920թ., նոյեմբերի 25-ի թողարկում, №145, Թիֆլիս: Չնայած վարչապետի պաշտոնում Ս. Վրացյանը հաստատվել է 1920 թ. նոյեմբերի 23-ին կայացած Պառլամենտի արտակարգ նիստի արդյունքում, սակայն այդ տեղեկությունը Թիֆլիս հասնում է ավելի ուշ: Մինչդեռ Երևանում «Ժողովուրդ» լրագիրը 1920 թ. նոյեմբերի 23-ի թողարկման մեջ արդեն որոշակի տվյալներ է հաղորդում ապագա կառավարության կազմի և Հ. Օհանջանյանի սպասվող հրաժարականի մասին:

119 «Յառաջ», ՀՅԴ, հասարակական, քաղաքական, տնտեսական, գրական օրաթերթ, 1920թ., նոյեմբերի 24-ի թողարկում, №258, Երևան

մինիստր:

Հայաստանի Հանրապետության 4-րդ վարչապետի գործունեությունը համընկավ մի կողմից թուրքական կառավարական ներկայացուցիչների հետ Ալեքսանդրապոլում Ա. Խատիսյանի կողմից վարվող բանակցությունների, մյուս կողմից բոլշևիզմի՝ Հայաստանին անընդհատ սպառնացող վտանգի պայմաններում: Պատահական չէ, որ կառավարությունն իր դեկլարացիայում նշում էր, որ Հայաստանը պետք է ապավիներ միայն սեփական ուժերին և խամաճիկի չվերածվեր անգլիական իմպերիալիզմի և Սովետական Ռուսաստանի ձեռքում, բացի այդ՝ հնարավորինս շուտ կարողանար հաշտության, ապա և բարեկամության եզրեր գտնել քեմալական Թուրքիայի հետ:

«Հաշտությունից բարեկամություն» քաղաքական անցումը Թուրքիայի իշխանությունների հետ չընդունվեց ոչ «Մշակ», ոչ էլ «Ժողովուրդ» հայերեն լրագրերում: Հրապարակախոսների քննադատության թիրախը, սակայն, երբեք անձնավորված չէր. մեղադրանքներ էին ներկայացվում Դաշնակցության կենտրոնական բյուրոյին, այլ ոչ վարչապետին կամ նրա ղեկավարած կառավարությանը: Այս պարագայում նորակազմ կառավարությունը կարողացավ պահպանել դեմքը՝ հեռու մնալով լրագրերի կողմից «թրքասեր» պիտակավորվելուց:

1920 թ. նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 2-ը Երևանում հրատարակվող «Յառաջ» և «Ժողովուրդ» կուսակցական լրագրերի 7-ական թողարկում է տպագրվել: Երկու լրագիրները միմյանցից զգալիորեն տարբեր կերպ են ներկայացրել քաղաքական բոլոր իրադարձությունները, Ալեքսանդրապոլում ընթացող հաշտության բանակցությունները, այդ թվում և նորակազմ՝ Սիմոն Վրացյանի գլխավորությամբ կառավարության աշխատանքը: Այդ օրերին Հայ ժողովրդական կուսակցության մամուլի օրգանը խիստ քննադատաբար է ներկայացրել Դաշնակցության գործունեությունը՝ կրկին ուղիղ չներկայացնելով Ս. Վրացյանի գործունեությունը, հանդիպումները ռուսական, ամերիկական, վրացական և պարսկական դիվանագիտական ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների մասին հակիրճ, բայց օրեր անց հաղորդել էր թիֆլիսյան «Մշակ» լրագիրը՝ անդրադառնալով նաև մամուլի, Հայաստանի հեռագրական գործակալության և պետական բյուրոյի ներկայացուցիչների, արտաքին գործերի մինիստրության և մամուլի օրգանների միջև կապեր հաստատելու ձևի և

միջոցների մասին նախարարապետի կազմակերպած խորհրդակցությանը[120], որը լայնորեն լուսաբանվել է դաշնակցական «Յառաջ»-ում[121]: Դաշնակցական մամուլի օրգանը նոր կառավարության կազմումից հետո ամեն համարում տեղ է հատկացրել հրապարակումներ, որոնցով ապագայի հաջողության մասին փորձել է ներշնչել իր ընթերցողներին: Նոր կառավարությունը ներկայացվել է որպես հաջողության հասնելու գլխավոր միջնորդ և հնարավորություն: Կրկին առաջին դիրքում ոչ այնքան Ս. Վրացյանն է եղել, որքան Դաշնակցությունը, որը պետք է նորակազմ կոալիցիոն կառավարության շնորհիվ հաջողություններ արձանագրեր քաղաքացիների համար: Քաղաքական գործչի իմիջի ստեղծման տեսանկյունից սա բավականին հետաքրքիր է և առանձնահատուկ, քանի որ կոլեկտիվի հաջողությունը ազդում է նաև անհատի հաջողությունների վրա:

Միշտ չէ, որ ներկայացվել են նոր կոալիցիոն կառավարության հաջողությունները: Օրինակ, «Մշակ» լրագիրը մինչև կառավարության կազմի հաստատումը հաղորդել է, թե դեռևս չծնված մի քանի մինիստրություններ ձախողվել են, այդ թվում՝ առաջ է քաշված եղել գաղափար նոր կոալիցիոն կառավարությունում ներառելու Ստ. Մամիկոնյանին որպես անկուսակցական գործիչ, սակայն առաջարկը մերժվել էր, ինչը որակվել է որպես անհաջողություն: Նոյեմբերի 27-ին լույս տեսած «Մշակ» թերթում ներկայացվել է, որ «մինիստրական ճգնաժամը հաղթահարված է»: Սիմոն Վրացյանը հանդես է եկել որպես այդ բարդ իրավիճակը հաղթահարած քաղաքական գործիչ[122]: Նույն համարում Ս. Վրացյանի կազմած կառավարությունը, սակայն, որակվել է որպես ժողովրդի կողմից հավատ չունեցող նախաձեռնություն: Հետևաբար, որքան էլ քաղաքական ճգնաժամը նոր կառավարությամբ հաղթահարելի է համարվել, այունամենայնիվ, ընթերցողների առաջ Ս. Վրացյանի կառավարությունը «ժողովրդական հավատ չունեցող նախաձեռնություն» է ներկայացվել: Քաղաքական գործչի դրական իմիջի ստեղծման առումով այս քայլը բավականին մութ հեռանկար է խոստացել, հետևաբար Ս. Վրացյանը չէր կարող ընկալվել որպես հաջողություն բերող քաղաքական գործիչ:

Բովանդակային քննության ենթարկելով Ս. Վրացյանի ութօրյա կառավարման ժամանակ լույս տեսած «Ժողովուրդ» և «Յառաջ» լրագրերում առկա հրապարակումները, պետք է առանձին ուշադրու-

120 «Մշակ», 1920թ., նոյեմբերի 30-ի թողարկում, №149, Թիֆլիս
121 «Յառաջ», 1920թ., նոյեմբերի 28-ի թողարկում, №262, Երևան
122 «Մշակ», 1920թ., նոյեմբերի 27-ի թողարկում, №147, Թիֆլիս

թյուն հրավիրել 1920 թ. նոյեմբերի 24-ին Հայաստանի պառլամենտի արտահերթ նիստին, որի ժամանակ Ս. Վրացյանը ներկայացրել էր նորակազմ կառավարության դեկլարացիան: Այն միակ իրադարձությունն է, որտեղ երևացել է բուն քաղաքական գործիչը՝ ամբողջ խոհեմությամբ և հաշվենկատ գործունեության ճանապարհային քարտեզով. «Ներկա կառավարությունը կյանքի է կոչվում դժվարին կացության մեջ. թուրքերը գրավել են Հայաստանի հսկայական հողամասը: Գրավված տեղերի ազգաբնակչությունը գաղթական վիճակում նորից աստանդական է դարձել, Հայաստանի ֆինանսական դրությունը սոսկալի ընկած է, հաղորդակցությունը՝ բոլորովին քայքայված վիճակում, պարենի մուտք դրսի աշխարհից դեպի Հայաստան կանգ է առել, իսկ ներսում՝ սպառվել: Կայուն չէ ժողովրդի հոգեկան դրությունը, նա անվերջ տատանումների է ենթակա: Այսպիսի հանգամանքներում ինչի՞ պիտի ձգտի նոր կառավարությունը: Իմպերիալիստական մեծ պետությունների քաղաքական թատերաբեմ է դարձել Անդրկովկասը և Հայաստանը. կառավարության առաջին գործը պիտի լինի հանել Հայաստանը այդ պայքարի ասպարեզից, ստեղծելով խաղաղ կյանք և հաշտ ու բարեկամական հարաբերություններ մեր բոլոր հարևանների հետ: Մեր գլխավոր գործը ու նշանաբանը պիտի լինի անկեղծ բարեկամություն Տաճկաստանի հետ: Նոր կառավարության ամենամեծ հոգսերից մեկը պիտի լինի առողջացնել Հայաստանի զորքը, ուժեղացնել նրա մեջ պետական տեսակետը. պետք է կատարվի զորացրում տարիքավորների և կազմվի մի փոքրաթիվ, որակով բարձր, մարզված, կուռ բանակ: Ներքին կյանքում կառավարությունը պիտի պայքարի պետության հիմքը քանդող բոլոր տարրերի դեմ և պիտի մտցնի օրենքի հավասարության սկզբունք Հայաստանի բոլոր քաղաքացիների վերաբերմամբ, առանց ազգի և դավանության խտրության: Վերանորոգել դատական ապարատը, երկրում ստեղծել իրավակարգ ուժեղացնելու համար օրենքի գիտակցությունը: Ուշադրության առարկա դարձնել առանձնապես տեղական ինքնավարությունների վրա և ուժեղացնել այդ ապարատը: Երկրի մեջ տիրող պարենավորման ճգնաժամը վերացնել: Կառավարությունը ներկայիս իր ծրագրի մեջ չի մտցնում լայն ընկերային հարցեր՝ նկատի առնելով երկրի ներկա դրությունը, բայց նա որպես սոցիալիստական տարրերից կազմված կառավարություն նախատեսում է ապագայի համար սոցիալական բարենորգումներ կատարել՝ ստեղծելով ժողովրդական ազատ, ան-

կախ Հայաստան, ապահով ու բարգավաճ դրությամբ»[123]:

Մամուլի հրապարակումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նոր կոալիցիոն կառավարության փաստը ժողովրդի բոլոր խավերի մեջ առաջ էր բերել գոհունակության խորը զգացում, ինչի մասին գրում էին լրագրերը: Բոլորն էլ հուսալի սպասում էին, որ Դաշնակցությունը պիտի հրաժարվի իր վաղեմի քաղաքական վարքագծից և պիտի կազմվի համաժողովրդական կառավարություն երկրի բոլոր կենսունակ տարրերից, որը միայն ի վիճակի կլիներ բարելավելու աննախընթաց ծանր դրությունը:

Նոր կառավարության կողմից առաջ էր քաշվել հաշտությունից բարեկամություն թուրքերի հետ ծրագիր: Եվ հաշտության գործին ավելի հաջող ընթացք տաու համար Հ. Օհանջանյանի նախարարությունը «բարվոք համարեց հրաժարական տալ, որպեսզի նոր կառավարությունը հաշտության բանակցությունները վարելու և հաշտությունը կնքելու ժամանակ կաշկանդված չլինի նախորդի դահլիճի վարած քաղաքականությամբ»[124]: Հատկանշական է, որ Ս. Վրացյանի նորակազմ կառավարությունը որակվել էր որպես «հաշտության կառավարություն»:

Պառլամենտում ներկայացրած դեկլարացիան և արտաբերած «այժմ զգաստանալու ժամանակն է» արտահայտությունը կառավարության կարճաժամկետ փուլում միշտ Ս. Վրացյանի ուղեկիցն էին: Կարճ ժամանակ անց «Յառաջ»-ը շտապում է հայտարարել, որ հայ-ադրբեջանական կոնֆերանս է հայտարարվել՝ բանակցությունների միջոցով առկա սահմանային և տարածքային խդնիրները շուտափույթ լուծելու համար: Մշտական ակտիվ աշխատանք, նոր օրենքների և որոշումների կայացում. ահա այն ամենը, ինչով զբաղվում էր կոալիցիոն կառավարությունը:

Օրեր անց, սակայն, «Մշակ»-ի էջերում կարելի է գտնել Ս. Վրացյանի կառավարության որդեգրած ուղու քննադատություն, քանի որ այն իր գործունեության մեջ չպիտի ղեկավարվեր օտարերկրյա ազդեցությամբ, այլ պիտի հենվեր «Հայաստանի դեմոկրատիայի ռեալ ուժերի և հարևան ժողովուրդների հետ համերաշխության սկզբունքների վրա»: Հայտարարությունը, թե «մեր լոզունգն է անկեղծ հաշտություն Տաճկաստանի (Թուրքիայի – Հ. Ծ.) հետ և համերաշխություն բոլոր հարևանների հետ» անհասկանալի է «Մշակ»-ի հոդվածագրին, քանի որ մինչև այդ Դաշնակցությունը հանդես էր եկել

123 «Ժողովուրդ», 1920 թ., նոյեմբերի 26-ի թողարկում, №194, Երևան
124 «Յառաջ», 1920թ., նոյեմբերի 27-ի թողարկում, №261, Երևան

այլ մարտավարությամբ:

Այսպիսով՝ նոր կառավարության համար արագ լուծում պահանջող խնդիրները բազմաթիվ էին և այդ պահին անհրաժեշտ էր ճկուն դիվանագետ լինել, որպեսզի մեկ առ մեկ լուծումներ տրվեին օրհասական իրավիճակում հայտնված երկրի «որդերին»: Պատմությունը ցույց տվեց, որ չնայած Ս. Վրացյանի կառավարությունը կոալիցիոն էր, սակայն անգամ այդպիսի կառավարության համար իրադրությունից ելքեր գտնելը հեշտ չէր: Ժամանակի հայկական մամուլը անընդհատ ուշադրության կենտրոնում է պահել քաղաքական իրադարձությունները, այդ թվում՝ այն ամենը, ինչ տեղի էր ունենում անգամ Դաշնակցության բյուրոյում: «Մշակ»-ի հրապարակումներից մեկում նշվում էր, թե Դիլիջանում՝ բոլշևիկների հաստատման լուրից հետո, դեկտեմբերի 1-ին քննարկում է կազմակերպել Ս. Վրացյանը և առաջ է քաշվել անգամ գաղափար քեմալիստների հետ միավորվելու՝ նոր թշնամուն դիմագրավելու համար, մյուս դեպքում՝ քննարկվել է պարտիզանական կռիվ մղելը երկու կողմերի դեմ: Ռազմական նախարար Դրոն առաջարկել է բանակցել երկու կողմերի հետ, ինչը ընդունվել է: Ժամեր անց արդեն հրաժարական է տալիս ամբողջ կառավարությունը, և իշխանությունը հանձնվել է Դրոյին[125]: Վերջինս էլ Հեղկոմին է հանձնում երկրի կառավարումը, ինչով և ավարտվում է Ս. Վրացյանի կառավարությունը:

Ի տարբերություն «Մշակ»-ի, որը իրադարձությունները լուսաբանել է մի քանի օր անց միայն, «Յառաջ» և «Ժողովուրդ» լրագրերը դեկտեմբերի 1-ից հետո այլեւս չեն հրատարակվել: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանում տեղի ունեցավ վարչաձևի փոփոխություն: Բոլշևիկները կարողացան հաստատվել Երևանում, ապա անցան իշխանության, Հայաստանը խորհրդայնացավ. խորհրդարանական կառավարությանը հաջորդեց Հայաստանի Հեղկոմը՝ կարմիր բանակի պաշտպանության ներքո:

Հետագա օրերին «Մշակ»-ի հոդվածագիրները փորձում էին ի հայտ բերել Ս. Վրացյանի կառավարության թույլ տված սխալները, որոնք հանգեցրին կարչակարգի կորստին: Եվ կրկին այդ հրապարակումների ժամանակ առաջին հերթին քննադատության էր ենթարկվում ուղիղ Դաշնակցությունը, ոչ թե նորակազմ կառավարությունը: «Դաշնակցությունը անկարող եղավ կուսակցությունը զատել պետությունից, իսկ կուսակցության բյուրոն կառավարությունից:

125 «Մշակ», 1920թ., դեկտեմբերի 15-ի թողարկում, №157, Թիֆլիս

Կուսակցության տիրապետության հավերժացնելու ձգտում էր ներկայացվում այն ամենը, ինչ դաշնակցականները նախաձեռնում էին, այդ թվում՝ անհաջողությունը բանակի ստեղծման և պետական զորքի առկայության ձախողումները»,- գրել է «Մշակ»-ը դեպքերից օրեր անց՝ բացահայտելով, որ, օրինակ, Ալեքսանդրապոլ մեկնած Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ հաշտարար պատվիրակությանը կառավարությունը հատկացվել էր 150 հազար ռուբլի, ևս այդքան գումար Հ. Քաջազնունին իր հետ ԱՄՆ էր տանելու[126]:

Վերոնշյալը որոշակիորեն ազդում է քաղաքական գործիչների հանդեպ վերաբերմունքի փոփոխության առումով, սակայն մամուլը երբեք քննադատության կոռեկտության սահմանները չանցավ՝ ստեղծելով Ս. Վրացյանի այնպիսի քաղաքական իմիջ, որը կարող էր ունենալ միայն հայ ժողովրդին իսկապես նվիրյալ զավակը: Միայն այն, որ նախարարապետը պարտավորված էր պատասխանատու լինել ներքին ու արտաքին գործերի համար, արդեն իսկ ցուցաբերում են այն մեծ աշխատանքային ծավալները, որոնք դրված էին Ս. Վրացյանի ուսներին: Պայմանավորված Ս. Վրացյանի հետագա բեղուն հրատարակչական գործունեությամբ Հայաստանի Հանրապետության վերջին կառավարության ղեկավարի հանդեպ հանրային պատկերացումները ամբողջականորեն դրական երանգավորում ստացան, ինչը խոսում է բացառիկ քաղաքական գործչի մասին, քանի որ վերջինիս կուսակցությունը գրեթե մշտապես քննադատության էր ենթարկվում մրցակիցների կողմից:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո Սիմոն Վրացյանը նախ գնաց Թավրիզ (Պարսկաստան), որտեղից մեկնեց Փարիզ և ստանձնեց Հ.Յ.Դ. պաշտոնաթերթ «Դրօշակ»-ի վերահրատարակության խմբագրությունը: Մինչև 1933 թ. շարունակված «Դրօշակ»-ի հրատարակության գործը հենց Ս. Վրացյանի ջանքերով էր իրականացվում: Սիմոն Վրացյանը գրեց նաև իր գլխավոր գործը՝ «Հայաստանի Հանրապետություն»-ը, որը մնայուն մի ավանդ է հայ ժողովրդին ոչ միայն պատմագրական առումով:

«Դրօշակ»-ի հրատարակության ընդհատումից հետո, Ս. Վրացյանը հաստատվեց Բեյրութում (Լիբանան), ուր խմբագրեց պատմությանը և մշակույթին նվիրված «Վէմ» հանդեսը: Ավելի ուշ Ս. Վրացյանը հրատարակության պատրաստեց և լույս ընծայեց իր հուշերի՝ «Կեանքի ուղիներով» վեցհատորյակը:

126 «Մշակ», №157, նույն տեղում

Այսպիսով՝ չնայած կարճաժամկետ՝ ընդամենը ութօրյա կառավարմանը, Սիմոն Վրացյանը հայկական քաղաքական կյանքում ստեղծեց իր հանդեպ հարգանք և մշտախոնջ գործչի դիմագիծ: Լրագիրները և ոչ մի հրապարակմամբ չփորձեցին սևացնել նվիրյալ հայորդուն: Նա կարողացավ Հայաստանի համար ամենածանր ու դժվար պահին պատասխանատվություն վերցնել և գոնե փորձ ձեռնարկել փրկելու Հայաստանի Հանրապետությունը: Ու չնայած ժամանակի մամուլը չափազանց քննադատաբար էր վերաբերում Հ.Յ. Դաշնակցության ծավալած գործունեությանը, Ս. Վրացյանի գլխավորած կառավարությունը դարձավ երկրի պատմության առաջին կոալիցիոն՝ բազմակուսակցական կառավարությունը՝ իր ուսերին վերցնելով «հայրենիքի փրկության հարցը»:

SUMMARY

POLITICAL IMAGE OF SIMON VRATSYAN THROUGH PUBLICATIONS OF MSHAK, ZHOGHOVURD AND HARADJ DAILY NEWSPAPERS: THE PRESETATION OF POLITICAL IMAGE IN ARMENIAN PRESS IN EARLY 20TH CENTURY

HARUTYUN TSATRYAN
LECTURER, PHD STUDENT AT YSU,
CHAIR OF PRINTED AND BROADCAST MEDIA

Despite the fact that the era of the image creation of political figures, political parties and political programs is largely related to the television and its becoming a major news outlet, but now as it was about a hundred years ago, the newspapers have a continuous influence on their readers, have shaped and directed stereotypes, attitude and support. In terms of creating a political image, the newspapers have played a major role in this regard. Politicians have been honored not only for years to become historic figures, but also through the news reports of being honored politicians.

In this context, it is interesting to see the actions of the last leader of the Government of the Republic of Armenia, their qualifications, and the peculiarities of Simon Vratsyan's political image, as the coalition government's steps were covered by the party "Haradj" (Armenian Revolutionary Federation) and "Zhoghovurd" (Armenian People's party), as well as on the pages of Tiflisian "Mshak", an independent newspaper.

And though the government of Simon Vratsyan had the shortest life in the history of Republic of Armenia, he was remembered by later generations and presented as the leader of first coalition government.

Key words: *Simon Vratsyan, Republic of Armenia, Armenian press, Armenian Revolutionary Federation party, Mshak daily, Politics, history of press, political image, Haradj daily, Zhoghovurd daily, political process, historical process.*

РЕЗЮМЕ

ПОЛИТИЧЕСКИЙ ИМИДЖ СИМОНА ВРАЦЯНА ЧЕРЕЗ ПУБЛИКАЦИИ ЕЖЕДНЕВНЫХ ГАЗЕТ МШАК, ЖОГОВУРД И АРАДЖ: ПРЕДСТАВЛЕНИЕ ПОЛИТИЧЕСКОГО ИМИДЖА В АРМЯНСКОЙ ПРЕССЕ В РАННЕМ 20-ОМ ВЕКЕ

АРУТЮН ЦАТРЯН
Преподаватель, аспирант ЕГУ,
кафедра печатных и вещательных СМИ

Несмотря на то, что эпоха создания имиджа политических фигур, политических партий и политических программ во многом связана с развитием телевидения и его становлением основной источника новостей, сейчас, как это было около ста лет назад, газеты имеют постоянное влияние на своих читателей, направляя стереотипы, отношение и поддержку. Что касается создания политического имиджа, то газеты сыграли важную роль в этом отношении. Политики были удостоены чести не только за годы становления историческими фигурами, но и благодаря новостям о том, что они являются заслуженными политиками. В этом контексте интересно видеть действия последнего лидера Правительства Республики Армения, их квалификацию и особенности политического имиджа Симона Врацана, поскольку шаги коалиционного правительства были охвачены партийные издания «Арадж» (Армянская революционная федерация) и «Жоговурд» (Армянская народная партия), а также на страницах независимой газеты Тифлиса «Мшак». И хотя правительство Симона Врацана имело самую короткую жизнь в истории Республики Армения, его запомнили более поздние представили поколения в качестве лидера первого коалиционного правительства.

Ключевые слова: *Симон Врацян, Республика Армения, армян-*

ская пресса, партия Армянской революционной федерации, ежедневная газета Мшак, политика, история печати, политический имидж, ежедневная газета Арадж, ежедневная газета Жоговурд, политический процесс, исторический процесс.

ԵՐԵՎԱՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ
ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Բանալի բառեր՝ *Երևան, առաջին համաշխարհային պատերազմ, հայ գաղթականներ, բարեգործական կազմակերպություններ, հասարակական-քաղաքական կյանք:*

1914 թվականի օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը: Աստիճանաբար ողջ երկիրը, այդ թվում Արևելյան Հայաստանը, որն անմիջապես հարում էր կովկասյան ռազմաճակատին, բերվում է պատերազմական վիճակի: Պատերազմն ու պատերազմի հետևանքներն ամիջականորեն ազդում են նաև Երևան քաղաքի վրա, որը կարևոր ռազմավարական հենակետ էր համարվում Ռուսաստանի և ռուսական բանակի համար:

Գերմանիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելուց ուղիղ 2 օր անց՝ 1914 թվականի հուլիսի 22-ին (նոր տոմարով օգոստոսի 4-ին), Երևանում մեկնարկում է բազմամարդ ցույց: «Երևանի հայ ժողովուրդը առաւօտեան ժամը 10-ին, փակելով խանութները, սկսաւ խռնուիլ Աստաֆեան փողոցի վրաւ՝ քաղաքային ժողովարանի ամարային ակումբի առաջ, որտեղից և սկսաւ հսկայական ցույցը»[127]: Ինքնաբուխ այս ցույցի մասնակիցները շարժվում են դեպի քաղաքի Ս.Նիկոլայի ռուսական եկեղեցին: Ցույցի մասնակիցների թիվը գնալով ավելանում է, վերջիններս իրենց հետ տանում էին կայսեր նկարները և դրոշակներ[128]: Երբ ցուցարարները հասնում են քաղաքային Դումայի մոտ վերջիններիս է միանում նաև Երևանի քաղաքապետ Հ.Մելիք-Աղամալյանը, որը ելույթով դիմում է երևանցիներին: Այնուհետև ցուցարարները իրենց ուսերին բարձրացնելով

127 «Նոր մամուլ», Երևան, 26 հուլիսի, 1914, թիվ 8:
128 «Նոր մամուլ», Երևան, 26 հուլիսի, 1914, թիվ 8:

«…Քաղաքագլխին և ֆրանսիացի ինժեներ Դիւնանին, կեցցէ՛ Ռուսաստանը, կեցցէ՛ Ֆրանսիան և Անգլիան…»[129] աղաղակելով, մտնում են ռուսական եկեղեցու բակ, ապա շարժվում «զորաժողովի վայրը», որտեղ ռուսական զորքի հրամանատարը հանդես է գալիս ելույթով՝ վերջում խոստանալով. «…հայ ազգաբնակչութեան այս բուռն զգացմունքները և ջերմ վերաբերմունքը յայտնելու ուր հարկն է»[130]: Այնուհետև թափորը մասնակցում է ռուսաց եկեղեցում մատուցված պատարագին: Հետաքրքքիր է, որ հակապատերազմական և հակագերմանական այդ ցույցին սկզբում մասնակցում է բացառապես Երևանի հայ ազգաբնակչությունը: Ռուսական եկեղեցում մատուցված պատարագից հետո ցույցին միանում են նաև քաղաքի. «…թուրքերը՝ իրենց եկեղեցական դրօշակներով»[131], որից հետո ցուցարարները շարժվում են դեպի Աստաֆյան փողոց, որտեղ ելույթով հանդես է գալիս իրավաբան Լևոն Մուշեղյանը[132]: Հակապատերազմական ցույց այդ օրը անցկացնում են նաև երևանաբանակ հրեաները: Այդ օրվա միջոցառումները Երևանում ավարտվում են երեկոյան չինովնիկների ակումբի դիմաց տեղի ունեցած միջոցառումով, որի ժամանակ ակումբի նվագախումբը նվագում է ռուսական կայսրության հիմնը և Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիայի հիմնը՝ մարսելյոզը: Քաղաքային ակումբի դիմաց հավաքված բազմությունը ուռաներով ողջունում է այն մի քանի կամավորներին, ովքեր ցանկություն էին հայտնել կամավոր մեկնել ռազմաճակատ[133]:

Ահա այդպիսին էր Երևան քաղաքի առաջին արձագանքը առաջին համաշխարհային պատերազմի մեկնարկին: Հուլիսի 24-ին ռուսական եկեղեցում ընթերցվում է նաև ռուսաց կայսեր Գերմանիային պատերազմ հայտարարելու վերաբերյալ մանիֆեստը[134]: Աստիճանաբար ողջ ռուսական կայսրությունը, այդ թվում և նրա ծայրագավառը հանդիսացող Արևելյան Հայաստանը, գլորվում է դեպի մեծ պատերազմի հորձանուտ, պատերազմ, որն անդառնալի կորուստներ պատճառեց հայ ժողովրդին:

Ռուսական կայսրության ողջ տարածքում պատերազմի առաջին իսկ օրերից մեկնարկում է համընդհանուր զորահավաքը[135]: Բացի

129 «Նոր մամուլ», Երևան, 26 հուլիսի, 1914, թիվ 8:
130 «Նոր մամուլ», Երևան, 26 հուլիսի, 1914, թիվ 8:
131 «Նոր մամուլ», Երևան, 26 հուլիսի, 1914, թիվ 8:
132 «Эриванские объявления», Ереван, 1914, № 56:
133 «Эриванские объявления», Ереван, 1914, № 56:
134 «Նոր մամուլ», Երևան, 26 հուլիսի, 1914, թիվ 8:
135 Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 486-487:

կամավոր ռազմաճակատ մեկնածներից ու հետագայում կազմակերպված հայկական կամավորական խմբերից, 200-250 հազար հայեր պատերազմի ողջ ընթացքում պաշտոնապես զորակոչվեցին ռուսական բանակ[136]: Բազմաթիվ հայեր բանակ են զորակոչվում նաև Երևանից: Կովկասյան ճակատում մղված ռազմական գործողություններին ակտիվորեն մասնակցում է նաև Երևանյան ջոկատը, որին պարբերաբար նյութական աջակցություն էր ցուցաբերում Երևանի քաղաքային դուման[137]:

Պատերազմի առաջին օրերին Կովկասի ազգաբնակչությանը կոչով դիմում է Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովը, որը կովկասցիներին է փոխանցում կայսր Նիկոլայ Երկրորդի շնորհակալության խոսքերը՝ Հայրենիքին և կայսերը նվիրված լինելու համար, և միաժամանակ իր գոհունակությունը հայտնում «փայլուն կերպով» կատարված զորահավաքից[138]:

Բռնկված պատերազմն ուղղակի ազդեցություն ունեցավ Երևանի սոցիալ-տնտեսական կյանքի վրա: Պատերազմի առաջին իսկ օրերին քաղաքում տեղի ունեցավ մթերքների աննախադեպ թանկացումներ. «…դեռ երէկ ցորենի խալւարն իջել էր 30-35 ռուբլու, իսկ այսօր բարձրացաւ 50-55 ռուբլի…, թանգացել է շաքարը, նաւթը, բրինձը և այլն»[139]: «Նոր մամուլ»-ը այս թանկացումները համարում է արհեստական՝ այն պայմանավորելով «…առևտրական դասակարգերի…ընչաքաղց բնազդներով»[140]: Սկսված գնաճը կանխելու նպատակով քաղաքի ոստիկանապետի կողմից առաջին անհրաժեշտության ապրանքների համար սահմանվում են հստակ գներ, որի խախտողներին հատուկ հրամանով, ոստիկանապետը սպառնում է պատասխանատվության ենթարկել[141]: Մթերքների անընդհատ թանկացման հարցը, որը լուրջ դժգոհություններ էր առաջացնում երևանցիների շրջանում, գտնվել է նաև նահանգային իշխանությունների ուշադրության կենտրոնում[142], որոնց ձեռնարկներն, ըստ էության, ակնկալվող արդյունքը չեն տվել:

Պատերազմի հենց առաջին ամիսներից սկսած Ռուսաստանի տարածք են ներթափանցում հարյուր հազարավոր արևմտահայ

136 Հայկական հարց. Հանրագիտարան, Երևան, 1996, էջ 41:
137 Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 487:
138 «Նոր մամուլ», Երևան, 2 օգոստոսի, 1914, թիվ 9:
139 «Նոր մամուլ», Երևան, 26 հուլիսի, 1914, թիվ 8:
140 «Նոր մամուլ», Երևան, 26 հուլիսի, 1914, թիվ 8:
141 «Эриванские объявления», Ереван, 09.08.1914, № 58:
142 Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 512:

փախստականներ: Տասնյակ հազարավոր փախստականներ տեղակայվում են նաև Երևան քաղաքի տարածքում: Պատերազմի տարիներին երևանյան հասարակության կարևոր հոգսերից է դառնում արևմտահայ փախստականներին օգնության կազմակերպման հարցը: Քաղաքային իշխանությունները և մի շարք հասարակական-բարեգործական կազմակերպություններ ձեռնամուխ են լինում Երևանում տեղակայված գաղթականների կարիքների լուծման գործին: Փախստականների թվի ավելացման հետ Երևանում ավելի է սրվում պարենի խնդիրը, սկսում է հացը չբավականացնել: «Ժողովուրդը հաց կուզէ, հաց կι պօռայ ամէն կողմէ»,- գրում է երևանյան «Աշխատանքը»[143]: Տեղական կառույցներն անում են հնարավորը առաջացած խնդիրներին լուծում տալու նպատակով:

Պատերազմի հենց սկզբից Երևանում ակտիվանում է թե՛ համառուսաստանյան և թե՛ հայկական զանազան բարեգործական կազմակերպությունների գործունեությունը, ստեղծվում են բարեգործական նպատակներ հետապնդող նոր կառույցներ:

Առաջին աշխարհամարտի տարիներին, ինչպես Ռուսաստանի այլ հայաշատ քաղաքներում, Երևանում նույնպես ակտիվ էր Կովկասի հայոց բարեգործական ընկերության տեղի մասնաճյուղը: Այս կազմակերպության հիմնական խնդիրներից էր Արևմտյան Հայաստանից եկող փախստականների աջակցության կազմակերպման հարցը[144]:

1914 թվականին մի խումբ երևանցի կանայք նախաձեռնում են ստեղծել «Հայ կամաւորական խմբերին օգնող հայ կանանց ընկերութիւն»[145]: 1914 թվականի նոյեմբերի 30-ին Երևանի Քաղաքային տան դահլիճում անցկացված երևանցի կանանց և օրիորդների խորհրդակցության ժամանակ էլ հիմնադրվում է *«Հայ կամաւորական խմբերին օգնող հայուհեաց ընկերութիւն»*, որն անմիջապես ձեռնամուխ է լինում ռազմաճակատ մեկնող հայ կամավորներին օգնություն տրամադրելու նպատակավ միջոցների հավաքագրման աշխատանքին[146]: Համապատասխան միջոցներ հավաքելու նպատակով երևանցի կանանց այս բարեգործական կազմակերպությունը 1915 թվականին Աստաֆյան փողոցի վրա գտնվող «Օգտակար գիտելիքներ տարածող ընկերության» շենքում բացում է բարեգործական թե-

143 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 30:
144 «Эриванские объявления», Ереван, 10.12.1914, № 84:
145 «Эриванские объявления», Ереван, 29.11.1914, № 82:
146 «Эриванские объявления», Ереван, 06.12.1914, № 83, 17.01.1915, № 3:

յարան՝ «Մի բաժակ թեյ» անունով[147]:

Պատերազմի առաջին ամիսներին Երևանում գործող Բարեգործական ընկերություններից մեկը նախաձեռնում է հիմնել 30 մահճակալ ունեցող, այսպես կոչված, *Հայկական հիվանդանոց*, վիրավոր զինվորների համար: Հիվանդանոցը ղեկավարելու էր հայ «…տիկնաց կազմից ընտրած 20 հոգուց բաղկացած կօմիտեն», որոնցից էլ ընտրվել էր հինգ հոգուց բաղկացած նախագահություն՝ տիկին Անդրիասյանի գլխավորությամբ[148]: Հիվանդանոցը տեղակայվելու էր Բարսեղ Եղիազարյանի տանը՝ Աստաֆյան փողոցի վրա գտնվող «փառահեղ շինութեան վերի յարկում» և պահվելու էր բացառապես հայ բարերարների կատարած նվիրատվությունների հաշվին[149]: Անհատներից բացի Հայկական հիվանդանոցի համար միջոցներ էին տրամադրում նաև Երևանում գործող ձեռնարկությունները, ինչպես օրինակ «Ամպեր» ընկերությունը, որը շահագործում էր Հրազդան գետի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանը, պարտավորվում է հիվանդանոցին տրամադրել անվճար հոսանք, իսկ «Երևանի ջրմուղի ընկերություն»-ը՝ անվճար ջուր[150]: Հայկական հիվանդանոցի ստեղծմանը իրենց նյութական աջակցությունն էին ցուցաբերում նաև տասնյակ երևանցիներ, որոնց անունները և կատարած նվիրատվության մասին տեղեկատվությունը պարբերաբար տպագրվում էր երևանյան մամուլում:

Երևան քաղաքում ևս պատերազմի մեկնարկից կարճ ժամանակ անց՝ 1914 թվականի դեկտեմբերի վերջերին, ստեղծվում է «Եղբայրական օգնության» տեղական հանձնաժողով: 1914 թվականի դեկտեմբերի 28-ին Երևանի բոլոր եկեղեցիներում նշանակվում են ծխական ժողովներ, շուտով ստեղծվում են «Եղբայրական օգնության հանձնաժողովի» տեղական ծխական-եկեղեցական ենթահանձնաժողովներ: Հայտնի է, որ «Եղբայրական օգնության հանձնաժողովը» ստեղծվել էր Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդ նախաձեռնությամբ, որի գլխավոր նպատակը արևմտահայ գաղթականներին աջակցություն կազմակերպելն էր[151]: Եղբայրական օգնության հանձնաժողովի Երևանի մասնաճյուղը ղեկավարն էր Երևանի թեմի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը[152]: Երևանյան

147 «Эриванские объявления», Ереван, 04.02.1915, № 5:
148 «Эриванские объявления», Ереван, 09.11.1914, № 78:
149 «Эриванские объявления», Ереван, 09.11.1914, № 78:
150 «Эриванские объявления», Ереван, 19.11.1914, № 80:
151 «Արարատ», հունվար, 1915, էջ 3-5:
152 «Эриванские объявления», Ереван, 22.08.1915, № 41:

տեղական հանձնաժողովն ուներ 25 հոգուց բաղկացած խորհուրդ և ենթահանձնաժողովներ: Այս հանձնաժողովին մշտապես նվիրատվություններ են կատարում տասնյակ- հարյուրավոր երևանցիներ[153]:

Կարևոր խնդիրներից էր փախստականներին շինություններում տեղավորելու հարցը[154], որոնց մեծ մասն ապրում էր ուղղակի բաց երկնքի տակ: Երևանյան մամուլում տարածված հայտարարության մեջ ասվում էր, որ գաղթականներին աջակցության համար երևանցիների գլխավոր օգնությունը պետք է լիներ «անձնական աշխատանքը և բնակարան» տրամադրելը: «Եղբայրական օգնության» երևանյան ենթահանձնաժողովներին հանձնարարվում էր գաղթականներին տեղավորելու նպատակով անմիջապես կազմել ազատ բնակարանների ցուցակը, իսկ ծխական դպրոցների շենքերը հարմարեցնել այդ նպատակով[155]: 1915 թվականի սկզբին այս ենթահանձնաժողովներն արդեն ակտիվորեն ձեռնամուխ են լինում աշխատանքի: Քաղաքում գտնվող շատ դպրոցներ տարբեր ժամկետներով դադրում են գործելուց՝ վերածվելով որբանոցների և ապաստարանների, որի հետևանքով, խաթարվում է քաղաքի կրթական կյանքի բանականոն ընթացքը: «Մեր թեմական դպրանոցի իւրաքանչիւր սենեակը իւր մէջ պարունակում է այժմս մէկ մէկ գիւղ. այո՛, ամբողջ մի գիւղ այժմս մի սենեակում է ապրում: Մի զարմանաք, որովհետև այնտեղ չէք գտնիլ տղամարդիկ, այլ միայն ծերեր, կանայք և մեծ թւով անտէր երեխաներ՝ կենդանի դիակներ, որոնց հայրերը՝ որն ասկեար է թիւրքական բանակում, որն կամաւոր ռուսաց յաղթական բանակում և շատերն էլ անհետ կորած, հետևապէս զոհուած մեծ աղէտին»[156],- Ս.Կաթողիկե եկեղեցու ենթահանձնաժողովի այս հայտարարությունը խիստ բնութագարական է ստեղծված իրավիճակի համար: Երևանում գտնված փախստականներից 2500-3000-ը դպրոցական տարիքի էին[157] և խնդրահարույց հարց էր վերջիններիս ուսուցման կազմակերպման հարցը: Փախստական երեխաների համար առանձին դպրոցներ չեն բացվում, վերջիններս տեղավորվում են քաղաքի արդեն իսկ գործող դպրոցներում՝ հաճախ առանձին խմբերով կամ բաժիններով:

«Եղբայրական օգնության» հանձնաժողովը ձեռնամուխ է լինում նաև որբախնամ գործունեության, բացվում են տասնյակ որբանոցներ, որոնցից հինգը հաստատված էին հենց Երևանում,

153 «Эриванские объявления», Ереван, № 14-17:
154 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1780, թթ. 3-5, 31-37:
155 «Эриванские объявления», Ереван, 27.12.1914, № 89:
156 «Эриванские объявления», Ереван, 06.01.1915, № 1:
157 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 48:

որոնց աշխատանքները համակրգելու համար ստեղծվել էր 14 հոգուց բաղկացած որբախնամ վարչություն բժիշկ Արամ Գրիգորյանի գլխավորությամբ[158]: Երևանում գտնվող այդ հինգ որբանոցներից առաջինը հիմնվել էր 1915 թվականի օգոստոսի 3-ին՝ 284 որբերով, գտնվում էր Դոկտորսկայա փողոցի վրա: Երկրորդը հիմնվել է 1915 թվականի սեպտեմբերի 15-ին, ուր սկզբում տեղավորված էին 89 որբեր, այս որբանոցը գտնվում էր Մալյարսկայա փողոցի վրա: Երրորդ որբանոցը հիմնադրվել է 1915 թվականի հոկտեմբերին Բեհբութովսկի փողոցի վրա՝ 80 որբերով: Չորրորդ երևանյան որբանոցը, որը տեղակայված էր Վեքիլովսկի փողոցի վրա հիմնադրվել էր 1915 թվականի դեկտեմբերի 15-ին, որտեղ սկզբում հանգրվանել էր 21, հետո 70 որբեր: Երևանի հինգերորդ որբանոցը գործում էր Երևանի որբախնամ վարչությունից դուրս: Այն Խորեն եպիսկոպոսի կարգադրությամբ ստեղծվել էր 1915 թվականի դեկտեմբերի 30-ին՝ Ս.Սարգիս եկեղեցու մոտակայքում: Այստեղ սկզբում կային 30 որբեր, որոնց թիվը կարճ ժամանակում հասնում է 110-ի[159]: Այս որբանոցը սկզբում ծառայել է որպես կայան, որտեղ հավաքվում էին քաղաքում գտնվող որբերը, որոնք հետո տեղաբաշխվում էին Երևանի տարբեր որբանոցներում: Այս որբերի մեծ մասը արևմտահայ գաղթականների երեխաներն էին, որոնք երիտթուրքերի կողմից իրականացրած ցեղասպանության արդյունքում կորցրել էին ծնողներին: Նշենք նաև, որ այս որբանոցներում գտնվողների թվով չէր սահմանափակվում Երևանում այդ շրջանում գտնվող որբերի թիվը:

«Եղբայրական օգնության» երևանյան հանձնաժողովի նախաձեռնությամբ 1915 թվականի դեկտեմբերի 1-ից Երևանում իր գործունեությունն է սկսում փախստականների հարցերով դատարանը՝ Գ.Շաղոյանի նախագահությամբ: Դատական նիստերը տեղի էին ունենում Երևանի առաջնորդարանի շենքում: Դատավարության հետ կապված ծախսերը հոգում էր «Եղբայրական օգնության» Երևանի հանձնաժողովը: Այս դատարանը բացի փախստականներին առնչվող զանազան դատական գործեր քննելուց հանդիսացել է նաև որպես նոտար[160], որը փախստականներին տրամադրել է զանազան փաստաթղթեր ինքնության, ժառանգության, կտակի և այլ հարցերի վերաբերյալ: Փաստորեն այս դատարանը չի հանդիսացել պետական մարմին և չի ունեցել որևէ կարգադրիչ գործառույթ: Այն

158 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 2:
159 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 2:
160 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 10:

հանդիսացել է հասրակական հիմունքներով գործող մարմին, որն ավելի շատ գործել է փոխվստահության սկզբունքի հիման վրա: Այն ստեղծվել է զուտ հայ փախստականների հոգսերը թեթևացնելու և վերջիններիս մեջ առկա իրավական հարցերին կարգավորում տալու նպատակով: Երևանյան մամուլի վկայությամբ այս դատարանին հաջողվել է արդյունավետ կատարել իր վրա դրված գործառույթները:

1914 թվականի սեպտեմբերի 14-ին Թիֆլիսում տեղի է ունենում Կովկասի հայոց բարեգործական ընկերության և այլ նմանատիպ հաստատությունների համաժողովը, որը որոշում է ընդարձակել և միավորել ջանքերը վիրավոր զինվորների բուժման և նրանց ընտանիքների աջակցության հարցում[161]: Պատերազմի տարիներին աչքի ընկնող ակտիվություն էր ցուցաբերում նաև նշված բարեգործական կազմակերպության երևանյան կառույցը: Վերջինս բարեգործական միջոցառումներ էր կազմակերպում ոչ միայն վիրավորված զինվորականներին, այլև պատերազմից տուժած խաղաղ բնակիչներին, փախստականներին և որբերին աջակցելու նպատակով: Մասնավորապես, Կավկասի հայոց բարեգործականի տեղական մասնաճյուղը երևանյան որբանոցի օգտին կազմակերպվում է տարբեր բարեգործական-ժամանցային միջոցառումներ: Նման միջոցառումները հաճախ կազմակերպվում էին Անգլիական այգում, որոնց ընթացքում տեղի էին ունենում տարբեր ներկայացումներ, ընբշամարտ, գործում էին սրճարաններ[162]: Նման միջոցառումների մուտքը վճարովի էր և հասույթը տրամադրվում էր բարեգործական նպատակներով:

Երևանում տեղակայված վանեցի գաղթականների մեջ քիչ չէին որակյալ արհեստավորները[163]:

Գաղթականների հոգսը թեթևացնելու համար հաճախ կազմակերպվում են վանեցի արհեստավորների ձեռագործ աշխատանքների ցուցահանդես վաճառք: Նույն նպատակն էր հետապնդում 1916 թվականի հոկտեմբերին Երևանում կազմակերպված վանեցի փորագրիչ-ոսկերիչների ձեռագործ աշխատանքների ցուցահանդես վաճառքը[164]:Կազմակերպվում են նաև գաղթական կանանց ձեռագործերի ցուցահանդես վաճառք: Հաճախ որևէ բարեգործական կառույց արագացնելու համար գործընթացը ամբողջությամբ գնում էր ձեռքի աշխատանքները հետո դրանք մաս-մաս վաճառելու նպա-

161 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 355, թ. 14:
162 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 2, տե՛ս նաև «Эриванские объявления», Ереван, 06.06.1915, № 29:
163 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 24:
164 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 52:

տակով[165]: Այդ հարցում հատկապես ակտիվ էր Երևանում գործող «Վասպուրականի կանանց միությունը»[166]: Նույն նպատակով 1916 թվականի հոկտեմբերին Երևանում կազմակերպվում է նաև վանեցի փորագրիչ-ոսկերիչների ձեռագործ աշխատանքների ցուցահանդես վաճառք[167]:

Երևանում հաստատված արևմտահայ գաղթականերրը փորձում են նաև ակտիվորեն մասնակցել քաղաքի հասրաակական կյանքին, ինչպես նաև ջենքեր են գործադրում սեփական ուժերով իրենց խնդիրները լուծելու ուղղությամբ: Նախ Երևանում գտնվող փախստականները, որոնք հիմնականում վանեցիներ էին, փորձում են ստեղծել զանազան մասնագիտական միություններ, օրինակ Երևանի թուրքահայ ուսուցչական միությունը, Փախստական Օսմանյան պետական հայպաշտոնեից միությունը[168], թուրքահայ առևտրականների միությունը և այլն: 1916 թվականի դրությամբ Երևանում գտնվում էին 105 թուրքահայ ուսուցիչներ[169]: Վանեցի բոլոր արհեստավորները, բացի իրենց մասնագիտության գծով ստեղծված միությունների մեջ միավորվելուց, ստեղծել էին մի կենտրոնական վարչություն, որն ուներ իր գրասենյակը, նախագահն ու քարտուղարը[170]: Այս կառույցը զբաղվում էր վանեցի արհեստավորների շահերի պաշտմանությամբ:

Երևանում հատկապես հայտնի էին վանեցի ոսկերիչները և վերջիններիս կողմից 1916 թվականին հիմնադրված «Վան» անունը կրող ոսկերչական արհեստանոցը[171]: Երևանի հայտնի ոսկերիչ-փորագրիչ վարպետները տասն էին[172], որոնցից որոշներն իրենց արհեստը հասցրել էին արվեստի կատարելության:

1916 թվականից Երևանի Ջանփոլադյանի թատրոնում ներկայացումներ են տալիս նաև վասպուրականցիներից կազմված սիրողական թատերական խումբը[173], որի գործունեությունը բացառապես հետապնդում էր բարեգործական նպատակներ:

1916 թվականի սեպտեմբերի 29-ին Երևան է այցելում Ամենայն

---

165 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 11:
166 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 18:
167 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 52:
168 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 38, 42:
169 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 43:
170 Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 506:
171 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 54:
172 Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 508:
173 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 30:

հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ը[174]: Կաողիկոսը հանդիպումներ է ունենում փախստականների հարցերով զբաղվող մարմինների և թուրքահայ միությունների ներկայացուցիչների հետ, քննարկում վերջիններիս կարիքներն ու խնդիրները[175]:

1917 թվականի ապրիլի 7-ին Երևանի քաղաքային զբուսայգում տեղի է ունենում «Արևմտահայ Մեծ» միտինգ՝ նվիրված 1915 թվականի ապրիլի Վանի հերոսամարտին[176]: Այս միտինգին մասնակցում են փախստական բոլոր կուսակցական հոսանքները, ընկերությունները և միությունները:

1915 թվականի սեպտեմբերին Երևանում ընտրվում է Արևմտահայ հանձնախումբ, որը գործում է մինչև 1917 թվականի մարտը: Այս հանձնախումբը մեծ աշխատանք է տանում Երևանի և շրջակայքի փախստականների կարիքները հոգալու հարցում: 1917 թվականի մարտին գործող հանձնախումբը հրաժարական է տալիս, կոչ անելով հայ փախստականությանը հավասար և ժողովրդական ընտրությունների միջոցով ստեղծել նոր Հանձնախումբ[177]:

1917 թվականի մայիսի 1-ին նախատեսվում է 3-5 օրով Երևանում անցկացնել թուրքահայ փախստականների համագումար, որին մասնակցելու էին պատգամավորներ 26 քաղաքներից, ինչպես նաև քաղաքական կուսակցություններից մասնակցելու էին երկուական պատգամավորներ և «Աշխատանք» ու «Վան-տոսպ» թերթերից մեկական պատգամավոր: Երևանից մասնակցելու էին թվով ամենաշատ պատգամավորները՝ 5 հոգի, իսկ Թիֆլիսից՝ 3 ներկայացուցիչ[178]:

Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած Ցեղասպանությունը և տասնյակ հազարավոր արևմտահայերի տեղահանությունները իրենց ազդեցությունը ունեցան տարածաշրջանում ժողովրդագրական պատկերի փոփոխման վրա: Այդ շրջանում Երևանում ապաստանեցին հազարավոր արևմտահայ գաղթականներ, որոնց մեծ մասը մշտական բնակության հաստատվեց Երևանում: Այս ամենի հետևանքով նշանակալի փոփոխության ենթարկվեց նաև Երևանի բնակչության թիվաքանակը:

Այսպես, եթե Երևանի բնակչության թիվը 1914 թվականին է

174 «Эриванские объявления», Ереван, 1916, № 38:
175 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 44:
176 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 94:
177 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 96:
178 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 96:

29.366[179] էր, ապա 1916 թվականին այն դառնում է 51.286[180]: Բնակչության թվի այս փոփոխությունը պայմանավորված էր առաջին հերթին արևմտահայ գաղթականների ներհոսքով դեպի Արևելյան Հայաստան, այդ թվում Երևան: Մամուլի հրապարակումների համաձայն 1914 թվականի վերջերին և 1915 թվականի սկազբներին, երբ նոր էր մեկնարկել արևմտահայերի մասսայական տեղահանումները, Երևան էին գաղթել 40 հազարից ավելի արևմտահայեր: Գաղթականների հոսքերը դեպի Երևան շարունակվեցին նաև հետագա տարիներին: 1917 թվականին Երևանում տեղավորված գաղթականների թիվը հասնում էր մոտ 15.500-ի, իսկ 1918 թվականի սեպտեմբերին քաղաքային իշխանությունների կատարած հաշվարկների համաձայն Երևանում գտնվել է շուրջ 45 հազար գաղթական[181]:

Վերը նշված, 1916 թվականի տվյալների համաձայն, Երևան քաղաքի 51.286 բնակիչներից միայն մոտ 22.000-ն էին հիմնական[182], մնացածը, այսպես ասած, ժամանակավոր բնակիչներն էին: Քաղաքի բնիկ հայ բնակչությունը կազմում էր 12284, իսկ ժամանակավոր ազգությամբ հայ բնակչությանը թիվը՝ 24920 էր[183], որոնց մեծ մասը ինչպես նշվեց գաղթականներ էին: Այսինքն 1916 թվականի դրությամբ Երևանի 51.286 բնակիչներից 37.204-ը հայեր էին[184], մնացածները այլ ազգությունների ներկայացուցիչներ: Երևանում գտնվող փախստականների մեծ մասը վանեցի փախստականներ էին, որոնց գերիշխող մասը հետագայում մշտական բնակության հաստատվեցին Երևանում:

Պատերազմի տարիներին պատերազմող հայրենիքին աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծվում են նաև մի շարք համառուսաստանյան կառույցներ, որոնք իրենց տեղական մասնաճյուղերն ունեին նաև կայսրության նահանգներում: Այսպես, 1914 թվականին ստեղծվում են համառուսական զեմստվոյական և քա-

179 Կորկոտյան Զ., Երևան քաղաքի ժողովրդագրությունը, Յերեվան, 1930, էջ 26, նաև Հակովյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 533:

180 «Кавказский календарь на 1917г.», отдель 4, с. 218-221.

181 Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 525:

182 «Кавказский календарь на 1917г.», отдель 4, с. 218-221.

183 Երևանում հրատարակվող «Աշխատանք» թերթի տվյալներով 1916 թվականի դրությամբ Երևանում կար 10 հազար քաղաքաբնակ փախստականներ, որոնց թիվը հետագայում գնալով աճում է : Իսկ 1916 թվականի վերջին այդ թիվը դառնում է 15 հազար, ովքեր հիմնականում Վան քաղաքի և Վասպուրականի բնակիչներ էին, տես «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 24, 48:

184 «Кавказский календарь на 1917г.», отдель 4, с. 218-221.

ղաքների միություններ[185]: Քանի որ Այսրկովկասում զեմստվորներ գոյություն չկային, ապա վերջիններիս տեղական կառույցներ այս տարածաշրջանում չունեին: Ի տարբերություն դրա Այսրկովկասի քաղաքներում ակտիվ գործունեություն էին իրականացնում *Քաղաքների համառուսաստանյան միության* տեղական քաղաքային կոմիտեները: Պատերազմի հենց առաջին ամիսներին ռուսական կայսրության բոլոր քաղաքներում սկիզբ առավ պատերազմի հետևանքներով տուժածներին աջակցություն կազմակելպելու շարժում: Շուտով, աշխատանքները համակարգելու և քաղաքային վարչությունների ջանքերը միավորելու նպատակով փորձ է արվում ստեղծելու համաքաղաքային կազմակերպություն[186]: 1914 թվականի օգոստոսի 8-9 Մոսկվայում տեղի է ունենում քաղաքապետերի համառուսաստանյան համագումար, որտեղ որոշվում է ստեղծել *Վիրավոր և հիվանդ մարտիկներին աջակցության Համառուսաստանյան քաղաքային միություն*[187]: Բնականաբար Երևանը ևս Կովկասի քաղաքների միության կազմում անդամակցում էր այդ կառույցին և իր ակտիվ մասնակցությունը ունենում պատերազմից տուժածներին աջակցության հարցում[188]: Նշենք որ Երևանը ի սկզբանե, որոշ տեղական պայմաններից ելնելով, ընդգրկված չէր այն քաղաքների ցանկում, որտեղ նախատեսվում էր տեղավորել ռազմի դաշտում վիրավորվածների[189], ոստի երևանցիները նախատեսվող օժանդակությանը հիմնականում պետք է մասնակցեին նյութական միջոցների հավաքագրմամբ: Սակայն հետագայում Երևանում ևս տեղակայվում են զինվորական հոսպիտալներ, որտեղ իրենց բուժումն են ստանում վիրավորված զինվորականները:

Համառուսաստանյան քաղաքային միության տեղական բաժանմունքի առաջին նիստը տեղի է ունենում 1914 թվականի սեպտեմբերի 22-ին Նահանգային վարչության շենքում[190]: Քաղաքների միության երևանյան կոմիտեն պատերազմի տարիներին կարևոր աշխատանք կատարեց դրամական միջոցների, մթերքների հավքագրման և ստանձնած այլ պարտավորությունների կատարման ուղղությամբ: Այդ տարիներին Երևանի քաղաքապետի անունով հաճախ ստաց-

185 Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 489-490:
186 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1757, թթ. 6-13:
187 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1757, թ. 16:
188 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1760, թթ. 3-4:
189 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1757, թթ. 74:
190 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1757, թ. 47:

վում էին շնորհակալական գրություններ բանակի տարբեր ստորաբաժանումների հրամանատարներից, որոնց զինվորները ստացել են երևանցիների կողմից բարեգործական նպատակներով հավաքված իրեն ու միջոցները[191]:

Պատերազմի ընթացքի հետ ավելանում էր փախստականների թիվը և Քաղաքների միության Երևանի կոմիտեի հոգածության խնդիրներից մեկն էլ դառնում է փախստականների աջակցության հարցը[192]: Այս կառույցի նախաձեռնությամբ անհրաժեշտ հիգիենայի ապահովման և գաղթականների շրջանում տարածվող համաճարակների կնախման նպատակով 1917 թվականի հունվարի 15-ից Երևանում գտնվող գաղթականների համար անվճար հիմունքներով սկսում է գործել բաղնիք[193]: Այդ նպատակով ստեղծվում է նաև 50 հոգուց բաղկացած «մաքրութեան հսկող խումբ», որը հավքում է փախստականների տների և հանրակացարանների, երեք հիվանդանոցների և վեց որբանոցների աղբը: Փաղստականների շրջանում աղբահանությունը կատարվել է շաբաթը 2-3 անագամ և աղբը սայլերով հեռացել է քաղաքից 17 վերստ հեռու «Թոքմաք կէօլ և Մատան»: Գործել է նաև ախտահանություն իրականացնող խումբ, որի մեջ նեառնված էր նաև պարֆարմալինի խումբը[194]:

Պատերազմի տարիներին Երևանում իր գործունեությունն է սկսում նաև ռուսական կարմիր խաչի ընկերության տեղական՝ երևանյան մասնաճյուղը, որին անդամակցում են տասնյակ երևանցիներ[195]: Այս կառույցին անդամակցելու համար նախատեսվում էր տարեկան 5 ռուբլի անդամավճար[196]: Տեղական կառույցի նախագահն էր Երևանի նահանգապետ Վ. Տիզենհաուզենը: Տեղական վարչությանը կից գործում էր նաև կանանց կոմիտե:

Երևանի քաղաքային իշխանությունները նահանգապետի հանձնարարականով ակտիվորեն ձեռնամուխ են լինում Կարմի խաչի օգտին նվիրատվությունների հավաքագրման գործին: Քաղաքային իշխանությունները քաղաքում տարածում են եռալեզու հայտարարություններ կարմիր խաչի օգտին կազմակերպվող հանգանակության մասին, որտեղ խոստանում են նվիրատուների անուններն ու

191 «Эриванские объявления», Ереван, 13.12.1914, № 85:
192 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1760, թ. 143:
193 «Эриванские объявления», Ереван, 1917, № 3:
194 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 11:
195 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1758, թթ. 47-48:
196 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1758, թ. 47, նաև «Эриванские объявления», Ереван, 30.08.1914, № 61:

նրանց տրամադրած գումարի չափը հրապարակել տեղական թերթերում[197]: Կարմի խաչի օգտին հանգանակությանը մասնակցում էին նաև երևանյան տարբեր ձեռնարկություններ և աշխատանքային կոլեկտիվներ: Օրինակ 1914 թվականին «Շուստով և որդիներ» հայտնի ընկերությունը նվիրաբերում է 100 ռուբլի[198]: Իսկ Երևանի Հռիփսիմյան գիմնազիայի ուսուցչական կազմը որոշում էր կայացրել պատերազմից տուժածներին հատկացնել իրենց աշխատավարձի 1 տոկոսը[199]: Նշենք, որ 1914 թվականին հավաքվել էր մոտ 19.000 ռուբլու օգնություն, որի մեջ դրամական նվիրատվությունից բացի մտնում էին նաև տարբեր այլ նվիրատվություններ[200]: Քաղաքային դումայի որոշումով քաղաքում հատուկ հանգանակություն է սկսվում նաև վիրավորների և զոհվածների ընտանիքների համար[201]: Իսկ տեղական մամուլը անընդհատ իր էջերում հորդորում էր երևանցիներին ակտիվորեն մասնակցել այդ հանգանակություններին: Քաղաքային Դումայի որոշմամաբ Կարմիր Խաչի օգտին հավաքվող նվիրատվությունները ընդունվում էին Նահանգապետի վարչությունում, ինչպես նաև Քաղաքապետի վարչությունում[202]: Երևանյան թերթերը պարբերաբար հրապարակում էին նաև Կարմիր խաչի օգտին նվիրատվություն կատարած քաղաքացիների անունները[203]: Այդ տարիների երևանյան մամուլում կարելի է հանդիպել նվիրատվությունների վերաբերյալ նմանատիպ տասնյակ հայտարարությունների:

Կարմիր խաչի տեղական գրասենյակը բացի դրամական տեսքով նվիրատվություններից կազմակերպում են նաև նյութական այլ միջոցների՝ կանանց, տղամարդու և երեխաների հագուստ, կոշիկ, ծխախոտ, օճառ, թեյ, շաքար, զանազան տեսակի չոր ուտելիքներ և այլն, հանգանակություններ: Այդ նպատակով բացի ընթացիկ հավաքագրումները, կազմակերպվում էին հատուկ միջոցառումներ: Օրինակ 1914 թվականի նոյեբերի 16-23-ը այդ կառույցի կողմից հայտարարվում է, այսպես ասած, *«Սպիտակեղենի շաբաթ»*, իսկ տեղական մամուլը երևանցիներին կոչ է անում ակտիվ մասնակցել անհարժեշտ հագուստի և սպիտակեղենի հավաքագրմանը[204]: Բարեգործական նպատակներով պարբերաբար կազմակերպվում էր

197 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1758, թթ. 19-20:
198 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1758, թ. 56:
199 «Նոր մամուլ», Երևան, 14 սեպտեմբերի, 1914, թիվ 15:
200 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1758, թ. 85:
201 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1758, թթ. 13, 17:
202 «Նոր մամուլ», Երևան, 2 օգոստոսի, 1914, թիվ 9:
203 «Эриванские объявления», Ереван, 1914, № 58, 61, 62, 66, 69 և այլն:
204 «Эриванские объявления», Ереван, 01.11.1914, № 76:

նաև, այսպես կոչված, *դրոշակների փոնը*, որի ժամանակ վաճառվում էին դրոշներ, իսկ հասույթը ուղղվում էր Կարմիր խաչին: Առաջին դրոշակի օրերը Երևանում կազմակերպվել են 1914 թվականի սեպտեմբերի 20-22-ին, ապա 29-ին և այլն[205]:

Վիրավորներին, զոհվածների ընտանիքներին և պատերազմի արհավիրքներից տուժածներին աջակցություն կազմակերպելու նպատակով կայսեր կողմից 1914 թվականի դեկտեմբերին հաստատվում և ռուսական կայսրության տարբեր քաղաքներում սկսում են վաճառվել նաև բարեգործական վիճակախաղեր[206]: Այդ վիճակախաղերը վաճառվում էին նաև Երևանում:

Առաջին աշխարհամարտի տարիներին Երևանում իր գործունեությունն է սկսում իրականացնել նաև Ամերիկայի նպաստամատույց ընկերությունը, որը հիմնականում զբաղվում է փախստականների աջակցության հարցերով և որբախնամ գործունեությամբ[207]: Առաջին աշխարհամարտի տարիներին Երևանում տեղակայված որբերին կարևոր աջակցություն է ցուցաբերում նաև Թիֆլիսի հայ կանանց խնամածության ընկերությունը[208]:

Պատերազմի տարիներին Երևանում բացվում են նաև նոր հիվանդանոցներ: 1914 թվականի դեկտեմբերից Երևանի քաղաքային հիվանդանոցում բացվում է լազարետ՝ զինվորական հոսպիտալ: Սակայն քանի որ քաղաքային հիվանդանոցի պայմանները սուղ էին և սեփական շենք չունենալու պատճառով այն տեղակայված էր Թարխանովի փողոցի վրա գտնվող մասնավոր տներից մեկում, իսկ հիվանդների թիվն անցնում էր 400-ը, դումայի ձայնավոր բժիշկ Տեր-Միքաելյանցը առաջարկում է բացել առանձին զինվորական հոսպիտալ: Դուման միաձայն հաստատում է այդ առաջարկը և որոշում է այդ հարցով դիմել քաղաքների միությանը[209]: Քաղաքների միության միջոցներով քաղաքում գործում էր նաև 400-450 մահճակալ ունեցող մեկ այլ հիվանդանոց փախստականների համար, նաև այդ նպատակով վարձակալվում էին տներ[210]: 1915 թվականին Երևան է տեղափոխվում նաև Բրեստ-Լիտովսկ ամրոցի ժամանակավոր զինվորական հոսպիտալը՝ իր անձնակազմով, որը նախատեսված էր

---

205 «Նոր մամուլ», Երևան, 7 սեպտեմբերի, 1914, թիվ 14, տես նաև «Эриванские объявления», Ереван, 27.09.1914, № 68:
206 ՀԱԱ, ֆ. 107, g. 1, գ. 1757, թ. 178:
207 «Эриванские объявления», Ереван, 1917, № 16:
208 Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 531-532:
209 ՀԱԱ, ֆ. 107, g. 1, գ. 1760, թթ. 161-163:
210 ՀԱԱ, ֆ. 107, g. 1, գ. 1760, թ. 168, շրջերես:

գաղթականների և պատերազմից տուժածների համար[211]: Այս հոսպիտալը նախատեսված էր մոտ 500 անձի համար[212]: Այն սկզբում տեղակայվում է Երևանի բերդի տարածքում գտնվող շենքերից մեկում[213]: Պատերազմի հենց առաջին ամիսներին Կարմիր խաչի երևանյան վարչության և մի խումբ բժիշկների նախաձեռնությամբ, բացվում է գթության քույրեր պատրաստելու դասընթաց[214]: 1917 թվականի փետրվարից գթության քույրերի պատրաստման երկամսյա դասընթացներ սկսում է գործել նաև Երևանի զինվորական հոսպիտալին կից[215]:

Առաջին աշխարհամարտի տարիներին Երևանում գլխավոր հոգսերից մեկը դառնում է քաղաքում տեղակայված հազարավոր արևմտահայ գաղթականների աջակցության և ապահովության կազմակերպման հարցը:

Պատերազմի տարիներին քաղաքը թեև հեռու էր անմիջական ռազմական գործողությունների գծից, սակայն քաղաքն ապրում էր, այսպես ասած, պատերազմական կյանքով: Երևանում տեղակայված էին զանազան զինվորական ստորաբաժանումներ, հայկական կամավորական գնդերն էլ, որպես կանոն, ռազմաճակատ մեկնելիս անցնում էին Երևանով: 1915 թվականի հունվարից Երևանում սկսում է գործել նաև զինվորական դատարան[216]:

Հիշարժան է 1916 թվականին հայկական կամավորական առաջին ջոկատի մուտքը Երևան՝ Վարդանի գլխավորությամբ: Երբ նշված ջոկատը Երևանում էր, քաղաքի հասարակությունը կամավորական խմբի մարտիկների համար կազմակերպում է հյուրասիրություն: Այդ նպատակով ստեղծվում է մասնաժողով, որը միջոցներ է հավաքում երևանցիներից: Իսկ երբ արդեն կամավորական խմբերը պատրաստվում են մեկնել ռազմի դաշտ քաղաքում գտնվող բոլոր կամավորականների համար «մատաղաճաշ տրուեց, քաղաքի հիւսիսում գտնւած բլուրի վրայ»[217]: Երևանի պաշտոնատար անձանց մասնակցությամբ պաշտոնական ճաշկերույթ է կազմակերպվում նաև կամավորական խմբերի խամբապետերի համար, որը տեղի է ունենում առաջնորդարանի պատշգամբում[218]: Հայ կամավորների համար

211 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1780, թթ. 12, 14, 15, 20, 21:
212 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1780, թթ. 14, 20-21, 27:
213 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1780, թ. 29:
214 «Նոր մամուլ», Երևան, 7 սեպտեմբերի, 1914, թիվ 14:
215 Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 495:
216 ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1762, թ. 2:
217 «Эриванские объявления», Ереван, 03.02.1916, № 5:
218 «Эриванские объявления», Ереван, 03.02.1916, № 5:

կազմակերպված այս միջոցառումները կազմակերպվում են բացառապես երևանցիներից հավաքված միջոցներով:

1916 թվականի մայիսի 29-ին Երևանի Ս.Պողոս-Պետրոս եկեղեցում տեղի է ունենում Ռևանդուզի ճակատամարտում զոհված հայկական կամավորակն 4-րդ գնդի հրամանատար Քեռու հոգեհանգիստը: Երևանյան «Աշխատանք» թերթը իր 1916 թվականի մայիսի 28-ի հերթական համարը ամբողջությամբ նվիրում է Քեռու հիշատակին[219]: Քեռիի դին Ջուլֆայից տեղափոխվում է գնացքով Թիֆլիս, ճանապարհին կանգ է առնում Ուլուխանլուի կայարանում, որտեղ հայ հասարակությունը դիմավորում է քաջարի մարտիկին, կատարվում է հոգեհանգստի կարգ, նվագում է Երևանի արական գիմնազիայի փողային նվագախումբը[220]:

Պատերազմի տարիներին բնականոն հունով ընթանում էր նաև Երևանի քաղաքային ինքնավրության գործունեությունը, մինչ 1917 թվականի հեղափոխական իրադարձությունները, որոնց արձագանքները և հասարակական-քաղաքական կյանքում առաջ բերած փոփոխություններն իրենց դրսևորումներն ունեցան նաև Երևանում:

Երբ սկսվեց առաջին աշխարհամարտը Երևանի քաղաքապետն էր Հովհաննես Մելիք-Աղամալյանը, որը ընտրվել էր դեռևս 1911 թվականին և պետք է պաշտոնավարեր մինչև 1915 թվականը: Սակայն 1914թ. սեպտեմբերի 24-ին «Эриванские объявления»-ն գրում է, որ «հաստատապես տարածած է», որ քաղաքագլուխ Իվ. (Հովհաննես) Մելիք-Աղամալյանը հրաժարական է տվել[221], իսկ նոյեմբերի 9-ին նույն թերթը հավելում է, որ «...հրաժարականը վերջնականապես ընդունած է»[222]: 1914 թվականի նոյեմբերի 19-ին քաղաքային դումայի կողմից ընտրվում է Երևանի նոր քաղաքապետ՝ Սմբատ Խաչատուրյանը[223]: Նորընտիր քաղաքապետի պաշտոնական հաստատումը Կովկասի փոխարքայի կողմից տեղի է ունենում բավականին ուշ՝ 1915 թվականի հունվարի վերջին[224]: Այդ ընթացքում Երևանի քաղաքապետի պարտականությունները իրականացնում է քաղաքապետի տեղակալ Ա.Բունիաթյանը: 1915-1919 քառամյա շրջանի համար Քաղաքային դումայի ձայնավորների ընտրությունը ան-

219 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 8:
220 «Աշխատանք», Երևան, 1916, թիվ 8:
221 «Эриванские объявления», Ереван, 24.09.1914, № 67:
222 «Эриванские объявления», Ереван, 09.11.1914, № 78:
223 «Эриванские объявления», Ереван, 22.11.1914, № 81:
224 «Эриванские объявления», Ереван, 04.02.1915, № 5:

ցկացվում է 1915 թվականի մայիսի 17-ին[225]:

1917 թվականի փետրվարին և հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխական իրադարձություններն իրենց ազդեցությունն ունեցան նաև կայսրության նահանգներում: Երևանում սկիզբ առան ժողովրդավարական գործընթացներ, ակտիվացավ հասարակական-քաղաքական կյանքը, որն արմատապես փոխեց Երևանի քաղաքական և ազգային դիմագիծը[226]: Ցարիզմի տապալումից հետո Ժամանակավոր Կառավարությունը հայտարարեց նոր դեմոկրատական սկզբունքներով ընտրություններ անցկացնելու մասին: Նոր կարգով վերացվում էին նախկինում գոյություն ունեցած զանազան ընտրական ցենզերը և ընտրելու ու ընտրվելու իրավունք ստանում էին քսան տարին լրացած բոլոր քաղաքացիներ՝ անկախ սեռից, կրոնից, ազգությունից: Ընտրությունները ուղղակի էին, գաղտնի, մեկ ձայնի իրավունքով: Նոր պայմաններում Երևան քաղաքի դումայի ընտրությունները տեղի ունեցան 1917 թվականի սեպտեմբերին[227]: 1917 թվականի Երևանի քաղաքային դումայի ընտրություններին, նոր հաստատված ընտրական օրենքների համաձայն, իրավունք էին ստանում մասնակցելու նաև քաղաքական կուսակցությունները և կազմակերպությունները[228]:1917 թվականին Երևանի նոր քաղաքապետ է ընտրվում սոցիալիստ-հեղափոխական *Թադևոս Թոշյանը*, որի պաշտոնավարման վերջին շրջանը համընկնում է Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման հետ: Երևանի քաղաքային Դումայում 1918 թ. սկզբներին ներկայացված էին հետևյալ քաղաքական կուսակցությունները և կազմակերպությունները՝ սոցիալիստ-հեղափոխականներ, սոցիալ-դեմոկրատներ, Հայ հեղափոխական դաշնակցություն, Հայ ժողովրդական կուսակցություն, ինչպես նաև Երևանի մահմեդական բնակչությանը ներկայացնող մի քանի քաղաքական-հասարակական կազմակերպություններ[229]: Երևանի Դումայի նախագահն էր դաշնակցական *Մարտիրոս Հարությունյանը:*

Ժողովրդավարացման գործընթացներին զուգընթաց 1917 թ. նոյեմբեր – 1918 թ. փետրվար ժամանակահատվածում Երևանի նա-

225 «Эриванские объявления», Ереван, 10.01.1915, № 2:
226 Մանրամասն տես Մելիքյան Վ., Երևանը և Երևանի նահանգը հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2010, թիվ 3, էջ 72-93:
227 ՀԱԱ, ֆ. 107, .g 1, գ. 320, թթ. 129, 170-258, գ. 321, թթ. 1-121, գ. 323:
228 ՀԱԱ, ֆ. 107, .g 1, գ. 323, թ. 68:
229 Մելիքյան Վ., Երևանը և Երևանի նահանգը հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2010, թիվ 3, էջ 76:

հանգում և Երևանում իրենց գործունեությունն են սկսում ազգային մի շարք մարմիններ, այդ թվում Երևանի նահանգի ազգային խորհուրդը, նրան կից՝ Ապահովության կամ Հատուկ կոմիտեն, Արևմտահայերի ազգային խորհուրդը, Հայ զինվորական միությունը (Երևանի զինվորական խորհրդի գործադիր կոմիտեն)[230] և այլն:

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, թեև անմիջականորեն Երևան քաղաքի տարածքում տեղի չունեցան ռազմական գործողություններ, բայց քաղաքն ամբողջապես հայտնվեց պատերազմական դրությանը բնորոշ իրավիճակում: Պատերազմի տարիներին քաղաքում վատացավ սոցիալական վիճակը, հատկապես սուր էր պարենի հարցը, քաղաքում ակտիվացան բարեգործական ձեռնարկներն ու բարեգործական կառույցների գործունեությունը, որոնց նպատակն էր աջակցություն ցուցաբերել ոչ միայն պատերազմից տուժած զինվորականությանը, այլև խաղաղ բնակիչներին, մասնավորապես Երևանում հայտնված տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականությանը, որոնց հաստատումը Երևանում էականորեն փոխեց Երևանի ժողովրդագրական պատկերը: Առաջին աշխարհամարտի վերջին շրջանում և 1917 թվականի հեղափոխական իրադարձություններից հետո Երևանն աստիճանաբար սկսում է վերածվել հայության համախմբման, հայկական հասարակական-քաղաքական և ռազմական կյանքի գլխավոր կենտրոնի:

SUMMARY
YEREVAN IN THE YEARS OF THE FIRST WORLD WAR

EDGAR HOVHANNISYAN
Dean of faculty of History and Law of ASPU,
PHD, associate professor

Although there were no military actions taking place on the territory of Yerevan in the years of the First World War, however, the whole city appeared in a situation peculiar to a military one. The social state worsened in the years of the war. Especially acute was the situation with the provision of food. Various charity organizations and structures spread their activity inside the city, the purpose of which was to support not only the militants who suffered from the war but also the peaceful

230 Մելիքյան Վ., Երևանը և Երևանի նահանգը հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2010, թիվ 3, էջ 77:

inhabitants, particularly the Western-Armenian refugees who found themselves in Yerevan and whose location in the city seriously impacted the demographic image of Yerevan. During the last period of the First World War, after the revolutionary events of 1917, Yerevan gradually started to turn into a major centre of unification of the Armenians together with their social and political life.

Key words: *Yerevan, First World War, Armenian refugees, charity organizations, social and political life.*

РЕЗЮМЕ
ЕРЕВАН В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

ЕДГАР ОГАННИСЯН
Декан факультета истории и правоведения АГПУ,
кандидат исторических наук, доцент

Несмотря на то, что на территории Еревана в годы Первой мировой войны не было никаких военных действий, весь город оказался в характерной для военных времен ситуации. Социальное положение ухудшилось в годы войны. Особенно остро обстояло дело с продовольствием. Различные благотворительные организации и структуры распространяли свою деятельность внутри города, целью которых было - поддержать не только военных лиц, пострадавших от войны, но и мирных жителей, особенно западно-армянских беженцев, которые оказались в Ереване и чье укоренение в городе серьезно повлияло на демографический образ Еревана. В последний период Первой мировой войны, после революционных событий 1917 года, Ереван постепенно начал превращаться в крупный центр объединения армян вместе со своей социальной и политической жизнью.

Ключевые слова: *Ереван, Первая мировая война, армянские беженцы, благотворительные организации, социальная и политическая жизнь.*

ԿԱԹՈԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ XVII-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

ԵՓՐԻԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ ՄԵԼՍԻԿԻ
Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ

Բանալի բառեր՝ *Նախիջևան, Հռոմ, Պարսկաստան, կրոն, կաթոլիկ համայնք, եկեղեցի:*

Այսօր հայ առաքելական եկեղեցու կողքին այլ դավանանքների և կրոնների հիմնախնդիրն ևս կարևոր տեղ է գրավում գիտական ու հասարակական շրջանակներում: Այս համատեքստում մեծ նշանակություն են ձեռք բերում նաև հայ իրականության մեջ կաթոլիկ քարոզիչների գործունեության, կաթոլիկյան դավանանքի տարածման, ինչպես նաև քարոզչության արդյունքում ձևավորված հայ կաթոլիկ համայնքների պատմությանն ու արդիական կացությանը վերաբերող հարցերը: Կաթոլիկությունը ի հայտ եկավ որպես արևմտյան և արևելյան Հռոմի միջև քաղաքական և տնտեսական պայքարի արդյունք: Կաթոլիկ եկեղեցին պայքարում էր, որպեսզի իր հետևորդների թիվն ավելացներ ոչ միայն հեթանոսների, այլ նաև այն ժողովուրդների հաշվին, ովքեր ընդունել էին Քրիստոսի հավատքը: Սակայն իրենց շարքերը ներգրավել քրիստոնեությունն ընդունած հայերին հնարավոր էր միայն նրանց եկեղեցին հերետիկոս համարելու արդյունքում: Բյուզանդական եկեղեցին պայքարում էր Հայ առաքելական եկեղեցու հետ ագրեսիվ և առանց փոխհամաձայնության, իսկ Հռոմեական կաթոլիկ եկեղեցին, հաշվի առնելով Բյուզանդիայի անհաջող փորձը, գործում էր շատ ավելի մեղմ: Խաչակրաց արշավանքների ընթացքում, հուսալով ստանալ Կիլիկյան Հայաստանի օժանդակությունը, Հռոմեական կաթոլիկ եկեղեցին տեղի հայ թագավորներին և հոգևոր առաջնորդներին հոգևոր ունիա առաջարկեց: Կիլիկիայի քաղաքական վերնախավն այդ ունիան ընդունեց որպես զուտ ռազմաքաղաքական միության նախահիմք, որը նրա համոզմամբ չէր խաթարի Հայ առաքելական եկեղեցու ազգային բնութագիրը: Հայերի մեջ կաթոլիկյան քարոզիչների գործունեությունը Կիլիկյան հայկական թագավորության սահմաններում ծավալվել է դեռևս XIII դարի վերջին և XIV դարի առաջին կեսին: Լևոն IV-ի (1305-1308թթ.) ճնշման ներքո Հայ եկեղեցում ընդունվեցին խոստովանական և ծիսական որոշ սկզբունքներ, որոնք փաստացի բերում էին ունիայի ձևավորմանը: Շրջակա մահմեդական իշխանությունների պարբե-

րական ասպատակությունների շրջանում հռոմեական եկեղեցին օգնության նախապայման էր համարում հայերի կողմից Հռոմի պապի գերիշխանության ճանաչումը, ինչպես նաև՝ կաթոլիկ եկեղեցու դավանանքի և ծեսի ընդունումը: Իսկ միաբանության հայ կողմնակիցները (ունիթորներ), Կիլիկիայի հայոց թագավորության փրկությունը կապելով լատինական եկեղեցու օժանդակության հետ, կուրորեն ընդունում էին լատինական եկեղեցու պահանջները և փորձում էին կաթոլիկյան դոգմաներն ու ծեսերն արմատավորել Հայաստանում[231]:

XVII- XVIII դարերում Հռոմեական կաթոլիկ եկեղեցու ակտիվացումն ընթանում էր Եվրոպայի և Օսմանյան կայսրության միջև տնտեսական կապերի ամրապնդմանը զուգընթաց: XVII դարի վերջին տասնամյակներին կաթոլիկության տարածման գործընթաց ներառեցին նաև հայ քարոզիչները: Այդ տեսանկյունից նշանակալի դեր են կատարել հատկապես Սուրբ Ղազար կղզում հիմնադրված Մխիթարյան միաբանության մտավորականները, ինչպես նաև Վիեննայի և Լիբանանի եղբայրությունների հայագիտական կենտրոնների ներկայացուցիչները[232]:

Կաթոլիկությունը իր տարածումն է ունեցել նաև Նախիջևանում: Կաթոլիկությունը Նախիջևանի երկրամաս էր ներթափանցել XIV դարի սկզբներին ֆրանցիսկյան և բենեդիկտյան կրոնավորների կողմից, որոնք լայն քարոզչություն էին ծավալել Նախիջևանի Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի մահալների հայկական գյուղերում. նրանք մատենագրության մեջ հայտնի են ունիթոր կամ ունիթոռ անունով: Գտնվելով Արևելքի ու Արևմուտքի առևտրական ճանապարհների խաչմերուկում՝ հայ կաթոլիկ համայնքը մեծ հետք թողեց Նախիջևանի երկրամասի տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի ստեղծման ու զարգացման գործում: XVII դարի սկզբներին՝ մինչև շահ Աբբաս I-ի (1587-1629թթ.) կողմից կազմակերպած բռնագաղթը Նախիջևանի երկրամասի Ազատ-Ջիրանի և Դարաշամբի մահալների 10 գյուղերում ապրում էր 1780 տուն կամ 19400 մարդ հայ կաթոլիկներ: XVII դարի ընթացքում Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկները հայտնվեցին պարսից արքունիքի ու արևմտյան պետությունների դիվանագիտական հարաբերությունների առանցքում,

231 Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. 2, U. Էջմիածին, 2001, էջ 906-907, սյուն. 2089. Maxaqia arq. Ormanyan, Azgapatum, h.2, S. Ejmiatsin, 2001, ej 906-907:

232 Ակինյան Ն., Ակնարկմը Վիեննական Մխիթարյան միաբանության գրական գործունեության վրա, Վիեննա, 1912, նույնի՝ Դասական հայերենը և Վիեննական Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 338:

որի արդյունքում հայ կաթոլիկ բնակավայրերը «խաս» հայտարարվեցին, այսինքն՝ ենթարկվեցին անմիջապես շահին: Այնուամենայնիվ, XVIII դարի կեսերին պարսկական պետության վարչաքաղաքական անկայուն համակարգի, դրանից բխող ծանր հարկապահանջության, կյանքի ու գույքի անվտանգության բացակայության, արժանապատվության ոտնահարման պայմաններում Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկների մի մասը մահմեդականացավ, իսկ մյուս մասը բռնագաղթվեց: Կաթոլիկ հայերն իրենց հայրենակիցների նման անպաշտպան չէին. առաջին հերթին Հռոմի պապն էր նրանց հովանավորում, ապա Արևմուտքի կաթոլիկ միապետները, որոնց դեսպանները հատուկ նամակներ էին տանում պարսից շահերին՝ խնդրելով նրանց ուշադրությունն ու հովանավորությունը Պարսկաստանի հպատակ հայ կաթոլիկների նկատմամբ: Հենց այս մեծ բռնագաղթի ժամանակ էլ, ինչպես երևում է Օգոստինոս Բաջեցու վկայությունից, շահի մոտ էր եկել «ֆրանկների» դեսպանը, որը միջնորդեց Նախիջևանի գավառի կաթոլիկ հայերի համար, և քանի որ պարսից շահը ձգտում էր դաշնակցել արևմտաեվրոպական պետությունների հետ՝ ընդդեմ Օսմանյան կայսրության, չէր կարող մերժել նրանց խնդրանքը, մանավանդ որ դա վերաբերվում էր միայն հայության մի շատ փոքր մասին: Հայ առաքելական մեծամասնության համար ոչ մի միջնորդություն չէր լինում որևէ քրիստոնյա պետության կողմից, քանզի (ըստ կաթոլիկների) հայ եկեղեցին հերձվածող էր. միացած չէր կաթոլիկ եկեղեցուն, և եթե նրա հետևորդները տառապում էին ամենադաժան ստրկության մեջ, այդ այն պատճառով, որ նրանք իրենց հերձվածողության համար պատժված էին քրիստոնեական աստծուց: Այսպես էր բացատրում կաթպիկ եկեղեցին իր գործողությունները առաքելական հայերի նկատմամբ, որի համար հայերի կրած տառապանքները չէին կարող անցանկալի լինել, քանի որ այդ տառապանքներն առավել ևս պետք է հարկադրեին նրանց դիմել կաթոլիկության՝ տեսնելով որ իրենց կաթոլիկ հայրենակիցները համեմատաբար ավելի ապահով ու պաշտպանված են[233] :

XVII դարի սկզբներին Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկ համայնքը բավականին մարդաշատ էր և ուներ տասը գործող եկեղեցի[234]: Ըստ Ղ. Ալիշանի՝ ունիթոր հայերի թիվը վերը նշված շրջաններում հասնում էր 19 հազարի: Այս ազգաբնակչությունը տեղա-

233 Լեո, Երկերի ժողովածու, հ. Գ, Երևան, 1973, էջ 251-252:
234 Բայբուրդյան Վ., XVIIդ. Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, ՊԲՀ, 1989, N 2, էջ 148:

վորված էր 3 քաղաքներում ու 12 գյուղերում և ընդհանուր առմամբ կազմում էր 1830 տուն[235]: Համաձայն Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկների արքեպիսկոպոս Ազարիա Ֆրիտոնի 1601 թվականի զեկուցագրի՝ գավառում ապրում էր մոտ 1780 տուն հայ ընտանիք կամ 19400 բնակչություն, որոնք տեղաբաշխված էին Նախիջևանի երկրամասի Ապարաներ, Ապրակունիս, Քռնա, Սալթաղ, Խոշկաշեն, Մեծշեն, Գանձակ, Շահապունիք, Ղարաղուշ, Ցղնա և հարևան Մակուի շրջանի Կեծուկ ու Արտազ գյուղերում[236]:

Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկ համայնքի դերը մեծացավ հատկապես XVII դարում: Կաթոլիկ եկեղեցու սևեռուն ուշադրությունը Նախիջևանի վրա պայմանավորված էր առաջին հերթին նրանով, որ այդ երկրամասի վրայով էին անցնում առևտրական տարանցիկ ճանապարհները և նրա բնակավայրերից շատերը (Նախիջևան, Ջուղա, Ագուլիս, Օրդուբադ) միջազգային առևտրի կարևորագույն հանգույցներ էին, որտեղ Արևելքից ու Արևմուտքից հսկայական հարստություն էր կուտակվում: Սեֆյան շահերին Նախիջևանի կաթոլիկ հայերը հետաքրքրում էին այնքանով, որ արևմտաեվրոպական պետությունների օգնության կարիքը ունենալով՝ նրանք փորձում էին այդ երկրների օգնությամբ պայքարել Օսմանյան կայսրության դեմ և Արևմուտք էին ուղարկում Նախիջևանի և Ջուղայի հայ քրիստոնյա վաճառականներին, որոնք դիվանագիտական գործունեություն էին իրականացնում եվրոպական երկրներում: Ընդառաջելով եվրոպացիների միջնորդությանը՝ դեռ շահ Իսմայիլ I-ը (1502-1524թթ.) մի շարք արտոնություններ է շնորհել Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկներին[237]: Սակայն շահերի փոփոխության ժամանակ նախորդների շնորհումները կորցնում էին իրենց ուժը և կարիք ունեին վերահաստատման: Հռոմի պապի և արևմտաեվրոպական թագավորների միջնորդությամբ շահ Աբբասի (1587-1629թթ.) կառավարման շրջանում վերահաստատվեցին հին արտոնությունները: Նախիջևանի կաթոլիկ հայ համայնքների մեծ մասը «խաս» հայտարարվեցին: Պարսից արքունիքի հետ դիվանագիտական կապեր պահպանելը հիանալի առիթ էր տալիս Հռոմի պապին և արևմտաեվրոպական միապետներին՝ հովանավորելու Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկներին: Այս երկրներից

235 Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, 522 էջ:
236 Նախիջևան, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2000:
237 Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Երևան, 1959, էջ 611:

հաճախ դեսպանություններ էին գալիս Սպահան: Եվ նրանք բոլորն էլ տանում էին հանձնարարական նամակներ, որոնց մեջ Հռոմի պապը և արևմտաեվրոպական միապետները խնդրում էին շահերին հովանավորել և պաշտպանել իրենց կրոնակից հայ կաթոլիկներին[238]: Այսպես, երբ Պողոս V պապի կողմից հատուկ պատվիրակ նշանակված Պողոս Չիթթադինը, Դոմինիկյան, Օգոստինյան և Կարմելիտական միաբանների ուղեկցությամբ 1615 թվականի դեկտեմբերի 13-ին Ֆահրապատ քաղաքում հանդիպում է շահ Աբասին, վերջինս մի շարք արտոնություններ է տալիս Նախիջևանի երկրամասի կաթոլիկ հայերին. մասնավորապես արգելվում են մանկաժողովները, վերադարձվում է բռնագրավված գույքը և կաթոլիկների կենտրոն հանդիսացող Ազատ-Ջիրանի մահալում նշանակվում է հայ կառավարիչ[239]: Բռնագաղթից հետո՝ 1616 թվականին, Հռոմից ուղարկված Անխել Մարիա Չիտտադինիի կողմից կազմված զեկուցագրի համաձայն, Նախիջևանի գավառի բոլոր տասը գյուղերում միասին հաշվվում էր մոտ 305 կաթոլիկ ընտանիք, այդ գյուղերից Քոնայում հաշվվում էր 1, Սալթաղում՝ 2, Գանձակում՝ 4 ընտանիք, այն դեպքում, երբ բռնագաղթից առաջ՝ 1601թվականին, Քռնայում կար 70, Սալթաղում՝ 120, Գանձակում՝ 70 տուն հայ ընտանիք[240] : Նախիջևանի երկրամասի կաթոլիկ հայերի նկատմամբ ուշադրությունն ավելի է մեծանում XVII դարի առաջին քառորդից, երբ Հռոմն սկսում է առանձին ուշադրություն դարձնել Արևելքի քրիստոնյաներին վրա և ավելի լուրջ քայլերի է դիմում՝ նրանց իրեն ենթարկելու համար: 1622 թվականին Գրիգոր XV պապը Հռոմում հիմնում է կրոնական մեծ հաստատություն, որն ստանում է «Հավատի պրոպագանդայի սուրբ միաբանություն» անունը: Հայ կաթոլիկ գրականության մեջ այս միաբանությունը կոչվում է «Սուրբ ժողով տէ փրոփականդայ ֆիդէ», «Սուրբ ժողով տարածման հաւատոյ» և «Սրբազան համագումար հաւատոյ»: 1627 թվականին Ուրբանոս VIII պապը կաթոլիկ քարոզիչներ պատրաստելու համար Նախիջևանում հիմնում է բազմալեզու դպրոց[241]: Կաթոլիկ հայերի համար բացված այս դպրոցում ուսուցչություն էին անում Վատիկանից ուղարկված բազմաթիվ կրոնավորներ, որոնցից մեկը դոմինիկյան Պողոս Փիրոմալին էր, որը 1632 թվականին հաստատվել էր Հայաստանում և 1654-1664 թվա-

238 Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 522:
239 Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, մաս Գ, Պէյրութ, 1959, էջ 2305:
240 Նախիջևան, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2000:
241 Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, մաս Գ, Պէյրութ, 1959, էջ 318:

կաններին. Նախիջևանի արքեպիսկոպոսն էր ու կառավարում էր կաթոլիկ հայերի համայնքը[242]: 1669 թվականին Կղեմես IX պապի, Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորի, Տոսկանայի մեծ դուքսի և վենետիկյան սենատի հատուկ հանձնարարականներով Սպահան է ուղարկվում Նախիջևանի արքեպիսկոպոս Մատթեոս Հովհաննիսենցը՝ իրեն ենթակա հայ կաթոլիկների օգտին արտոնություններ ձեռք բերելու[243]: Այս իրավունքները Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկները ձեռք էին բերել դեռ շահ Աբբաս I-ի օրոք, սակայն պարսկական պաշտոնյաները անուշադրության էին մատնել շահերի հրամանները, և կարիք էր լինում, որ յուրաքանչյուր նոր շահ վերահաստատեր իր նախորդի առանձնաշնորհումները: Կաթոլիկ եկեղեցու հարաբերությունները պարսկական արքունիքի հետ առանձին կարևորություն են ստանում XVII դարի երկրորդ կեսին՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV ժամանակ: Հենց այս ժամանակ էլ Նախիջևանի երկրամասը դառնում է պարսկական արքունիքի և Արևմուտքի քաղաքական հարաբերությունների կարևոր հանգույց, քանի որ այդ առիթը կար, և դա Նախիջևանի կաթոլիկ հայերն էին, որոնք արժանացել էին Ֆրանսիայի թագավորի ուշադրությանը[244]: Այսպես՝ Լյուդովիկոս XIV-ը ակնարկում էր, որ կաթոլիկներն էլ, ինչպես մյուս քրիստոնյաները, ենթարկված են Պարսկաստանում գործող «Իմամ Ջաֆարի» օրենքին, որի համաձայն՝ ամեն մի քրիստոնյա, ընդունելով մահմեդականություն, տիրանում էր քրիստոնյա ազգականների ունեցվածքին[245], թագավորը խնդրում էր, որ վերացվի այս օրենքը, թագավորն շտապում էր ավելացնել, թե իր խոսքը միայն այն քրիստոնյաների մասին է, որոնք իրենց անվանում էին ֆրանկ (կաթոլիկ) և բոլորովին չի վերաբերում հերձվածողներին, այսինքն՝ ոչ կաթոլիկ հայերին[246]: Չնայած Արևմուտքից հղված բազմաթիվ նամակներին ու դիմումներին՝ կաթոլիկ հայերի դրությունը շարունակում էր մնալ ծանր: Դեռ 1630 թվականի մայիսի 21-ի խնդրագրով Օգոստինոս Բաջենցը, հավատասփյուռ ժողովրդին գրելով, որ պարսկական օրենքով քրիստոնեություն ուրացած անձը տիրում է իր ազգականների ունեցվածքին, խնդրում էր ,որ նվերներ և նամակ ուղարկի պարսից Շահի, որպեսզի կանխվի այս օրենքի ուժը, քանի որ ժողովուրդը

242 Նույն տեղում, էջ 606:
243 Հովհաննիսյան Ա., Նոր նյութեր հայ-ունիթորական պատմագրությունից, Արարատ, 1915, էջ 64-67:
244 Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1969, էջ 323:
245 Նախիջևան, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2000:
246 Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1969, էջ 323:

հեշտությամբ է ուրանում հավատքը՝ չկորցնելու համար իրենց ոզջ ունեցվածքը: 1632 թվականի հունիսի մեկին Ապարանների վանքից, ապա՝ հուլիսի երկուսին Երևանից գրված իր նամակներում նշանավոր միսիոներ Պողոս Փիրոմալին զեկուցում էր. «ընդդեմ քրիստոնեության, մասնավորապես՝ հայ քրիստոնեության և հայության դեմ ընդունված այս ավերիչ օրենքի» մասին: Փիրոմալին խնդրում էր Հռոմի բարձրագույն իշխանությունների անմիջական միջնորդությունը պարսկական իշխանությունների առջև՝ կանխելու այս օրենքի գործունեությունը[247]:

Եթե XVII դարի կեսերին Նախիջևանի երկրամասում հաշվվում էին 5-7 հազար հայ կաթոլիկներ, ապա XVIII դարի սկզբներին նրանց թիվը չէր անցնում մի քանի տասնյակ մարդուց[248]: Այսպիսի ծանր պայմաններում էր ապրում արևմտաեվրոպական պետությունների ու Հռոմի պապի հովանավորությունը վայելող կաթոլիկ հայությունը: Դրա պատճառը Պարսկաստանի անկայուն վարչաքաղաքական համակարգն էր. շահերի հրամանները կամ չէին հասնում տեղի կառավարիչներին, կամ ուղղակի անտեսվում էին նրանց կողմից, և բնականաբար նման արտաքին դիվանագիտական միջամտությունները չէին կարող որևէ ազդեցություն ունենալ և կանխել այն բոլոր ապօրինությունները, որոնք բխում էին պարսկական նեխած պետական համակարգից: Չնայած արևմտաեվրոպական պետությունների և Հռոմի պապերի հովանավորությանն ու շոշափելի օգնությանը երկրամասի կաթոլիկ հայերին՝ XVIII դարի կեսերին նրանց կենսագործունեությունը դադարում է: Նախիջևանի երկրամասի հազարավոր կաթոլիկ հայ ընտանիքներ 1746 թվականին արտագաղթում են Փոքր Ասիայի թուրքական տարածքներ, մասնավորապես՝ Զմյուռնիա[249]: 1722 թվականի հոկտեմբերի 22- ին այլ խնդրանքով հավատասփյուռ ժողովրդին են դիմում«Իերկրեն Փարսիանոյի քաղաքն Նախիջևանոյ, ի գեողայքաղաքն Աբրաներոյ Ճահկոյ և Խոշկայշինոյ» աատագաղթած 150 հոգի, որը ապաստանել էր «իքաղաքն Գոզալ Հեսար, Թիրայ և Իզմիր» քաղաքներում: 1764 թվականի ապրիլի 15-ի խնդրագրով Իզմիրում ապաստանած 700 նախիջևանցի դոմինիկեաներ, հաղորդելով, որ իրենց գավառում մնացել են 60-70 անձիք, խնդրում են իրենց խոստովանահայր ուղարկել իրենց նո-

247 Նախիջևան, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2000:
248 Ճեմճեմեան Ս., Նախիջեւանի Հայոց վարժարանը եւ Հռոմը, Վենետիկ, Ս. Ղազար, 2000, էջ 9:
249 Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 406-407:

րընծաներից պատրի Թոմաս Իսավերդենցուն որը գտնվում էր Անկոնայում: Կաթոլիկություն ընդունած հայ բնակչությունը, կտրված լինելով իր եկեղեցուց, որի դերը անգնահատելի էր հայապահպանման գործում, հեռանալով իր ազգային մշակույթից, ավելի հեշտությամբ էր զոհ դառնում մահմեդական իշխանությունների ձուլման քաղաքականությանը:

Այսպիսով, XVIII դարի կեսերին վարչաքաղաքական անկայուն համակարգի և նրանից բխող ծանր հարկապահանջության, կյանքի ու գույքի անվտանգության բացակայության, արժանապատվության ոտնահարման պատճառներով Նախիջևանի երկրամասի կաթոլիկ հայերի մի մասը մահմեդականացավ, իսկ մյուս մասը տարագրվեց: Հավատասփյուռ ժողովին ներկայացված զեկուցագրի համաձայն՝ Քռնա և Ապարաններ գյուղերից «Խուլիխանի (Նադիր շահ, 1736-1747թթ.) վերջին գազանային պատերազմներէն» Հայ եղբարք քշուեցան[250], և Ղ. Ալիշանի տվյալներով այդ իրադարձություններից հետո Նախիջևան այցելած իտալացի միսիոներները հանդիպեցին ընդամենը 60-70 կաթոլիկ հայերի[251]: Գավառի հայ կաթոլիկ բնակչության վերջին ակորդը դրվեց 1752 թվականին, երբ Ազատ խան աֆղանի կողմից ավերվեցին Նախիջևանի համարյա բոլոր հայկական գյուղերը, իսկ ով չէր հասցրել արտագաղթել, գերի տարվեց:

SUMMARY
THE ROLE OF CATHOLIC COMMUNITY IN NAKHIDJEVAN IN THE XVII-XVIII CENTURIES

EPRIKYAN ARMINE MELSIKOVNA
PhD in history

Catholicism penetrated into the province of Nakhijevan at the beginning of the XIV century by French and benediktyan religious men. Being situated in the trading crossroads of East and West it created a great Armenian catholic community and made deep influence on developing economic, political and cultural links in Nakhijevan region. In the middle of XVIII century a part of Armenian Catholics living in Nakhijevan province adopted Muslim religion, others moved away because of unstable governing system of Persian state, heavy taxes,

250 Ոսկյան Գ., Համառոտ ակնարկ մը քարոզող և միաբանող եղբարց պատմության Հայաստանի մեջ, Բազմավեպ, 1922, հունվար, էջ 21:
251 Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 387:

absence of security for life and property and the violation of dignity.

Key words: *Armenia, Nakhidjevan, catholic community, Persian state, Roma, church, religion.*

РЕЗЮМЕ
РОЛЬ КАТОЛИЧЕСКОГО СООБЩЕСТВА В НАХИДЖЕВАНЕ В XVII-XVIII ВЕКАХ

АРМИНЕ ЕПРИКЯН МЕЛСИКОВНА
кандидат исторических наук, доцент

Католицизм был внедрен в провинцию Нахичевани в начале XIV века французскими и бенедиктинскими праведниками. Расположившись на пересечении торговых путей Востока и Запада, они создали великую армянскую католическую общину, что сильно повлияло на развитие экономических, политических и культурных связей в Нахичеванской Республике. В середине XVIII века часть армянских католиков, живущих в провинции Нахичевани, приняло мусульманскую религию, остальные вынуждены были покинуть страну ввиду нестабильной системы управления государства Персидского залива, высоких налогов, отсутствия защиты жизни и имущества, а также посягательства на достоинство человеческой личности.

Ключевые слова: *Нахичевань, католическая община, государство Персидского залива, религия, церковь.*

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԳԵՎՈՐԳ ՄԿՐՏՉՅԱՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորման կենտրոնական գրասենյակի տնօրեն, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի կրոնի պատմության և տեսության ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր՝ *Պետություն, եկեղեցի, պատմություն, արժեհամակարգ, կրոն, հոգևոր, քրիստոնեություն, ազգ, ուսումնասիրություն, մարտահրավերներ:*

Պետություն-եկեղեցի հարաբերությունների հետազոտությունը

ժամանակակից Հայաստանում կարևորագույն խնդիրներից է: Ինչպես Ղևոնդ Ալիշյանն էր նշում. «Որևէ ազգի քաղաքական և հոգևոր կյանքը (որ սովորաբար կոչվում է պատմություն) լավ ճանաչելու համար անհրաժեշտաբար հարկավոր է իմանալ նաև նրա կրոնական իմացմունքն ու գործը, պարզ ասած՝ հավատքը, նամանավանդ այն ազգերինը, որոնք հիշվել են հնագույն ժամանակներում կամ անցել են ժամանակի հետ, կամ դեռ կան ու մնում են: Այս վերջիններիս թվում հայերի լինելը բոլորը գիտեն. ինչպես այսօր, նմանապես և՛ նոր, և՛ հին դարերում հայերի առկայությունը հայտնի է[252]»:

Պատմության ողջ ընթացքում հասարակական հարաբերությունների կարևոր բաղադրիչներից են պետություն-եկեղեցի բազմաբնույթ և բազմակողմ փոխհարաբերությունները, որոնց ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հասարակական կյանքում կրոնի տեղի, դերի, նշանակության, կրոն-հասարակություն հարաբերությունների հիմնական առանձնահատկությունների վերլուծության և արժևորման տեսանկյունից: Դեռևս անհիշելի ժամանակներից, առաջին պետական միավորների կամ պետությունների ձևավորման շրջանում հասարակական հարաբերությունների կանոնակարգման և համակարգման գործընթացում կարևոր դերակատարություն ուներ գերիշխող կրոնական համակարգը, իսկ ավելի պրիմիտիվ հասարակարգում՝ կրոնական հավատալիքները, որոնք ձևավորում էին հասարակական գիտակցությունը, աշխարհայացքը, այն արժեհամակարգը, որով առաջնորդվում էին տվյալ հասարակության անդամները:

Հայաստանում պետություն-եկեղեցի հարաբերությունները պատմական զարգացման բավականին ուրույն և հետաքրքրական ընթացք են ունեցել: Նախաքրիստոնեական Հայաստանի պետություն-կրոն հարաբերություններին բնորոշ առանձնահատկություններից էր այն, որ հոգևոր գերագույն իշխանության մարմնացումը Հայոց արքան էր, չնայած որ նրա կողքին արդեն գոյություն ուներ անհիշելի ժամանակներից ձևավորված քրմերի դասը, որը խոշորագույն դերակատարություն ուներ երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային կյանքում[253]:

Պետություն-կրոն հարաբերությունների մասին կարևոր վկա-

252 Տե՛ս Ղևոնդ Ալիշյան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 9:

253 Տե՛ս Ս.Մ. Կրկաշարյան, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI-մ.թ. IV դդ.), Քրմական դասը Հայաստանում, էջ 129:

յություն է տալիս Մովսես Խորենացին, համաձայն որի Երվանդ Վերջինի թագավորության տարիներին «Երվազ եղբորը քրմապետ նշանակեց[254]»: Մեկ այլ դեպքում Խորենացին նշում է, որ Արտաշես թագավորը իր որդի Մաժանին նշանակում է «Անիում Արամազդի կուռքի քրմապետ[255]»: Խոսելով Վահունի քրմերի մասին, որոնք իրենց համարում են Վահագնի սերունդը, պատմահայրը հաղորդում է, որ Վաղարշակ թագավորը նրանց է «հանձնում քրմության պաշտոնը, դասում է առաջին նախարարությունների շարքում.[256]»: Այսպիսով ենթադրելի է, որ Հայաստանում քրմապետերը, որպես կանոն, սերում էին արքայական տոհմից, որի վկայությունն է նաև Տակիտոսի հիշատակությունն այն մասին, որ Տրդատ Ա թագավորը (մ.թ. 66-80թթ.) միաժամանակ նաև քուրմ էր[257]: Հայաստանում թագավորական իշխանության և քրմական դասի միջև գոյություն ունեցած սերտ հարաբերությունների մասին արժե առանձնացնել մի կարևոր հանգամանք ևս՝ քրմական դասի ձեռքում է եղել նաև դատական իշխանությունը: Երբեմն քրմապետ-դատավորն հանդիսացել է նաև երկրի գերագույն իշխանավորը և աշխարհազորի առաջնորդը[258]:

Հայոց նախաքրիստոնեական շրջանից այս օրինակներում հստակ տեսնում ենք, որ կրոնը կամ հոգևորը կարևոր դերակատարում ունեն պետության կյանքում: Մասնավորապես հատկանշական է այն հանգամանքը, որ այն կարևոր բաղադրամաս է ինչպես ներպետական անվտանգության, այնպես էլ արտաքին անվտանգության ապահովման համար:

Պետություն-կրոն հարաբերությունները շրջադարձային նոր փուլ թևակոխեցին քրիստոնեության պետականացումից հետո, երբ նոր ձևավորված եկեղեցին դարձավ պետության անբաժան մասը, հասարակական կյանքի ակտիվ մասնակիցն ու դերակատարը:

Քրիստոնեության ընդունումը, չնայած վերջինիս աշխարհաքաղաքացիական բնույթին, հայերի համար ազգային ինքնության դրսևորման միջոց հանդիսացավ, քանի որ այն դեռևս Հռոմեական կայսրության համար իրավահավասար կրոն չէր և ուղղակիորեն հակադրվում էր պարսկական զրադաշտականությանը: Սակայն շատ

254 Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, թարգ., ներած. և ծանոթաց. Ստ. Մալխասյանցի.-Եր., Հայպետհրատ, Երևան 1961, խ, էջ 197:
255 Տե՛ս նույն տեղում, ծգ, էջ 211:
256 Տե՛ս նույն տեղում, ը, էջ 158:
257 Տե՛ս Ս. Կրկյաշարյան, քրմական դասը Հայաստանում, էջ 130:
258 Տե՛ս նույն տեղում, էջ 146:

չանցած վերածվեց համաշխարհային կրոնի, իսկ Հայոց եկեղեցին էլ, բնականաբար, դարձավ Տիեզերական եկեղեցու մի մասնիկը: Ինչպես բոլոր կրոնների կյանքում, այնպես էլ քրիստոնեության մեջ, ազգային-պետական գործոնը առաջ բերեց շահերի հակադրություն և բախում, որը հանգեցրեց աստիճանաբար միասնական եկեղեցու տրոհմանը: Այս երևույթները դրսևորվեցին նաև հայ իրականության մեջ, որի արդյունքը եղավ Պապ[259] թագավորի կողմից Հայոց ազգային եկեղեցու փաստական հիմնադրումը:

Մեծ էր հատկապես եկեղեցու դերակատարությունը հոգևոր-մշակութային և կրթական կյանքում: Դեռևս Ս. Ներսես Մեծի ժամանակաշրջանից սկսած՝ եկեղեցին, որոշակի ռեֆորմների արդյունքում ոչ միայն սկսում է հստակորեն կարգավորել կրոնական կյանքը, այլև մեծ տեղ է հատկացնում հոգևոր-մշակութային և կրթական կյանքի բարելավմանը, որի վերջնակետը դարձավ հայ գրերի գյուտը և եկեղեցու հայացումը: Ինչպես դիպուկ նշել է Մաղաքիա արք. Օրմանյանը. «Քաղաքական հաշտարար իշխանությունը և Եկեղեցու ճշմարիտ հովվությունը հետզհետե ազգին պատրաստեցին մի մեծ հաջողության, որ նրա ապագայի երաշխավորությունը պետք է լիներ՝ Հայ դպրության սկզբնավորությամբ[260]»: Կորյունի հիշատա-

259 Փաստացի Հայոց արքա Պապը (370-374) կարճատև գահակալության շրջանում տիտանական ջանքեր գործադրեց պետական իշխանությունը ամրապնդելու և ավերված երկրի տնտեսական ու ռազմական հզորությունը վերականգնելու ուղղությամբ: Երիտասարդ շնորհաշատ արքայի քաղաքականության մեջ որոշակի և ուրույն տեղ ունի նրա եկեղեցական քաղաքականությունը, որի արդյունքում հայոց եկեղեցին անկախացավ կամ ազգային նկարագիր ստացավ: Հայոց եկեղեցին փաստորեն առանձնացավ տիեզարական եկեղեցուց, եթե ոչ դոգմաների առումով, ապա քաղաքականապես և աստիճանաբար ազգային կերպարանք ստացավ: Կաթողիկոսները այլևս անվերապահորեն ճանաչում էին թագավորների գերագահությունը և գործիք չէին դառնում հռոմեական քաղաքականության ձեռքում... մանրամասը տես Հայոց եկեղեցի և պետություն, միջազգային գիտաժողովի նյութեր, հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան 2000, էջ 28, 36, 45: Այս առումով կարևոր մի մեջբերում ևս. Պապ թագավորի ժամանակ ձեռք բերած վարչական անկախությունից հետո, 6-րդ դարի պատմական հանգամանքների բերումով Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին դավանապես ևս զատվել է Բյուզանդական եկեղեցուց՝ բռնելով ինքնուրույն զարգացման ուղին: Այն վերջնականապես աբողջացել է 8-րդ դաին՝ Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսի օրոք, երբ Դվինի 720-ի ժողովում որոշակիացվել և կանոնակարգվել է Հայ եկեղեցու ծիսապաշտմունքային կարգը, ժամերգությունները, տոները, ընդունվել է «Կանոնագիրք Հայոցը»-ը՝որպես Հայ եկեղեցաիրավական նորմերը կանոնակարգող ժողովածու, տես ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կայք, կրոն, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_Hayastanyayts_Arakelakan_Sourb_Yekeghetsi , 05.08.2017:

260 Տես Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Սուրբ Էջմիածին, 2001, էջ 302-303:

կությունը, թե ինչ մեծ խանդավառությամբ, «ցնծության ձայներով և հոգևոր երգերով ու բարձրաձայն օրհնություններով» են Հայոց արքան ու կաթողիկոսը դիմավորում գրերը ստեղծող Մաշտոցին, դիպուկ բնորոշում է պետություն-եկեղեցի հարաբերությունների բարձր և կատարյալ մակարդակը[261]: Փաստացի հայ ժողովրդի կյանքի այս մեծագույն իրադարձությունը քրիստոնեությունը ի վերջո դարձրեց հայ ազգային ինքնության կարևորագույն մասը՝ կանխորոշելով հայ ազգի հետագա ոչ սահուն և փորձություններով լի ընթացքը:

Հայոց եկեղեցու դավանաբանական դիրքորոշման հստակեցումը և քաղկեդոնականության մերժումը ևս պետք է դիտարկել ազգային-եկեղեցական, ինքնության պահպանման և ինքնուրույնության տեսանկյունից, որի կարևոր կողմերից մեկն էլ Հայոց եկեղեցի-պարսից պետություն փոխհարաբերություններն էին: Պետություն-եկեղեցի հարաբերություններն այլ ընթացք ստացան Հայաստանի բյուզանդական մասում, հատկապես Հայաստանի երկրորդ բաժանումից հետո, երբ Մեծ Հայքի մեծ մասն անցավ Բյուզանդիային: Ունենալով որոշակի ինքնուրույնություն և անկախություն՝ Հայոց եկեղեցին անընդհատ փորձում էր դիմակայել բյուզանդական ճնշումներին և չընդունել առաջարկվող քաղկեդոնականությունը:

Այս իրավիճակը որոշակի վայրիվերումներով շարունակվեց մինչև արաբական արշավանքները, որի արդյունքում Հայաստանը նվաճվեց արաբական խալիֆայության կողմից և Հայոց եկեղեցու համար ձևավորվեցին արաբական պետության հետ նոր տիպի հարաբերություններ՝ ենթակա իսլամական աշխարհակարգին բնորոշ իրողություններին: Հատկապես Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսի ժամանակներից սկսած բյուզանդական ազդեցությունն աստիճանաբար թուլացավ, իսկ արաբական պետության հետ փոխհարաբերություններում մեծ դերակատարություն ստանձնեց Հայոց եկեղեցին: Հետագա զարգացումները ցույց են տալիս, որ Հայոց եկեղեցինև Հայոց իշխանները լծվեցին Հայոց թագավորության վերականգման սրբազան գործին, որի արդյունքում Բագրատունյաց արքայատոհմի գահակալությամբ վերականգնվեց Հայոց թագավորությունը[262]:

Միջնադարյան Հայաստանում պետություն-եկեղեցի հարաբերություններում Հայոց եկեղեցու կարևորագույն առաքելություններից

261 Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 2005, էջ 57:

262 885թ. Խալիֆությունը Հայոց կաթողիկոսի և նախարարների խնդրանքով Աշոտին ճանաչում է Հայոց թագավոր: Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1976թ. էջ 19, 23:

մեկն էլ եղավ հասարակական կյանքում միջանձնային և իրավական հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերի իրականացումը: Պետականության բացակայության պայմաններում եկեղեցին ստանձնել էր հայ ժողովրդի ներքին գործերի տնօրինման պարտականությունը, մի հանգամանք, որը հաշվի էին առնում նաև օտար տիրակալները: Հայոց եկեղեցին ազատված էր մի շարք հարկերից ու տուրքերից և այդ «…պայմանները ի նկատի ունեին հայ իշխանական տների սակավազոր ներկայացուցիչները, երբ ԺԴ-ԺԵ դարերում ենթակա վանական հաստատությունների տակ էին դնում իրենց ընտանիքին պատկանող կալվածքները՝ վանական այդ հաստատությունների գլուխ կարգելով մերձավոր ազգականներին: Եվ այսպես, կյանքի էր կոչվում սոցիալական նոր տերմին՝ «պարոն-տեր», որը տրվում էր այն կալվածատերերին, որոնք միաժամանակ և «պարոն» էին (այսինքն՝ աշխարհիկ իշխան) և «տէր» (այսինքն՝ հոգևոր առաջնորդ)[263]:

Ներհամայնական կյանքի կարգավորման ու պետության հետ հարաբերութունների (անկախ նրանից դա հայկական անկախ պետություն էր, թե օտար տիրապետություն) նոր որակական մակարդակ էր դատաստանգրքերի ստեղծումը: 12-րդ դարի վերջին քառորդից սկսած անկախության կամ ինքնուրույնության վերականգման նոր շրջափուլում (Կիլիկիայի հայկական թագավորություն, Զաքարյան իշխանապետություն) ստեղծվեցին հայ իրավական մտքի արգասիքը համավող դատաստանագրքեր, որոնք եկեղեցու կարգավորիչ և օրինաստեղծ գործառույթների իրականացումն էին: Այդ շարքում Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանին» միանշանակ կարելի է համարել հայ միջնադարյան իրավական մտքի լավագույն հուշարձանը: Ուղղակի գրված չլինելով պետություն-եկեղեցի հարաբերությունները կարգավորելու նպատակով՝ նրանում, այնուամենայնիվ, տեղ են գտել օրենքներ, որոնք անուղղակի վերաբերում են այդ

263 Տես Տեր Շահե քահ. Հայրապետյան, 1441 թվականին կաթողիկոսական աթոռի փոխադրումը Վաղարշապատ՝ որպես Հայոց պետականության վերահաստատման պատմական նախապայման // «Հայոց եկեղեցի և պետություն» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2000, էջ 102-103: Այս մասին մանրամասն տես նաև՝ Բաղդասարյան Է., Ակնարկ Հայոց եկեղեցու և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների // «Հայոց եկեղեցի և պետություն» միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 102-103), Հակոբյան Հ., «Աշխարհիկ միաբանների» ինստիտուտը միջնադարյան Հայաստանում // Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, 2014, թիվ 2(143), էջ 27, Թորոսյան Վ. Հ., Պարոնտերության ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը Հայաստանում (XI-XIV դդ.) // ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2011, թիվ 1-2(630), էջ 31):

հարցին: «Դատաստանագրքում» բազմաթիվ են այն հոդվածները, որոնք վերաբերում են եկեղեցու սեփականատիրական իրավունքներին և ունեցվածքի պաշտպանությանը: Այդ հոդվածները հորդորից, խրատից, քարոզից ու բարոյախոսությունից զատ նախատեսում են նաև ծանր ու խիստ պատիժներ եկեղեցու ունեցվածքի դեմ ոտնձգություն կատարողների համար: Մխիթար Գոշն աշխարհիկ իշխող դասին քարոզում է չմիջամտել հոգևոր գործերին, չհափշտակել եկեղեցու ունեցվածքը, միաժամանակ խրատում է չափից ավելի չնեղել շինականներին, իսկ եկեղեցական դասին հրահանգում է զբաղվել հոգևոր գործերով, ծառայել Աստծուն և ոչ չարին[264]:

Մեկ այլ կարևոր գործ է նաև Սմբատ Սպարապետի (12-13րդ. դդ.) «Դատաստանագիրքը»[265]: Սա ևս հայ իրավական մտքի լավագույն արտահայտություններից է: Սմբատ Սպարապետն իր «Դատաստանագրքում» բավական մեծ տեղ է հատկացրել պետություն-եկեղեցի փոխհարաբերություններին: Գրքում օրենքներն այնպես են ներկայացված, որ անգամ դրանց դասավորվածությունից երևում է, թե հեղինակի ապրած շրջանում ինչպիսի հարաբերություններ ունեին պետությունն ու եկեղեցին: Բավական է նշել միայն, որ այդ օրենքներից մի քանիսն ուղղակի վերաբերում են այդ հարաբերություններին. «Եթե թագավորը ավարով վերադարձել է պատերազմից, ապա այդ ավարի տասանորդը պիտի տրամադրի եկեղեցուն»[266], կամ՝ «ոչ ոք իրավունք չունի սեղան նստելու թագավորի հետ՝ բացառությամբ պատրիարքի[267]»: Փաստացի եկեղեցին ոչ միայն նվաճումների կամ պատերազմական գործողությունների անմիջական մասնակիցն էր, այլև արքունիքում ամենաբարձր դիրքն էր գրավում: Մեկ այլ օրենքի համաձայն՝ թագը ժառանգելու խնդիր ծագելու ժամանակ կաթողիկոսն ու եկեղեցին էին, որ իրավունք ունին թեկնածուին հաստատելու[268]:

Պետության հետ հարաբերություններին առնչվող և դրանք կարգավորող օրենքներին զուգահեռ ինչպես Մխիթար Գոշի, այնպես էլ Սմբատ Սպարապետի դատաստանագրքերի մեծ մասը, այնուամենայնիվ, հատկացված էր հասարակական կենցաղային խնդիրներին, որոնք ցույց են տալիս եկեղեցու ակտիվ և որոշիչ դերակատա-

264 Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան 1975, էջ ԻԶ:
265 Տե՛ս Ա. Ղլտջյան, Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի) կամ Կիլիկեան Դատաստանագիրք 13-րդ դարի, Ս, էջմիածին, 1918, էջ 6:
266 Տե՛ս նույն տեղում, էջ 18:
267 Տե՛ս նույն տեղում, էջ 19:
268 Տե՛ս նույն տեղում, էջ 19:

րությունը հասարակական կյանքում:

Հայոց եկեղեցու՝ պետության հետ հարաբերությունների նոր փուլ է սկսվում Օսմանյան տիրապետության շրջանում, երբ 1461թ. սկսեց գործել նվիրապետական աթոռներից մեկը՝ Կ. Պոլսի պատրիարքությունը: Ստանալով օսմանյան պետության կողմից *միլլեթի*՝ կրոնական փոքրամասնության կարգավիճակ՝ հայերին կառավարող և ներհամայնական կյանքը կարգավորող գլխավոր մարմինը դարձավ եկեղեցին, որի հետ հարաբերություններն էլ դարձան օսմանյան պետության քաղաքականության մի մասը: 1850-ական թթ. սկիզբ առած արևմտահայ սահմանադրական շարժումը ավարտվեց նրանով, որ 1860թ. մայիսի 24-ին Կ.Պոլիսի պատրիարքությունը ընդունեց արևմտահայոց «Ազգային Սահմանադրությունը», որը սուլթանական կառավարության կողմից որոշակի փոփոխություններից հետո սկսեց գործադրվել արևմտահայության մեջ 1863թ.[269]: Ըստ այդ Սահմանադրության Ազգային Ընդհանուր ժողովը օրենսդիր մարմին էր, իսկ Քաղաքական և Կրոնական ժողովները՝ գործադիր: Գործադիր իշխանության ղեկավարը և Ազգային ժողովի նախագահը պատրիարքն էր[270]: Փաստացի Օսմանյան կայսրությունում Հայոց եկեղեցու՝ պետության հետ հարաբերությունները կարգավորվում էին ըստ այս սահմանադրության, որը նոր իրողություն էր Հայոց եկեղեցական կյանքում և իրավահարաբերությունների նոր ձև:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսական կայսրությանը միանալը նոր մակարդակի բարձրացրեց նաև Հայոց եկեղեցու կենտրոն Ս. Էջմիածնի հարաբերությունները ռուսական պետության հետ: Ցարական կառավարության նախաձեռնությամբ հայ եկեղեցու, մասնավորապես Ամենայն Հայոց Կաթողիկոսության իրավասությունները սահմանափակելու, հատուկ հսկողություն սահմանելու նպատակով 1836թ. ընդունվեց Հայոց եկեղեցու կանոնադրությունը՝ «Положение»-ն: 10 գլխից և 141 հոդվածից բաղկացած այդ կանոնադրության[271] մեջ սահմանվում էին Հայոց եկեղեցու իրավունքները, արտոնություններն ու պարտականությունները: Կաթողիկոսական իշխանության սահմանափակման համար 1837թ. ստեղծվեց Սինոդը, որի ղեկավարը կառավարության կողմից նշանակված դատախազն էր,

269 Տե՛ս Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, Սուրբ Էջմիածին, 2001, էջ 4624-4636:

270 Տե՛ս Կ.Պոլիսի պատրիարքության. արևմտահայոց «Ազգային Սահմանադրություն», http://www.armeniansgenocide.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_Azgayin_sahmanadrutyun , 02.07.2017:

271 Տե՛ս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական կայք, ազգային եկեղեցեական ժողով, http://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=48&pid=3. 18.06.2017.:

չնայած Սինոդը նախագահում էր կաթողիկոսը: Ցարական կառավարությունն իր Արևելյան քաղաքականության հաջողության համար երբեմն օգտագործում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ազդեցությունն արևմտահայերի և համամատաբար հարուստ հայ գաղթօջախների վրա: «Положение»-ի ընդունմամբ սահմանվեց Ամենայան Հայոց Կաթողիկոսի ընտրության նոր կարգ: Արժանավոր եպիսկոպոսներից ընտրվելու էին կաթողիկոսական երկու թեկնածու, որոնցից մեկին (իր համար քաղաքականապես ամենից նպատակահարմարին) վավերացնելու էր ցարը[272]:

Պետություն-եկեղեցի հարաբերությունների ամբողջական պատկերը ստանալու համար կարևոր էր ընդհանրական պատկերացում ստանալ այդ հարաբերությունների պատմական զարգացման փուլերից: Հաշվի առնելով աշխատության գրելու կանոնները (ծավալի սահմանները) անրադարձ է կատարվել ուսումնասիրության մեր շրջանակին մոտ օրինակները:

Պատմական ակնարկում բերված օրինակներում մենք հստակ տեսնում ենք պետական և եկեղեցական հարաբերությունների զարգացման դրվագներ, որտեղ եկեղեցուն բացի կրոնական հարցերից տրված էր նաև օրինականության և բարոյականության ապահովման կարևոր գործառույթները: Ամփոփելով պետություն-եկեղեցի հարաբերությունների պատմական ակնարկի մասը, կառանձնացնենք հետևյալ մոտեցումները և առաջարկները.

- Պատմության զարգացման ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տալիս երկու կարևոր ինստիտուտների՝ պետական (աշխարհիկ) և եկեղեցական (հոգևոր) իշխանությունների համագործակցության և միասնական հանդես գալու դեպքում մեր ազգը ունեցել է նվաճումներ և հաջողություններ: Ներկայումս անհրաժեշտություն կա պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների վերաիմաստավորման և կանոնակարգման ժամանակակից մարտահրավերների, աշխարհաքաղաքական, ժողովրդավարական, իրավական և այլ հանգամանքները հաշվի առնելով:
- Պետության կրոնական քաղաքականության մշակման հարցում ուշադրություն պետք է դարձվի նաև մեր ազգային մշակույթի և հայապահպանման գործում ունեցած և ներկայումս էլ ունցեող

272 Տես «Բարձրագույն Կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան», «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք 19-րդ դարում, մասն Բ. Կաթողիկոսութիւն Տ. Յովհաննու 8-րդ Կարբեցւոյ և «Պօլօժէնիէ» (1831-1842 թ.)», աշխատասիրեց Ալեքսանդր Դ. Երիցեանց, Թիֆլիզ, 1895, Յաւելուած:

կառույցների ներդրման հանգամանքը:

- Պետություն-եկեղեցի հարաբերությունների պատմական փորձի գիտական մակարդակում խորքային ուսումնասիրությունների անցկացում, որը կարևոր նշանակություն կարող է ունենալ պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների նոր հայեցակարգի մշակման հարցում:

2001թ-ին Հայ ժողովուրդը մեծ շուքով նշեց քրիստոնեությունն առաջինը, որպես պետական կրոն ընդունելու 1700–ամյակը: Քրիստոնեությունը, որպես պետական կրոն ընդունելը պատմականորեն մեծ դեր ունեցավ և շարունակում է ունենալ Հայ ժողովրդի կյանքում: Հայոց արքա Տրդատ Մեծի կողմից 301թ. ընդունած որոշումը իրավական առաջին հիմքը հանդիսացավ պետություն-եկեղեցի իրավահարաբերության ստեղծման և գործունեության համար:

SUMMARY
SEVERAL ASPECTS OF STATE-CHURCH RELATIONS IN THE HISTORICAL ARMENIA

The investigation of state-church relations is one of the most important issues in modern Armenia. In this regard, the study of historical development and experience of state-church relations plays a relevant role. In the article, we refer to the state-religion-church relations at different historical stages starting from the pre-Christian times, adoption of Christianity to the beginning of the 20th century. Based on the examination of historical experience, the according reference is made to the state-church relations, as well as to the national culture, development of education and the role of the church in the national liberation struggles.

Key words: *State, church, history, value system, religion, spirituality, Christianity, nation, study, challenges.*

РЕЗЮМЕ
НЕСКОЛЬКО АСПЕКТОВ ГОСУДАРСТВЕННО-ЦЕРКОВНЫХ ОТНОШЕНИЙ В ИСТОРИЧЕСКОЙ АРМЕНИИ

Исследование государственно-церковных отношений является одним из важнейших вопросов современной Армении. В этой связи

большое значение имеет изучение исторического развития и опыта государственно-церковных отношений. В статье мы рассматриваем отношения между государством и религией на разных этапах истории: от дохристианских времен до христианства, а также от христианских времен до 20-го века. В результате изучения исторического опыта обращаем большое внимание государственно-церковных отношений, роли церкви в национально-освободительной борьбе.

Ключевые слова: *государство, церковь, история, система ценностей, религия, духовность, христианство, нация, вызовы, исследования.*

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԵՐԸ ԵՒ ՆԺԴԵՀՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ԳԱՅԱՆԵ ՍԼԱՎԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր՝ *Հայոց ցեղասպանություն, հոգեբանական հետևանքներ, ազգային ինքնություն, ցեղակրոն շարժում:*

Մարդկության դեմ կատարված մեծագույն հանցագործություններից մեկը՝ XX դարասկզբի հայոց ցեղասպանությունը, ոճրագործության իր բնույթով պայմանավորված, աչքի է ընկնում հետևանքների բազմազանությամբ՝ հայրենազրկում, հայ էթնոսի գերակշռող մասի ֆիզիկական ոչնչացում, հայկական սփյուռքի ձևավորում, մշակութային ժառանգության կորուստ, նյութական կորուստներ և, իհարկե, հոգեկան խեղումներ և հոգեբանական բարդույթներ:

Վիթխարի մարդկային, նյութական և մշակութային կուրուստների կողքին, թեմայի կարևորության առումով, հարկ է ընդգծել, հատկապես, հայոց ցեղասպանության թողած հոգեբանական հետևանքները: Որպես ցեղասպանության անմիջական հետևանք՝ առանձնացվում է ֆիզիկապես բնաջնջվելու հավաքական վախը, մղձավանջների, մոտալուտ ջարդի սպասումի կամ խուճապահար փախուստի զգացումները[273]: Սակայն, ոչ պակաս ծանր հետևանքը ցեղասպանության ենթարկվածի սերունդ լինելու բարդույթն էր, որն արտահայտվում է սեփական ուժերն ու հնարավորությունները ցածր

273 Տես Թութունջյան Հ., Հայոց Ցեղասպանության հոգեբանական հետևանքները, // «Հայկական Հարց Հանրագիտարան», Երևան, 1996, էջ 448:

գնահատելու, ինքն իրեն չարժավորելու դժվարությամբ: Եվ, ահա այստեղ է, որ կարևորվում է սփյուռքահայության հոգեբանական նկարագիրն այդ տարիներին: Մեծապես անհանգստացած լինելով այս խնդրով Գ. Նեժդեհն իր գաղափարակիցների հետ փորձեց վեր հանել հայությանը պարտվողական հոգեվիճակից ու սնել նրան արիության, հզորության և ապագայի նկատմամբ հավատի հույսերով: Սույն աշխատանքի նորույթը կայանում է նրանում, որ առավել ակնառու օրինակներով փորձ է արվել ներկայացնելու նժեհյան գաղափարախոսության սկզբնավորման և հայոց ցեղասպանության թողած հոգեբանական հետևանքների անմիջական առնչակցությունները:

Հարկ է նկատել, որ եթե, ցեղասպանությունից անմիջապես հետո, սփյուռքահայության մեջ տիրապետող էր կարճ ժամանակ անց մայր հայրենիք վերադառնալու համոզմունքն, որ իր արտահայտություն էր գտել նաև սփյուռքահայության տեղաբաշխվածության մեջ (գլխավորապես Մերձավոր Արևելքի և Արևելյան Եվրոպայի գրեթե բոլոր այն երկրները, որոնք անմիջականորեն սահմանակից էին Օսմանյան կայսրությանը՝ մոտ իրենց պատմական հայրենիքին), ապա հետագա իրադարձություններն եկան սրբագրելու հայության հույսերն ու սպասումները: Սևրի պայմանագրով և Վիլսոնյան իրավարար վճռով ոգրևորված հայ ժողովուրդը կարճ ժամանակ անց պետք է հասկանար իրերի իսկական դրությունը: Հիասթափությունն իրեն երկար սպասել չտվեց. 1922-1923 թթ. տեղի ունեցած Լոզանի խորհրդաժողովն եկավ վերջ տալու հայության ռոմանտիկ ձգտումներին: Նրանով ոչ միայն վերջնականապես չեղյալ հայտարարվեց Սևրի պայմանագիրը և մերժվեց նախորդ՝ Լոնդոնի խորհրդաժողովով նախատեսված Օսմանյան կայսրության տարածքում հայերի համար «Ազգային օջախ» ստեղծելու գաղափարը (այն վերածվեց ընդամենը «հայ գաղթականության» հարցի և փոխանցվեց Ազգերի լիգային), այլև՝ ստորագրված պայմանագրում, առհասարակ, հիշատակություն անգամ չկար Հայաստանի ու հայերի մասին:

Այդ խորհրդաժողովը, չնայած հիասթափությանը, այնուամենայնիվ, սփյուռքահայության հասարակական օղակներում խթանեց հայության հետագա կեցության ճանապարհների փնտրտուքները: Մինչդեռ, ստեղծված իրադրության գնահատականներն և նոր ուղիների մատնանշումը երբեմն տրամագծորեն հակառակ ընթացք էին ունենում: Կային մարդիկ և խմբավորումներ, որոնք անստույգ

վախճան էին գուշակում նոր սերնդի համար, ինչպես օրինակ՝ բանաստեղծներ Պ. Զարոյանը և Զ. Որբունին[274]: Ի հակադրություն այս տեսակետի՝ սփյուռքահայության խնդրով մտահոգ մի շարք գործիչներ պահանջում էին անմիջապես գործի անցնել և ազգային կյանք ստեղծել իրենց ապրած օտար միջավայրում՝ ուշադրության կենտրոնում պահելով երիտասարդ սերնդի հայեցի կրթությունն և դաստիարակությունը: Այս խնդրում իր ուրույն դերակատարությունն ունեցավ Նժդեհը՝ որպես խնդրի լուծման բանաձև առաջարկելով իր դեղատոմսը՝ հանձին իր գաղափարախոսության:

Իրապես, ցեղասպանությունից հետո ամբողջ աշխարհով մեկ սփռված հայությունը հայտնվել էր բարոյահոգեբանական չափազանց ծանր իրավիճակում, որպես որի հետևանք հայության մի խոշոր զանգված իր փրկությունը տեսնում էր հայուրացության մեջ: Հայոց պատմությունը, լեզուն, ավանդույթներն, առհասարակ, հայ լինելը ծանր «բեռ» էր կոտորածի ենթարկված մարդու համար: Բազմաթիվ հայեր նախընտրում էին իրենց երեխաներին ուղարկել օտարազգի դպրոցներ, իսկ տանն աշխատում էին նրանց հետ հայերեն չխոսել: Այդպիսի ընտանիքի զավակներից մեկը հետագայում գրում էր. «Հայրս չէր ուզում, որ ես հայ մեծանայի, հայ դառնայի, իմ ամեն մի հայերեն խոսքը նրան հիշեցնում էր իր հոր, մոր և ազգականների սպանվելը, իր իննամյա քրոջ խմբակային բռնաբարումը և մարդու տեսքով գազանների կողմից հոշոտվելը: Նա ինձ արգելում էր գնալ Տարոնական շարժման ժողովներին և եթե ես գնում էի այնտեղ, ինձ տուն չէր թողնում: Գարեգին Նժդեհն էլ, իր հերթին, հայտարարում էր, որ հայը միայն ընտանիքի ծոցում կարող է հայ մեծանալ և ստիպում էր ինձ ժողովից հետո տուն գնալ: . . .Ի վերջո, հաղթեց ազգային ոգին. ոչ միայն ես մեծացա հայ, այլև իմ հայրը վերադարձավ հայության գիրկը և հաղթեց այն սարսափները, որ իր մեջ մնացել էր Մեծ Ցեղասպանության պատճառով»[275]:

Այս բնութագրական օրինակը միակը չէր իր ժամանակի համար: Հարվածի ուժգնությունից ցնցված՝ իրենց հայկական ինքնությունից փորձեցին փախուստի դիմել նաև հայ ժողովրդի զավակներ, անգլիալեզու արձակագիր Տիգրան Գույումջյանը՝ Մայքլ Առլենը, և կերպարվեստում վերացական արտահայտչապաշտության (աբստրակտ էքսպրեսիոնիզմի) ուղղության ներկայացուցիչ, ամերիկյան

274 Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, Երևան, 1998, էջ 76:
275 http://www.hayagitaran.info/2014/08/garyegin-nzhdyeh-garegin-nzhdeh/ (մուտքը կայք՝ 24. 02. 2017):

արդի գեղանկարչության վրա մեծ ազդեցություն թողած Ստանիկ Ադոյանը՝ Արշիլ Գորկին:

Նրանցից առաջինը, տարագրվելով Մեծ Բրիտանիա, փոխում է իր անունը՝ ճանապարհը գրական աշխարհում հեշտացնելու նպատակով: Սակայն, այդ փոփոխությունը միայն արտաքին չէր. դա միայն գրական կեղծանուն չէր: Դա նաև հայկական ինքնությունից հրաժարվելու փորձ էր, ինչի վկայությունն էր որդու ոչ հայեցի դաստիարակումը, հայական ծագումը հիշելուց խուսափումը[276]:

Իր հայկական արմատներից ու ինքնությունից հրաժարումը ավելի սուր դրսևորում ունեցավ Արշիլ Գորկու մոտ, ում բոլորը ճանաչում էին որպես Ռուսաստանից փախած վրացի, գրող Մաքսիմ Գորկու հեռավոր բարեկամ: Ավելին՝ նրա էթնիկ պատկանելիությունը մինչ իր մահը անհայտ է եղել անգամ իր կնոջը: Իսկ սա ապացույցն է առ այն, որ ընտանիքում հայ նկարիչը չի ցանկացել բարձրաձայնել իր ինքնությունը, քանի որ այն խաթարված էր[277]:

Հենց ցեղասպանությունից հետո և դրա արդյունքում առաջացած հետևանքներին, առաջին հերթին՝ բարոյահոգեբանական անկմանն ու այն հաղթահարելուն էր ուղղված նժդեհյան գաղափարախոսության հեղինակումն և դրա մի շարք առանքային դրույթներ: Ինչպես իրավացիորեն նկատել է Յու. Հովակիմյանը. «1915 թ. հայկական ցեղասպանությունը սպանել էր նաև ապրողների ոգին: Աշխարհով մեկ սփռված հայության բեկորները անհրաժեշտ էր միավորել, անհրաժեշտ էր հավատ և վստահություն ներարկել նրանց մեջ. . . »[278]:

Ինքը՝ Նժդեհը, անդրադառնալով, ցեղասպանության թողած հետևանքներին գրում է. «Մեր կորուստը միայն մարդկային չէր, նիւթական չէր միայն: Թրքական հարուածը ուղղուած էր ոչ թէ միայն Հայ մարմինին, այլեւ հայ հոգեկանին: Եւ դա պիտի ունենար իր վճռական ազդեցութիւնը հայ հոգեբանութեան վրայ: Եւ ունեցաւ»[279]: Իսկ այնուհետ, ներկայացնելով ժամանակի հայության հոգեվիճակը, ընդգծում. «գիտական հոգեբանությունը վաղուց է ապացուցել, որ աղետներ տեսած եւ մեծ արհավիրքների, ցնցումների ենթարկված ժողովուրդները, հատկապես փոքր ժողովուրդները, սկսում են

276 Տե՛ս Պետրոսյան Ս., Ցեղասպանության ազդեցությունը հայոց ազգային ինքնության վրա. որոշ փիլիսոփայական և հոգեբանական դիտարկումներ, // «Ցեղասպանության ախտահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետևանքները» (Գիտաժողովի նյութեր), Երևան, 2015, էջ 28:

277 Տե՛ս նույն տեղում, էջ 29:

278 Հովականյան Յու., Ժամանակակից փիլիսոփայական հոսանքներ, Երևան, 1998, էջ 155:

279 Նժդեհ Գ., Ցեղային արթնութիւն, Հատընտիր, Երևան, 2006, էջ 495-496:

տառապել հոգեկան ետընթացով, որն արտահայտվում է պարտվողականության տարբեր դրսեւորումների ձեւով: . . . Նախ եւ առաջ նրան պատում է թերարժեքության տանջալից զգացումը, որի պատճառով դառնում է քաղաքական հոռետես, մշակույթի տեսակետից՝ անստեղծագործ»[280]:

Շարունակելով մտորումները հայության ներքին բարդույթների ու խնդիրների մասին՝ Նժդեհը գրում է. «Հիւանդ, դժբախտ ժողովուրդ, որ մինչեւ այժմ երկու առաքինութիւն է ունեցել՝ իր դժբախտութիւները վերագրել արտաքին պատճառների եւ փրկութինը յուսալ արտաքին ոյժերից»[281]: Սակայն, այդօրինակ մոտեցումը «քաղաքական կուրությունն է», քանզի իրականում «մեր դժբախտութիւնների համար մեղաւոր են ոչ թէ բոլորը, բացի մեզնից, այլ նախ եւ առաջ մենք»[282]:

Նմանատիպ տեսակետ է արտահայտել նաև ցեղակրոնության գաղափարախոսներից Հ. Ասատրյանը, ում կարծիքով. «Հայը վարժուել է իր իրաւունքը սպասել օտարների արդարամտութիւնից: Դրա համար էլ նա բարեկամներ չունի, որովհետեւ կանխաւ մատնում է մուրալու իր տկարութիւնը»[283]: Մինչդեռ, ինչպես նշում է Նժդեհը, «միամտօրէն չպահանջենք որ աշխարհը լինի այն, ինչպէս որ մենք ենք ուզում, այլ՝ ազգովին մենք դառնանք այն, ինչպիսին լինել դա՛ է թելադրում»[284]: Իսկ իրերի առարկայական դրությունը պահանջում էր հոգեփոխում, տկարի, քաղաքական մուրացկանի հոգեբանության հաղթահարում, և, որպես արդյունք, ուժեղի նկարագրի կերտում, հզորացում:

Եվ, ինչպես պատմական յուրաքանչյուր իրողություն, այնպես էլ ցեղասպանությունը միանշանակ ազդեցություն չունեցավ հայ ժողովրդի վրա: Ու թեև այն մի կողմից առաջացրեց անելանելիության, դատապարտվածության և վախճանաբանական զգացումներ, մյուս կողմից, այդուհանդերձ, այն դարձավ նոր ստեղծագործականության ու արարումի շարժառիթ, քանզի, ինչպես իրավմամբ նկատում է Նժդեհը, «ապագայ չունի՛ այն ժողովուրդը, որի տառապանքը չի՛ ծառայում իր գոյութեան իմաստին եւ իմաստաւորումին»[285]: Նժդեհի

280 Նույնի, Ինչո՞ւ ստեղծվեց Ցեղակրոն շարժումը, Հատընտիր, էջ 475:
281 Նույնի, Բաց նամակներ հայ մտաւորականութեան, Հատընտիր, էջ 60:
282 Նույն տեղում:
283 Ասատրեան Հ., Վերանորոգչական շարժում (Խորհրդածություններ), Երևան, 2002, էջ 17:
284 Նժդեհ Գ., Բաց նամակներ հայ մտաւորականութեան, Հատընտիր, էջ 61:
285 Նույնի, Մեր նոր սերունդը, Հատընտիր, էջ 588:

կարծիքով հենց ապրիլյան խորհուրդը պետք է հեղաշրջեր հայության ներքին կյանքը՝ տանելով դեպի ցեղակրոնություն, որի միջոցով «միայն հայ հոգին պայքարի, դժբախտութեան ու կռուի մէջ աւելի յանդուգն ու կատաղի կը դառնայ. . . »[286]:

Հարկ է ընդգծել, որ ցեղակրոն շարժման և գաղափարախոսության հեղինակման նախադրյալները այսքանով չէր սահմանափակվում: Այդ տարիներին հայկական գաղթօջախներում տարածվել էին տարատեսակ կրոնական աղանդներ, որոնց քարոզած ուսմունքները սփյուռքահայության համար լի էին նոր սպառնալիքներով:

Միաժամանակ, թուրքական իշխանությունների կողմից ստեղծվել էր «Հայկական կոմիտե», որը Թուրքիայում ապրող հայերին հորդորում էր իրենց անվանել «լուսավորչական թուրքեր»՝ նպատակ ունենալով հայերին ներշնչել, որ նրանց զանգվածային կոտորածների պատճառն իրենց ռուսամետությունն էր և սփյուռքահայերի շրջանում սերմանել թուրքամետ տրամադրություններ[287]:

Այդ ամենին ավելանում էր հայկական միջավայրի ներկուսակցական և, հատկապես, միջկուսակցական չդադարող տարաձայնություններն, որոնք, իրենց հերթին, հանդիսանում էին գաղութահայության պառակտման պատճառ և ձախողում ազգային խնդրի լուծման միասնական պայքարը:

Վերջում, կարծում ենք, տեղին է մեջբերել նաև ցեղակրոնության գաղափարախոսներից Օ. Զարմունու (Փանիկյան) դիտարկումը նժդեհյան գաղափարախոսության սկզբնավորման պատճառների վերաբերյալ. «…ցեղակրօնութիւնը ծնաւ գաղթահայ կեանքի նուսատութենէն, կուսակցական պայքարներու աւերներէն, պառակտուած ժողովուրդի տկարութենէն եւ մեր ճակատագրի ողբերգութենէն»[288]:

Այսպիսով, ընդհանրացնելով կարող ենք ասել, որ հոգևոր և ֆիզիկական ցնցումների ենթարկված ժողովուրդների մոտ նկատվում են պարտվողականության, կրավորականության հոգեբանական գծեր: Այդ հանգամանքը ցեղասպանությունից փրկված և էթնիկ ձուլման վտանգի առջև կանգնած աշխարհասփյուռ հայության համար հղի էր անդառնալի կորուստներով: Ուստի, նաև այս ամենի խորին գիտակցմամբ պետք է բացատրել նժդեհյան գաղափարախոսության հեղինակումը, որը նպատակ ուներ փրկել հայությանը հոգևոր

286 Նույն տեղում, էջ 500-501:
287 Տե՛ս Աթոյան Վ., Գարեգին Նժդեհի ուսմունքը. հավիտենարժեք դասեր, Երևան, 2011, էջ 12:
288 Զարմունի Օ., Ցեղի հրամայականը, Երևան, 2007, էջ 67:

և քաղաքական անկումից ու սնուցել նրան՝ արիության, հայրենասիրության ու հայերնատիրության գաղափարներով:

РЕЗЮМЕ
ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОИСХОЖДЕНИЕ ИДЕОЛОГИИ Г. НЖДЕ

В статье сделана попытка представить одно из последствий Геноцида армян: психологическую неполноценность и пораженчество у армянского народа, которые были выражены в забвении национальной идентичности, а иногда и в ее отрицании. Зная об отрицательных последствиях этой ситуации для армян во всем мире, а также наряду с другими причинами Г. Нжде и его сторонники создают новую идеологию с целью вывести армян из сложной психологической ситуации и содействовать их духовному восстановлению и укреплению.

Ключевые слова: *Геноцид армян, психологические последствия, национальная идентичность, движения цехакронизма*

SUMMARY
THE PSYCHOLOGICAL CONSEQUENCES OF THE ARMENIAN GENOCIDE AND THE ORIGIN OF G. NZHDEH'S IDEOLOGY

The article presents the manifestations of the consequences of the Armenian Genocide, the psychological inferiority and defeatism among Armenians, which were expressed both in the oblivion of the national identity, as well as in its denial. Knowing the negative consequences of this situation for Armenians all over the world, G. Nzhdeh and his supporters, among other reasons, create a new ideology, in order to get Armenians out of a complex psychological situation and to promote its spiritual recovery and strengthening.

Keywords *. Armenian Genocide, psychological consequences, national identity, movement of Tseghakronism*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *Հայաստանի Հանրապետություն, Սարդարապատ, անկախություն, դաշնակցություն, թուրքական ծրագիր*

Հայոց պետականության և դրա դրսևորման առանձին ձևերի պատմության ուսումնասիրումը միշտ եղել և մնում է պատմաբանների, քաղաքագետների և այդ հարցով զբաղվող այլ մասնագետների ուսումնասիրման կենտրոնում: Սակայն Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման առանձին դրվագներ կարոտ են նորովի պարզաբանման և լրացուցիչ հստակեցման կարիք ունեն:

Բանն այն է, որ հասարակական-կուսակցական, մասնավորապես դաշնակցական գրականության մեջ, որպես «ելակետային» դրույթ մատուցվում և շրջանառվում է հայ պատմաքաղաքական մտքին «պատվաստված», սակայն իր նշանակությամբ խիստ վտանգավոր 1918թ. Հայոց պետականության հաստատման թուրքական գործոնը, որի «հիմնադիրը» Ա. Խատիսյանն է[289]: Լինելով ժամանակի ռազմա-քաղաքական և դիվանագիտական իրադարձությունների կենտրոնում և սերտ կապեր ունենալով թուրք ղեկավար շրջանակների հետ՝ նա հանգամանորեն վեր է հանում հիշյալ մոտեցումը: Մասնավորապես նա փորձ է կատարում հայոց պետականության ծնունդը ներկայացնել որպես Օսմանյան կառավարության «նվերը» հայ ժողովրդին՝ որպես նրա «բարի» կամքի արտահայտության դրսևորում[290]:

Պետականության «նվիրման» թուրքական ծրագրերի խանձարուրը հասնում է մինչև Առաջին աշխարհամարտի Կովկասյան ռազմաճակատի ռազմական գործողությունների նախօրյակ: Հիմք ընդունելով դաշնակցության հետ ունեցած խիստ մտերմությունը՝ Էնվերը նախքան Ռուսաստանի դեմ պատերազմելը 1914թ. ամռանը և աշնանը պատգամավորներ ուղարկեց նախ Էրզրում, ապա Վան և Մուշ՝ հայերի հետ բանակցելու, նրանց իրենց կողմը գրավելու[291] և

289 Այս մասին ավելի հանգամանորեն տես **Թադևոսյան Ռ.**, Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման թուրքամետ վարկածը, «Հանդես Երևանի համալսարանի», 1998, թիվ 2, էջ17:

290 Հայաստանի առաջին Հանրապետությանը նվիրված հետխորհրդային պատմագիտական գրականութըան մեջ տիրապետող է այն ճիշտ մտայնությունը, որ պետականության վերականգնման համար հայ ժողովուրդը պարտական է ոչ թէ որև պետության բարեհոգությանը, այլ իր հերսական ոգորումներին: Տես **Հակոբյան Ա.,** Հայաստանի Հանրապետություն (1918-1920), Երևան, 1992, էջ 3-4:

291 **Գեղամեանց Ե. ա.քահ.,** Հայերի ազատագրական շարժումները XX դարում, կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը, մասն 2-րդ, Բաքու, 1915-1917, էջ 584:

Արևելյան Հայաստանում ռուսական կառավարության դեմ «յեղափոխութիւն յուրացանելու փորձ կատարել» համար[292]: 1914 թ. հուլիսի 16-30-ը Էրզրումում հրավիրված դաշնակցության 8-րդ Ընդհանուր ժողովի ժամանակ իթթիհատի նշանավոր ներկայացուցիչներ՝ Նաջի, Հիլմի և Շուքիր բեյերն Ակնունուն, Ռոստոմին և Ա. Վռամյանին խոստանում էին Ռուսաստանի դեմ պայքարի դուրս գալու և Կովկասը նվաճելու դեպքում հայերին տալ Կարսը, Երևանի նահանգը, Գանձակի նահանգի հայաբնակ մասը, Վանը, Բիթլիսը, Էրզրումի նահանգի մի մասը և այդ տարածքներից կազմել ինքնավար Հայաստան՝ Օսմանյան պետության հովանու ներքո[293]:

Այդ մասին Ս. Վրացյանն իր հուշերում նշում է, որ նոր էր վերջացել Կարինում 1914թ. օգոստոսի 5-ին հրավիրված Հ.Յ. Դաշնակցության VIII ընդհանուր ժողովը, երբ տեղ հասան իթթիհատի ներկայացուցիչներ Բեհաեդդին Շաքիրը և Նաջի բեյը: Ժողովի մասնակիցներին առաջարկեցին հակառուսական ապստամբական շարժում ծավալել Կովկասում՝ փոխարենը խոստանալով Հայաստանի ինքնավարություն կովկասյան և մասամբ սահմանակից արևմտահայկական հողերից: Սակայն դաշնակցությունը չընդունեց այդ առաջարկը՝ հայտնելով, որ արևմտահայությունը լոյալ կերպով կշարունակի կատարել իր պարտքը Օսմանյան հայրենիքի հանդեպ[294]:

Այդ մասին է փաստում նաև Ե. Տեր-Մինասյանը Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարությանն ուղղված 1915 թ. նոյեմբերի 11-ի զեկուցագրում[295]:

1914 թ. սեպտեմբերի սկզբներին Էրզրումից Վան մեկնեց Նաջի բեյը, որի ալցելության բուն նպատակ նույնն էր. արևմտահայերին

---

292 ՀԱԱ, ֆ.1120, ց.1, գ.76, թ.37:

293 **Գեղամեանց Ե. ա.քահ**., Հայերի ազատագրական շարժումները XX դարում, կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը (մասն երկրորդ.), էջ 585: Այդ մասին ավելի հանգամանորեն տես նաև **Տասնապետյան Հ.**, Հ.Յ.Դաշնակութիւնը իր կազմութիւնեն մինչեւ Ժ. Ընդ. ժողովը (1890-1924), Աթէնք, 1988, էջ 108, նաև **Ամուրեան Ա.,** Հ.Յ.Դաշնակցութեան Ը (Էրզրումի) Ընդհ. Ժողովի մասին (գումարուած 1914 թուի Յուլիսի 25-ից մինչև Օգոստոս 17), «Ազդակ Շաբաթօրեակ», Բեյրութ, 1980 յունուար 27, թիւ 2, էջ 22-25, փետրուար 3, թիւ 3, էջ 43-47, փետրուար 10, թիւ 4, էջ 68-70, փետրուար 17, թիւ 5, էջ 91-93, փետրուար 24, թիւ 6, էջ 115-116: **Նախատեսվում էր Թիֆլիսի, Քութայիսի նահանգները, Բաթումի շրջանը և Տրապիզոնի նահանգի մի մասը տալ Վրաստանին, իսկ Դաղստանը, Բաքվի նահանգը և Գանձակի նահանգի մի մասը Կովկասի թաթարներին:** Տես **Ա-Դօ,** Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին, էջ 73-74:

294 **Վրացեան Ս.,** Նիկոլ Աղբալեանի մասին, Բ, «Ակօս», Բեյրութ, 1957, թիւ 9(98), էջ 64:

295 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի եվ նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երեվան, 1991, էջ 400:

ոտքի հանել Ռուսաստանի դեմ և հավատ ներշնչել Օսմանյան Թուրքիայի բարյացակամության նկատմամբ: Այդ առիթով Վանում սկսվեցին խորհրդակցություններ և հադիպումներ, որոնց մասնակցում էին մի կողմից Հ.Յ.Դ.-ի ներկայացուցիչներ՝ Ա. Վռամյանը (որը սեպտեմբերի 16-ին Կ.Պոլսից ժամանանել էր Վան)[296], Իշխանը, Արամը և Վ. Փափազյանը, իսկ մյուս կողմից՝ իթթիհատականներ՝ Նաջի և Թահսին բեյերը և իթթիհատի Վանի մասնաճյուղի քարտուղար՝ Ֆուադ բեյը: Բանակցությունները վերաբերում էին Կովկասյան ճակատում առաջիկա՝ Սարիղամիշի ճակատամարտի ժամանակ հայերի կողմից թուրքերին ակնկալվող օգնությանը և այն «օգուտներին», որի դիմաց պիտի ստանային հայերը: Ըստ այդմ՝ Նաջի բեյը ներկայացնում էր իթթիհատի քաղաքական ծրագիրն Առաջին աշխարհամարտի տարիներին, որի համաձայն երիտասարդ և վերածնվող Թուրքիան, դաշնակցելով հզոր Գերմանիայի հետ, պետք է սաստեր Ռուսաստանի ռազմական հզորությունը և նրան հետ շպրտեր դեպի հյուսիս՝ Կովկասյան լեռներից այն կողմ: Անդրկովկասը նվաճելու դեպքում Թուրքիան չէր պատրաստվում այն միացնել կայսրությանը, այլ նախատեսում էր դաշնային սկզբունքով ստեղծել Հայաստանի, Վրաստանի և Կովկասի թաթարների երեք ինքնուրույն պետություններ՝ սուլթանի հովանու ներքո[297]:

Որպեսզի հայերը ստանային այդպիսի հնարավորություն, նրանք պետք է ապացուցեին իրենց նվիրվածությունն Օսմանյան Թուրքիային և օգնություն ցույց տային նրան առաջիկա պատերազմի ժամանակ: Ռուսաստանի դեմ գործելու համար նրանք պետք է կազմակերպեին արևմտահայերից բաղկացած իրենց սեփական կամավորական ջոկատները, որոնք կարող էին ունենալ բարոյական մեծ նշանակություն՝ որպես հայ-թուրքական «համերաշխության» անքննելի ապացույց:

Իթթիհատականները ենթադրում էին, որ այդ ծրագրով իրականություն կդառնար հայերի քաղաքական ինքնավարության և անկախության խնդիրը, որը նրանց կմատուցեր ոչ թե Եվրոպան, որ մինչ այդ ոչ մի բան չէր արել և չէր էլ պատրասվում անելու, կամ էլ Ռուսաստանը, այլ երիտասարդ, լուսավորյալ և առաջադիմական Թուրքիան, որին չէր կարելի շփոթել բռնատիրական Թուրքիայի հետ:

---

296 **Մանուկեան Հ.,** Դէպքերը Վասպուրականում, «Վէմ», Փարիզ, 1937, թիվ 1, հունվար-մարտ, էջ 53:

297 Оборона Вана, 7 апреля - 4 мая 1915 г., с.7-8, նաև **Լեո,** Թուրքահայ հեղափոխության գաղափարականությունը, հ.Բ, էջ 76:

Երիտթուրքերը համոզված էին, որ քաղաքական այդ բարդ մտահղացումը լուծելու էր հայկական հարցը, որով թուրքերը «կփակեին» Եվրոպայի բերանը: Նրանք հավաստիացնում էին, որ Օսմանյան լայնածավալ կայսրությունն այնքան հարուստ էր հողատարածքներով, որ կենտրոնախույզ տրամադրություններով լեցուն Արևմտյան Հայաստանի տարածքն իրենց ամենևին էլ պետք չէր, քանի որ այն ավելորդ հոգս էր և վտանգ երկրի ներքին կայունության գործում և անընդհատ առիթ կարող էր ծառայել Եվրոպայի միջամտության համար: Երիտթուրքերը միաժամանակ վստահեցնում էին, որ բարենորոգումների իրագործումը հնարավոր կլիներ միայն պատերազմի ավարտից հետո[298]:

Ըստ էության իթթիհատի քաղաքական ծրագիրը կարծես թե նման էր մի վերջնագրի, որի կատարումից էր կախված հայերի լինել-չլինելու հարցն Օսմանյան Թուրքիայում:

Ինչ վերաբերում էր Անդրկովկասյան ֆեդերացիայի՝ համադաշնության ստեղծմանը, ապա այն ոչ թե հայկական ինքնավարության երիտթուրքերի սրտաբուխ ցանկությունն էր, այլ Թուրքիայի և Ռուսաստանի միջև բուֆերային գոտու ձևավորման մի նախագիծ, որին նրանք վաղուց էին սպասում: Չէ՞ որ Ռուսաստանի հետ սահմանային հարևանությունը դամոկլյան սրի պես կախված էր Թուրքիայի գլխին:

Վանի հայկական պատվիրակությունը դեմ չէր նմանատիպ քաղաքական ծրագրի իրագործմանը, բայց մեկ անգամ ևս առարկեց՝ պնդելով հայկական ժողովրդական զանգվածներին համոզելու անհնարինությունը:

Վանի դաշնակցականները ծայրահեղ զսպված վերաբերվեցին գայթակղիչ այս խոստումներին: Շրջանցելով իթթիհատականների անկեղծության աստիճանը՝ հայերը հավաստիացրին, որ ծրագիրն անիրագործելի էր իրենց մասնակցության առումով: Բանն այն էր, որ իթթիհատականները չէին կատարել 1908 թ. հեղաշրջման օրերին հայերին տրված և ոչ մի խոստում, որով կորցրել էին իրենց վստահությանը: Ժողովրդական զանգվածները իթթիհատականներին հավատում էին այնքան քիչ, որքան հին թուրքերին: Նաջի բեյը փորձում էր արդարանա նշելով, որ հայկական բարենորոգումները չէին իրականացել ոչ թե երիտթուրքերի բարի կամքի ցանկության բացակայության, այլ արտաքին պատերազմների (Իտալիա, Բալկանյան

298 Оборона Вана, 7 апреля - 4 мая 1915 г., с.9-10.

միություն) պատճառով, որով հնարավորություն չէր տրվել զբաղվելու ներքին շինարարությամբ:

Բացի այդ, երիտթուրքերը, որոնք չէին համաձայնվել անգամ անդամահատված հայկական բարենորոգումների հետ և մեծ հնարամտությամբ տապալել էին այն, այժմ առաջարկում էին հայերին տալ ինքնավարություն: Մի բան պարզ էր, որ նրանք խաբում էին ժամանակ շահելու համար:

Միակ բանը, որ դաշնակցականները խոսատացան իրենց թուրք ընկերներին, այն էր, որ ջանք չէին խնայի Վանի հայությանը խիստ լոյալության սահմաններում պահելու գործում և որպեսզի նրանք՝ որպես օսմանյան քաղաքացիներ, օրենքով և արդարացիորեն կատարեին իրենց վրա դրված բոլոր պարտականությունները: Դա միակ ճիշտ պատասխանն էր և պայմանավորված էր այն իրողությամբ, որ հայերը, որոնք գտնվում էին Թուրքիայի և Ռուսաստանի սահմանագլխին, ստիպված էին իրենց քաղաքացիական պարտքը սրբությամբ կատարել երկու պետությունների համար էլ, այսինքն՝ արևելահայերը զորք պետք է տրամադրեին ռուսներին, իսկ արևմտահայերը՝ թուրքերին:

Վանի բանակցություններն ընդհատվեցին և համաձայնություն չկայացավ: Թուրքերը Վանից հեռացան այն համոզմամբ, որ եթե հայերն իրենց հետ չեն, ապա Ռուսաստանի կողմն են: Իթթիհատականները թեև իրենց հիասթափությունը և սառնությունը չարտահայտեցին իրենց «բարեկամ» դաշնակցականների նկատմամբ, սակայն նրանք իթթիհատի համար դարձան խիստ կասկածելի[299]:

Թուրքիայի կողմից առաջ քաշվող Հայաստանի անկախության գաղափարը նոր դրսևորումներ ստացավ 1918թ. գարնանը՝ այն բանից հետո, երբ նախ՝ 1917թ. նոյեմբերի 2-ին բոլշևիկները Բաքվում հաղթանակ տարան ու այնտեղ հռչակեցին խորհրդային իշխանություն, և ապա՝ 1917թ. դեկտեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի կողմից ընդունվեց «Թուրքահայաստանի» մասին հրովարտակը, որը պաշտպանում էր Արևմտյան Հայաստանի հայության ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև կատարյալ անկախություն: Թուրքերը բոլշևիկներին Կովկասից դուրս մղելու, Բաքվի նավթին տիրանալու և Արևմտյան Հայաստանում ստեղծվելիք հայկական պետության մտայնությունն անգամ հայության շրջանում ի չիք դարձնելու համար հետևողականորեն իրականացրին Անդր-

299 Оборона Вана, 7 апреля - 4 мая 1915 г., с.10, նաև **Анановъ І.Н.,** Судьба Арменіи, Москва, 1918, с.21.

կովկասյան Սեյմը 1918թ. ապրիլի 9-ին Ռուսաստանից անջատելու, նրա կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ընդունելու և իրենց ծավալապաշտությունը դեպի արևելք ուղղորդելու քաղաքականություն: Արդեն Բաթումում սկսված բանակցությունների ժամանակ Կ.Պոլսում երիտթուրքական կոմիտեի մեջ վեճեր էին ընթանում այն մասին, թե որքանո՞վ էր արդյոք նպատակահարմար Կովկասի մեջ ստեղծել հայկական պետություն, մանավանդ, որ նրանք հաճախ էին մատնանշում, որ «հայերն առանձին ույժ չեն անկախութիւն ձեռք բերելու, բայց ույժ են մեր անկախութիւնը վտանգելու»[300]: Տարբերությունը նախապատերազմյան շրջանի խոստումներից միայն այն էր, որ այս անգամ Հայաստանի անկախության խնդիրները քննարկվում էին ոչ թե Արևմտյան և Արևելյան Հայաստանների նախապես խոստացված որոշակի տարածքների, այլ միայն Արարատյան Հայաստանի, այն էլ ընդամենը դրա մի փոքրիկ հատվածի շրջանակներում:

Երբ մայիսի 14-15-ի գիշերը՝ ժ.1-ին, Ա. Խատիսյանը և Հ. Քաջազնունին տեսակցություն ունեցան թուրքական պատվիրակության անդամներ Խալիլ և Վեհիբ փաշաների հետ, վերջինս առաջարկում և պահանջում էր, որ հայերը մի կողմ քաշվեն թուրքերի ճանապարհից՝ դրա դիմաց անկախ Հայաստան խոստանալով Էջմիածնի և Նոր Բայազետի միջև ընկած տարածքում[301]: Այդ մասին Ա. Խատիսյանը հիշում է. «… Խալիլ պեյը կըսեր մեզ. Հասկցեք իրերու դրութիւնը: Ես եւ Վեհիպ փաշան կը ներկայացնենք կոմիտեի մէջ չափաւոր, հաշտարար հոսանքը. Թալեաթ և Էնվեր փաշաները կ՛ուզեն ի սպառ ոչնչացնել հայկական հողը: Օգնեցէք մեզ մեր դիրքը ուժեղացնելու, ըրէք բոլոր զիջումները… Իսկ յետո, երբ պատերազմը վերջանայ, մենք ձեզ օգնութեան կը հասնինք և կը վերադարձնենք այն, ինչ որ այսօր ձեզմէ կառնենք: Մենք ձեզ կ՛օգնենք ապագային: Իսկ ձեր դիմադրութիւնը այսօր միայն պիտի վնասէ ձեզ և նոր արյունահեղութեանց պատճառ դառնայ» [302]:

Բայց դա ընդամենը խայծ էր հայերի զգոնությունը բթացնելու համար և իրականում ոչ մի բանի երաշխիք չէր:

1918թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին, երբ Կ.Պոլսում ընթանում էին բանակցություններ գերմանա-թուրքական բլոկի և Անդրկով-

300 **Նաթալի Շ.,** Թուրքիզմը Անգորայէն Պաքու եւ թրքական օրիէնթասիոն. Թուրքերը եւ մենք,Երևան,2015,էջ 216-217:

301 **Խատիսեան Ալ.,** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 86:

302 Անդ,էջ 72:

կասի նորանկախ կառավարությունների ներկայացուցիչների միջև, հայկական պատվիրակությունը Ա. Ահարոնյանի գլխավորությամբ անձնական հանդիպումներ է ունենում երիտթուրք ղեկավարների հետ, որոնցից յուրաքանչյուրը փորձում էր հավաստիացնել իր դերակատարումը հայոց պետականության ստեղծման գործում: Այսպես, Թալեաթը, պատվիրակության անդամ Ա. Խատիսյանին ներկայացնելով հայոց պետականության ստեղծման գործում իր և Էնվերի միջև առկա հակասությունների մասին, նշում է, որ այն դեպքում, երբ Էնվերը, որը հայերին համարում էր մշտնջենական թշնամի, որոնք հանգիստ չպետք է թողնեին թուրքերին «Անատոլուի» նահանգներում, առաջարկում էր ապահովության համար հայերին հիմնավորապես բնաջնջել նաև Կովկասի մեջ, քանի որ «Փոքրիկ Հայաստան մը» Թուրքիայի համար պատճառ կարող էր դառնալ հավիտենական վտանգի:

Այդ մասին Թալեաթը պարծենալով խոստովանում է Ա. Խատիսյանին. «Էնվեր փաշան կը գտնէր որ քանի որ Հայերը եղած են եւ պէտք է միշտ ըլլան մեր թշնամիները ու հանգիստ պիտի չթողուն մեր Անատոլուի նահանգները, աւելի լաւ է որ հիմնապէս բնաջընջուին անոնք նաեւ Կովկասի մէջ, ինչպէս եղած են Թուրքիոյ մէջ: Իսկ փոքրիկ Հայաստան մը Կովկասի մէջ պատճառ պիտի դառնայ որ միշտ ձգտի ընդարձակելու իր սահմանները եւ դառնայ յաւիտենական վտանգ Թուրքիոյ համար: Իսկ ես պատասխանեցի, որ այդ ծրագիրը անկարելի ծրագիր մըն է թէկուզ այն պատճառով, որ այսպէս թէ այնպէս երկու միլիոնի չափ ողջ մնացած հայեր կան այժմ եւ անհնար է զանոնք բոլորն ալ ոչնչացնել, ուստի աւելի լաւ է, որ անոնց գոհացում տրուի, որովհետեւ եթէ նոյնիսկ 100,000 հայեր մնան աշխարհի երեսին, մեզի հանգիստ պիտի չտան երբեք: Եւ վերջապէս, փոքրիկ Հայաստան մը ստեղծելով՝ մենք լուծած կ՛ըլլանք Հայկական Հարցը եւ այդպէս կը ներկայանանք հաշտութեան միջազգային խորհրդաժողովին»[303]:

Այս ամենից Ա. Խատիսյանը եզրակացնում է, որ «Թալեաթ փաշայի տեսակետը հաղթել էր, և «թուրքերը ստեղծեցին փոքրիկ Հայաստանը»[304]:

Այդ էր պատճառը, որ Թալեաթի հետ ունեցած հերթական տեսակցության ժամանակ Ա. Ահարոնյանը անկեղծանում է. «Ձեզ

303 **Խատիսեան Ալ.,** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 88-89:
304 Անդ,էջ89;

կվստահեցնեմ, որ Թուրքիո հայերու վիճակները մեզ երբեք չեն շահագրգռել: Մենք եկանք միայն խորհրդակցելու համար Կովկասյան հայերու հանրապետության մասին և որոշելու համար մեր սահմանները ու դիրքը մեր զորավոր դրացին և պաշտպանն եղող Օսմանյան պետության հետ, որու բարեկամական հակումները մենք տեսանք Բաթումում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ: Նախ և առաջ մենք կուզենք համաձայնության գալ մեր զորեղ դրացի Օսմանյան տերության հետ, որուն սահմանակից ենք, որմե շատ օգնություններ կսպասենք»[305]:

Հունիսի 22-ին Ա. Ահարոնյանը Թալեաթ փաշային է դիմում նաև հատուկ ուղերձով, որտեղ ասվում էր. «Հայաստանի անկախության գաղափարը, որ օսմանյան պետական մարդկանց երջանիկ ներշնչման ծնունդ է, մեզ թվում է կայսերական կառավարության անկեղծության ու բարյացակամության գրավականը և ապացույցը»[306]:

Իր հերթին Էնվերն էր իրեն համարում Հայոց պետականության «հիմնադիրը»: Ա. Խատիսյանի հետ հանդիպման ժամանակ նա պարծենում է՝ ասելով, որ «ես լուծեցի շատ դժուարին խնդիր մը, ստեղծեցի Հայաստանը, գոհացում տուի Հայերու ազգային պահանջներուն, բայց այդ ըրի այնպիսի ձեւով մը, որ չզոհեցի թրքական հողերէն ոչ մէկ թիզ իսկ[307]»,«... մենք չենք կրնար մտածել սահմաններու (խոսքը ՀՀ սահմանների մասին է- Ա.Հ.) ընդարձակութեան մասին... Ես եւ իմ ընկերներս ստեղծեցինք Հայաստանը եւ ատով գոհացում տուինք Հայերու ազգային ձգտումներուն եւ լուծեցինք Հայկական Հարցը: Միեւնոյն ատեն մենք այդ ըրինք Թուրքիոյ սահմաններէն դուրս, ռուսական հողին վրա, եւ ունեցանք երկու յաջողութիւն. Ա) Ստեղծեցինք Հայաստանը և Բ) Անվթար պահեցինք Թուրքիոյ հողը: Միայն այդ գնով է, որ մենք համաձայնեցանք հաշտուիլ Հայկական Հանրապետութեան գոյութեան հետ... առանց դպչելու հին և նոր Թուրքիոյ հողերուն: Կարսը, Արտահանը եւ Պաթումը նոր միայն վերադարձան իրենց հին հայրենիքին գիրքը»[308]:

Ա. Խատիսյանն ավելի հեռուն է գնում և Էնվեր փաշայի հետ ունեցած զրույցում նշում, որ լավ կլիներ, եթե ամբողջ Հայաստանը դառնար Թուրքիայի նահանգը. «Թուրքիայի սահմաններն ապահովելու համար Ռուսաստանի կողմից, պիտի կապվի և նրա մեջ մտնի

305 ՀԱԱ,ֆ.200,ց.1,գ.13,թ.21:
306 Նույն տեղում թ.21:
307 **Խատիսեան Ալ.,** Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը էջ 102:
308 Անդ, էջ 89:

ֆեդերատիվ կապերով ամբողջ ավտոնոմ Հայաստանը» [309]:

Թե՛ Թալեաթը և թե՛ Էնվերը հաճույքով ունկնդրում էին անհեռատես և միամիտ հայ պատվիրակներին և խոստանում ամեն կերպ «օգնել» հայ ժողովրդին:

Ա. Ահարոնյանն ու Ա. Խատիսյանը հանդիպում են ունենում նաև սուլթանի հետ, որը նրանց վստահեցնում է, որ «ես Հայաստանի կառավարությունը համարում եմ իմ հարազատ զավակը»: Հայ «գործիչներն էլ, չմնալով պարտքի տակ, ստորահաճությամբ պատասխանում են, որ «եթե չլիներ սուլթանը չէր լինի նաև ազատ ու անկախ Հայաստանը»:

Փոքրիկ Հայաստանի թուրքական մտայնությունն արտահայտվում է նաև Կարաբեքիրի հետ Ալեքսանդրապոլի 1920թ. նոյեմբեր-դեկտեմբերյան բանակցությունների ժամանակ: Ըստ Ա. Խատիսյանի՝ թուրքական ծրագիրը կարելի էր ամփոփել երեք կետերի մեջ. ա) թուրքերը երազում էին Կովկասի մեջ ունենալ իրենց ազդեցության և հովանավորության տակ գտնվող 4 հանրապետություն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, և Հյուսիսային Կովկաս), որով Թուրքիան կբաժանվի իր ամենասարսափելի թշնամուց՝ Ռուսաստանից, բ) հաշվի առնելով Հայկական հարցի միջազգային բնույթը՝ թուրքերը, ստեղծելով փոքրիկ Հայաստան, կուզեին գոհացում տալ աշխարհի հանրային կարծիքին և գ) Հայաստանի Հանրապետության ստեղծումով թուրքերը կարող էին այնտեղ հավաքագրել Օսմանյան Թուրքիայում ցեղասպանությունից հրաշքով փրկված հայության բեկորներին[310] Արևմտյան Հայաստանը վերջնականապես հայաթափելու համար:

Լոզանի 4-ամսյա բանակցությունների ընթացքում Իսմետ փաշան տարբեր առիթներով 22 անգամ կրկնում էր, որ Հայկական հարցը վերջնականապես լուծված է իրենց կողմից Հայաստանի Հանրապետության ստեղծումով[311]:

Հայոց պետականության հաստատման հարցն ամբողջության մեջ քննելու և ճիշտ հասկանալու համար Հայաստանի Հանրապետության ստեղծման թուրքական ծրագրին զուգընթաց անհրաժեշտ է նաև տարբերակել, զատորոշել, իրար հետ չկապել և իրար հետ չշփոթել 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը և 1918թ. մայիսի 28-ի անկախության ակտը՝ ըստ արժանվույն բնորոշելու համար յուրա-

309 Անդ, էջ 79:
310 Անդ., էջ 89:
311 Անդ., էջ 89-90:

քանչյուրի պատմական արժեքը:

Բանն այն է, Թուրքերի կողմից նախածրագրված և մայիսի 28-ին ստեղծված Հայաստանի Հանրապետության նպատակն էր խափանել Լենինի 1917թ. դեկտեմբերի 29-ի Արևմտյան Հայաստանի մասին հրովարտակի գործադրումը և կանխել արևմտահայոց հողային պահանջատիրությունը:

Հաշվի առնելով հայ ժողովրդի փայլուն հաղթանակը Սարդարապատում 1918թ. մայիսի 24-ին և 25-ին, երբ կատաղի կռիվների արդյունքում թուրքերը պատրաստվում էին փախուստի, Բաթումի թուրքական պատվիրակությունը (Խալիլ) մայիսի 26-ի երեկոյան (ժ. 20-ին) Անդրկովկասյան Սեյմի պատվիրակությանն է հանձնում իր վերջնագիրը՝ պահանջելով 72 ժամվա ընթացքում ընդունել սահմանների ստորագրման մասին իրենց առաջարկը[312]:

Չհամաձայնելով վերջնագրի պայմաններին՝ թուրք-գերմանական-վրացա-մուսավաթական գաղտնի դավադրության արդյունքում մայիսի 26-ին լուծարվում է Սեյմը[313], և նույն օրը հռչակվում է նախ Վրաստանի, իսկ մայիսի 27-ին՝ Ադրբեջանի անկախությունը: Հայաստանը մնում է մենակ և ինչպես վրացական պատվիրակության անդամներից պրոֆ Ջ. Ավալովն է գրում, «հայերն են միայն մեջտեղը՝ մենակ, անբարեկամ, անպաշտպան, ամենքից լքված, զոհ հարևանների դավաճանության…»[314]:

1918թ. մայիսի 28-ին «անկախություն» ստացավ նաև Հայաստանը: Լեոն նշում է, որ այս ծաղրական հանրապետությունն էլ իհարկե ժամանակավոր խաղ էր, քանի որ Կ.Պոլսում թյուրքերը հրատարակել էին Այսրկովկասի քարտեզը, որի վրա «այլևս Հայաստան չէր մնում»[315]:

Սարդարապատի հաղթական ճակատամարտը մնաց կիսատ և չհասավ իր հավանական նպատակին: Հայկական բանակի երկրորդ առաջխաղացումը կանխելու նպատակով թուրքական հրամանատարությունը գործողության մեջ դրեց «անկախ» Հայաստանի գաղափարը: Վճռական հարվածից առաջ, երբ հայ աշխարհազորայինները պատրաստվում էին ազատագրել թուրքերի կողմից 1918թ. մայիսի 15-ին ապօրինաբար բռնազավթված Ալեքսանդրապոլը և մտնել նույնիսկ Կարսի մարզ, իսկ Անդրանիկը պատրաստվում էր

312 **Խատիսեան Ալ.,** Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 220:
313 **Վրացեան Ս.,**Հայաստանի Հանրապետություն, էջ 153:
314 Անդ, էջ 156:
315 **Լեո,** Անցիալից. Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 404

Ջուլֆայի վրայով շարժվել դեպի Պարսկաստան և Վան, գեներալ Մ. Սիլիկյանին հետ կանգնեցրեց Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կողմից մայիսի 28-ի պարտադրված գեներալ Թ. Նազարբեկյանի զինադադարի կոչը: Մի պահ նույնիսկ Մ. Սիլիկյանը մտածում էր մերժել Թ. Նազարբեկյանի հրամանը, քանի որ թուրքական բանակը գլխիկոր նահանջում էր: Այս ամենը հաստատում է Բաթումում թուրքական պատվիրակության ղեկավար Խալիլն իր հուշերում[316]: Իսկ Վեհիբ-Մահմեդը խոստովանում է. «Կը պատրաստուէինք ետ քաշուիլ՝ Հայ ժողովուրդի դիմադրութեան առջեւ՝ լքելով Ալեքսանդրապոլը եւ նոյնիսկ Կարսը»[317]:

Եվ մինչ Մ. Սիլիկյանը 1918թ. մայիսի 28-29-ին նախապատրաստվում էր ընդհանուր առաջխաղացման,[318] շուտով հեռագիր ստացվեց այն մասին, որ առանց ժողովրդի կամքը և կարծիքը հաշվի առնելու Ա. Խատիսյանի, Հ. Քաջազնունու, Մ. Պապաջանյանի կողմից Բաթումում հունիսի 4-ին թուրքերի պահանջած «անկախ» Հայաստանի և Թուքիայի միջև ստորագրվել է Հայոց դատը թաղող «խաղաղության և բարեկամության» դաշնագիրը[319], որտեղ «ծովից ծով» առասպելական Հայաստանի փոխարեն ստեղծվում է «թզուկ» մի Հայաստան, որը փաստորեն հանդիսանում էր սուլթանական Թուրքիայի մի փոքրիկ գավառը[320]: Այդ այն դեպքում, երբ մայիսի 29-ին Մ. Սիլիկյանը ժողովրդին և բանակին ուղղված իր երկրորդ կոչում հիշեցնում էր, որ «մենք պէտք է յետ առնենք Ալեքսանդրապոլը... եւ ապա միայն թուրքերի հետ բանակցութեան մէջ մտնենք հաշտութիւն կնքելու համար»[321]:

Հայաստանին թողնվում էր մի աղճատված տարածք, այն դեպքում, երբ Սարդարապատի հաղթանակով հայկական բանակի ազատագրած տարածքը կրկնակի գերազանցում էր այն[322]:

Հայ ժողովրդին ուղղված կոչը փաստում էր մի կարևոր հանգամանք, այն որ հայկական բանակի հրամանատարությանը հայտնի

316 **Վեհապետեան Թ.,** Լուսարձակ, մեր անցեալ եւ ներկայ հանրային կեանքին վրայ, Ե. Գիրք, Պեյրութ, 1995: էջ 273:
317 **Տեղակալ Ավետեան Մ**.Յուշամատեան եւ Ջօր. Անդրանիկ,Փարիզ 1954, էջ 193:
318 **Մկրտչյան Վ**. Սարդարապատի հերոսը. գեներալ Մովսես Սիլիկյան, Երևան, 2012, էջ26-27:
319 **Կէօրկիզեան Ա.,** Անմոռանալի յուշեւ, Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի զուլումի տարիներուն, Պէյրութ, 1967, էջ 223:
320 **Բադալյան Խ.Հ.,** Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918 թվականին, Երևան, 1962, էջ 38:
321 **Թուրշյան Հ.,** Սարդարապատի հերոսամարտը, էջ 218:
322 **Աֆանասյան Ս**., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918), Երևան, 1991, էջ 70:

էին Բաթումի բանակցությունների ժամանակ թուրքերի ներկայացրած պահանջները, և ճիշտ հակառակը բանակի հրամանատարության վերաբերմունքի մասին պետք է տեղյակ լինեին Բաթումում գտնվող ազգային խորհրդի ներկայացուցիչները[323]:

Այսպիսով, թուրքերը հաշվի առնելով հայերի հակահարձակման վտանգը՝ շտապեցին ստեղծել «անկախ» Հայաստան Արևելյան Հայաստանի մի փոքր տարածքում՝ Օսմանյան Թուրքիային հողային կորուստներից զերծ պահելու համար: Ս. Վրացյանը խոստովանում է, որ հաշտության բանակցություններ վարելու համար նախապայման էր դրված անկախության հայտարարությունը[324]:

Այս ամենից հետևում է, որ եթե Մայիսյան հերոսամարտերը ազգային ինքնաբուխ դրսևորումներ էին, մեր ժողովրդի տարած փայլուն հաղթանակները, հայ ժողովրդի միասնականության փաստի արտահայտումը և 1915թ. վրիժառության փափագը, ապա մայիսի 28-ը Թուրքիայի կողմից հրահրված, պարտադրված և քողարկված որոշումն էր և Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի ձեռնարկած քայլը:

Մայիսյան հերոսամարտերի փառքը պատկանում է արևմտահայ և արևելահայ ժողովրդին, բովանդակ հայության համաժողովրդական շարժմանը: Ըստ Դ. Անանունի՝ հենց Սարդարապատի և Ղարաքիլիսայի ճակատամարտերի հետևանքով Թուքիան հայերին թույլ տվեց նստել բանակցությունների սեղանի շուրջ Բաթումի կոնֆերանսում[325]: Մինչդեռ մայիսի 28-ի ակտը պատկանում է միայն Թիֆլիսի Արևելահայ ազգային խորհրդին:

Հետևաբար, Սարդարապատի հերոսամարտը, որն անուղղակիորեն ապահովեց Հայաստանի առաջին Հանրապետության կայացումը, ոչ միայն աղերս չունի մայիսի 28-ի ակտի հետ, այլև մայիսի 28-ի «անկախության» հայտարարությունը մահացու հարված եղավ Սարդարապատի հաղթանակով ակնկալվող Արևմտյան Հայաստանի ազատագրության և արևմտահայոց արդար դատի իրագործման դեմ՝ հայությանը պարտադրելով գոհանալ թուրքերի կողմից առաջարկված այսօրվա փոքրիկ հողամասով:

Իսկ Թիֆլիսի Արևելահայ ազգային խորհրդը ճարտարորեն իրար է կապել այդ երկու իրադարձությունները, որպեսզի Սարդարապատի հաղթանակի փայլը տարածվի մայիսի 28-ով հյուսված «անկա-

323 **Պետրոսյան Վ.,** Հայաստան. 1918 թվական, Երևան, 2014, էջ176:
324 **Վրացեան Ս.,**Հայաստանի Հանրապետություն, էջ 161:
325 **Անանուն Դ.,** Ռուսահայերի քաղաքական զարգացումը, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 61:

խության» վրա և քողարկվի թափանցիկ այդ ճշմարտությունը:

Դժվար է իհարկե միանգամից այս անճշտությունները սրբագրելը, սակայն հուսով ենք և վստահ, որ ամենամոտ ապագայում Առաջին Հանրապետության ստեղծման պատմության մեջ պետք է տեղ գտնի ոչ միայն պատմական ճշմարտությունն, այլև ժամանակին գործած քաղաքական սխալներից ձերբազատվելու գիտակցումը և փորձառության դասերը հաջորդ սերունդներին փոխանցելու կարևորությունը:

SUMMARY
ON THE ESTABLISHMENT OF THE REPUBLIC OF ARMENIA1918

AVETIS HARUTYUNYAN

In the article is being discussed the question of Turkish plan of the creation of the first Republic of Armenia in 1918. According to this plan the establishment of the Armenian statehood in 1918 was the gift of the turkish governors. But the heroic battles and great victories of the Armenian people in May 1918 destroyed this plan.

Key words: *Republic of Armenia, Sardarapat, independence, Dashnaktsutyun, Turkish project.*

РЕЗЮМЕ
О СОЗДАНИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АВЕТИС АРУТЮНЯН

В статье рассматривается вопрос о планах Турции по созданию Республуки Армении в 1918г.. В частности, согласно этому плану провозглашение Армянской государстенности в 1918г. был даром турецких правителей. Но майские героические бои и великие победы армянского народа в 1918г. разрушил этот план.

Ключевые слова*: Республука Армения, Сардарапат, независимост, Дашнакцутюн, турецкий проект.*

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. և ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐՄԱՆ ՌԱՖԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, պ. գ. թ.

Բանալի բառեր՝ *Ֆրանսիա, Մերձավոր Արևելք, Սիրիա, մանդատային քաղաքականություն, Անկարայի պայմանագիր, թուրք-սիրիական սահմանագծում, Ազգերի լիգա, Ալեքսանդրետի սանջաք, Ժնևյան համաձայնություն:*

Մերձավոր Արևելյան տարածաշրջանը տասնամյակներ շարունակ եղել և այսօր էլ համարվում է միջազգային հարաբերություններում բազմաշերտ հակասություններով հագեցած գոտի, որտեղ բախվում են ինչպես միջազգային հիմնական դերակատարների, այնպես էլ տարածաշրջանային մի շարք երկրների շահերը: Այստեղ, կարելի է առանձնացնել Թուրքիային, որն ամեն ինչ անում է Մերձավորարևելյան տարածաշրջանում առանցքային դերակատարում ստանձնելու համար: Այս համապատկերում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Սիրիայում 1920-1930-ական թթ. Ֆրանսիայի մանդատային իշխանությունների վարած քաղաքականության, թուրք-սիրիական հարաբերություններում առկա մի շարք սահմանային վիճահարույց խնդիրների բազմակողմանի ուսումնասիրումը, առավել ևս որ երկկողմ հարաբերությունների վատթարացման որոշ արմատներ գտնվում են դեռ 1920-1930 ական թթ ծավալվող դեպքերի մեջ: Վերջին շրջանում Սիրիայի շուրջ ծավալվող իրադարձությունները և հատկապես թուրք-սիրիական սահմանին օրեցոր աճող լարվածությունն առավել արդիական է դարձնում վերոնշյալ հիմնախնդիրների համակողմանի և խորքային վերլուծությունը:

Դեռ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Անգլիայի ղեկավար շրջաններն իրենց քաղաքականությամբ հասկացնել տվեցին իրենց դաշնակից Ֆրանսիային, որ չեն պատրաստվում հետևել պատերազմի տարիներին կնքված համաձայնագրերին, որի առաջին դրսևորումը թերևս կարելի է համարել Սայքս-Պիկոյի համաձայնագրի վերանայումը: Վերջինս ստորագրվել էր Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև, ըստ որի Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան և Հարավ-Արևելյան Անատոլիայի մի մասը անցնում էին Ֆրանսիայի վերահսկողության տակ /այսպես կոչված 'կապույտ

գոտի'/: Արևելյան Սիրիան և Մոսուլի վիլայեթը ևս ընդգրկվում էին ֆրանսիական ազդեցության գոտու մեջ /Ա գոտի[326]/ : Այս համաձայնագրի իրագործումը ֆրանսիական դիվանագիտությունը իր համար գերխնդիր էր համարում, սակայն չկարողացավ այն «անվնաս» պահպանել, և հարկադրված գնաց նրա մասնակի վերանայմանը՝ Մեծ Բրիտանիային զիջելով Պաղեստինը և Իրաքը, այդ թվում Մոսուլի նավթային շրջանները:

Ինչպես գիտենք, 1921 թ. Անկարայի պայմանագրով նախատեսված մի քանի սկզբունքներ ամրագրվեցին նաև Լոզանի համաժողովի որոշումներով՝ ֆրանսիական զորքերի դուրս բերումը Կիլիկիայից, թուրք-սիրիական սահմանագծում, Ալեքսանդրետի սանջաքի կառավարման հատուկ կարգավիճակի որոշում: Սակայն ֆրանս-թուրքական հարաբերութուները դրանով չկարգավորվեցին: Ժամանակ առ ժամանակ բռնկվում էին սուր վեճեր՝ մերթ կապված թուրք-սիրիական սահմանիգծման, մերթ էլ օսմանյան պարտքի մարման շուրջ: Այդուհանդերձ, պարբերաբար թե Ֆրանսիան, և թե Թուրքիան առիթը բաց չէին թողնում նշելու, որ «կողմերը իրար հանդեպ բարեկամական զգացումներ են տածում և փոխադարձ շահերի բարեհաջող լուծումը չի ուշանա»[327]: Երբ 1925 թ. նոյեմբերին ֆրանսիական կառավարությունը Սիրիայի նոր բարձրագույն կոմիսար նշանակեց Անրի դը Ժուվենելին, Սիրիայում, ինչպես նաև Ալեքսանդրետի սանջաքում հույսեր արթնացան, որ Ֆրանսիան կվարի ավելի ժողովրդավարական քաղաքականություն: Նոր բարձրագույն կոմիսարը հարկադրված էր դիմել որոշ զիջումների: 1926 թ. մայիսին նա համաձայնեց ստեղծել սիրիական ազգային կառավարություն և խոստացավ հրավիրել Սահմանադիր ժողով, մշակել սահմանադրություն, ներում շնորհել և այլն: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, դա արվել էր ժամանակ շահելու և ապստամբական շարժումը ճնշելու նպատակով : Նշենք նաև, որ Սիրիայում ֆրանսիական մանդատի հաստատումից ի վեր արաբ ժողովուրդը չէր դադարել պայքարելուց և բազմիցս ընդվզում էր ֆրանսիական մանդատային իշխանությունների կամայականությունների դեմ, թեև ֆրանսիական վարչական շրջանները հավաստիացնում էին, որ,

326 Անգլիային էր մնում Քիրքուկի սանջաքի մի մասը: Claude P., La Syrie, Paris, 1977, p. 137.

327 Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ /Մատենադարան/ : Այլևայլ հեղինակների արխիվ, թղթ. 240 11, Սուրիական մամուլ, օրաթերթ, 02.10.1924. համար 4, Հալեպ:

«Սիրիայի և Լիբանանի մեջ կացությունը գոհացուցիչ է»[328]:

Ֆրանս-թուրքական բնականոն հարաբերությունների հաստատման ճանապարհին տարիներ շարունակ լուրջ տարաձայնություններ էր առաջացնում հատկապես թուրք-սիրիական սահմանագծման հարցը:

Մուդրոսի զինադադարից հետո Բաղդադի երկաթուղու մի մասում, որը սահմանակից էր Սիրիային, անգլիական զորքերը փոխարինվեցին ֆրանսիականով: Քեմալական շարժման զարգացումը և մասնավորապես Կիլիկիայում թուրքական պարտիզանական ջոկատների գործունեությունը ստիպում էր ֆրանսիացիներին ազատել հյուսիսային ճանապարհի մի մասը՝ մինչև Ենիչե: «Այդպիսով, որպեսզի Բաղդադի երկաթուղային ճանապարհը ամբողջությամբ մնա Թուրքիայի տիրապետության տակ, Անկարայի կառավարությունը ցանկանում էր նաև իր համար ապահովել Մեյդան Էքբեզ-Մյուսլիմիե-Չոբան բեյ հատվածը՝ սեպի նման խրվելով սիրիական տարածքների մեջ»[329]: Հասկանալի է, որ այդպիսի պահանջները բոլորովին անընդունելի էին ֆրանսիացիների համար: Ֆրանսիացի հեղինակներ Ռ. Գոնտո-Բիրոնը և Լը Ռեվերանը իրավացիորեն գրում են, որ «Լոզանի պայմանագրով հաստատված սահմանագիծը Ֆրանսիայի համար մեծ վտանգ է պարունակում: Այդ սահմանով է անցնում Բաղդադի երկաթուղագիծը, ընդ որում, այդ ճանապարհի սկիզբը և վերջը գտնվում են թուրքերի ձեռքին»[330]:

Արդյունքում, 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրված ֆրանս-թուրքական պայմանագրի 8-րդ հոդվածով թուրքական կողմը իրավունք ուներ իրականացնել իր զորքերի տեղափոխումը Նուսեյբինի և Ջեզիրե իբն Օմարի միջև ընկած հին ճանապարհով: Սակայն ֆրանսիացիները Բոզանտի-Նուսեյբին երկաթուղու կառավարման անվան տակ, հաշվի առնելով, որ թուրքական կողմը լրջորեն շահագրգռված է երկաթուղու բնականոն գործելու հարցում , մինչև Նուսեյբին ամբողջովին դադարեցրեցին թուրքական շարժակազմերի տեղաշարժը՝ հիմնավորելով, որ վերջինիս շահագործումը կարող են իրականացվել միայն կապիտալ վերանորոգումից հետո, և քանի որ անհրաժեշտ միջոցներ չունեն, ապա վերանորոգումը կհաջողվի,

328 Նույն տեղում, Սուրիական մամուլ, օրաթերթ, 07.11.1924, համար 9, Հալեպ
329 Мельник А., Франко-турецкий конфликт, Международная жизнь, 1929, N 1, стр. 46.
330 R. de Gontant Biron et le Re've'rent. D'Angora a՝ Lausanne. Les etapes d'une d' e'che'ance/, Paris, 1924. ¿ç 226:

եթե թուրքերը վճարեն նախկին պարտքերը[331] /խոսքը վերաբերում էր օսմանյան պարտքերին, Ա. Մ./: Դրա հետ մեկտեղ, անգլիացիների ճնշման տակ ֆրանսիացիները հայտարարեցին, որ թուրքերին վերապահված տարանցիկ ռազմական փոխադրումները կատարելու իրավունքը պետք է սահմանափակվի: Դրանով ֆրանսիացիները ուզում էին մեկուսացնել թուրքական զորքերին՝ Մեյդան Էքբեզ-Չոբան բեյ տեղափոխելուց հետո ոչ թե քրդական խռովության շրջանում, այլ Իրաքի սահմանի մոտ, /այդ պահին Մոսուլի հակամարտությունը սաստիկ սրել էր անգլո-թուրքական հարաբերությունները/:

Թուրք-սիրական սահմանային հաջորդ վիճելի հարցը, որը 1921 թ. պայմանագրով մնացել էր չլուծված, Նուսեյբինի և Ջեզիրե իբն-Օմարի միջև սահմանային գծի որոշումն, որն էլ հանգեցրեց ֆրանսթուրքական հարաբերությունների լարվածության աճին: Ինչպես արդեն նշել ենք, Նուսեյբինի և Ջեզիրե իբն Օմարի միջև սահմանը Անկարայի պայմանագրի 8-րդ հոդվածի համաձայն, պետք է անցներ «հին ճանապարհով»: Ստացվել էր այնպես, որ< <հին ճանապարհի» տակ թուրքերը և ֆրանսիացիները հասկանում էին երկու տարբեր գծեր: Թուրքական տարբերակով այն անցնում էր մոտավորապես փաստացի սահմանով, իսկ ֆրանսիացիները պնդում էին, որ «հին ճանապարհը» անցնում էր այն նույն գծից հյուսիս, որը թուրքական զորքերը զբաղեցրել էին մինչև 1922 թ: Այս տարածքը, բացի նրանից, որ շատ կարևոր ռազմավարական նշանակություն ուներ /ելք դեպի Տիգրիս/, այլև, այդ հատվածի մոտիկությունը Մոսուլին նավթային մեծ հնարավորություններ էր բացում:

Այդ փուլում ֆրանսիական կառավարությունը՝ կապված Սիրիայում առկա ներքին ճգնաժամի հետ, չէր կարող հաշվի չառնել նաև ֆրանս-թուրքական հակամարտության խորացման սպառնալից հետևանքները: 1925 թ. հուլիսի 18-ին Ջաբալ Դրուզում՝ Սուլթան ալ-Աթրաշի գլխավորությամբ սկսվեց հակաֆրանսիական ապստամբություն, որը կարճ ժամանակ անց տարածվեց գրեթե ողջ Սիրիայում՝ լուրջ դժվարություններ առաջացնելով ֆրանսիական իշխանությունների համար : Ապստամբները պահանջում էին «միացնել սիրական վարչական շրջանները, ստեղծել միասնական Սիրիա, որից հետո օգնել Սիրիային մտնել Ազգերի լիգա»[332] : Արդյունքում, ֆրանսիացի բարձրագույն կոմիսար նշանակվեց Ա.Ժուվենելին, որն էլ բանակցությունների մեջ մտավ սիրիական ազգային պատվիրակության հետ:

331 Մանրամասն տես՝ Jeniay H., Jeni Osmanli Borçlare Tarihi, Istanbul, 1964.
332 Երևան, Փարիզ, 23 06. 1926:

Ի վերջո ֆրանսիական կողմին հաջողվեց կոտրել ապստամբների դիմադրությունը և 1927 թ. գարնանը՝ մեծ ջանքերի գնով ճնշել ապստամբության գլխավոր կենտրոնները:

Երկկողմ հարաբերությունների կարգավորման հերթական փորձը Սիրիայում Ֆրանսիայի բարձրագույն կոմիսար Անրի դը Ժուվենելի այցն էր Անկարա՝ թուրքական կառավարության հետ սահմանային հարցերի շուրջ ամբողջական բանակցելու համար: Արդյունքում, փետրվարի 18-ին ձեռք է բերվում բարեկամության մասին թուրք-ֆրանսիական համաձայնագիր ստորագրելու պայմանավոր-վածություն: Ուշագրավ է, որ այս համաձայնագիրը, որը վավերացվում է 1926 թ. փետրվարի 18-ին, ստորագրվեց դրանից ավելի քան երեք ամիս հետո՝ մայիսի 30-ին, երբ Մոսուլի հակամարտությունը փաստացի կարգավորվել էր[333]: Արդեն Անկարայի համաձայնագրի վավերացումից 5 օր անց Ֆրանսիական կառավարությունը Ազգերի լիգայի մանդատային մշտական հանձնաժողովին տեղեկացնում է, որ պաշտպանում է Ֆրանկլեն Բույոնի պայմանագրի 10-րդ հոդվածի իր հիմնավորումները և կտրականապես հայտարարում, որ ոչ մի դեպքում երկաթուղու սիրիական հատվածը թուրքերը չեն օգտագործի Իրաքի դեմ ինչ-որ ռազմական գործողություն իրականացնելու համար: Այդպիսով ֆրանսիացիները փորձում էին չեզոքացնել անգլիացիների դժգոհությունը՝ կապված Ա. Ժուվենելի և թուրքական կողմի միջև «գաղտնի պայմաններում» ընթացող բանակցությունների հետ: Մոսուլի ճգնաժամի օրերին ֆրանսիական մամուլը և քաղաքական շրջանները դաշնակից Անգլիայի հետ համատեղ սկսեցին մեղադրել Թուրքիային՝ պատերազմ նախապատրաստելու մեջ[334]:

Արդյոք դա նշանակում էր, որ թուրքական հարցում Անգլիայի և Ֆրանսիայի միջև իրականում գոյություն ուներ միասնական ճակատ, հաջողվել էր արդյոք լիովին չեզոքացնել այն հակասությունները, որոնք Թուրքիայի հետ հարաբերություններում, սկսած Սևրից, գոյություն ունեին Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Մեր կարծիքով, Ֆրանսիայի «բարեկամ» Անգլիայի հետ համաձայնեցված քաղաքականության պատճառները բացատրվում է ոչ թե Անգլիայի հետ դաշնակցային սերտ հարաբերությունների, կամ թուրքական հարցում տարաձայնությունների հարթման գործոններով, այլ միայն այդ տարածաշրջանում բրիտանական դիվանագիտության ազդեցիկ և հաստատուն դիրքով, ինչպես նաև Անգլիայից ակնկալվող աջակ-

333 Baskin O., Türk diş Politikasi, Cilt, 1, Istanbul, 2001, Iletesim Yayinlari. p. 278:
334 Гурки-Кряжин В. Мосул и Ирак, Международная жизнь. Москва, 1926, N 1, с. 41.

ցությամբ: Ուշագրավ է, որ անգլիական մամուլը[335] պարբերաբար «հիշեցնում» էր, որ Սիրիայի մանդատը Ֆրանսիան ստացել է Ազգերի Լիգայից և այդ մանդատի թեկուզ և ամենաչնչին շեղումը պետք է կատարվի Ազգերի լիգայի թույլտվությամբ: Սրանով պետք է պայմանավորել նաև սկզբնական շրջանում սահմանային խնդիրների հետ կապված ֆրանսիական կողմի որդեգրած կոշտ դիրքորոշումը:

Ինչևէ, 1926 թ. մայիսի 30-ին Թ.Ռյուշտու բեյի և Անկարայում Ֆրանսիայի դեսպան Ա. Սարրոյի միջև ստորագրվում է ֆրանս-թուրքական «բարի դրացիության համաձայնագիր»[336], որը Լոզանի հաշտության համաձայնագրից հետո առաջին լուրջ փաստաթուղթն էր Ֆրանսիայի և Թուրքիայի միջև:

Կարևոր էին հատկապես պայմանագրի 1-ին հոդվածով նշվում էր, որ Թուրքիայի Հանրապետության և այն երկրների միջև, որոնք եղել են Օսմանյան կայսրության նախկին տարածքներ ու անցել են Ֆրանսիայի մանդատի տակ, պետք է լինեն բարեկամական և բարիդրացիական հարաբերություններ և այդ պայմանագրով որոշված սահմանները լինելու էին անխախտելի[337]: Պայամանգրի հոդվածներով կանոնակարգվում էր թուրք-սիրիական սահմանագծման հարցը: Սակայն երկկողմ համաձայնագրով թուրք-ֆրանսիական տարաձայնությունները[338] կապված սիրիական սահմանի հետ, չվերացան: Ջեզիրեի և Նուսեյբինի միջև սահմանային գիծը որոշվեց միայն 1930 թ., երկարատև բանակցություններից հետո:

Ինչ վերաբերում է «հին ճանապարհի» հարցին, այն կրկին մնաց չլուծված, քանի որ ֆրանսիացիները կտրականապես մերժեցին թուրքերի ընդունած որոշումները: Դրա համար էլ պայմանագրում այդ հատվածի հարցը վերջնական լուծում չստացավ և պահպանվեց նախկին հրահանգը այն մասին, որ սահմանային գիծը անցնելու է հին ճանապարհով և երկու կողմերն էլ ունենալու էին հավասար իրավունքներ այդ ճանապարհի օգտագործման ժամանակ: Թ. Ռյուշտու բեյը առաջարկեց նաև ստեղծել հատուկ հանձնաժողով՝ սահմանների բնույթը որոշելու համար, որը կազմվելու էր երկու կողմերի ներկայացուցիչներից և դիտորդներից:

335 Մանարամասն տես՝ Gabriel P., Deux Annees au Levant, Paris, 1952, p.49-50:
336 Երևան, Փարիզ, 04. 06. 1926:
337 Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ /Մատենադարան/ : Այլևայլ հեղինակների արխիվ, թղթ. 240 11, Սուրիական մամուլ, օրաթերթ, 10.10.1924. համար 7, Հալեպ:
338 Բոզկուրտ-Լոտուս՝ վեճի կետ կապված մանրամասն տես Yllmaz. V., Siyasi Tarih, Istanbul, 1998, s. 210-215.

Այդպիսի հանձնաժողով ստեղծվեց 1927 թ. վերջին դանիացի գեներալ Էռնստի գլխավորությամբ: Սակայն շատ չանցած, /1928 թ. հունվարի 10-ին/ հանձնաժողովը դադարեցրեց իր աշխատանքները: Քանի որ հանձնաժողովի նախագահ գեներալ Էռնստը խոսեց ֆրանսիացիների օգտին, ուստի Անկարայի կառավարությունը հրաժարվեց ճանաչել հանձնաժողովի անդամների, /հատկապես ֆրանսիական կողմի/ որոշումները: Ավելին, թուրքական «Հաքիմիյեթի միլլիեն»թերթը գրում է.

«Ճանապարհների հարցը թեև տրվել է հանձնաժողովին, բայց այդ փաստը, որ հանձնաժողովի չեզոք նախագահը սեփական նախաձեռնությամբ հանդես եկավ դատավորի դերով, հակասում է համաձայնագրի դրույթներին: Դրա համար հռչակագրի վերաբերյալ տեքստը, որ մեզ հայտնի է՝ ոչինչ չի նշանակում: Այստեղից էլ բխում է, որ իրավարարի որոշումով այդ հարցը չի լուծվել: Թուրքերի դիրքորոշումը հիմնավորված է, և ոչ 1926թ մայիսի 30-ի պայմանագրի 2-րդ հոդվածը, ոչ էլ Ռյուշտու բեյի պայմանագրին կցված նոտան չեն պարտավորեցնում կողմերին ենթարկվելու հանձնաժողովի նախագահի որոշմանը»[339]:

1928թ ամռանը Թուրքիայի և Ֆրանսիայի միջև վեճը էլ ավելի սրվեց՝ կապված միջազգային հարաբերություններում ծավալվող իրադարձությունների հետ: Մի կողմից անգլո-ֆրանսիական «սրտագին համաձայնության» ուրվագծվող վերածնունդը, մյուս կողմից «հին ճանապարհի» կարևորության փաստը, Ֆրանսիային դարձնում էին ավելի անդրդվելի: Իսկապես, Նույսեյբինի և Ջեզիրե իբն Օմարի միջև ընկած վիճելի տարածքը մեծ արժեք էր ներկայացնում ոչ միայն ֆրանսիացիների, այլև անգլիացիների համար, քանի որ այն գտնվում էր Իրաքի սահմանի մոտ: Սահմանի անցկացումը / ֆրանսիական տեսակետի համաձայն՝ հյուսիսային տարբերակով/ այդ կետով և վիճելի հատվածից թուրքական զորքերի դուրսբերումը կուժեղացներ ֆրանսիացիների ռազմավարական դիրքերը: Դրա համար էլ Ֆրանսիան այս հարցում հանդես էր բերում մեծ համառություն: Մյուս կողմից էլ Թուրքիայի միջազգային դիրքերի ամրապնդումը վերջինիս հնարավորություն տվեց ֆրանսիացիների դեմ հանդես բերել վճռականություն:

Չնայած, ինչպես նշում են թուրք հեղինակները, «1925 թ. և 1930 թ. պայմանագրերի ստորագրումը Անգլիայի և Ֆրանսիայի հետ բա-

339 Նույն տեղում, էջ 48

րեկամական օղակ ստեղծեց երկրի շուրջ, սակայն ֆրանս-թուրքական հարաբերությունները դեռևս հեռու էին բարեկամական լինելուց»[340]:

Մայիսի 14-ին թուրքական վերոհիշյալ «Հաքիմիեթ միլլիեն» գրում է, որ Ֆրանսիան վերջին ժամանակաշրջանում, որը «նախկինում թուրքական օրինական պահանջներին՝ կապված հարավային սահմանի հետ, վերաբերվում էր բարի ցանկությամբ, սկսել է հանդես բերել ինչ որ համառություն: Տարօրինակ է,- ընդգծում է թերթը, - որ այն ժամանակ բոլոր մնացած երկրները կարող էին կարգավորել իրենց սահմանային հարցերը Թուրքիայի հետ, սակայն Ֆրանսիան մինչև այժմ դա չի արել»[341]: Իրադարձությունների նման զարգացումը ֆրանս-թուրքական հակամարտությունը կարծես դուրս էր բերում սահմանային վեճի շրջանակներից: Արդեն 1928 թ. փետրվարին թուրքական մամուլը հանդես եկավ սիրիաբնակ թուրքերի գույքային պահանջների մասին հայտարարությամբ[342]:

Իրադրությունը ավելի սրվեց, երբ ֆրանսիացիները հրաժարվեցին ընդունել թուրքերի տեսակետը սահմանային հարցերի վերաբերյալ և որոշեցին ավելի լուրջ միջոցներով ճնշում գործադրել Անկարայի վրա: Հենվելով նոր «սրտագին համաձայնության» վրա, Ֆրանսիան իր արևելյան քաղաքականության մեջ սկսում էր ակնհայտորեն օգտագործել Անգլիայի հիմնական մեթոդները՝ հրահրելով սահմանային ցեղերի խռովություններ թուրքերի դեմ:

1928թ ամռանը և աշնանը թուրք-սիրիական սահմանի վրա նկատվում էր քրդերի գործողությունների անսպասելի աշխուժացում: Թուրքական մամուլը որպես Սիրիայի կողմից թուրքական սահմանի վրա հարձակման կազմակերպիչներ մատնանշեց ֆրանսիացիներին՝ ընդգծելով որ «Ֆրանսիան և Անգլիան ձգտում էին քրդերի դժգոհությունները օգտագործել իրենց շահերի համար»[343]:

«Թայմսը»1928 թ. դեկտեմբերի 1-ի համարում, անդրադառնալով ֆրանս-թուրքական հարաբերություններին, մեջբերում է Թուրքիայի արտաքին գործերի նախարար Թ. Ռյուշտուի հարցազրույցը. «Նախ և առաջ ես պետք է նշեմ, որ մենք չենք սպառնում ո՛չ ինչ որ մեկին,

340 Baskin O., նշվ. աշխ, էջ 62

341 Мельник А., Франко-турецкий конфликт, Международная жизнь. 1929г. N 1, стр. 49.

342 Սիրիաբնակ թուրքերի գույքային պահանջների և Թուրքիայի ուսումնական հաստատություններում Ֆրանսիայի վարած քաղաքականության մասին տես նաև Baskin O., նշվ. աշխ, էջ 280:

343 Миллер А., Актуальные проблемы новой и новейшей истории Турции, Москва, 1983, стр. 75.

ոչ էլ մի թիզ հողի: Փոխարենը մենք ցանկանում ենք հետամուտ լինել մեր տարածքների նկատմամբ պահանջների հրաժարումից: Այդպիսին է թուրքական թեզը»[344]:

Երկարատև բանակցություններից հետո, 1929 թ. հունիսի 22-ին Թ. Ռյուշտուն և Անկարայում Ֆրանսիայի դեսպան կոմս դը Շամպրիոնը ստորագրում են համաձայնագիր, ըստ որի.

Մերսին-Ադանա երկաթուղին հանձնվում է Թուրքիային: Այդ գիծը պատերազմից հետո կառավարում էր ֆրանսիական մի ընկերություն: Երկու երկրների իրավունքները երկաթուղիների մասով հաստատվում էր՝ Սիրիան իրավունք ուներ իր տարածքում երկարացնել երկաթուղին, որը միչև Նուսեյբին անցնում էր թուրքական տարածքով: Մինչև Տիգրիսի հովիտ սահմանները ճշտվում են, այս աշխատանքները հիմնվում են հիմնարար հանձնաժողովի գործունեության վրա[345]:

Այս համաձայնագրի ստորագրումը որոշ չափով թուլացրեց թուրք-ֆրանսիական հարաբերություններում առկա լարվածությունը, որի արդյունքում արդեն 1929 թ. հունիսի 29-ին կողմերի միջև ստորագրվում է մեկ այլ համաձայնագիր.

Վերոնշյալ համաձայնագրերը, մեր համոզմամբ, թեև սահմանային որոշ հարցերում որոշակի հստակություն մտցրեցին ֆրանսթուրքական հարաբերություններում, սակայն դեռևս օրակարգում էր թուրք-սիրիական հարաբերությունների ամենակնճռոտ հիմնախնդիրը՝ Ալեքսանդրետի սանջաքի /Իսքենդերուն/ պատկանելության հարցը:

Ալեքսանդրետի սանջաքը, որը գտնվում է Հյուսիսային Սիրիայում, ինչպես նաև ամբողջ Սիրիան՝ մինչև Ալեքսանդրետ և Կիլիկիա դեռ 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի պայմանագրով գրավվել էին Անտանտի զորքերի կողմից: Արդեն նոյեմբերի 27-ին, որպես ինքնուրույն վարչական միավոր ստեղծվում է «Ալեքսանդրետի ինքնավար սանջաքը»: Հետագայում սանջաքի այս «հատուկ կարգավիճակը» ճշգրտվում է Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի գլխավոր կոմիսար Գուրոյի 1920 թ. սեպտեմբերի 1-ի և 1921 թ. օգոստոսի 8-ի հրամանագրերով, որոնց համաձայն Ալեքսանդրետի ինքնավար սանջաքը մտնում է Սիրիայի պետության կազմի մեջ՝ պահպանելով իր վարչա-ֆինանսական «հատուկ կարգավիճակը»[346]: 1921 թ. հոկ-

344 Նույն տեղում, էջ 52:
345 Յառաջ, Փարիզ, 25 .06. 1929:
346 Մինչդեռ Անկարայի կողմից դա համարվում էր անհիմն և անընդունելի, քանզի

տեմբերի 20-ի Անկարայի պայմանագրով Ալեքսանդրետի սանջաքը մտնում է Սիրիայի կազմի մեջ, որն իր հերթին գտնվում էր ֆրանսիական մանդատի տակ:

«Այդ օրը Ֆրանսիան համաձայնության եկավ մի տեքստով, որի աղետալի հետևանքները ի հայտ էին գալու հետագայում»[347], գրում է ֆրանսիական «Լ' Ազի Ֆրանսեզ» հանդեսը: 1936 թ. սեպտեմբերի 9-ին Ֆրանսիայի և Սիրիայի միջև ստորագրվեց «Բարեկամության և օգնության պայմանագիր», ըստ որի Ֆրանսիան ճանաչում է Սիրիայի անկախությունը, և պարտավորվում երեք տարվա ընթացքում՝ մինչև 1939 թ., հրաժարվել մանդատից և օժանդակել Սիրիային՝ որպես անկախ պետություն անդամակցելու Ազգերի լիգային: Սակայն Թուրքիան, ֆրանսիական կառավարությանը մեղադրեց սանջաքը «անօրինական» ձևով Սիրիային հանձնելու մեջ. «սանջաքը, որպես ամբողջովին թուրքերով բնակեցված մարզ հանդիսանում է թուրքական ազգային տարածքի մասը» [348] - գրում է «Թան» թերթը: Անշուշտ, թուրքական մամուլը նման կերպ փորձում է հիմնավորել իր տարածքային պահանջների իրավացիությունը և ճանապարհ հարթել Անկարայի դիվանագիտական գործողությունների համար: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Թ.Ռյուշտու Արասը 1936 թ. սեպտեմբերի 26-ին, Ազգերի լիգայի խորհրդի 93-րդ նստաշրջանում առաջին անգամ բարձրացրեց «Ալեքսանդրետի սանջաքի հարցը», իսկ դեկտեմբերի 8-ին թուրքերի առաջարկով Լիգայի խորհրդի արտակարգ նստաշրջանի օրակարգ մտցվեց «Ալեքսանդրետ-Անտիոքի ու շրջակա տարածքների ապագայի վերաբերյալ Թուրքիայի և Ֆրանսիայի միջև գոյություն ունեցող վեճի» քննարկումը:

Այսպիսի պայմաններում, 1936 թ. դեկտեմբերի 14-ին բացվում է Ազգերի լիգայի խորհրդի 95-րդ նստաշրջանը, որի օրակարգում էր նաև «Ալեքսանդրետի և Անտիոքի հարցը»: Թուրքիայի ներկայացուցիչ Ռյուշտու Արասը շարադրեց թուրքական տեսակետը, որտեղ նշվում էր, որ ֆրանսիական մանդատը չի տարածվում սանջաքի վրա և այն պայմանականորեն թողնվել էր Ֆրանսիային: Ի պատասխան Ֆրանսիայի ներկայացուցիչ Պոլ Վիենոն նախ հիմնովին մերժեց թուրքական տեսակետը, այնուհետև շեշտեց. «Թուրքիան պաշտոնապես ընդունել է, որ 1921 թ. հաստատված սահմանագծից հարավ

Սանջաքը, համաձայն «Ազգային ուխտի» մտնում էր Թուրքիայի սահմանների մեջ: Baskin O., նշվ. աշխ., էջ 280:

347 Paul, du V., La desastre d' Alexsandrette , 1934-1938, Paris, 1938. p. 46

348 Arcayürek C., Şeytan Uçgeninde Türkiye, Ankara, 1987. p. 37

ընկած երկիրը իրոք Սիրիան է, և Ալեքսանդրետի սանջաքը իր վարչա-ֆինանսական ինքնավարությամբ միշտ մաս է կազմել Սիրիայի պետությանը՝ նրա ստեղծումից ի վեր /1920 թ. մարտի 8/»[349] : Անցած 15 տարիների ընթացքում Թուրքիան որևէ բողոք չի ներկայացնել այդ փաստական իրողությանը, ոչ էլ Ալեքսանդրետի սանջաքում Անկարայի համաձայնագրի դրույթների կենսագործման դեմ:

Ուշագրավ է, որ Լիգայի խորհրդի նախաձեռնությամբ դեկտեմբերի 31-ին Փարիզում վերսկսված ֆրանս-թուրքական բանակցությունների ժամանակ Ֆրանսիայի վարչապետ Լեոն Բլյումը, ով գտնում էր, որ «իրավական բնույթի այս տարակարծությունը պետք է դարձնել Ֆրանսիայի և Թուրքիայի միջև քաղաքական մերձեցման ու բարեկամության հաստատման միջոց», հավաստիացնում է որ «սանջաքի կարգավիճակի մասին շուտով կկազմվի նոր նախագիծ որը կգոհացնի Թուրքիային»[350]: Սակայն ֆրանսիական կողմի այս քայլերը ոչնչով չնվազեցրին Ֆրանսիայի գլխին թափվող թուրքական մամուլի մեղադրանքների տարափը, ավելին, թուրքական թերթերը սպառնում էին, որ եթե չբավարարվեն իրենց պահանջները, ապա Թուրքիան կլքի Ազգերի լիգան, իսկ Անկարայի մեջլիսում արդեն բացահայտ սպառնալիքներ էին հնչում Սիրիայի հասցեին. «Եթե մեր կառավարությունը չի կարող հարցը լուծել սպիտակ գրքի օգնությամբ, ապա թուրք ազգը պատրաստ է անհրաժեշտ չափով կարմիր թանաք տալու՝ այդ մասին մի կարմիր գիրք գրելու համար» [351]:

Այս պայմաններում 1937 թ. հունվարի 21-ին բացվեց Ազգերի լիգայի խորհրդի հերթական 96-րդ նստաշրջանը, որի շրջանակներում հունվարի 27-ին Սանդլերը Լիգայի խորհրդի քննարկմանը ներկայացրեց «Ալեքսանդրետի սանջաքի ապագա կարգավիճակի հիմնական սկզբունքների» մասին իր պատրաստած նախագիծը, իսկ 1937 թ. մայիսի 29-ին Լիգայի խորհուրդը, առանց որևէ քննարկման, ընդունեց Սանդլերի մշակած այդ նախագծերը Իրականում նոր կարգավիճակի ընդունումը լիովին խզեց Սիրիա-Սանջաք առանց այն էլ թույլ կապը և ավելի շատ հնարավորություն տվեց Թուրքիային թե՛ քաղաքական առումով, թե՛ բարոյապես իշխելու այնտեղ:

«Մենք հակաիրավական քայլ կատարեցինք՝ հայտարարելով, որ նոր կարգավիճակը և հիմնական Օրենքը ուժի մեջ են մտնում»

349 Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Հ. 4, Երևան, 2007, էջ 429

350 Известия, Москва, 08.01.1937

351 Խոսքը վերաբերում էր սանջաքի մասին Ազգերի Լիգայի թուրքական հուշագրին: Миллер А., նշվ. աշխ., էջ 188-189

[352],- գրում է Պոլ դյու Վեուն: Քաղաքական այս նոր սխալը էլ ավելի խորացրեց հակաֆրանսիական ատելությունն ու թշնամանքը Սիրիայում և հատկապես Ալեքսանդրետի սանջաքում, որն իր արտացոլումը գտավ 1938 թ. սանջաքում ծավալվող իրադարձությունների ժամանակ: Ընտրությունները կազմակերպելու համար, Ազգերի լիգայի որոշմամբ 1937 թ. հոկտեմբերի 4-ին ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որը մշակելու էր ընտրությունների կանոնադրությունը /Հիմնական օրենք. Հ. 15/: Այս ընթացքում, երբ պաշտոնական Անկարան հավուր պատշաճի հոգ էր տանում նոր կարողունակ և վստահելի «քաղաքական» ուժերի մասին՝ ծայրահեղ անջատողականների շարքերը մշտապես համալրելով Թուրքիայից ուղարկված «ընտրողներով»: «Նման պայմաններում սիրիական կառավարությունը ոչինչ չէր կարող անել, բացի բողոքելուց: Անտեսելով ազգաբնակչության ճնշող մեծամասնության օրինական իրավունքները, օգոստոսի 30-ին հրապարակվեցին ընտրական արձանագրությունների նոր ցուցակներ՝ թուրքերը խորհրդարանում կազմեցին մեծամասնություն, ստանալով այդքան սպասված 22 աթոռ /40 տեղից/:

Այս երկարատև բեմադրության ավարտից հետո, 1938 թ. սեպտեմբերի 2-ին Անտիոքում հրավիրվեց սանջաքի նորընտիր ասամբլեայի առաջին գումարումը, Ալեքսանդրետի սանջաքը վերանվանվեց «Հաթայի պետություն», որի նախագահ «ընտրվեց» Թայֆուր Սյոքմենը: Ինչպես իրավամբ գրում է Լրաբերը «Ֆրանսիացի պաշտոնյաները իրենց բոլոր իրավունքները զիջեցին թուրքերին»[353]: Արդյունքում, 1939 թ. հունիսի 23-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Շ.Սարաջիօղլուն և Թուրքիայում Ֆրանսիայի դեսպան Ռ. Մասիգլին Անկարայում ստորագրեցին «Թուրքիայի և Սիրիայի միջև տարածքային հարցերի շուրջ վերջնական կարգավորման մասին համաձայնագիր», որով Ալեքսանդրետի սանջաքը հանձնվեց Թուրքիային:

Այսպիսով, Ալեքսանդրետի սանջաքի հարցում թուրքական կողմի որդեգրած բազմափուլային մարտավարությունը իրեն արդարացրեց: Արդյունքում Ալեքսանդրետի շուրջ վեճի վերջնական կարգավորումը իրավական հիմքերից տեղափոխվեց քաղաքական հարթություն: Իսկ աշխարհա-քաղաքական իրադրությունը Եվրոպայում այնպիսին էր, որ և՛ Ֆրանսիան մեծապես կարևորելով Թուրքիայի դերը, ինչպես թուրք-սիրիական սահմանային նախորդ դեպքե-

352 Paul du V., Les chetiens en Peril au Moussa-Dagh, Paris,1939. p. 28-29
353 Լրաբեր, Նյու-Յորք, 10. 01.1939:

րում, գնացին Սիրիայի մասնատմանը և սանջաքը «զոհաբերեցին» Թուրքիային:

РЕЗЮМЕ
МАНДАТНАЯ ПОЛИТИКА ФРАНЦИИ В СИРИИ В 1920-1930 ГГ.И ГЛАВНЫЕ ПРОБЛЕМЫ ТУРЕЦКО- СИРИЙСКОЙ ГРАНИЦЫ

АРМАН РАФИКОВИЧ МАРТИРОСЯН
к.и.н., АГПУ,
доцент кафедры Всемирной истории и методики её преподавания,

Ближний Восток, который в реальности считается богатой областью с многослойными конфликтами, всегда находился в центре внимания больших государств. И в этом контексте , комплексное исследование политики, которым руководят мандатные власти Франции в частности в Сирии в период двух мировых войн имеет большой интерес. Имея во внимание все эти факты , в статье представлен глубокий анализ мотивационной политики, которые ведут власти Франции , связанные с турецко- сирийскими соотношениями, спорными меж- граничными проблемами и непрерывным проникновением Сирийской территории. Сирийские события и особое напряжение на турецко- сирийской границы за последнее время делает явным комплексный анализ вышеупомянутых проблем.

Ключевые слова: *Франция, Ближний Восток, Сирия, Мандатная политика, Анкараское соглашение, деморкациа турецко-сирийская граница, Лига Наций, Александретский Санджак, Женевское соглашение:*

SUMMARY
MANDATORY POLICY OF FRANCE IN SYRIA IN 1920-1930 AND TURKISH - SYRIAN BORDER PROBLEMS

MARTIROSYAN ARMAN,
docent of the chair of the world history
and its teaching methodology of the ASPU

Near East which is rightly considered to be a wealthy region full of multilayer contrasts has been the focal point of great nation's clash of interests. In this fitting the comprehensive investigation of the French

mandatory authorities leading policy in Syria during the period of two world wars is of great interest. Taking into account all these facts the article tries to do deep analysis of motivation of the leading policy of France, connected with the Turkish-Syrian relations, border controversial problems and the total regional break of Syria. During the last period the recent events happening in Syria and especially up- to- date tension of Turkish-Syrian border make the comprehensive analysis of the problems more actual.

Key words: *France, Middle East, Syria, Mandate Policy, Ankara Agreement, Tracking of Turkish-Syrian Border, League of Nations, Alexandret Sanjak, Geneva Agreement.*

ՈՒԺԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 1916 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ «ՍԱՅՔՍ-ՊԻԿՈ-ՍԱԶՈՆՈՎ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ՀԱՅԿ ՎՈՒԼՈՂՅԱՅԻ ՆԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) արխիվագետ,
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հայցորդ

Բանալի բառեր՝ *Առաջին համաշխարհային պատերազմ, Կովկասյան ռազմաճակատ, Միջագետքյան ռազմաճակատ, ուժերի ռազմավարական հավասարակշռություն, ուժերի ռազմավարական հարաբերակցություն, «Սայքս-Պիկո-Սազոնով» համաձայնագիր, Նեղուցներ և Կոստանդնուպոլիս:*

Նայելով 20-րդ դարի առաջին տասնամյակի քաղաքական քարտեզին՝ կտեսնենք, որ Օսմանյան կայսրությունը հիշեցնում էր «փռված հսկայի», որի գլուխը գտնվում էր Եվրոպայում, մարմինը՝ Փոքր Ասիայում, նրա աջ ոտքը՝ Միջագետքում, ձախ ոտքը՝ Սինայ թերակղզում, իսկ սիրտը՝ Անատոլիան էր[354]: Եվ ահա այդ «Հիվանդ հսկայի» անդամահատման, այն է Օսմանյան կայսրության «ժառանգության» վերջնական բաժանման խնդիրը, անշուշտ, Առաջին համաշխարհային պատերազմի առանցքային հարցերից մեկն էր, որի լուծումը մինչ այդ հնարավոր չէր դարձել՝ շնորհիվ «Եվրոպական համանվագի» («European Concert». եվրոպական Մեծ տերությունների) շրջանակում գոյություն ունեցած ուժերի ռազմավարական հավասարակշ-

354 Cruttwell F. C. A history of the Great war. 1914-1918, Oxford, 1940, p. 204.

ռության (the strategic balance of Power): Ինչպես լորդ Ռ. Ա. Սոլսբերին էր ժամանակին բնորոշել, Օսմանյան կայսրությունը շարունակում էր իր գոյությունը ի հաշիվ «Մեծ տերությունների միջև գոյություն ունեցող համաձայնության ուժի, որը Օսմանյան կայսրության գոյության պահպանումը դիտում էր որպես միջոց՝ խուսափելու թուրքական «ժառանգության» համար Մեծ տերությունների միջև բախումից»[355]: Սակայն պատերազմի ընթացքում, մասնավորապես 1916 թվականին Մերձավոր Արևելքում ուժերի ռազմավարական նոր հարաբերակցության հաստատումը հնարավորություն էր ստեղծում լուծելու մինչ այդ անլուծելի խնդիրը:

Ռազմական գործողությունները Ասիական թատերաբեմերում, այն է Կովկասյան (Պարսկաստանի հետ միասին), Միջագետքյան և Սինայի-Պաղեստինյան ռազմաճակատներում, Անտանտի մաս կազմող երեք տերություններից յուրաքանչյուրի բանակի հաջող ռազմագործողությունը մյուս երկուսի համար, վերածվում էր «քաղաքական անհարմարության»: Հետևաբար՝ յուրաքանչյուր տերության բանակի գլխավոր շտաբի համար առաջնային խնդիր էր դառնում մինչպատերազմական շրջանում ունեցած իրենց «ազդեցությունների գոտիների» պաշտպանությունը՝ մյուս երկուսից[356]:

Օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ եռակողմ (Անգլո-ֆրանս-ռուսական) առաջին համաձայնագրի (1915 թվականի մարտի 18[357]) կնքումից ամիսներ անց, 1915 թվականի նոյեմբերի 23-ին Լոնդոնում Ֆրանսիական կողմի նախաձեռնությամբ մեկնարկում են անգլո-ֆրանսիական նոր բանակցությունները, որոնք վարում էին Բեյրութում Ֆրանսիայի նախկին հյուպատոս Ֆրանսուա Ժորժ Պիկոն և Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի քարտուղար (նախարարի տեղակալ) Արթուր Նիկոլսոնը, ում շուտով փոխարինում է մերձավոր արևելյան գործերի փորձագետ Մարկ Սայքսը: Բանակցությունները, սակայն, ընթանում էին Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի ռազմավարական լուրջ հաջողությունների ֆոնին:

---

355 Капчевъ Г. И. Турецкое Наследство и міровая война. Стокгольмъ, 1917, с. 21

356 Раздел Азиатской Турции. Посекретным документом 6. Министерства Иностранных дел. Под ред. Е. А. Адамова, М., 1924, с. 75.

357 1915 թվականի մարտի 18-ի Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կայացած գաղտնի համաձայնությամբ Նեղուցները և Կոստանդնուպոլիսը տրվելու էին Ռուսաստանին, իսկ վերջինս էլ դրա դիմաց համաձայնվում էր Պարսկաստանի «չեզոք գոտու» անցումը բրիտանական «ազդեցության գոտու» մեջ: Միաժամանակ Ֆրանսիան ստանալու էր Սիրիան, Լիբանանը և Կիլիկիան: Տես Lenczowski G. The Middle East in world affairs, Ithaca-N.Y., 1952, p. 68-69:

Դաշնակիցների, հատկապես Բրիտանացիների համար հատկապես լուրջ անհանգստություն է առաջ բերում ռուսական բանակի կողմից 1916 թվականի փետրվարի 3-ին (16-ին) Էրզրում (Կարին) բերդաքաղաքի գրավումը[358*]: Եվրասիայի ճանապարհների համար «Էրզրումը նույն դերն ունի,- ընդգծում է Ռուբեն Տեր-Մինասյանը, ինչ որ Սուեզի ջրանցքը, Դարդանելը և Ջիբրալթարը ծովային ճամբաների համար»[359]:

Միաժամանակ ռուսական զորքերը Պարսկաստանի տարածքով առաջ էին շարժվում դեպի Մոսուլ ու Բաղդադ: Գեներալ Ն. Բարաթովի էքսպեդիցիոն կորպուսը 1915 թվականի դեկտեմբերին գրավում է Համադանը, իսկ 1916 թվականի փետրվարին՝ Քերմանշահը: Վերջինս, սակայն, ամենևին էլ վերջնական նպատակակետը չէր: Էքսպեդիցիոն կորպուսի ամենագլխավոր ռազմավարական խնդիրն ու վերջնական նպատակակետը Բաղդադն էր (Մոսուլի հետ միասին)[360]: Սա, բնականաբար, բրիտանացիները հանդուրժել չէին կարող:

Օսմանյան բանակի վենեսուելացի սպա Ռ. դե Նոգալեսն իր հուշերում գրում է, որ ռուսական բանակի կողմից Քերմանշահի և Ռևանդուզի ուղղությամբ անսպասելի հարձակումը դեպի Բաղդադ, Միջագետքի բրիտանական հրամանատարությանը դուրս բերեց «ընդարմացումից» և ստիպեց հրաման տալ գեներալ Չ. Թաունսենդին շարժվելու դեպի Բաղդադ[361]: Սակայն 1915 թվականի նոյեմբերի 22-ին Բաղդադի ճանապարհին, Կտեսիֆոնի (պատմական Տիզբոն) մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքական 6-րդ բանակի (հրամանատար ֆելդմարշալ ֆոն դեր Գոլց) առաջապահ ուժերի (հրամանատար Նուրէդդին բեյ) կողմից Թաունսենդի 6-րդ դիվիզիան ծանր պարտություն է կրում և նահանջում Կուտ-էլ-Ամարա, որտեղ դիվիզիան հայտնվում է պաշարման մեջ:

Բրիտանական դիվիզիան պաշարումից դուրս բերելուն ուղղված հնարավոր համատեղ ռազմագործողություն սկսելու շուրջ անգլո-ռուսական բանակցություններ ժամանակ ռուսական կողմը առաջարկեց համատեղ ուժերով շարժվել դեպի Բաղդադ՝ ազատելով

358 *Էրզրումի ռազմագործողության մասին մանրամասն տես Корсун Н. Эрзерумская операция, М., 1983:

359 Շիրինյան Լ. Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը, Երևան, 2004, էջ 15:

360 Корсун Н. Первая мировая война на Кавказском фронте, М., 1946, с. 46: Корсун Н. Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны в 1915 году, М., 1940, с. 181.

361 Де Ногалес Р. Четыре года под Полумесяцем., М., пер. с исп., 2006, с. 176:

պաշարման մեջ գտնվող բրիտանական դիվիզիան, իսկ այնուհետև համատեղ ուժերով շարժվել Մոսուլ և Դիարբեքիր[362]: Սակայն այս ծրագիրը բրիտանական կողմը մերժեց: Պատճառն այն էր, որ «Անգլիան մահու չափ վախենում էր, որ Ռուսաստանը՝ նրա դարավոր ախոյանը, կարող է հաստատվել Միջագետքում»[363]:

1916 թվականի մարտի 4-ին կնքվում է Անգլո-ֆրանս-ռուսական մի համաձայնագիր՝ «Փոքր Ասիայում Ռուսաստանի պատերազմական նպատակների մասին» («О целях войны России в Малой Азии»), որի համաձայն Ռուսաստանը ստանալու էր Նեղուցներն ու Կոստանդնուպոլիսը, Արևմտյան Հայաստանը, բացառությամբ Սվազի (Սեբաստիայի): Իր հերթին Ռուսաստանը Մեծ Բրիտանիային էր զիջում Պարսկաստանի «Չեզոք գոտին»[364]: Այս համաձայնագիրը, փաստորեն, վերահաստատում էին դեռևս 1915 թվականի մարտի 18-ի համաձայնագրի առանցքային կետերը:

1916 թվականի մարտի 9-ին Մ. Սայքսը և Ժ. Պիկոն ժամանում են Պետրոգրադ, որտեղ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպաններ Ջորջ Բյուքենենը և Մորիս Պալեոլոգը պաշտոնապես ռուսական կողմին ներկայացրին Օսմանյան կայսրության մասնատման վերաբերյալ անգլո-ֆրանսիական դիրքորոշումը: Ըստ այդմ՝ Միջերկրականի արևելյան ափին գտնվող Հայֆա և Աքրա նավահանգիստ-քաղաքները, Անդրիորդանանը և Իրաքը (բացառությամբ Մոսուլի) անցնելու էին Մեծ Բրիտանիային: Ֆրանսիային էին անցնելու Սիրիան, Լիբանանը, Ալեքսանդրետը, Կիլիկիան, Դիարբեքիրը, Մարդինը, Հաքյարին (Հյուսիսային Քուրդիստանը), Մոսուլը: Ալեքսանդրետ և Հայֆա նավահանգիստները փոխադարձաբար բրիտանական և ֆրանսիական առևտրի համար դառնալու էին ազատ նավահանգիստներ: Պաղեստինում սահմանվելու էր միջազգային կառավարում[365]: Մարտի 17-ին դեսպաններին ուղղված պատասխան գրությամբ Ռուսաստանի Արտգործնախարար Ս. Սազոնովը տեղեկացնում է, որ Ռուսաստանը կհամաձայնվի անգլո-ֆրանսիական նախագծին, եթե վերջիններս համաձայնվեն Ռուսաստանին հանձնել Արևմտյան Հայաստանը, Հաքյարին, Սև ծովի հարավային ափերը և ամենագլխա-

362 Корсун Н. Первая мировая война на Кавказском фронте, с. 55.
363 Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, Հատ. 2-րդ, Երևան, 2004, էջ 587:
364 ЗайончковскийА. М. Первая мировая война, СПБ, 2002, с. 523.
365 Лазарев М. С. Крушение турецкого господства на Арабском Востоке (1914-1918гг.), М., с. 131-132.

վորը՝ Սևծովյան նեղուցներն ու Կոստանդնուպոլիսը[366]: Ռուսական ռազմա-քաղաքային շրջանակների համար առաջնային խնդիրն էր Սևաստոպոլ-Սինոպ-Բոսֆոր ռազմավարական եռանկյունու նկատմամբ վերահսկողության սահմանումը և նշված կետերում Սևծովյան նավատորմի բազավորումը[367]:

Նեղուցների ու Կոստանդնուպոլսի հարցում ռուսական կողմը հստակ երաշխիք էր պահանջում, քանի որ Ռուսաստանի ղեկավարող շրջանակները չէին հավատում, որ Սևծովյան նեղուցների հարցը կարելի կլիներ լուծել տերությունների հետ դիվանագիտական բանակցությունների ճանապարհով[368]: Դրա հետևանքով Ռուսաստանում ավելի էր ուժեղանում պատերազմից դուրս գալու գաղափարը: Միաժամանակ Ռուսաստանին պատերազմից դուրս բերելու, և պատերազմը մեկ ռազմաճակատով շարունակելուն ուղղված ակտիվ դիվանագիտական ջանքեր էր գործադրում Գերմանիան: Մասնավորապես դեռևս 1915 թվականի մայիսին Գերմանիայի արտգործնախարար ֆոն Յագովը Նիկոլայ 2-րդին ուղղված գաղտնի նամակում գրում էր, որ անջատ հաշտությամբ պատերազմը վերջացնելով «Ռուսիա աւելին կը ստանայ մինչեւ իսկ Դարդանելի հարցում… Անգլիա ձգտում է գերակշիռ դիրք գրաւել Պոլսոյ մէջ, ուստի, հակառակ իր բոլոր խոստումներին, նա երբեք թոյլ չի տայ Ռուսիոյ՝ այդ քաղաքը գրաւելու եւ կամ, գրաւած դեպքում, այն իրեն պահելու»[369]: Արդեն 1916 թվականի գարնանը Գերմանիայի արտգործնախարարությունը ռուսական կողմին ներկայացրեց անջատ հաշտության նոր առաջարկ, որի համաձայն Ռուսաստանը ստանալու էր Արևմտյան Հայաստանը, Պարսկաստանի մնացած մասը (այսինքն բրիտանական «ազդեցության գոտին»), և վերջապես, Սևծովյան նեղուցներով ռուսական ռազմանավերի ազատ անցման իրավունք[370]: Թեև ռուսական կողմը մերժեց անջատ հաշտության վերաբերյալ գերմանական կողմի առաջարկները, սակայն, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային միշտ ուղեկցում էր Ռուսաստանից պատերազմից դուրս գալու վախը: Հետևաբար նրանք կրկին (թղթի վրա) պետք է Ռուսաստանին զիջեին Նեղուցներն ու Կոստանդնուպոլիսը: Դա, փաստորեն, վճարվելիք «գինն էր Գերմանիայի դեմ պատերազմում Ռուսաստանի

366 Лазарев М. С.Նշվ.աշխ., էջ 132-133:
367 Раздел Азиатской Турции, с. 177.
368 Нотович Ф. И. Дипломатическая борьба в годы Первой мировой войны., том первый, М.-Л., 1947, с. 379.
369 Նավասարդյան Վ.Նեղուցները (ՎոսփորևԴարդանել).Թրքականջրուղիները և Հայ դատը., Գահիրէ, 1947, էջ 159:
370 Fischer F. Germany´s aims in the First world war, N. Y., 1967, p. 232.

մասնակցության»[371]:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա այս հարցում բրիտանացիները սկզբնապես նույնպես չէին պատրաստվում հեշտությամբ զիջել: Արևմտյան Հայաստանը (Կիլիկիայի հետ միասին) բրիտանական ռազմավարագետների կողմից միշտ էլ ընկալվում էր որպես «բուֆերային գոտի» Ռուսաստանի և Սուեզի նեղուցի միջև: Ավելին, բրիտանական աշխարհառազմավարագիտական մտքի խոշոր ներկայացուցիչ Մարկ Սայքսը գտնում էր, որ հրեական, արաբական և հայկական անկախ պետությունների ստեղծումով կձևավորվի «բրիտանամետ գոտի»՝ Թուրքիայի ու Ռուսաստանի միջև[372]: Մարտ ամսին, անգամ Մ. Սայքսը անձամբ ժամանում է Կովկաս՝ տեղում ծանոթանալու քաղաքական իրավիճակին[373]: Սակայն այս շրջանում, երբ Արևմտյան Հայաստանն արդեն գրավված էր ռուսների կողմից, անկախ Հայաստան ստեղծելու Մ. Սայքսի ծրագիրը գործնականում դառնում է անիրագործելի: Հետևաբար՝ 1916 թ. մարտի 12-ին դեսպան Ջ. Բյուքենենին գրած նամակում Մ. Սայքսը նշում էր, որ ստեղծված իրավիճակում որպես լուծում կարող էր լինել հետևյալը. Ռուսաստանը ստանալու էր Էրզրումը, Վանը և Բիթլիսը, իսկ «Փոքր Հայաստանը» (նկատի ունի Սեբաստիան և Կիլիկիան) անցնելու էր Ֆրանսիային[374]:

Ավելին ռուսական զորքերի դեպի Միջագետք առաջխաղացման շարունակման պայմաններում բրիտանացիները կարող էին զրկվել նաև Մոսուլից ու Բաղդադից: 1916 թ. գարնանը ռուսական բանակը գրավելով Բիթլիսը՝ մոտեցել էր Դիարբեքիրին: Վերջինս «վերահսկում էր Պարսից ծոցը (Մոսուլի ու Բաղդադի հետ միասին)»[375], իսկ Պարսից ծոցը, ինչպես բնորոշել էր լորդ Ջ. Քերզոնը, հանդիսանում էր «Հնդկաստանի ծովային սահմանագիծը»[376]: Այսպիսով ռուսական բանակը «կ'երթար ամրանալու Սեւ ծովու եզերքը, Պոնտոսն իր թեւարկութեան տակ առնելով, եւ ուղիղ գծով վար կ'իջնէր Երզնկա, մինչեւ Դերսիմի հովիտը, ու անոր հունով կ'առաջա-

371 Stuermer H. Two war years in Constantinople. Sketches of German and Young Turkish Ethics and politics, tr. From the German, N. Y., 1917, p. 212

372 Bloxham D.The Great game of Genocide. Imperialism, nationalism and destruction of Ottoman Empire, Oxford, Oxford press, 2005, p. 144

373 Հակոբյան Ս. Մ. Արևմտյան Հայաստանը իմպերիալիստական տերությունների պլաններում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, Երևան, 1967, էջ 101

374 Раздел Азиатской Турции, с. 158-159

375 Buxton N., Buxton H. R. Travel and politics in Armenia, London, 1914, p. 146.

376 The Great Powers and the End of the Ottoman Empire. Ed. By Kent M., London, 1984, p. 173.

նար մինչեւ Սասնոյ լեռնաշղթան, Բիթլիզի հարաւով՝ մինչեւ Վանի Շատախները, ու կը կախուէր Մոսուլի գլխին»[377]:

Գեներալ Ֆ. Չերնոզուբովի հրամանատարությամբ գործող «Ադրբեջանական զորաջոկատը», ապրիլի վերջին գրավում է Ռևանդուզը, որը գտնվում էր Մոսուլից ընդամենը 100կմ հեռավորության վրա: Միաժամանակ գեներալ Ն. Բարաթովի կորպուսը առաջ շարժվելով ապրիլի 1-ին գրավում է Սպահանը, իսկ ապրիլի վերջին՝ Բաղդադից 150 կմ հեռավորության վրա գտնվող Հանեկինը: Այդպիսով՝ ստեղծվեց Բաղդադի և Մոսուլի գրավման ռուսական իրական վտանգ, որը «դամոկլյան սրի» պես կախվեց Միջագետքում բրիտանական ռազմավարական շահերի գլխին:

Եվ ահա ստեղծված պայմաններում բրիտանական ուժերի կողմից հարավից՝ Բասրայից, Կուտ-Էլ-Ամարայի պաշարումը ճեղքելու մի քանի անհաջող փորձերից, ապա թուրքական 6-րդ բանակի հրամանատարությունը (ֆելդմարշալ ֆոն դեր Գոլցի մահից հետո) ստանձնած Խալիլ փաշային բրիտանացի նշանավոր հետախույզ Լոուրենս Արաբացու միջոցով բրիտանական կառավարության կողմից շուրջ 1 մլն ֆունտ սթեռլինգ գումար[378] առաջարկելուց և նրա կողմից մերժում ստանալուց հետո, 1916թ. ապրիլի 29-ին գեներալ Թաունսենդի դիվիզիան (շուրջ 9 000 զինվոր[379]) անսպասելիորեն անձնատուր եղավ:

Կուտ-Էլ-Ամարայի պաշարմանը մասնակցած Ռ. դե Նոգալեսը իր հուշերում նշում է, որ գեներալ Թաունսենդը եթե փորձեր ճեղքել պաշարումը թեկուզ երեք կամ չորս հազար զինվորով, ապա դա պաշարող թուրքական զորքերի մոտ մեծ խուճապ առաջ կբերեր, քանզի թուրքերը այդ պահին Կուտ-Էլ-Ամարայում ունեին ընդհամենը երեք գծային գումարտակներ՝ հիվանդ տիֆով, և 45-րդ և 51-րդ դիվիզիաների մնացորդները, բոլորը միասին շուրջ 4 000 զինվոր[380]: Թաունսենդի կողմից «անբացատրելի անվճռականությունը» ստիպեց Խալիլ փաշային զարմացած բացականչելու. «Ես չեմ հասկանում, ինչպես ութ կամ ինը հազար անգլիացիները կարողացան անձնատուր լինել հինգ հազարից ավելի քիչ թուրքերին, այդպես էլ չհամարձակվելով ձեռնարկել և ոչ մի ճեղքում պաշարման ողջ ընթացքում»[381]:

377 Սասունի Կ. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պէյրութ, 1966, էջ 107-108:
378 Palmer A. The Decline and Fall of the Ottoman Empire, , N. Y., 1994, p. 232.
379 Townshend C. V. F. My campaign, vol. 2, N. Y., 1920, p. 240.
380 Де Нолалес Р. Նշվ. աշխ., էջ 182:
381 Де Нолалес Р. Նշվ. աշխ., էջ 182:

Գեներալ Չ. Թաունսենդի «անբացատրելի անվճռականության» պատասխանը, թերևս, տալիս է Ռևանդուզի ճակատամարտի մասնակց, կամավորական Վարդան Իսկենդերյանը, ով իր հուշերում գրում է. «Անգլիան պարզ կը տեսնէր, որ իրմէն առաջ ռուս բանակը պիտի մտներ Պաղտատ: Անգլիական բանակը կրնար սպասել մինչեւ որ զօր. Պարաթովը Պաղտատը գրաւէր ու օգնութեան հասնէր իրեն: Սակայն, խորամանկ Ալպիոնի քաղաքագէտները անհրաժեշտ էին գտած Քութի բանակը գերի տալով խլել Պաղտատը Ռուսիոյ ձեռքէն, իսկ Մոսուլի նաւթարդիւնաբեր հողերը՝ զօր. Չէռնոզուբովի բանակէն: Քութի անգլիական բանակը գերի տալով՝ ազատած կ՛ըլլային թրքական բանակը եւ մղած Պարաթովի և Չէռնոզուբովի դէմ»[382]:

Եվ իսկապես: Ապրիլի վերջին, Բաղդադ ժամանած Էնվեր փաշան թուրքական 6-րդ բանակի առջև խնդիր է դնում Միջագետքում գտնվող բրիտանական զորքերի դեմ անցնել պաշտպանության, և միաժամանակ, ջախջախել Ռևանդուզի ուղղությամբ գործող ռուսական զորքերին[383]: Թուրքական 6-րդ բանակը, որը համալրվել էր նաև Գալիպոլիից Միջագետք տեղափոխված թարմ ուժերով, մայիսին անցնում է խոշոր հակահարձակման: Արդյունքում թուրքական բանակը նախ ծանր հարված է հասցնում գեներալ Ֆ. Չերնոզուբովի «Ադրբեջանական զորաջոկատի» առաջապահ Հայկական կամավորական 4-րդ դրուժինային (զոհվում է նաև դրուժինայի հրամանատար Քեռին) և կարճ ժամանակ անց ետ գրավում Ռևանդուզը: Միաժամանակ թուրքական բանակի ճնշման տակ գեներալ Բարաթովի կորպուսը թողնում է Քերմանշահը, Կումը, Համադանը:

Ռուսական զորքերի նահանջով, փաստորեն, վերացավ Մոսուլին և Բաղդադին սպառնացող ռուսական վտանգը: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից Օսմանյան բանակի սպա Սարգիս Թորոսյանի դիպուկ բնորոշմամբ այդ քայլով բրիտանական դիվանագիտությունը «շահեց ևս մեկ միավոր», ինչի մասին անձնատուր եղած զինվորների մեծ մասն այդպես էլ չտեսավ[384]: Այդպիսով, եթե անգլո-ռուսական ռազմավարական շահերի բախման արդյունքում 1915 թվականին փրկվեց Կոստանդնուպոլիսը (այն բրիտանացիներն ու ֆրանսիացիները ոչ թե չկարողացան գրավել, այլ պարզապես չուզեցին գրավել), ապա 1916 թ.՝ փրկվեցին Մուսուլն ու Բաղդադը: Ինչ-

382 Իսկենդերեան Վ., Կամաւորի մը յուշերը 1914-1917, «Հայրենիք» ամսագիր (Պոսթըն), թիւ 9, յուլիս 1941, էջ 132:

383 Масловскій Е. В., Міровая война на Кавказскомъ фронте 1914-1917г. Стратегическій очеркъ, Париж, 1933, с. 226.

384 Թորոսյան Ս., Դարդանելից մինչև Պաղեստին, թարգմ. անգլ., Երևան, 2012, էջ 84:

պես Լևոն Շանթն է գրում. «Եթէ չըլլար Անգլիայի դէպի հիւսիս ձգտումը, ռուսները վաղուց հասած կ՛ըլլային Պոլիս, Իզմիր, Կիլիկիա, Բասրա ու Բուշիր: Եթէ չըլլար ռուսական ձգտումը դէպի հարաւի ծովերը, Անգլիան հիմա շատոնց հասած կ՛ըլլար իր բնական սահմանին և բոլոր մեր դրացի երկիրները, մեզի հետ միասին, ենթարկած՝ իր տնտեսութեանն ու հրամանին»[385]:

1916 թ. ապրիլի 26-ին Դաշնակիցների կողմից ընդունվում են Սազոնովի առաջարկները, ներառյալ Կոստանդնուպոլիսն ու Նեղուցները Ռուսաստանին անցնելու մասին, իսկ մայիսի 9-ին և 16-ին Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պ. Կամբոնի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Է. Գրեյի միջև տեղի ունեցած նոտաների փոխանակումով, հաստակեցվում է Օսմանյան կայսրության մասնատման նախագիծը:

Ըստ այդմ՝ Ռուսաստանը ստանում էր այսպես կոչված «դեղին գոտին»[386*], որն ընդգրկում էր Նեղուցները, Կոստանդնուպոլիսը, Տրապիզոնի[387*], Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգները և Քուրդիստանի (Հաքյարիի) մի մասը: Ֆրանսիան ստանում էր այսպես կոչված «կապույտ գոտին»[388*], որը ներառում էր Արևմտյան Սիրիան (Ալեքսանդրետ նավահանգստով), Լիբանանը, Կիլիկիան, Ուրֆան, Սեբաստիան, Քուրդիստանը (Դիարբեքիրը, Մարդինը, Հաքյարին): Մեծ Բրիտանիան ստանում էր այսպես կոչված «կարմիր գոտին», որը ներառում էր Իրաքի հարավային շրջանները, ներառյալ Բաղդադը, Պաղեստինի Աքրա և Հայֆա նավահանգիստները: Պաղեստինի մնացած հատվածում («դարչնագույն գոտի») հաստատվում էր

385 Շանթ Լ., Մեր անկախութիւնը, Պոսթըն, 1925, էջ 69-70:

386 *«Ռուսական բանակի գերագույն-գլխավոր հրամանատարի Գլխավոր շտաբի պետ, գեներալ-Ադյուտանտ Մ. Վ. Ալեքսեևի՝ 1916 թ. հունիսի 5-ի գաղտնի հրամանով՝ ստեղծվում է «Պատերազմի իրավունքով զբաղեցված Թուրքահայաստանի և Թուրքիայի այլ մարզերի Ժամանակավոր ռազմական գեներալ-նահանգապետությունը»: Հրամանի տեքստը տես ՀԱԱ, ֆ. 502, ց.1, գ.108, թ. 1-19:

387 *Ռուսական Սևծովյան ռազմա-ծովային նավատորմը Տրապիզոնը գրավում է 1916թ.ապրիլին:

388 *Կիլիկիան և Սիրիան Ֆրանսիական ազդեցության գոտում հայտնվելու հանգամանքով էր պայմանավորված, որ 1916 թ. գարնանը ռուսական գերագույն հրամանատարության կողմից Դաշնակիցներին ներկայացված առաջարկությունը՝ համատեղ ուժերով Ալեքսանդրետում ռազմագործողություն սկսելու մասին, մերժվում է նրանց կողմից՝ իբր բավարար ազատ ուժեր չունենալու ու հիմնական ուժերը Արևմտյան ռազմաճակատում կենտրոնացնելու հիմնավորմամբ: Տես Сношения с Союзниками по военным вопросам во время войны 1914-1918 гг., часть 1, М., 1920, с.102: Պողոսեան Ս., Մարկ Սայքսի դիրքորոշումը հայերի և Հայկական հարցի վերաբերեալ, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, հատոր ԼԲ, 2012, Էջ 66-67:

այսպես կոչված «միջազգային կառավարում»: Արևելյան Սիրիան և Մոսուլը[389*] մտնում էին Ֆրանսիայի ազդեցության գոտու («Ա գոտի») մեջ: Անդրիորդանն ու Կենտրոնական Իրաքը մտնում էին բրիտանական գոտու մեջ («Բ գոտի») մեջ:[390]:

Այսպիսով ձևավորվեց Օսմանյան կայսրության մասնատման մասին եռակողմ՝ Անգլո-ֆրանս-ռուսական(«Սայքս-Պիկո-Սազոնով») համաձայնությունը, որն արտահայտում էր Ասիական ռազմաճակատներում տվյալ պահին առկա ուժերի ռազմավարական հարաբերակցությունը (the strategic correlation of forces): ինչպես Լեոն է գրում, տեղի ունեցավ «վոչ թե քմահաճույքով, վոչ թե վորևե մեկին ոգնելու, բարերարություն անելու համար, այլ ուժերի իրական փոխհարաբերությունների յերկաթե որենքով»[391]: Մասնավորապես Մեծ Բրիտանիան Արևմտյան Հայաստանը զիջելով Ռուսաստանին, իրեն էր պահում Միջագետքը: Միևնույն ժամանակ Դաշնակիցները, առաջին հերթին Մեծ Բրիտանիան, Նեղուցները և Կոստանդնուպոլիսը զիջելով (միայն թղթի վրա) Ռուսաստանին՝ նրան պահում էր պատերազմում:

Ավելին, ըստ գերմանացի հետազոտող Կ. Հոֆմանի այդ համաձայնությունների գնով «գնվեց» Բրուսիլովի բանակի հարձակումը[392]: Ռուսական Հարավ-Արևմտյան ռազմաճակատում գեներալ-ադյուտանտ Ա. Ա. Բրուսիլովի հրամանատարությամբ 1916 թ. մայիսի 22-ին (հունիսի 4-ին) սկսված հարձակման («Բրուսիլովյան ճեղքում»[393]) ռազմավարական գլխավոր արդյունքները Դաշնակիցների համար եղան Արևմտյան ռազմաճակատում՝ Վերդենի տակ գերմանական բանակի հարձակման կասեցումը, Ավստրո-հունգարական բանակի կողմից իտալական[394*] բանակի վերջնական ջախջախման կասեցու-

389 *Նավթային պաշարներով հարուստ Մոսուլի վիլայեթի անցումը ֆրանսիացիներին, մեծ դժգոհություն առաջ բերեց Մեծ Բրիտանիայի ղեկավարող շրջանակներում և խնդիր դրվեց վերանայելու համաձայնագիրը: Ի վերջո 1918 թ. Լոնդոնում Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի վարչապետներ Ժ. Կլեմանսոյի և Դ. Լլոյդ-Ջորջի միջև կայացված համաձայնությամբ Ֆրանսիան ճանաչեց Մոսուլը որպես բրիտանական ազդեցության գոտի, ինչի դիմաց Մեծ Բրիտանիան Ֆրանսիային խոստացավ հյուսիսային միջագետքի նավթադաշտերի կեսի շահագործման իրավունք (Տես Lenczowski G., նշվ. աշխ., էջ 73):

390 Կիրակոսյան Ա., Սայքս-Պիկոյի համաձայնագիր, «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 398:

391 Լեո. Անցյալից. Հուշեր, թղթեր, դատումներ,էջ 342

392 Շիրինյան Լ. Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Երևան, 2006, էջ 128:

393 «Բրուսիլովյան ճեղքման» մասին մանրամասն տես՝ Брусилов А. А. Воспоминания, М., 1963: Мировая война 1914-1918. «Луцкий прорыв», Труды и материалы к операции Юго-Западного фронта в мае-июне 1916 года Под ред. П. В. Черкасова, М., 1924:

394 *Իտալիան Անտանտի կողմից պատերազմի մեջ մտավ 1915 թվականի մայիսի

մը, և Ռումինիայի մտնելը (1916 թ. օգոստոսի 28-ին) պատերազմի մեջ՝ ընդդեմ Քառյակ միության:

Միաժամանակ Միջագետքում բրիտանացիներն իրականացրին իրենց ռազմավարական ճեղքումը. 1916 թվականի հունիսին, Մեքքայի շերիֆ Հուսեյնի որդու՝ Ֆեյսալի և Լոուրենս Արաբացու գլխավորությամբ սկսված արաբական ապստամբությունը[395], որն իր բնույթով հիմնված էր բրիտանական «ուրիշի ձեռքերով պատերազմելու» կամ«անուղղակի գործողությունների ռազմավարության» վրա[396], ազդարարեց ոչ միայն Օսմանյան կայսրության, այլև գերմանական «Բեռլին-Կոստանդնուպոլիս-Բաղդադ» աշխարհառազմավարական առանցքի մոտալուտ վախճանը:

Այսպիսով «Սայքս-Պիկո-Սազոնով» համաձայնությունը արդյունք էր տվյալ պահին Մերձավոր Արևելքում առկա ուժերի ռազմավարական հարաբերակցության և միաժամանակ Ռուսաստանին՝ ընդդեմ Գերմանիայի, պատերազմում պահելուն ուղղված բրիտանական ռազմավարության:

SUMMARY
THE STRATEGIC CORRELATION OF FORCES IN THE MIDDLE EAST IN 1916 AND FORMATION OF THE «SYKES-PICOT-SAZONOV» AGREEMENT

HAYK V. NAZARYAN

The problem of the partition of the Ottoman Empire «heritage» was one of the important issues during the First World War. It was not possible to realize until that time due to the strategic balance of Power among the «European Concert» (The European Great Powers).

the Syrian Julianists under the leadership of Abdišoy brought the works of Timothy Aelurus and Philoxenus of Mabbug in Greek or Syriac for anti-Chalcedonian and anti-Nestorian propaganda purposes, as the *Narratio de Rebus Armeniae* and the other related sources tell us, which were taken into consideration by the leadership of the Armenian Church but not taken into the agenda of the Second Council of Dowin as dogmatic documents necessary for the condemnation of the Council of Chalcedon, because the condemnation of that council was no direct task of the Second Dowin Synod, nor the immediate ground of its convocation. It should be noted, however, that the position of the Armenian Church in the 6th century, at both the First and the Second Council of Dowin, was by no means a pro-Chalcedonian one either. The doctrinal orientation of the First Council of Dowin and the Armenian Church of that time, as the Second Letter of Catholicos Babgēn I Otʿmsecʿi (490-516) to the Orthodox in Persia shows, corresponded to that of Emperor Zenoʾs *Henoticon*, which constituted the basis of the mentioned letter and was interpreted in the Armenian Church first of all as a pro-Cyrillian and anti-Nestorian document, which condemned also the heresy of Eutyches, similarly anathematized by the Armenian Church. However, the aversion to any kind of dyophysite Christology as Nestorian (especially to the Christological teaching of the so-called Persian Church), the relations with the Syrian Monophysites during the two councils of Dowin, who propagated a strongly accentuated anti-Nestorian and anti-Chalcedonian Christology, as well as the translation (if we accept an earlier date for it at the end of the 5th century) and the diffusion of Timothy Aelurusʾ anti-Chalcedonian work in Armenia, the possible influence of which can be found in the writings of Xorenacʿi, Pʿarpecʿi, Mandakuni and the Second Letter of Catholicos Babgēn I Otʿmsecʿi (490-516) to the Orthodox in Persia, led gradually to and influenced considerably the rejection of the Council of Chalcedon by the Armenian Church. According to N. Garsoïan, the beginning of the process of the open rejection of the Council of Chalcedon by the Armenian Churchand of the rising aversion of Armenians to that council, which reached its climax in the letters of the locum tenens of the Armenian catholicosVrtʿanēs Kʿerdoł[654] and Catholicos Abraham

654 Cf. A. B. Schmidt, “Die Refutatio des Timotheus Aelurus…”, Oriens Christianus 73 (1989), p. 159, who notes: “Nicht auszuschließen ist, dass der energische Vertreter des armenischen Katholikos, Vrtʿanēs Kʿerdoł, eine wichtige Rolle beidem gezielten

I Ṙštunikʿ(607-615)[655], must, rather, be looked for in the last three decades of the 6th century and especially in the period of reign of the Byzantine Emperor Maurice (582-602), who tried to impose a union between the Armenian Church and the Patriarchate of Constantinople and to forcethe reception of the decreesof the Council of Chalcedon on Armenians[656].

2. The second, more dominant, position in the Armenian studies belongs to the followers of Galust Ter-Mktrčʿyan. He analyzed the above-mentioned chronological evidence of *Contra eos qui dicunt duas naturas* (CPG 5471) in his first article[657]and an analogous evidence in *Knikʿ Hawatoy*[658] in his second more elaborate article[659] and focused his attention on the chronological data in *Knikʿ Hawatoy*: "Toth 5, September 2, Hoṙi 6", without giving more attention to the date of Dioscorus' death, September 4. His calculations show that the date of the translation falls somwhere between the years 480 and 484[660]. This date of the translation was accepted by M. Abełyan, who rejected the arguments of H. Manandyan against this new date[661], S. Arevšatian[662] and K. Sarkissian[663]. They were accepted also by Ṙ. H. Vardanian, who, how-

---

Einsatz des T[imotheus] A[elurus] gegen die dyophysitischen Neigungen armenischer Bischöfe spielte. Das erste Zeugnis über die Kenntnis und den Gebrauch des T[imotheus] A[elurus] in der armenischen Kirche findet sich um 606 bei Bischof Moses von Cʿurtaw, der Vrtʿanēs in einem Brief mitteilt, daßer » die Bücher des seligen Timotheus vollständig erhalten« habe."For that letter, see GirkʿTʿłtʿocʿ, ed. Y. Izmireancʿ, Tiflis, 1901, p. 140. We find the name of Timothy Aelurus mentioned also in the letter of Vrtʿanēs Kʿerdoł to the Armenian general Sormen; cf. GirkʿTʿłtʿocʿ, ed. Y. Izmireancʿ, Tiflis, 1901, p. 91; A. B. Schmidt, "Die Refutatio des Timotheus Aelurus…", Oriens Christianus 73 (1989), p. 159, n. 45.

655 For the career of the Armenian Catholicos Abraham, see G. Garitte, La Narratio de Rebus Armeniae, p. 258-268; for his letters, see GirkʿTʿłtʿocʿ, ed. Y. Izmireancʿ, Tiflis, 1901, p. 164-165; p. 176-179; p. 180-184; and p. 189-195.

656 Cf. N. Garsoïan, Lʾéglise arménienne, p. 241-282. A. Schmidt, "Das armenische "Buch der Briefe". Seine Bedeutung als quellenkundliche Sammlung für die christologischen Streitigkeiten in Armenien im 6./7. Jh.", in: Logos. Festschrift für Luise Abramowski zum 8. Juki 1993, ed. H. Ch. Brennecke, E. L. Grasmück, and Ch. Markschies, Beihefte zur Zeitschrift für die neutestamentliche Wissenschaft und die Kunde der älteren Kirche, B. 67, Berlin-New York, 1993, [p. 511-533], p. 529-530.

657 G. Ter-Mekerttschian, "Timotʿēos Kuzi hakačaṙutʿean hay tʿargmanutʿean žamanakə ew surb grkʿi errord kam noraber hay tʿargmanutʿiwnə", Ararat 41 (1908), p. 564-89 and p.707-708.

658 Cf. Catholicos Komitas, La Sceau de la Foi, p. 357, 9-12.

659 G. Ter-Mekerttschian, Hayagitakan Usumnasirutʿyunner, vol. 1, Yerevan 1979, p. 388-400.

660 Ibid., p. 392.

661 M. Abełyan, Hayocʿ hin grakanutʿyan patmutʿyun, vol. 1, p. 613-618.

662 S. Arevšatian, Formirovanie filosofskoi nauyki, p. 173 and p. 184.

663 K. Sarkissian, The Council of Chalcedon, p. 170.

ever, proposed some corrections for them and improved convincingly the calculations by G. Ter-Mekerttschian[664]. The arguments of Galust Ter-Mktrčʿyan were so strong that they gave rise to a long dispute and many objections, since they challenged all the theories about the "Hellenizing Scholl", which had been proposed before, especially those by H. Manandyan[665].

3. The third relatively new position concerning the date of the translation of *Contra eos qui dicunt duas naturas* (CPG 5475) into Armenian belongs to the historian Ṙ. H. Vardanyan. In his book *Hayocʿtomarakan ełanakə. Tʿargmanakan bnagreri žamanakə* (Yerevan 1993), he proposed a new date of the translation based on a new method of calculation of chronological dates[666]. His starting point were again the date of Dioscorusʾ death and its Armenian and Egyptian equivalents in the Armenian translation of Timothy Aelurusʾ work. As Vardanyan showed, the chronological data about Dioscorus' death exist in four Armenian manuscripts. He found out that two of them are independent sources: the one has the text of the Armenian manuscript of *Contra eos qui dicunt duas naturas*[667], and the other has the text of *Knikʿ Hawatoy*[668]. The other two are dependent sources: the first contains a fragment of Dioscorusʾ letter borrowed from *Contra eos qui dicunt duas naturas*[669], and the second has the text of *Knikʿ Hawatoy* again containing the fragment from *Epistulaad Secundinum* (CPG 5452)[670]. The lemma of this text, in difference to the three manuscripts, has in the chronological data concerning Dioscorus' death "Thoth 5" instead of "Thoth 7"[671]. G. Ter- Mkrtčʿyan used this data for his calculation. The other three sources have "Thoth 7"[672]. Now, Ṙ. H. Vardanyan, having compared the above-mentioned four texts, corrects the initial chronological calculation of G. Ter- Mekerttschian: Thoth 5, September 2, andHoŕi

664 Cf. Ṙ. H. Vardanyan, Hayocʿtomarakan ełanakə, p. 39-41.
665 Cf. K. Sarkissian, The Council of Chalcedon, p. 167
666 Cf. Ṙ. H. Vardanyan, Hayocʿtomarakan ełanakə, p. 37-42 and p. 57-59.
667 Widerlegung, p. 277, 22-27.
668 Catholicos Komitas, La Sceau de la Foi, p.112, 18-23.
669 Cf. Widerlegung, p. 335-336: a long excerpt from Dioscorusʾ Epistula ad solitarios in Henadon (CPG 5454) quoted also in the Armenian version of Timothyʿs anti-Chalcedonian work: Widerlegung, p. 279, 27-280, 31 and in Catholicos Komitas, La Sceau de la Foi, p. 112, 24-114, 3.
670 Cf. Catholicos Komitas, La Sceau de la Foi, p. 357-358 andesp. p. 357, 9-12.
671 Cf. Ibid., p. 357, 12.
672 Cf. Widerlegung, p. 277, 26 and p. 335; Catholicos Komitas, La Sceau de la Foi, p. 112, 21.

6. Ṙ. H. Vardanyan bases himself on the precise date of Dioscorus' death, September 4 of the year 454, and proposes the following dates: Thoth 7 (since we have Thoth 7 in three manuscripts, and especially in *Contra eos qui dicunt duas naturas*[673]), September 4 (the correct date of Dioscorus' death), Hoŕi 6, and shows that the date of the translation into Armenian of Timothy Ailouros work falls between the years 472 and 475[674].

According to Ṙ. H. Vardanyan, the possible translator of Timothy Aelurusʾ anti-Chalcedonain work into Armenian was the Armenian catholicos Yovhannēs I Mandakuni (478-490)[675]. Vardanyan refers for this reason to the letter of an unknown Peter preserved in *Girkʿ Tʿłtʿocʿ*[676], which he identifies as the letter of Peter the Fuller (Πέτρος Γναφεύς), the Patriarch of Antioch (471-488)[677], in which he writes to his addressee (who is most probably a bishop) that he possesses the books of "our blessed father Timothy against the Council of Chalcedon"[678]. This means, according to Ṙ. H. Vardanyan that the author of the letter, that is Peter the Fuller, is the one who has sent the books of Timothy Aelurus to Armenia some years before the coposition of his letter and now in his letter he confirms it once more, bereminding his addressee that he owns the writings of Timothy Aelurus. Peter the Fuller must have written his letter, according to Ṙ. H.Vardanyan, between the years 478-486, that is after the death of Timothy Aelurus (477), because he calls Timothy "the blessed". This letter is addressed, according to Ṙ. H. Vardanyan to a high-ranking Armenian cleric, as also the manner, in which Peter writes to his recipient shows it[679], who was very probably Yovhannēs Mandakuni himself. Hence, the conclusion of R. Vardanyan that Peter the Fuller has sent the work of Timothy Aelurus somewhere between the years 471-472 to Yovhannēs Mandakuni, who, having received the permission of the Armenian catholicos of that time, Giwtof Arahez (461-478), who was his relative, translated it into Armenian between the

673 Cf. Widerlegung, p. 277, 26 = Matenadaran Manuscript No. 1958, fol. 269r, line 25.
674 Cf. Ṙ. H. Vardanyan, Hayocʿtomarakan ełanakə, p. 40-42.
675 Cf. Ibid., p. 42.
676 Cf. Girkʿ Tʿłtʿocʿ, ed. Y. Izmireancʿ, Tiflis, 1901, p. 99-107.
677 Forhim, see especially W. H. C. Frend, The Rise of the Monophysite Movement. Chapters in the History of the Church in the Fifth and Sixth Centuries, Cambridge, 1972, p. 167-170, p. 174-175, p. 181, p. 188-190, p. 229 and p. 243.
678 Cf. Girkʿ Tʿłtʿocʿ, ed. Y. Izmireancʿ, Tiflis, 1901, p. 101.
679 Cf. Ibid., p. 101.

years 472-475[680].

The three positions concerning the translation into Armenian of Timothy Ailouros' anti-Chalcedonian writing show how complicated actually it is to specify the precise period of time, when such a voluminous work, with very complex contents and with extremely rich patristic and biblical material, like *Contra eos qui dicunt duas naturas* (CPG 5475), was rendered into Armenian and put into circulation in the Armenian Christian literature.

What is certain, is the fact that already in the years 604-607, as we learn it from *Girkʿ Tʿłtʿocʿ*, the work was in circulation in Armenia in an anti-Chalcedonian context, as the correspondence between the locum tetens of the Armenian catholicos Vrtʿanēs Kʿerdoł and the Byzantine-Armenian general Sormēn (about 604) and the correspondence between Vrtʿanēs Kʿerdoł and Movsēs, the Armenian bishop of Cʿurtaw in Georgia (605-607) show[681].

A careful philological comparison of the patristic testimonies contained in that work with the equivalent extant Greek patristic originals, as well as the comparison of the Armenian biblical quotations with their Greek analogues, show that very possibly not one but several translators have worked on the rendering of that complex writing into Armenian. We have in *Contra eos* the same patristic and biblical testimonies quoted by Timothy Aelurus sometimes several times, the Armenian translations of which demonstrate obvious differences as concerns especially the varying equivalents for the same Greek term, one of the best examples being the two shorter quotations from John of Jerusalems' confession of faith cited in the introductory florilegium of Timothy's opus[682] and the whole text of the confession cited in the concluding florilegium of the work[683].

680 Cf. Ṙ. H. Vardanyan, Hayocʿtomarakan ełanakə, p. 41-42. For an opposite view, according to which the letter ascribed to Peter the Fuller by Ṙ. H. Vardanyan is a spurious one and dates from the period of time after 630, reflecting the Christological issues of the monothelitism, see A. Schmidt, "Das armenische "Buch der Briefe", in: Logos, p. 529, n. 67, who notes: "Interpolation? Die Bekenntnisepistel ist formal kein Brief, auch sind der Verfasser (ein Petrus) und der Empfänger (ein Bruder im Glauben) noch nicht identifiziert."

681 Cf. Girkʿ Tʿłtʿocʿ, ed. Y. Izmireancʿ, Tiflis, 1901, p. 90-92 (Sormēn: critical of Dioscorus and Timothy Aelurus as heretics), p. 93-98 (Vrtʿanēs Vadapet, who considers them to be "venerable fathers and teachers full of the Holy Spirit who are counted among the orthodox shepherds and martyrs); and p. 140 (Bishop Movsēs of Cʿurtaw who calls Timothy "blessed").

682 Cf. Widerlegung, p. 28-29 and p. 29-30.

683 Cf. ibid., p. 274-276.

There are three important factors, which bring us to the conclusion that the anti-Chalcedonian work of Timothy Aelurus was translated into old Armenian from its Greek original. These factors are: a) the patristic quotations contained in the anti-Chalcedonian work by Timothy Aelurus. From the comparison of the Armenian and Greek patristic quotations[684], I concluded that the old Armenian text of Timothy's work was translated very literally from Greek rather than from Syriac. The patristic quotations in the old Armenian manuscript of *Contra eos qui dicunt duas naturas* correspond very literally with the Greek equivalent passages edited in *Patrologiae Cursus Completus: Series Graeca* and *Acta Conciliorum Oecumenicorum*; 2) the second factor are the Greek excerpts quoted from Timothy Aelurus' anti-Chalcedonian work in the dogmatic treatises by Emperor Justinian[685] and Eustathius Monachus[686]. I identified them with the corresponding passages in the old Armenian manuscript. The literal correspondence of these passages also shows that the old Armenian text was translated from the Greek original of Timothy Aelurus' work, and 3) the last factor are the biblical quotations from the

684 For such a comparison, see N. Akinyan, Timotʿēos Kuz hay matenagrutʿyan mēǰ, p. 23-25, who collates the Greek and the analogous Armenian texts of the testimony of Bishop Erechtius of Antioch in Pisidia (cf. Widerlegung, p. 276-277, who Timothy Aelurus first put into circulation into the anti-Chalcedonian literature and whose authority as a church father was doubted by later ecclesiastical writers; cf. A. Grillmeier, Th. Hainthaler, Christ in Christian Tradition, vol. 2, part 4, p. 26, n. 81.

685 PG 86, p. 1128 D: φύσιζδὲ Χριστοῦ - σεσάρκωται = Matenadaran Manuscript No. 1958, fol. 208v = Timotheus Aelurus, des Patriarchen von Alexandrien Widerlegung der auf der Synode zu Chalcedon festgesetzter Lehre, ed. K. Ter-Mekertsschian and E. Ter-Minassiantz, Etschmiadzin-Leipzig, 1908, p. 218, 4-5; PG 86, p. 1128 D: PG 86, p. 1129 A: Οὐ γὰρ φύσεως - σῶμα τοῦ Θεοῦ Λόγου = Matenadaran Manuscript No. 1958, fol. 62r-v = Widerlegung, p. 67, 5-13; PG 86, p. 1129 B: Οὔτε φύσις - σῶμα τοῦ Θεοῦ Λόγου = Matenadaran Manuscript No. 1958, fol. 62r-v = Widerlegung, p. 67, 10-13; PG 86, p. 1129 C: Δείξωσιν ἡμῖν Διφυσῖται - εἰ δύναται = Matenadaran Manuscript No. 1958, fol. 44v = Widerlegung, p. 49, 2-4; PG 86, p. 1129 D: Απαγγέλλων εἰς ἀνθρώπους – παντοκράτωρ ὄνομα αὐτῷ = Matenadaran manuscript No. 1958, fol. 231v = Widerlegung, p. 241, 9-11; PG 86, p. 1129 D: Αὐτὸς οὖν δι' ἑαυτοῦ - ἥλιος ἔδυμεσημβρία = Matenadaran Manuscript No. 1958, fol. 231v = Widerlegung, p. 241, 9-10, 12-13; PG 86, p. 1129 D – 1132 A: Ἀλλ' οὐκ ἐδέχετο - τῆς Παρθενίας διαλυθείσης = Matenadaran Manuscript No. 1958, fol. 162r = Widerlegung, p. 173, 5-12.

686 PG 86, p. 904 B: Φύσις δὲ Χριστοῦ - σεσάρκωται ἀτρέπτως =Matenadaran Manuscript No. 1958, fol. 208v = Widerlegung, p. 218, 4-5; PG 86, p. 904 B: Οὐ γὰρ οὐσία τοῦ Χριστοῦ - διὰ τὴν ἡμῶν σωτηρίαν = Matenadaran Manuscript No. 1958, fol. 175v = Widerlegung, p. 185, 32-35; PG 86, p. 904 B-C: Εἰδὲ ὁ Λόγος - ἀνθρωπίνης ἐστὶ φύσεως = Matenadaran Manuscript No. 1958, fol. 75v = Widerlegung, p. 82, 4-7; PG 86, p. 904 C: Δείξωσιν ἡμῖν οἱ Διφυσῖται - ὡς αὐτοὶ λέγουσιν = Matenadaran Manuscript No. 1958, fol. 44v = Widerlegung, p. 49, 2-3. For Eustathius Monachus, see A. di Bernardino, Patrology. The Eastern Fathers from the Council of Chalcedon (451) to John of Damascus (750), Cambridge, 2008, p. 96-97.

Septuagint and the New Testament, which differ from the classical old Armenian Bible translation and literally correspond to the analogous Greek passages in the Septuagint and the New Testament.

ԱՄՓՈՓՈՒՄ

ՈՐՈՇ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԻՄՈԹԵՈՍ ԿՈՒԶԻ (457-477ԹԹ.) ՔԱՂԿԵԴՈՆԻ ԺՈՂՈՎԻ (451Թ.) ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ՝ «ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅԱՆ», ՀԱՅՏՆԻ ՈՐՊԵՍ՝ CONTRA EOS QUI DICUNT DUAS NATURAS (CPG 5475) ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՇՈՒՐՋ

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հոդվածում հակիրճ կերպով ներկայցվում են քսաներորդ դարի առաջին քառորդից մինչև այսօր հայագիտության մեջ Ալեքսանդրիայի պատրիարք Տիմոթեոս Կուզի՝ (457-477թթ.) Քաղկեդոնի ժողովի (451թ.) սահմանումների՝ «Հակաճառություն» կոչվող երկի հունարենից հայերեն (հունաբան հայերեն) թարգմանության թվականի վերաբերյալ տարբեր նշանավոր հայագետների կողմից արծարծված երեք հիմնական տեսակետները, և առաջարկվում երեք հիմնական աղբյուրագիտական փաստարկներ, որոնք հիմնավորում են Կուզի երկի հունարենից բառացի հայերենի թարգմանված լինելու փաստը: Հոդվածում քննարկվում է նաև այն հանգամանքը, որ Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն»-ը բավականին վաղ է տարածում և կիրառություն գտել հայ իրականության մեջ, և որ արդեն VII-րդ դարի սկզբին (604-607թթ.) այն արդեն ընդօրինակվում էր Հայաստանում, ինչի մասին մեզ տեղեկություններ է հաղորդում Ցուրտավի Մովսես եպիսկոպոսի և հայոց կաթողիկոսի տեղապահ՝ Վրթանես Քերթողի նամակագրությունը (604թ.):

Բանալի բառեր՝ *Քաղկեդոնի ժողով (451), Հելլենիստական դպրոց, Դվինի ժողովներ(505 և 555), Տիմոթեոս Էլուրոս, Ֆիլոքսեն Մաբուկեցին, Հայկական եղկեղեցի, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Հովհաննես Մանդակունի, Բաբկեն Որմսեցի, Վրթանես Քերթող, Մորիկ կայսր (582-682):*

РЕЗЮМЕ

НЕКОТОРЫЕ РАЗМЫШЛЕНИЯ О ДАТЕ ПЕРЕВОДА НА АРМЯНСКИЙ ЯЗЫК ТРУДА ТИМОФЕЯ КУЗА (457-477ГГ.) “ОПРОВЕРЖЕНИЕ,, ИЗ ХАЛКЕДОНСКОГО СОБОРА (451Г.), ИЗВЕСТНОГО ЕЩЕ ПОД ИМЕНЕМ CONTRA EOS QUI DICUNT DUAS NATURAS (CPG 5475)

ГРИГОР ГРИГОРЯН

В статье кратко представлены изучение вопросов о труде под названием “Опровержение,, Александрийского патриарха Тимофея Куза (457-477гг.) из Халкедонского собора (451г.) в арменоведении начиная с первой четверти XX века до сегодняшнего дня и об определении с датой перевода с греческого на армянский язык. Со стороны разных известных арменоведов были представлены три основных мнения и предлагалось три основных источниковедческих аргументов, которые обосновывались переведенными фактами определения Куза с греческого на армянский язык. В данной статье автор уведомляет о том, что “Опровержение,, Тимофея Куза довольно рано было распространено и применено в армянской действительности, и что уже в начале VII века (604-607гг.) он уже был воспроизведено в переписе между епископом Мовсесом из Цуртави и викарием католикоса Армении Вртанесом Кертохом.

Ключевые слова: *Совет Халкидонов (451), Эллинистическая школа, Советы Двина (505 и 555), Тимофей Элур, Филоксен Маббугский, Армянская церковь, Мовсес Хоренаци, Лазарь Парпеци, Иоанн Мандакуни, Бабкен Вотмсеци, Вртанес Кертог, Император Морис (582-682).*

ԿԱՌՈՒՑՑՆԵՐ ԵՎ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՆՈՐԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈՍԻՈ ԴԱ ՌԻՎԱ
Բարսելոնայի համալսարանի պրոֆեսոր

Ներածություն

Միջագետքյան ավանդության մեջ արքայական գաղափարախոսության խորհրդանշական կողմն իր արտահայտությունն է գտնում

կոթողային ճարտարապետության մեջ[687]: Հանրային նշանակության կանգուն շենքերն արտացոլում են թագավորության կայունությունը: Մինչդեռ, ճգնաժամի ժամանակ շենքի շինարարությունը դադարում է լինել սոսկ իբրև նախագիծ և վեր է ածվում մարտահրավերի ու քաղաքական հայտարարության: Բռնակալն ինչ-որ կերպ օրինականացնում է իր իշխանությունը, երբ նա իրագործում է շենքի կառուցումն ավարտին հասցնելու կամ վերանորոգելու խնդիրը՝ ի տարբերություն նախորդ արքայի: Բաբելոնյան արքա Նաբոնիդը (Ք.ա. 556-539 թթ.), օրինակ, մեղադրում էր Կուրիգալզու I-ին (Ք.ա. 14-րդ դ-ի առաջին կես), Ասսարհադդոնին (Ք.ա. 681-669 թթ.), Աշշուրբանիպալին (Ք.ա. 669-627 թթ.) և Նաբուգոդոնոսոր II-ին (Ք.ա. 605-562 թթ.) որպես արքաների, ովքեր տաճարներ չեն կառուցել: Առավել հաճախ թիրախավորվում էր Նաբուգոդոնոսորը, քանի որ նրա փառքի երկար ստվերները ակնհայտորեն զայրացնում էին Նաբոնիդին[688]: Ամեն դեպքում կիսավեր տաճարը կամ խարխուլ պարիսպը անկում ապրող երկրի վկայություն են, ուր իշխում էր թույլ և աղքատ տիրակած՝ լքված աստվածների կողմից:

Արքայական արձանագրություններից հայտնի և հնագիտական պեղումներով փաստագրված նորբաբելոնյան դարաշրջանի հասարակական շենքերը և ենթակառուցվածքները տարատեսակ են՝ սկսած տաճարներից, սրբարաններից և զոհարաններից մինչև պալատներ, պաշտպանական ամրություններ, կամուրջներ, ջրանցքներ և ճանապարհներ[689]: Պաշտամունքային և աշխարհիկ կառույցների հստակ բաժանում գոյություն չուներ, քանի որ կրոնը խորությամբ

687 Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան Է. Հովհաննիսյանին՝ այս հատորում հրատարակվելու առաջարկության, և Ե. Գրեկյանին՝ Հայաստանում գտնվելու ընթացքում ինձ ցուցաբերած աջակցության, ինչպես նաև ներկայացված անգլերեն տեքստի հայերեն թարգմանության համար: Սույն հոդվածը 2013 թ-ի նոյեմբերի 27-29-ին Վիեննայում կայացած «Կայսրության լանդշաֆտները. հասարակական կառույցները և աշխատուժի կազմակերպումը հին պետություններում» խորագրով գիտաժողովին ներկայացված զեկույցի ընդարձակ տարբերակն է: Հետազոտությունն իրականացվել է Կատալոնիայի հետազոտական և հետբուհական ուսումնասիրությունների ինստիտուտի (ICREA) ակադեմիական դրամաշնորհի շրջանակներում:

688 H. Schaudig. The Restoration of Temples in the Neo- and Late Babylonian Periods: A Royal Prerogative as the Setting for Political Argument. In M.J. Boda and J. Novotny (eds). From the Foundations to the Crenellations: Essays on Temple Building in the Ancient Near East and Hebrew Bible (AOAT 366). Münster, 2010, pp. 155-161.

689 Նաբոպալասարի և Ներգալ-շարր-ուծուրի արձանագրությունների հրատարակության համար տես R. Da Riva, The inscriptions of Nabopolassar, Amēl-Marduk and Neriglissar (SANER 3), Berlin and Boston, 2013), իսկ Նաբոնիդի տեքստերի համար՝ H. Schaudig, Die Inschriften Nabonids von Babylon und Kyros' des Großen samt den in ihrem Umfeld entstandenen Tendenzschriften. Textausgabe und Grammatik (AOAT

ներթափանցել էր հասարակության մեջ, իսկ կրոնական գործառույթները կարող էին իրականացվել «քաղաքացիական» շենքերում և հակառակը: Կրոնական խորհրդանշանակություն ունեին պալատները. Նաբուգոդոնոսորն իր կառուցած «Հարավային պալատ«-ն անվանում է «մաքուր զոհարան, արքայական սրբավայր և արքայական տաճար», իսկ «Նոր պալատ»-ը բնութագրում որպես «իմ տերունական սրբարան»[690]: Ակնհայտ է, որ պալատը դիտվում էր որպես տաճարին հավասարազոր կառույց: Ինչպես տաճարն է ընկալվում իբրև աստծո տուն, այնպես էլ արքան է բնակվում պալատում: Տաճարների և պալատների խորհրդանշանակությունն ունի բազում ընդհանուր առանձնահատկություններ՝ գտնվելու վայրի անփոխարինելիությունը, այն փաստը, որ այդ կառույցներն ընկալվում էին իբրև կենդանի օրգանիզմներ և կրում էին անուններ. նրանք ուրախանում էին, աղոթում, տառապում և դժբախտ զգում իրենց տիրոջ հետ: «Երբ այդ պատը խարխլվի և դու սկսես վերականգնել այն, այդ նույն կերպ ինչպես ես գտա իմ նախորդ արքայի արձանագրությունը և չփոխեցի դրա տեղը, այդպես էլ դու գտի իմ արձանագրությունը և դիր այն քո արձանագրության հետ»[691]:

Որպես թագավորական իշխանության խորհրդանիշներ, պալատները երաշխավորում էին երկրի միասնությունն ու անվտանգությունը: Շինարար-արքայի կերպարը նորբաբելոնյան կայսերական գաղափարախոսության մեջ կենտրոնական դեր է խաղացել, և արքայի դերը՝ իբրև կառույցների պատվիրատու և կառուցող, գաղափարախոսական մեծ նշանակություն ուներ: Նորբաբելոնյան պաշտոնական միտքը հիմնված էր երկու կարևորագույն, փոխկապակցված ասպեկտների վրա՝ արքայական բարեպաշտություն և արքայական շինարարություն: Աստվածների պաշտամունքն արտահայտվում է տաճարների կառուցապատման և շքեղության մեջ, ինչն իր հերթին ապահովում էր աստվածների բարեհաճությունն արքայի հանդեպ: Աստված օգնում է արքային ճակատամարտում, և ռազմական հաջողությունը հարստություն է բերում երկիր ռազմավարի և

256), Münster, 2001): Նաբուգոդոնոսոր II-ի արքայական արձանագրությունները մասնակիորեն հրատարակվել են Ռ. Դա Ռիվայի կողմից (R. Da Riva , The Twin Inscriptions of Nebuchadnezzar at Brisa (Wadi esh-Sharbin, Lebanon): a Historical and Philological Study (AfO Beiheft 32), Vienna, 2012; նույնի՝ Nebuchadnezzar II's Prism (EŞ 7834): a new edition, Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie 103/2, 2013, pp. 196-229).

690 C35 / 1 II 1ff.

691 R. Da Riva, The inscriptions of Nabopolassar, Amēl-Marduk and Neriglissar, p. 95 (Nabopolassar C32 III 30-33).

տուրքերի տեսքով՝ հարստություն, որն անհրաժեշտ էր արդյունավետ շինարարական ծրագրեր իրականացնելու համար: Բոլոր այս տարրերը (տնտեսություն, ռազմական հաջողություն, կրոն և գաղափարախոսություն) փոխկապակցված են և վճռորոշ՝ արքայական հովանավորությամբ իրականացվող հասարակական շենքերի կառուցման գործում:

Նորբաբելոնյան դարաշրջանը համեմատաբար կարճ ժամանակահատվածում (Ք.ա. 626-539 թթ.) մեզ է թողել մեծ թվով շինություններ և շատ ավելի մեծ թվով տեքստեր, որոնք հաղորդում են այդ կառույցների շինարարության մասին[692]: Այդ բուռն գործունեությունը պատմական, տնտեսական և քաղաքական գործոնների արդյունք էր: Նորբաբելոնյան դարաշրջանի առաջին տասնամյակների ընթացքում (Նաբոպոլասարի իշխանության շրջանը, Ք.ա. 626-605 թթ.) շինարարությունը հրամայական էր դարձել մի երկրում, որտեղ քաղաքներն ավերվել էին երկարատև քաղաքացիական պատերազմի հետևանքով: Նաբոպոլասարի շինարարական ծրագրերի հաջող ընթացքը ցույց տվեց, որ արքան կարող ուժ էր և որ նա վայելում էր աստվածների աջակցությունը: Արքայական հովանավորությամբ կառուցված շենքերի նշանակությունը դուրս է գալիս գաղափարախոսական և կրոնական սահմաններից. շինարարությունը դառնում է իշխող հարստության քաղաքական և տնտեսական ծրագրի հիմնական բնութագիրը: Կառուցումներն ու վերակառուցումները միջագետքյան արքաների մշտական պարտականությունն էին, քանի որ շենքերը կառուցվում էին արևի տակ չորացրած հում աղյուսներով և դիմացկուն չէին: Կառուցվող շենքերի հանդեպ ուշադիր վերաբերմունքը երկրում սոցիալական և քաղաքական կայունության մակարդակի ցուցիչ է, ինչպես մենք կարդում ենք C35 / 1 գլանաձև արձանագրության երկրորդ պարբերության 7-11-րդ տողերում.

«[Պալատը], որը Նաբոպալասարը՝ Բաբելոնի արքան, հայրը, ով ծնեց ինձ, կառուցեց հում աղյուսներով և հաստատեց իր կացարանը նրա ներոսում, դրա հիմքերը թուլացել էին բարձր ջրերի պատճառով, և դարպասներն այդ պալատի ջրածածկ էին եղել Կադինգիրրայի[693] փողոցների հեղեղման պատճառով»:

Մյուս կողմից, նորբաբելոնյան տնտեսության շարունակական աճը և քաղաքային կենտրոնների, հատկապես՝ Բաբելոնի ընդար-

692 R. Da Riva, The Neo-Babylonian Royal Inscriptions: An Introduction (GMTR 4), Münster, 2008, pp. 110-113.

693 Բաբելոնի թաղամասերից մեկը:

ձակումը նշանակում էր, որ քաղաքները պետք է ընդարձակվեին և կարիք էր զգացվելու նոր հասարակական շինությունների: Նաբուգոդոնոսորի ժամանակներից սկսած շինարարական ծրագրերն ամրապնդվեցին աննախադեպ տնտեսական զարգացման և կայսրություն հսկայական հարստության ներհոսքի շնորհիվ: Շենքը դարձավ տարածքային ընդարձակման և կայսերական իշխանության արտահայտության միջոց: Ռազմական արշավանքներում ձեռք բերված ռազմավարն ու հարստությունը սկսեցին կուտակել և ցուցադրել այնպիսի կառույցներում, ինչպիսիք էին Էսագիլան, Եզիդան, զիկկուրատները և Բաբելոնում կառուցված արքայական պալատները: Ինչպես կայսրության սահմաններն էին ընդարձակվում, այնպես էլ՝ պալատի չափերը: Պալատը դարձավ կայսերական իշխանության բարձրագույն խորհրդանիշը, կայսրության մարմնացումը:

Արքայական պալատները Բաբելոն քաղաքում

Նաբուգոդոնոսոր II-ի իշխանության շրջանում Բաբելոնում կային արքայական երկու պալատներ՝ «Հին» կամ «Հարավային պալատ»-ը և «Նոր պալատ»-ը (ներառյալ՝ «Հյուսիսային պալատ»-ը քաղաքի հյուսիսային հատվածում): Իսկ այսպես կոչված «Ամառային պալատ»-ը իրականում պաշտպանական ամրոց էր քաղաքի արտաքին պարսպապատերի համակարգում[694]: Այս բոլոր կառույցները փաստագրված են ինչպես հնագիտական, այնպես էլ՝ գրավոր աղբյուրներով: «Հին» և «Նոր» պալատների ընդարձակումը նորբաբելոնյան շրջանում արտացոլում է. ա) կայսրության տարածքային աճը, բ) արքայի իշխանության աճող ուժը, գ) կայսրության պետական կառույցների հաստատումը Նաբոպալասարի իշխանության և դրանց հետագա զարգացումն ու ամրապնդումը նրա որդու օրոք[695], դ) նորբաբելոնյան տնտեսության աճը[696]:

Բաբելոնի հանրահայտ «Իշթարի դարպաս»-ից դեպի հարավ և արևմուտք ձգվող հատվածում Նաբոպալասարի կողմից կառուցված արքայական պալատը հիշատակվում է Նաբուգոդոնոսորի տեքստերում որպես «Հին» կամ «Կադինգիրրա»-յի պալատ: Այդ պալատը

694 O. Pedersen, Work on a Digital Model of Babylon using Archaeological and Textual Evidence, Mesopotamia 46, 2011, p. 14.

695 R. Da Riva, Nebuchadnezzar II's Prism (EŞ 7834): a new edition, pp. 201-206.

696 M. Jursa (with contributions by Johannes Hackl et al.), Aspects of the economic history of Babylonia in the first millennium BC. Economic geography, economic mentalities, agriculture, the use of money and the problem of economic growth. Veröffentlichungen zur Wirtschaftsgeschichte Babyloniens im 1. Jahrtausend v. Chr. 4. (AOAT 377), Münster, 2010, pp. 661-669.

հայտնի է որպես «ժողովրդին զարմացնող տուն»[697]: Նաբոպալասարի կողմից «Հարավային պալատ»-ի կառուցումը հաճախ է հիշատակվում Նաբուգոդոնոսորի արձանագրություններում[698], քանի որ արքան այդ պալատն ընդլայնել էր և վերակառուցել իր գահակալության առաջին տարիների ընթացքում, մինչև որ որոշեց կառուցել նորը: Անշուշտ, «Հին պալատ»-ի ընդլայնումը համարվում է Նաբուգոդոնոսորի գահակալության սկզբնական հատվածում արքայի իրականացրած ճարտարապետական առանցքային ձեռքբերումներից մեկը, նախքան հետազոտողների կողմից Hauptburg կամ Nordburg անվանված համալիրի կառուցումը:

«Հյուսիսային պալատ»-ի շինարարությունը Նաբուգոդոնոսորը սկսեց իր գահակալության 16-19-րդ տարիների միջև ընկած հատվածում, և հայտնի է, որ Ք.ա. 576 թ-ին (գահակալության 29-րդ տարին) այն դեռևս չէր ավարտվել[699]: Այսպես կոչված Hauptburg-ի շինարարությունը մեզ հասած բազմաթիվ սեպագիր տեքստերի հիմնական թեման է: Դրա մասին է նշվում նաև Նաբուգոդոնոսորի արձանագրությունների ներածական բաժիններում: Պալատի կառուցումը երկարատև, բարդ ծրագիր էր: Հուշարձանը ուսումնասիրած արշավախումբը պարզել էր, որ շինարարության ընթացքում տեղ են գտել բազմաթիվ փոփոխություններ, կարծես, արքան և ճարտարապետները բազմիցս փոփոխել են նախնական հատակագիծը[700]:

Նոր պալատի կառուցման ընթացքում բաբելոնյան արքան, հավանաբար, ապրում էր «Հին պալատ»-ում, որտեղ և տեղի էին ունենում պաշտոնական ընդունելությունները: Առկա չէ որևէ տվյալ, որը կհուշեր, որ «Հին պալատ»-ը դադարել է գործածվելուց կամ լքվել է[701]:

Պալատների կառուցմանը վերաբերող տեքստերում տեղանքը սովորաբար մանրամասն նկարագրված է՝ հաշվի առնելով կառույցի

697 C35 II 3.

698 Տես Da Riva, Neo-Babylonian Royal Inscriptions: An Introduction, B12, B16, C011, C29 և C34 տեքստերը: Պալատում իրականացված պեղումների համար տես R. Koldewey, Die Königsburgen von Babylon: I Die Südburg. Leipzig, 1931. «Հարավային պալատ»-ից հայտնաբերվել են տնտեսական բնույթի մի խումբ տեքստեր, որոնք հայտնի են որպես «պալատական դիվան» և թվագրվում են Նաբուգոդոնոսոր II-ի գահակալության շրջանով: Տես Da Riva 2008, 72. «Հարավային պալատ»-ին վերաբերող այլ տեքստերի համար տես R. Koldewey, նշվ. աշխ., էջ 29-32:

699 K. Kleber, Tempel und Palast. Die Beziehungen zwischen dem König und dem Eanna-Tempel im spätbabylonischen Uruk. Veröffentlichungen zur Wirtschaftsgeschichte Babyloniens im 1. Jahrtausend v. Chr. 3. (AOAT 358), Münster, 2008, S. 159-161.

700 R. Koldewey, Die Königsburgen von Babylon: II Die Hauptburg, Leipzig, 1932, S. 30-31; նույնի՝ Das wieder erstehende Babylon. Fünfte, überarbeitete und erweiterte Auflage, Hrsg. v. B. Hrouda.,München, 1990, S. 175-181.

701 R. Koldewey, Das wieder erstehende Babylon, S. 120-131.

առանձնահատուկ նշանակությունը որպես թագավորության կենտրոն: «Հին պալատ»-ին վերաբերող մի տեքստում ասվում է.

«Բաբելոնում՝ իմ նախընտրած քաղաքում, որը ես սիրում եմ, (…) ես կառուցեցի մի պալատ, որը կոչվում է «ժողովրդին զարմացնող տուն», երկրի հանգույց, մաքուր սրբարան, իմ արքայական տաճար: Կադինգիրրայում, որը գտնվում է Բաբելոնում՝ Իմգուր-Էնլիլից մինչև Լիբիլ-Խագալլա՝ արևելքի ջրանցքը, և Եփրատի ափերից մինչև Ազ-Իբուր-շաբու՝ Կադինգիրրայի փողոցը»[702]:

Նաբուգոդոնոսորն արդարացնում էր «Նոր պալատ»-ի կառուցումն այն պատճառով, որ «Հին պալատ»-ը չափազանց փոքր էր համարում իր համար, իսկ այն ընդարձակել հնարավոր չէր առանց քաղաքի հատակագծի փոփոխության, ինչը կարող էր համարվել անհարգալից վերաբերմունք բաբելոնյան գերագույն աստված Մարդուկի և նրա քաղաքի հանդեպ.

«Բաբելոնի իմ նստավայրը հարիր չէր իմ անձի արքայական կարգավիճակի համար: Մարդուկ աստծո՝ իմ տիրոջ հանդեպ իմ սրտում եղած վախի պատճառով, Բաբելոնում՝ իր ամրացված քաղաքում, իմ արքայական նստավայրի ընդարձակման համար ես չեմ փոխել փողոցի ուղղությունը, չեմ տեղափոխել նրա սրբարանը, և ոչ էլ պատնեշել եմ ոռոգիչ ջրանցքը»[703]:

Քանի որ Հին պալատից ճիշտ դեպի հարավ կային մի քանի տաճարներ, հնարավոր չէր պալատն ընդարձակել այդ ուղղությամբ: Պալատը հնարավոր չէր ընդարձակել նաև դեպի հյուսիս՝ ուր ձգվում էին ներքին քաղաքի կրկնակի պարիսպները: Այն կարող էր ընդարձակվել միայն դեպի արևելքից, քանի որ Արախթու-ջրանցքը եզրափակում էր պալատն արևմուտքից, բայց դա կբերեր Իշթարի դարպասներ տանող «Շքերթների ճանապարհ»-ի աղավաղմանը[704]:

«Նոր պալատ»-ի կառուցման համար արքան ընտրեց բոլորովին այլ վայր՝ քաղաքի կրկնապարսպի շրջագծից դուրս: Աշխատանքը բարդ էր, և նախքան պալատի կառուցումը անհրաժեշտ էր փորել երկու խանդակ, որոնք հետագայում լցվելու էին Եփրատի ջրերով: Ամրապարիսպ կառույցն իր ճարտարապետությամբ և դիրքով՝ քաղաքային պարիսպներից դուրս, Նաբուգոդոնոսորը ծրագրում էր

702 C35/1 II 1-6
703 ST VIII 27ff.
704 Բաբելոնի քարտեզը կարելի է գտնել I.L Finkel and M.J. Seymour (eds.), Babylon: Myth and Reality. Oxford, 2009 աշխատանքում (էջ 40): Քարտեզի հատակագծի և զբաղեցրած տարածքի համար տես O. Pedersén, Work on a Digital Model of Babylon using Archaeological and Textual Evidence, pp. 9-22.

ծառայեցնել քաղաքի պաշտպանությանը՝ «կանխելու համար Իմգուր-Էնլիլին մոտեցող պատերազմական նետը»[705]: Բայց առավել կարևոր էր, որ երկու պալատներն էլ գտվում էին Բաբելոնում՝ կայսրության մայրաքաղաքում ու բաբելացիներին հայտնի աշխարհի կենտրոնում:

Շինարարական գործընթացի զարմանալի առանձնահատկությունը պալատի կառուցման արագությունն էր՝ 15 օր «Նոր պալատ»-ի համար, ինչպես հայտնում են արձանագրությունները[706]: Այս պնդումը հանդիպում է նաև Բերոսոսի մոտ, որը, հավանաբար, օգտագործել է նման մի սկզբնաղբյուր.

«(140) Սակայն, այն տևեց ընդամենը տասնհինգ օր՝ կառուցելու համար, չնայած այն չափազանց մեծ էր և հիանալի կերպով զարդարված»[707]:

Նշված տասնհինգ օրը, անկասկած, արտացոլում է շինարարության արագությունը, իսկ իրականում այն կարող էր տևել առնվազն տասը տարի:

Բաբելոնյան արքայական արձանագրություններում ընդգծվում են պալատի չափը և շքեղությունը, շենքի նշանակությունը որպես արքայական նստավայր.

«Ես (...) հասա ստորգետնյա ջրերին, (...) ես այն շատ բարձր կառուցեցի՝ ինչպես լեռը, բիտումով և թրծած աղյուսներով, հզոր մայրու գերաններով ես ծածկեցի տանիքը (...): Մայրու փայտից դարպասներ դրեցի՝ բրոնզե ծածկով ... (...): Ես դարպասների շեմը պատեցի սալաքարերով ... (...), ես նրա ներսում կուտակեցի արծաթ, ոսկի, թանկարժեք քարեր, անսահման քանակությամբ արժեքավոր ամեն ինչ, ապրանքներ և ունեցվածք և փառքի խորհրդանիշներ: Պալատի ներսը ես լցրեցի հերոսությամբ, փառքով և արքայական գանձերով»[708]:

Տեքստերը նաև արձանագրում են «Հին պալատ»-ում կատարված աշխատանքի մասին, որն ընդլայնվել և վերակառուցվել է «Նոր

705 ST VIII 42ff.
706 ST VIII 64f.
707 G.P. Verbrugghe and J.M. Wickersham, Berossos and Manetho, Introduced and Translated: Native Traditions in Ancient Mesopotamia and Egypt. Ann Arbor, 1996, p. 59. Տես նաև J. Dillery, Berossos' Narrative of Nabopolassar and Nebuchadnezzar II from Josephus, In J. Haubold et al. (eds.), The World of Berossos. Proceedings of the 4th International Colloquium on "The Ancient Near East between Classical and Ancient Oriental Traditions", Hatfield College, Durham 7th-9th July 2010" (CLeO 5), Wiesbaden, pp. 87-88.
708 C35 / 1 II 13ff.

պալատ»-ի հետ գրեթե միաժամանակ: «Հին պալատ»-ը նույնքան վեհաշուք էր, որքան և նորը. տեքստերը նշում են պալատի կոթողային բնույթի, կառույցի շքեղության և այն մասին, որ պալատը կառուցելու և զարդարելու համար անհրաժեշտ շատ դետալներ բերվել են հեռավոր առևտրի միջոցով կամ ստացվել են որպես տուրք (ոսկի, արծաթ և բրոնզ, քարեր, թանկարժեք քարեր, փղոսկր, փայտանյութ և այլն).

«Ես վերակառուցեցի իմ հոր պալատը և ստեղծեցի արքայական նստավայր …: Ինչպես լեռ, ես շրջապատեցի այն հզոր պարիսպներով՝ կառուցված բիտումից և թրծած աղյուսներից: (…) Ոչ մի չար և ոչ էլ անարդար մարդ չի մտնի այնտեղ»[709]:

«Ամառային պալատ»-ի կառուցումը քաղաքի արտաքին շրջապարսպի հյուսիս-արևելյան անկյունում՝ Բաբիլ բլրի վրա, տեքստերում ներկայացված է որպես «Հին պալատ»-ի պատճեն: Իր դիրքի շնորհիվ այն նկարագրվում է որպես քաղաքի պաշտպանունակության ամրապնդման կարևոր բաղադրիչ.

«Ես անվանեցի պալատը «Երկար ապրի Նաբուգոդոնոսորը, թող որ Էսագիլան լիացնողը հասնի խորը ծերության» անունով: Ես հրամայեցի, որ չարիքի և ապստամբության նետերը հեռու պահվեն Կադինգիրրայի պատերի շրջակայքից, ես ամրացրեցի Բաբելոն քաղաքը ինչպես լեռ, ես ամրացրեցի Եսագիլայի պաշտպանությունը և Բաբելոնը հաստատեցի որպես ապավեն»[710]:

Պալատը որպես կայսրության փոխաբերական կենտրոն. աշխատանքային պարիսակը

Նորբաբելոնյան արքայական արձանագրությունները հաղորդում են, որ ենթակա բնակչության հարկերն ու տուրքերը ստացվել են պալատում.

«Օ՛, Մարդուկ, երկրների տեր, լսիր իմ խոսքերը. «Թող ես վայելեմ այն պալատը, որը ես եմ կառուցել: Թող ես հասնեմ խորը ծերության նրա մեջ՝ Բաբելոնում: Թող ես բավարարվեմ՝ հասնելով խորը ծերության: Թող ես նրա մեջ ստանամ ողջ բնակելի աշխարհի երկրների արքաների ընծաները: Թող իմ սերունդը հավիտյան իշխի սևագլուխների (իմա՝ «մարդկության») վրա»[711]:

Պալատը, որպես արքայական նստավայր, առանձնահատուկ

709 C35 II 39ff.
710 C35 / 1 III 14-34.
711 C34 III 45-59.

նշանակություն ուներ որպես կայսրության կենտրոն և նրա միասնության խորհրդանիշ. «պալատը, իմ արքայական կացարանը, բազմամբոխ ժողովուրդների հանգույցը, ուրախության և տոնախմբության բնակավայրը, որտեղ հպարտներն են ստիպված հնազանդվում»[712], ինչպես նաև մի վայր, որտեղ կայացվեցում են քաղաքական որոշումներ և իշխանության հետ կապված կրոնական արարողություններ. «Ես ազդարարեցի արքայական [ծիսակատարությունների] և տերունական տոնակատարությունների (մասին) նրա (իմա՝ նորակառույց պալատի) [ներսում]»[713]:

Պալատի կառուցումը դիտվում է իբրև շինարարական ծրագրի գագաթնակետ՝ ուղղված փառաբանելու Մարդուկ աստծուն և Բաբելոնի մյուս աստվածներին: Այս առումով առավել բնութագրական է Բրիսայի արձանագրության հետևյալ հատվածը.

«Ես մտադիր եմ վերականգնել աստվածների և աստվածուհիների պաշտամունքային կենտրոնները, որի մասին մեծ տեր Մարդուկն է հուշել իմ սրտին …: Աստվածների և աստվածուհիների պաշտամունքային կենտրոնների վերանորոգմանը զուգահեռ ես սկսեցի Բաբելոնում կառուցել մի պալատ, իմ արքայական կացարանը: Իմ տիրոջ՝ մեծ տեր Մարդուկի և իմ երկրի մեծ աստվածների հրամանով պալատը՝ ժողովուրդներին զարմացնելու տունը, մաքուր սրբարանը, իմ արքայական աղոթատեղին, ես կառուցեցի Կադինգիրրայում, որը Բաբելոնում է: (Ես արեցի) այն, ինչը որևէ նախորդ արքա չէր արել: Ես գցեցի նրա հիմքերն ամրակառույց (այնքան խորը), որքան Անդրաշխարն էր, լայնածավալ աշխարհի եզրերին, ստորգետնյա ջրերի մակարդակին: Ես կառուցեցի այն բարձր՝ ինչպես լեռը, բիտումով [և թրծած աղյուսով: Ես գցեցի] նրա տանիքին [Լիբանանից բերված հզոր] մայրենու գերաններ …[714]:

Տաճարները և կայսրության այլ կառույցներ պետք է տրամադրեին աշխատուժ, շինարարական նյութեր և այլ միջոցներ՝ կառուցելու այնպիսի հասարակական շինություններ, ինչպիսիք էին «Նոր պալատը»-ը, «Հարավային պալատ»-ը, զիկկուրատները, քաղաքային պարիսպները և ջրանցքները: Տեղական կամ հպատակ ժողովուրդների մակարդակով գանձումների կազմակերպումը, լայնածավալ շինարարական ծրագրերին աշխատուժի տրամադրումը լավագույնս

712 C34 III 27-31.
713 Prism v * 7'-10'.
714 WBC VIII 41-75.

արձանագրված է վարչական տեքստերում[715], հատկապես՝ Ուրակ քաղաքի Էաննայի և Սիպպար քաղաքի Էբաբբարի տաճարների դիվաններում[716]:

Լավագույնս վկայված շինարարական ծրագիրը «Նոր պալատ»-ի կառուցումն էր: Դրա շինարարությունը կարելի է ուսումնասիրել օգտագործելով Էաննայի դիվանի մի խումբ տնտեսական տեքստեր, որոնք մանրամասն նկարագրում են այդ աշխատանքների կազմակերպումը: Այդ տեքստերից մենք իմանում ենք, որ ոչ միայն Էաննայի տաճարը, այլև՝ այսպես կոչված Մերձծովյան երկիրը պետք է մասնակցեր այդ աշխատանքներին: Ասորեստանյան պետական դիվաններում և ասորեստանյան արքա Սարգոն II-ի (Ք.ա. 721-705 թթ.) շրջանի առօրյա նամակագրության օրինակներում առկա տվյալները վկայում են, որ արքայի կողմից հիմնադրված Դուր-Շարրուկինը կառուցվել է աշխատանքային պարհակ կատարող մարդկանց ուժերով, ընդ որում, պալատի որոշակի հատվածի կառուցումը դրված էր կոնկրետ նահանգի վրա: Նույն կերպ և «Նոր պալատ»-ի կառուցումը բաժանված էր տարբեր հատվածների, որոնց շինարարությունը պետք է իրականացվեր որոշակի ինստիտուտների, նահանգների կամ քաղաքների կողմից՝ դրանց վրա դրված աշխատանքային պարհակների շրջանակներում[717]: Այլ տեքստեր, ինչպիսիք են Նաբուգոդոնոսորի զիկկուրատի C41 և C041 անվանված գլանները և Նաբուդոնոսորի «Պրիզմա»-յի արձանագրությունը, հայտնում են, որ նահանգների վրա դրված էին աշխատանքային պարհակներ՝ իրականացնելու հասարակական տարբեր կառույցների և մասնավորապես՝ պալատների և զիկկուրատների կառուցումը: Այդ տեքստերը շինարարական արձանագրություններ են և ոչ թե վարչական տեքստեր, հետևաբար՝ դրանք չեն պարունակում էական մանրամասներ իրականացված աշխատանքների մասին և պարզապես մատնանշում են կայսրության տարածքը՝ ի դեմս տեքստերում հիշատակված նահանգների և հպատակ երկրների.

715 P.-A. Beaulieu, Eanna's Contribution to the Construction of the North-Palace at Babylon. In H.D Baker and M. Jursa (eds), Approaching the Babylonian Economy (AOAT 330), Münster, 2005, pp. 45-74; M. Jursa, Aspects of the economic history of Babylonia in the first millennium BC. Economic geography, economic mentalities, agriculture, the use of money and the problem of economic growth, pp. 661-669; C. Waerzeggers, The Ezida Temple of Borsippa. Priesthood, Cult, Archives (Achaemenid History 15), Leiden, 2010, pp. 337-344.

716 Այս խնդրի քննարկման համար մանրամասն տես P.-A. Beaulieu (նշվ. աշխ.), K. Kleber (նշվ. աշխ.) և M. Jursa (նշվ. աշխ.):

717 P.-A. Beaulieu, նշվ. աշխ., էջ 50 և հաջորդիվ:

«(…) Էտեմենանին կառուցելու համար ես դրեցի նրանց վրա tupšikku-զամբյուղը՝ Ուրը, Ուրուկը, Լարսան, Էրիդուն, Քուլլաբը, Նեմեդ-[Լագուդան], Ուգար-[Սինը]: Ամբողջ [Ստորին Ծովի երկրները]՝ վերից վար, Նիպպուրը, Իսինը, Լարակը, [Դիլբաթը, Մարադը], Պուկուդուն, Բիթ-[Դակկուրին], Բիթ-Ամուկկանին, Բիթ-[Շիլանին], Բիրա[թուն], Դերը, Ագադը, [Դուր-Շարրուկինը], Արրափխան, Լախի[րուն, …], ողջ Աք[քադը] և Ասորեստանը, Գետից անդին ընկած երկրի արքաները, Խաթթիի նահանգապետերը՝ [Վերին Ծո]վից մինչև [Ստորին Ծ]ով, Շումերը և Աքքադը, Ասորեստանը, նր[անք բոլորը], Վերին Ծովի կենտրոնում ընկած հեռավոր երկրների արքաները. Ստորին Ծովի կենտրոնում ընկած հեռավոր երկրների արքաները, Խաթթիի կառավարիչները, Նեբերթի-Եփրատը՝ մինչև արևամուտ, որոնց վրա ես իշխում եմ իմ տիրոջ՝ Մարդուկ աստծո խոսքով (…)[718]:

Ստամբուլի թանգարանում պահվող և «Hofkalender» անունով հայտնի է արձանագրությունը (նկար 1)[719] պարունակում է այն պաշտոնյաների ցանկը, ովքեր մասնակցել են «Հարավային» (կամ «Հին») պալատի կառուցմանը: Տեքստում նշված անձանց կարելի է բաժանել մի քանի խմբի՝ պալատական պաշտոնյաներ, նահանգապետեր և ցեղային կառավարիչներ, բաբելոնյան քաղաքներում պաշտոնավարող պաշտոնյաներ: Այս երեք խմբերը ներկայացնում են այն երեք հիմնական գոտիները, որոնցից կազմված էր Բաբելոնյան կայսրությունը, և հետաքրքիր է նշել, որ այստեղ թվարկված տեղանունները տրված են այն նույն հաջորդականությամբ, ինչպես որ վերը նշված C1 և C041 տեքստերում է:

Փոխաբերումից անդին. Գահի հանդեպ պարտավորությունները և համապետական նշանակության շենքերի կառուցումը

Վերը նշված պաշտոնյաներից և ոչ մեկը աղբյուրներում չի հիշատակվում լոկ այն պատճառով, որ նրանք պատկանում էին կայսերական վարչակազմին կամ պալատի բարձրաստիճան ներկայացուցիչներ էին: Տեքստը չպետք է ընկալվի որպես կայսերական կամ տեղական պաշտոնյաների պարզ ցուցակ, այլ որպես արքայական արձանագրություն, որը ներառում է նաև կայսրության վարչական կառուցվածքը ներկայացնող անձանց և երկրների/նահանգների

718 M. Da Riva, The inscriptions of Nabopolassar, Amēl-Marduk and Neriglissar, էջ 199-201 (C41 85 * -122 *):

719 IAM 7834 (M. Da Riva, Nebuchadnezzar II's Prism (EŞ 7834): a new edition, էջ 196-229).

ցանկը: Նմանաբնույթ տեքստերը նորբաբելոնյան դարաշրջանի համար ամենևին էլ անսովոր չէին և «Hofkalender»-ում նշված ցանկերը պետք է դիտարկել նաև այլ տեքստերի տվյալների լույսի ներքո: Պաշտոնյաների, պետական և տաճարային կառույցների, նահանգների և հպատակ երկրների անուններով ցուցակները հայտնվում են շինարարական բնույթի արձանագրություններում այն պատճառով, որ նրանք կատարել են աշխատանքային պարհակներ՝ համապետական նշանակության շենքերի կառուցման ժամանակ.

«Կառուցելու համար պալատը՝ ժողովուրդներին զարմացնելու տունը, իմ արքայական կացարանը, ես տվեցի նրանց դույլեր և ես ստիպեցի նրանց լծվելու պատերը կառուցելու գործին (...), աշխատանքային պարհակներն իրականացնելու համար ես նշանակեցի իմ պաշտոնյաներին (հետևում են ցուցակները)»[720]:

Այս առումով «Պրիզմա»-յի արձանագրությունը բացառիկ չէ: Այլ տեքստեր ևս ունեն նմանատիպ, թեև՝ ավելի քիչ տեղեկատվություն պարունակող անձնանունների և տեղանունների ցուցակներ: Ավելի վաղ շրջանի համար զուգահեռներ ենք գտնում նորասորեստանյան որոշ տեքստերում և Նաբոպոլասարի շինարարական արձանագրություններում: Նորբաբելոնյան արձանագրություններից հայտնի որոշ շինարարական նախագծեր կարծես թե առանձնահատուկ նշանակություն ունեին քաղաքական ծրագրերում: Զիկկուրատների, քաղաքների, պալատների և ընդհանուր բարեկեցության հանրային աշխատանքների (օրինակ՝ գետերի և ջրանցքների հունը փոխելու կամ մաքրելու ծրագրեր) շինարարության մասին հայտնող արձանագրությունները հստակ մատնանշում են բաբելոնյան բնակչության մասնակցությունը որպես աշխատուժ: Այս տեքստերը օգնում են նաև հստակեցնելու հավաքագրումների չափը, ինչպես նաև այն քաղաքներն ու շրջանները, որտեղից հավաքագրումը տեղի է ունեցել: Բնութագրական օրինակ են Բաբելոնի ներքին պարսպապատի վերակառուցման և քաղաքի տաճարներից մի քանիսի շինարարության կամ վերանորոգումների մասին հայտնող Նաբոպոլասարի արձանագրությունները: Իմգուր-Էնլիլի արձանագիր գլանում[721] պարսպապատի վերակառուցման համար կանչված աշխատուժը հավաքվել էր ամբողջ երկրից.

«(Ինչ վերաբերում է) Իմգուր-Էնլիլին՝ Բաբելոնի մեծ պարսպին,

720 M. Da Riva, նշվ. աշխ., էջ 211 (III 28'-34').
721 C11 (M. Da Riva, The inscriptions of Nabopolassar, Amēl-Marduk and Neriglissar, էջ 44-54).

որը խարխլվել էր և փլուզվել նախքան իմ գահակալությունը, ես ամրապես գցեցի դրա հիմքերը հնի վրա: Ես նորից կառուցեցի այն իմ երկրի աշխատողների ուժերով (...)»[722]:

Այլ արձանագրություններում աշխատուժի ծագումը մանրամասնորեն ներկայացված է. Օրինակ, Բաբելոնում գտնվող Նինուրտա աստծո Էխուրսագթիլլայի տաճարում իրականացված աշխատանքներին վերաբերող տեքստում[723] նշվում է, որ արքան կանչել է Էնլիլի, Շամաշի և Մարդուկի աշխատողներին, որոնց ստիպել է զամբյուղ կրել և ավարտին հասցնել տաճարի կառուցումը[724]: Նշված երեք աստվածություններին «պատկանող» աշխատուժի հիշատակումների կարելի է հանդիպել նաև այլ արձանագրություններում (նկար 2-3): Ավելին, մի քանի այլ տեքստերում հիշատակվում են նաև աշխատուժի այլ խմբեր՝ «հյուսիսի» և «հարավի» երկրներից:

Էնլիլի, Շամաշի և Մարդուկի աշխատողների մասին հիշատակումները ամենայն հավանականությամբ վերաբերում են Բաբելոնում, Նիպպուրում, Սիպարարում, թերևս նաև Լարսայում գտնվող այդ աստվածությունների գլխավոր տաճարների հետ կապված աշխատուժին (Էկուր, Էբաբբար, Էսագիլ ևն): Ինչպես երևում է, պետությունը մեծ ուշադրություն էր հատկացնում տաճարների, քաղաքների և տեղական կառավարման մարմինների հաշվետվությունները պահելուն՝ դրանց հիման վրա տվյալ միավորի հնարավորությունները ճիշտ հաշվարկելու նպատակով:

Նորբաբելոնյան արքայական արձանագրություններում հանրային շինարարական նախագծերը ներկայացվում են որպես կարևորագույն քաղաքական ձեռքբերումներ: Արքայական պալատի կառուցումը նորբաբելոնյան տիրակալի համար ամենակարևոր շինարարական նախագիծն էր: Այն ոչ միայն ներկայացնում էր միապետի և նրա ընտանիքի կացարանը որպես զուտ ֆիզիկական կառույց կամ արքայական կեցավայր, բայց այն նաև կայսրության միասնության արտահայտությունն է և համաշխարհային իշխանության հայտարարությունը: Արքայական պալատների կառուցման հետ կապված արձանագրությունների ամփոփիչ հատվածներում հաճախակի է հիշատակվում Մարդուկ աստվածն իբրև շինարարության, այն նախաձեռնած արքայի և նրա հարստության պաշտպան.

«Քո հրամանով, ով բարեգութ Մարդուկ, թող ես վայելել իմ կա-

722 C11 / A2 5-19.
723 Da Riva, նշվ. աշխ., էջ 54-63:
724 C12 / 1 25-27.

Evidentemente, para la plena realización de los derechos establecidos en la parte X de la Convención, es necesario concluir acuerdos bilaterales. Sin embargo, estos derechos conllevan la responsabilidad de adoptar las medidas necesarias para ponerlos en práctica. Además del derecho de acceso al mar para los Estados sin litoral, la Convención establece también una serie de derechos, que en tiempos anteriores no habían sido objeto de los debates. Aquí nos referimos al derecho de paso inocente por el mar territorial (artículo 17), al derecho a participar en la explotación de recursos vivos sólo en las zonas económicas exclusivas de los Estados ribereños desarrollados de la misma subregión o región (artículo 69), al derecho a la libertad de los mares (artículo 87), al derecho de navegación (artículo. 90), al derecho a utilizar los recursos de los fondos marinos internacionales (artículo. 141), al derecho a la investigación científica marina (artículos 254, 256). Algunas disposiciones de la Convención también prevén a facilitar tecnología marina a los Estados sin litoral.

4. CONSIDERACIONES FINALES

Con todo lo anterior, podemos señalar que la Convención de las Naciones Unidas sobre el Derecho del Mar de 1982 es el vértice del

864 Artículo 125 de la Convención de las Naciones Unidas sobre el Derecho del Mar.

proceso de formación y de regulación de los derechos de los Estados sin litoral, comenzado en la Conferencia de Barcelona, con el reconocimiento de tener pabellón. También podemos observar que, tal vez, el principal obstáculo de los instrumentos jurídicos adoptados a lo largo de este proceso fue la condición de reciprocidad para el reconocimiento de derechos. Una condición que, evidentemente, no se puede cumplir, teniendo en cuenta la situación específica de los países sin litoral. En este sentido, podemos decir con la Convención de las Naciones Unidas sobre el Derecho del Mar de 1982, sin prejuicio de la soberanía de los Estados ribereños, responde a los intereses de los Estados sin litoral, sobre el principio de la igualdad soberana de los Estados.

ԱՄՓՈՓՈՒՄ

Միջազգային ծովային իրավունքը ուսումնասիրում է միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը ծովային տարածքների իրավական ռեժիմները կարգավորելու նպատակով: Այն կարգավորում է պետությունների եւ այլ դերակատարների հարաբերությունները ծովերում և օվկիանոսներում ինչպես նաև դրանց ռեսուրսների օգտագործման հետ կապված հարցերը: Սակայն համեմատաբար շատ երկրների աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս նրանց մուտք ունենալ դեպի ծով, և հնարավորություն ունենալ օգտվելու այդ ռեսուրսներից: Այս աշխատանքը նվիրված է ծով ելք չունեցող երկրների իրավունքների միջազգային իրավական կարգավորման զարգացման հարցերին միջազգային ծովային իրավունքում:

ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՍԱՀԱԿ ՍԱՄՍՈՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՀՊՄՀ իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս,
իրավաբ. գիտ. թեկ.,

Բանալի բառեր՝ *հանրային ծառայություն, համայնքային ծառայություն, թափուր պաշտոն, մրցույթ, քաղաքացիության ցենզ,*

փախստականի կարգավիճակ ունեցող անձ:

Վարչական մարմինների բնականոն գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ է, որ դրանք ունենան հատուկ պատրաստված արհեստավարժ ծառայողական անձնակազմ: Ըստ այդմ՝ հանրային (համայնքային) ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու կարգն ու պայմանները կարգավորվում են օրենքներով և իրավական այլ ակտերով՝ հաշվի առնելով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կարգավիճակի առանձնահատկությունները:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի[865] (այսուհետ նաև՝ Օրենք) 11 հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողները՝ (ընդգծումը մերն է Ս. Մ.) անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից: Պետք է նշենք, որ Օրենքը միակն է, որն ամրագրում է ծառայության հավասար մատչելիության սկզբունքներ և չափանիշներ ոչ միայն ՀՀ քաղաքացիների, այլև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց համար: Հանրային ծառայության մաս կազմող ծառայություններից և ոչ մեկում նման բացառություն սահմանված չէ, և որպես հանրային ծառայության ընդունվելու պարտադիր պայման նախատեսվում է միայն ՀՀ քաղաքացիություն ունենալը:

Իրավամբ հարց է ծագում. թե արդյոք իրավացի՞ է փախստականներին օժտել համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքով:

ՀՀ Սահմանադրության 49[866] հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք*[867]*:*

---

865 Տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր (այսուհետ՝ ՊՏ) 2005. 01. 26/7(379):

866 Այս դեպքում նկատի ունենք 2015 թվականի դեկտեմբերի 6-ին հանրաքվեի միջոցով ընդունված և 2015 թվականի դեկտեմբերի 22-ից գործող Հիմնական օրենքը: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում:

867 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեի միջոցով ընդունված և 2005 թվականի դեկտեմբերի 6-ից գործող ՀՀ Սահմանադրության 30.2 հոդվածը խնդրո առարկա հարաբերությունը կարգավորում էր գրեթե նույն կերպ՝ քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք: Տե՛ս ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ

Վերոնշյալ նորմերի տառացի մեկնաբանության և համակարգային վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ միայն ՀՀ քաղաքացիները կարող են զբաղեցնել հանրային (համայնքային) ծառայության պաշտոն:

Այդ դեպքում ինչպես վարվել փախստականի կարգավիճակ ունեցող և միաժամանակ որևէ համայնքում բնակվող անձանց հետ: Չէ՞ որ ՀՀ Սահմանադրության «Տեղական ինքնակառավարումը» գլխում շեշտվում է «բնակիչ» (հոդվածներ 179, 180, 183) հասկացությունը: Ընդ որում, Սահմանադրության համաձայն՝ տեղական ինքնակառավարման իրավունքը պատկանում է համայնքին, այսինքն՝ տվյալ բնակավայրի բնակչության հանրությանը[868]:

Այսպիսով, «տեղական ինքնակառավարումը» և «համայնք» հասկացությունները փոխպայմանավորված են: Համայնքը նույն բնակավայրում ապրող բնակչության հանրություն է: Հետևաբար, նույն բնակավայրում ապրող բնակչության կողմից իր սեփականությունը կառավարելը և տնօրինելը, համայնքային նշանակության, ինչպես նաև իրենց պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ հարցերի լուծումը կազմում է տեղական ինքնակառավարման բովանդակությունը: Տեղական ինքնակառավարման եվրոպական պրակտիկան նույնպես վկայում է այդ հանգամանքի կարևորության մասին:

Նման մոտեցումը բխում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի ՍԴՈ-803 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման տրամաբանությունից, որում մասնավորապես շեշտվել է, *որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի բնակիչն է մուծում տեղական հարկեր ու տուրքեր, մասնակցում համայնքային սեփականության ձևավորմանը, ուստի վերջինս էլ իրավունք ունի մասնակցելու համայնքային գործերի կառավարմանը[869]:* Կարծում ենք՝ վերոգրյալի իրականացման ձևերից մեկն էլ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք վերապահելն է:

Ելնելով վերոշարադրյալից, կարծում ենք, որ չնայած հանրային ծառայության անցնելու իրավունքը պատկանում է ՀՀ քաղաքացիներին (49 հոդված), այնուամենայնիվ, նշված իրավունքը համադրելով

թողարկում:

868 Տես ՀՀ սահամանդրական դատարանի որոշումներն օրենքների և այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրականության վերաբերյալ (1996-2010) թթ.-Եր.: «Նժար», 2011, էջ 535:

869 Տես ՀՀՊՏ 2009.05.20/26 (692) , ՀՀՍԴՏ 2(55)2010:

48 հոդվածի 3-րդ մասով նախատեսված մեկ այլ քաղաքական իրավունքի հետ՝ նպատակահարմար ենք գտնում համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք վերապահել ոչ թե միայն Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողներին, այլև՝ Հանրապետության քաղաքացիություն չունեցող մյուս անձանց (ապաստան հայցողներ և օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիներ)՝ ելնելով այն իրողությունից, որ «փախստական» հասկացությունը ոչ միայն սահմանադրաիրավական, այլև ընտրաիրավական ինստիտուտ չէ:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 48 հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեն: Նշենք, որ թեպետ Սահամանդրությամբ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեներին մասնակցելու իրավունքը երաշխավորվում է բացառապես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, այնուամենայնիվ, ընտրելու իրավունքի զարգացման ժամանակակից միտումներին համահունչ՝ վերոհիշյալ հոդվածի 3-րդ մասում սահմանադրական հիմք է նախատեսվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքն օրենքով սահմանելու համար:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց իրավունքը սահմանվել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ դեռևս 1999 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԴՈ-179 որոշմամբ[870]:

Այս որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը արձանագրեց. միջազգային պրակտիկան վկայում է, որ ոչ քաղաքացիների ընտրական իրավունքի հարցում կա այն միտումը, որ տեղական ինքնակառավարման մակարդակում նման իրավունք վերապահվում է զգալի թվով երկրներում: Բնորոշն այն է, որ տեղական ինքնակառավարման ոլորտում ընտրական իրավունքը կապվում է բնակության ցենզի հետ:

Իրացնելով ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված

870 Տե՛ս ՀՀՊՏ 1999/26(92). 19.10.1999, ՀՀՍԴՏ 1999/4:

որոշման պահանջները՝ ՀՀ Ազգային ժողովը 2000 թվականի ապրիլի 5-ին ընդունեց «Ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը[871], որով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք վերապահվեց նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտանիքի վկայականում նշված՝ 18 տարին լրացած յուրաքանչյուր անձի: 2006թ. դեկտեմբերի 22-ի՝ «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով[872] ձևակերպումները որոշակիորեն փոփոխվեցին, և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք վերապահվեց ոչ թե Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտանիքի վկայականում նշված՝ 18 տարին լրացած յուրաքանչյուր անձի, այլ համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող անձանց: 2011 թվականի մայիսի 26-ին ընդունված ՀՀ նոր Ընտրական օրենսգրքի[873] 2 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (ընդգծումը մերն է՝ Ս. Մ.) տեղական ինքնակառավարման ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունենալու դեպքում:

Ինչպես նկատում ենք, օրենսդիրն այլևս չի հիշատակում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց, քանի որ փախստականներին ոչ քաղաքացիներից տարբերելով իրենց իրավական վիճակով ըստ էության նեղացնում են ոչ քաղաքացիների մեջ մտնող անձանց շրջանակը:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2008թ., նոյեմբերի 27-ին[874], ի դեպ, որի ընդունումով ուժը կորցրած է ճանաչվել «Փախստականների մասին» ՀՀ օրենքը), 6 հոդվածի համաձայն՝ փախստական է համարվում այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելիության կամ քաղաքական հայացքների

871 Տե՛ս ՀՀՊՏ 2000/8 (106), 27.04.2000:
872 Տե՛ս ՀՀՊՏ 2007/4.(518), 27.01.2007:
873 Տե՛ս ՀՀՊՏ 2011.06.16 16/36(839):
874 Տե՛ս ՀՀՊՏ 14/2(668), 2009.01:

համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի պատճառով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ[875]:

Հավելենք, որ վերոնշյալ օրենքի արդեն 15 հոդվածում սահմանված է՝ ապաստան հայցողները և փախստականներն ունեն Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ և պարտականություններ:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց շրջանակն անհամեմատ ավելի լայն է, քանզի ընդգրկում է ոչ միայն փախստականներին, այլև ապաստան հայցողներին և օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիներին:

Համամիտ լինելով վերոնշյալ տեսակետների հետ՝ կարծում ենք, որ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չպետք է տրվի միայն փախստականի կարգավիճակ ունեցողներին: Այդ պաշտոնները զբաղեցնելու իրավունքը ՀՀ քաղաքացիների հետ միասին պետք է վերապահվի նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց:

«Համայնքային ծառայության մասին» օրենքի 11 հոդվածի բացթողում կարելի է համարել նաև այն, որ սահմանված չէ երկքաղաքացիների համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքը: Պատճառն այն է, որ ՀՀ երկքաղաքացին Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես ՀՀ քաղաքացի: Դեռ ավելին, ՀՀ երկքաղաքացին օժտված է ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններով ու պատասխանատվությամբ, բա-

875 Նկատենք, որ օրենքը գրեթե տառացիորեն վերարտադրել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի սահմանումը. 2) «այն օտարերկրյա քաղաքացին, որը ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով», 3) «այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որին պաշտոնապես փախստական են ճանաչել Կոնվենցիան ստորագրած այլ պետություններ»:

ցառությամբ միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի («Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13[1] հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր):

Ինչպես արդեն վերը նշվեց, ՀՀ երկքաղաքացին ունի ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար սահմանված բոլոր պարտականությունները և պատասխանատվությունը: Միաժամանակ, օրենսդրությամբ սահմանված են որոշ վերապահումներ. օրինակ՝ բացառություններ կարող են սահմանվել օրենքով կամ միջազգային պայմանագրերով:

Օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդպիսի սահմանափակումներ սահմանված են միայն որոշ պետական հատուկ ծառայությունների ծառայողների[876], ինչպես նաև ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուների համար[877], որը, կարծում ենք, ոչ միայն չի բխում ՀՀ Սահմանադրությունից, այլև, հատկապես ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուների դեպքում, հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Այսպես՝ ՀՀ Ընտրական օրենսգրքի 77 հոդվածի 1-ին մասում նշված է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել այլ պետության քաղաքացի չհանդիսացող, վերջին 10 տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող յուրաքանչյուր ոք: Կամ նույն օրենսգրքի 105 հոդվածին համապատասխան, Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել այլ պետության քաղաքացի չհանդիսացող (ընդգծումները իմն են՝ Ս. Մ.), վերջին 5 տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող յուրաքանչյուր ոք: Փաստենք, սակայն, որ ՀՀ Սահմանադրությունը թե՛ ՀՀ Նախագահի և թե՛ Ազգային ժողովի պատգա-

876 «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ միաժամանակ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում անձը ենթակա է ծառայությունից արձակման (ընդունվել է 2003 թվականի ապրիլի 11-ին, տե՛ս ՀՀՊՏ 2003.05.16/28(263): Նմանատիպ դրույթ է բովանդակում նաև «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման, ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողի կողմից այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում անձը ենթական է ոստիկանությունում ծառայությունից ազատման (ընդունվել է 2002 թվականի հուլիսի 30-ին, տե՛ս ՀՀՊՏ 2002.08.08/32(207):

877 ՀՀ Ընտրական օրենսգրքի 77 հոդվածի 1-ին մասում նշված է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել այլ պետության քաղաքացի չհանդիսացող, վերջին 10 տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի

մավորի համար ընտրությունների ժամանակ ուղղակիորեն պասիվ ընտրական իրավունքի սահմանափակումներ չի նախատեսել: ՀՀ Սահմանադրության 50 և 64 հոդվածներում հստակ սահմանված է, որ ՀՀ Նախագահ (ԱԺ պատգամավոր) կարող է ընտրվել վերջին տասը (հինգ) տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին տասը (հինգ) տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք[878]:

Այս խնդրի կապակցությամբ իրավական դիրքորոշում է հայտնել Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովն (Վենետիկի հանձնաժողով) իր 76-րդ լիագումար նիստում (Վենետիկ, 17-18 հոկտեմբեր, 2008թ.) ՀՀ ընտրական օրենսգրքի 2007 թվականի դեկտեմբերի դրությամբ փոփոխված և լրացված տարբերակի վերաբերյալ համատեղ եզրակացության մեջ[879]:

Մասնավորապես՝ 29-րդ պարագրաֆում նշված է. «ՀՀ Ազգային ժողովը որոշել է ակտիվ ընտրական լիարժեք իրավունքներ ընձեռել (կախված ՀՀ-ում բնակության իրավունք ստանալու հնարավորությունից) լրացուցիչ քաղաքացիություն ունեցող անձանց, սակայն նրանց չի վերապահվել համազգային ընտրություններում ընտրվող պաշտոններում ընտրվելու իրավունք (պասիվ ընտրական իրավունք): Սա հակասում է Բարեխիղճ գործելակերպի կանոնակարգին[880]: Վերոնշյալ հանձնաժողովը նախկինում նշել է, որ ակտիվ ու

հանդիսացող յուրաքանչյուր ոք: Կամ նույն օրենսգրքի 105 հոդվածին համապատասխան, Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել այլ պետության քաղաքացի չհանդիսացող (ընդգծումները մերն են՝ Ս. Մ.), վերջին 5 տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող յուրաքանչյուր ոք: Փաստենք, սակայն, որ ՀՀ Սահմանադրությունը թե՛ ՀՀ Նախագահի և թե՛ Ազգային ժողովի պատգամավորի համար ընտրությունների ժամանակ ուղղակիորեն պասիվ ընտրական իրավունքի սահմանափակումներ չի նախատեսել: Սահմանադրության 50 և 64 հոդվածներում հստակ սահմանված է, որ ՀՀ Նախագահ (ԱԺ պատգամավոր) կարող է ընտրվել վերջին տասը (հինգ) տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին տասը (հինգ) տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: Այս դեպքում նկատի ունենք 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեի միջոցով ընդունված և 2005 թվականի դեկտեմբերի 6-ից գործող ՀՀ Սահմանադրությանը:

878 Այս դեպքում նկատի ունենք 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեի միջոցով ընդունված և 2005 թվականի դեկտեմբերի 6-ից գործող ՀՀ Սահմանադրությանը:

879 Տե՛ս CDL-AD(2008)023, JOINT OPINION ON THE ELECTION CODE OF THE REPUBLIC OF ARMENIA as amended up to December 2007, Adopted by the Venice Commission at its 76th Plenary Session (Venice, 17-18 October 2008):

880 Այս կանոնակարգը սահմանում է, որ համընդհանուր ընտրական իրավունքը տարածվում է թե՛ ակտիվ, թե՛ պասիվ ընտրական իրավունքների վրա: Կարող են որոշակի ցենզեր նախատեսվել ընտրելու և ընտրվելու իրավունքի իրականացման

պասիվ ընտրական իրավունքների սահմանափակումները պետք է վերացվեն: Երբ ընդունվել է երկքաղաքացիության իրավունքը, երկքաղաքացիություն ունեցող անձինք չպետք է ավելի պակաս իրավունքներ ունենան, քան այլ քաղաքացիները, նման սահմանափակումները լայն տարածում չունեն»:

Նույն փաստաթղթի 30-րդ պարբերությունում միաժամանակ նշվում է, որ «բացառություն կարելի է նախատեսել միայն բացառիկ դեպքերի, օրինակ՝ պետության ղեկավարի համար: Նման բացառությունները պետք է նախատեսվեն միայն սահմանադրությամբ»:

Կիսում ենք Վենետիկի հանձնաժողովի տեսակետը՝ հավելելով, որ պետության գլխի համար քաղաքացիության բացառիկության սկզբունքն ընդունելի է ու արդարացված: Կարծում ենք, որ Սահմանադրության 50 հոդվածում վերոնշյալ սահմանափակումը պետք է ուղղակիորեն սահմանված լինի, և եվրոպական իրավունքի տեսանկյունից Վենետիկի հանձնաժողովի վերը նշված պնդումները հիմնավոր են[881]:

Փաստենք, որ Հայաստանի Հանրապետությունը այդպես էլ հաշվի չնստեց Վենետիկի հանձնաժողովի եզրակացության հետ՝ չփոփոխելով ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածները: Դեռ ավելին՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին հանրաքվեի միջոցով ընդունված նոր խմբագրությամբ Սահմանադրությունը ևս խնդրո առարկա հարցը թողեց անփոփոխ:

Կարծում ենք՝ ՀՀ-ի նման պետության համար (նկատի ունենք ոչ պատերազմ ոչ խաղաղություն իրավիճակը) արդարացված է պետական հատուկ ծառայություններում ծառայողների համար ևս միայն ՀՀ քաղաքացիության պահաջի սահմանումը:

Միաժամանակ կարծում ենք, որ երկքաղաքացիների համար ընտրական հավասար իրավունքի սահմանումը ենթադրում է, որ նրանք կարող են օգտվել մեկ այլ քաղաքական՝ հանրային ծառայու-

---

բնագավառում: Որպես կանոն դրանք տարիքն ու ազգային պատկանելիությունն են: Ազգային պատկանելիություն ասելով Բարեխիղճ գործելակերպի կանոնագիրքը նկատի ունի քաղաքացիության պահանջը: Այն սահմանում է, որ քաղաքացիության պահանջը կարող է վիճահարույց լինել, եթե պետությունը դիտավորյալ չի շնորհում դա նրանց, ովքեր բնակվում են այնտեղ սերնդե սերունդ: Կանոնագիրքը միաժամանակ սահմանում է. «Դեռ ավելին, համաձայն Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայի, երկքաղաքացիություն ունեցող անձինք պետք է ունենան նույն ընտրական իրավունքները, ինչպիսին ունեն այլ քաղաքացիները»: Ավելի մանրամասն տես Code of Good Practice in Electoral Matter, Explanatory report, I. 1.1., extract from §6.c.:

881 Տես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջեր 576-577:

թյան անցելու հավասար իրավունքից:

Այսպիսով, ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական հատուկ ծառայությունների մի քանի տեսակների, ինչպես նաև քաղաքական որոշ պաշտոնների (ՀՀ Նախագահ, ԱԺ պատգամավոր) համար է նախատեսված միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիության պահանջը՝ բացառելով այլ պետության քաղաքացիություն (երկքաղաքացիություն) ունենալը:

Հանրային ծառայության այլ տեսակների համար այս սահմանափակումը չի գործում, այլ միայն սահմանվում է, որ ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է համարվում ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելը[882]:

Կարծում ենք, սակայն, որ նպատակահարմար է ոչ թե բոլոր երկքաղաքացիներին վերապահել համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու իրավունք, այլ նրանց, ովքեր մինչև մրցույթի օրն առնվազն վեց ամիս հաշվառված և բնակվում են տվյալ համայնքում: Բնակության ցենզի սահմանումը նպատակ է հետապնդում բացառելու այնպիսի անձանց պաշտոն զբաղեցնելու իրավունքը, որոնք, որպես կանոն, պատկերացում չունեն, թե ինչ մարտահրավերների առջև է կանգնած համայնքային ծառայությունը ընդհանրապես, և տվյալ համայնքը մասնավորապես: Վերոնշյալներին անձը կարող է իրազեկ լինել, եթե գոնե որոշ ժամանակ բնակվում է տվյալ համայնքում:

Այսպիսով, քննարկելով քաղաքացիության ցենզի հետ կապված հիմնախնդիրները՝ որպես համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնելու պարտադիր պայման, պարզվեց, որ Օրենքում առկա են էական բացթողումներ, որոնք կարոտ են օրենսդրական կարգավորման:

SUMMARY

ISSUES OF OCCUPYING VACANT POSITIONS OF THE PUBLIC SERVICE BY PEOPLE HOLDING A STATUS OF REFUGEE

SAHAK MANUKYAN

The work is dedicated to the issues of one of the required conditions

882 Տես «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը (2001թ. դեկտեմբերի 4), (33 հոդվածի 1-ին մասի «ժա» կետ), ՀՀՊՏ 2002.01.09/1(176), «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքը (2007թ. նոյեմբերի 28), (34 հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ), ՀՀՊՏ 2007.12.26/66(590), «Դատախազության մասին» ՀՀ օրենքը (2007թ. փետրվարի 22), (50 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ), ՀՀՊՏ 2007.04.11/19(543):

of occupying vacant positions in the public service, issues of the citizenship. It is stated by law, that the positions of the municipal service can be occupied not only by the citizens of the RA but also by the people holding status of refugee in the RA. Researching international, as well as domestic legislation in detail, a conclusion is made that as in the other types of public service, the positions of the municipal service should be occupied not only by refugee in the RA, but also by RA citizens.

Also it is researched the legal status of the dual citizens, trying to determine if they can occupy the positions of the municipal service or not. It is concluded that a dual citizen of the RA is recognized as a citizen of RA by the Republic of Armenia, as well as dual citizen of the RA has all the obligations and responsibility of the RA citizen, except the cases foreseen by the RA legislation or the international treaties. Even more, RA citizens are equal against the law, not regarding the basis of the acquisition of the citizenship of the RA.

So, it is concluded, that dual citizen has equal rights with RA citizen to occupy the positions of the public (municipal) service, except the cases foreseen by the law.

Key words: *public service, community service, vacancy, competition, a person having the citizenship qualification, a person with refugee status.*

РЕЗЮМЕ
ПРОБЛЕМЫ ЗАНЯТИЯ ВАКАНТНОЙ ДОЛЖНОСТИ ПУБЛИЧНОЙ СЛУЖБЫ ЛЯДМИ ИМЕЮЩИМИ СТАТУС БЕЖЕНЦА

СААК МАНУКЯН

Работа посвящается одной из обязательных условий для занятия вакантной должности публичной службы - проблемы гражданства. Законом установлено, что должности муниципальной службы могут занимать не только граждане РА, но и имеющие статус беженца в территории РА. Подробно изучая международно-правовое, а также внутригосударственное законодательство, делается вывод, что должности муниципальной службы должны занимать только граждане РА, как это установлено в других видах публичной службы.

Изучено также правовое положение лиц с двойным гражданством, пробуя выяснить, могут ли и они занимать должности муниципальной службы, или нет? Выясняется, что лицо с двойным граж-

данством в РА признается только как гражданин РА, а также двойной гражданин РА имеет все обязанности и ответственность РА, кроме случаев предусмотренных законом и международными договорами РА. Более того, граждане РА равноправны, несмотря на основание приобретения гражданства РА.

Делается вывод, что лицо с двойным гражданством, как гражданин РА, имеет равные права занимать должности публичной службы, кроме случаев, которые установлены законом.

Ключевые слова: *общественная служба, вакансии, конкурс, квалификация гражданства, статус беженца.*

POLISH PIONEERS OF FILM EDUCATION. A CONTRIBUTION TO THE HISTORY OF POLISH FILM SOCIOLOGY

MAREK SOKOŁOWSKI
Professor, Chair of Sociology
University of Warmia and Masuria in Olsztyn

1. Bolesław Matuszewski (1856 – ca.1943)

Although we are not a global pioneer in the educational use of the film, we are entitled to claim the leadership in the field of creating the theoretical basis of film production. Already in 1898, thus three years after the first public screening of "Animated Photographs", Boleslaw Matuszewski (1856 - ca. 1943), the court photographer and cinematographer of Tsar Nicholas II, in the pages of Parisian "Le Figaro" advocated and anticipated the establishment of Repository of Historical Cinematography designed to collect, store and disseminate films documenting important historical events[883]. From today's perspective, these actions are considered as a typically educational project, serving not only the historical education through film, but also the innovative form of media education of contemporary audience of the first cinematographic productions. Matuszewski in the same year published in France a collection of philosophical treatises "New Source of History" and "Animated Photography, What It Is and What It Should Be", in which he argued that the film is an excellent historical source due to the fact that the film as a medium can reproduce and preserve the reality in the form of images

883 I.Kurz, (edit.), Film i historia. Antologia, Warszawa 2008.

and relatively accurately describe it, but also disclose and communicate to its recipients this what was not achievable with the use of other, traditional writing media[884]. From the past time perspective, the novelty of this type of interpretation of the film amazes, as for many years film was not appreciated, and was not only denied any artistic value, but the first filmmakers were even blamed for creating vulgarity, lack of any aesthetic criteria that would motivate their work, entertaining role, fairground pedigree of the new art dominated by dubious circus and cabaret entrepreneurs, wandering jugglers and actors displaying their skills at fairs, festivals, rural markets and town squares. Views and postulates proclaimed by Boleslaw Matuszewski[885] are nothing more than a proposal to create a modern film archive or film library, collecting unusual for the times documents, in a form of first movies, still underestimated back then, treated mostly as a technological innovation, interesting only to hungry for entertainment uncouth mob who cannot afford to go to the theater or opera, while they can afford a relatively cheap ticket to the circus or cinematographic show. Philosopher, art historian and aesthetician Mieczysław Wallis (1895-1975), described the first reaction of the aesthetics to the film, as embarrassment that was caused by a German aesthetician Konrad Lange (1855-1921), who expressed his belief that the film is not and never will be an art, and upheld this view even in 1920, thus during the time when the artistic means of cinematographic expression were already well shaped[886].

2. Karol Irzykowski (1873-1944)

The reversal of the negative trends lasted several decades and significant role in this process was played by the philosopher and aesthetician Karol Irzykowski (1873-1944), whose book "The 10th Muse - Aesthetic Issues of the Cinema", published in 1924 was an innovative work not only in the aesthetics of the film, but also an avant-garde of film education of spectators, who should demonstrate an elementary knowledge of the art of film prior to the arrival at the film screening. With the publication of this book, for the first time in the history of world cinematography the movie has become the object of scientific inquiry, reflection and analysis, because until the release of the groundbreaking work by Irzykowski, cin-

884 M.Kuźmicki, Bolesław Matuszewski – pionier odkrywany na nowo, „Kino" 1996, no. 5.
885 B.Matuszewski, Bolesław Matuszewski i jego pionierska myśl filmowa (dokumenty i wstępne komentarze), Warszawa 1980.
886 M.Wallis, Odkrycie filmu, „Przegląd Filozoficzny" 1949, no. 3.

ema was considered tawdry entertainment unworthy of devoting time and the more - scientific reflection. The philosopher and aesthetician wrote: "It made me happy to think of the cinema as an area still untouched by thinkers. That what I sometimes read in professional journals was mostly advertising or aesthetic dilettantism. [...] I do not have to draw from the literature sources, because I am the source. I declare that my work has no predecessors, that it comes out with a completely new idea, and is ready to compete for preeminence with all other attempts to explore the problems of cinematography, wherever they arise. In Los Angeles, London or Paris"[887]. An impressive range of Irzykowski's considerations pointed to new areas of research in the fledgling film criticism and began the development of a new research discipline that in the future would become film studies. Significantly, Irzykowski in its scientific argumentation when describing "The Aesthetic Issues of the Cinema", drew attention to the problems inherent to the whole art of the twentieth century, including the dependence of man on the cultural and civilizational environment and the deepening division of art into the elitist and popular art.

In book "The Death of the Cinematograph?" (1913) Irzykowski feared and loathed the very idea of talking film. He also made it clear that he distrusted any change in cinema, which for him had already experienced a "death" by 1913 with the experimental addiction of synchronized sound. Every encounter of film with modern notions of industrialization and progress provoded suspicion and bitterness in Irzykowski. To him, film was otherworldly, spiritual, a phenomenon thad could capture light and slow down the ocean's waves. XXX 6

The issue of educational application of film in school in Poland was discussed since regaining the independence. In 1919 the poet as well as theater and film critic, Jan Sokolicz-Wroczyński, published one of the first articles on the subject, proposing educators to closely follow the development of cinematography, being aware that the cinema is slowly becoming one of the most popular forms of entertainment among pupils[888]. As I wrote in 1994, analyzing the progress of film education in Poland at the end of the twentieth century, already in the interwar period we were very diligent observers and popularizers of theoretical foreign

887 K.Irzykowski, X Muza – zagadnienia estetyczne kina, Warszawa 1977, p. 26-28. 6 S. Skaff, The Law of the Looking Glass : Cinema in Poland, 1896-1939, Ohio University Press, 2008.

888 J. Sokolicz-Wroczyński, Kinematograf w szkole, „Kino" 1919, no. 8, p. 66-67. See also J.Bocheńska, Polska myśl filmowa do roku 1939, volume 2, Wrocław 1974, p. 68-72.

thoughts on our territory, as numerous pedagogical journals, and particularly "Oświata I Wychowanie" ("Education and Parenting") reported the development of film outside the Republic of Poland and informed about the discussions published in the foreign press, believing that news popularized among teachers will be important for the possible onset of introducing the film to schools in Poland[889]. This type of publication included, e.g., a description of the book by cinema historian William Henry George "The Cinema in School" (1935), showing the British experience in this field, yet completely unimplemented in our country[890]. Teachers did not appreciate the importance of the film in the process of modern education. Film was treated as a "thief of time" of youth, distracted from school by theater houses, shaping bad taste, propagating licentiousness and "moral rot", shocking with scenes full of sex and violence. At the same time, the cinema was a cumbersome technical novelty, which had to be painstakingly acquainted with by self-studies. Although already in 1929 voices were heard promoting the introduction of film didactics to teacher training institutions, they remained unnoticed without finding true enthusiasts, fearing to experiment with film in conservative realities of the Polish education of the years 1919-1939.

Tracking the first statements formulated by educators about the film, usually misunderstanding of the nature of the new medium can be noticed, perceived rather in terms of the new enemy that should be fought than a potential ally, whose support can be very useful in the process of teaching and learning children and youth. Timid voices of educators, advocating the use of film in education, were difficult to hear, dominated by the vast majority of views stating that the film has a detrimental effect on young people. The words of Wincenty Sierakowski may serve as a characteristic statement, which refer to the unknown studies, where he wrote: "Observations of educators, criminal statistics and research, and not less theoretical investigations of psychologists argued convincingly that the brilliance and one-sidedness of the impact of cinematographic productions on the soul of man, even for an adult, presents a great moral danger, let alone for young people"[891]. Promoting this type of opinion

889 M. Sokołowski, Film w obszarze zainteresowań pedagogiki, [in:] S.Kawula, A.Moździerz, (edit.) O nowy model wychowania. Część pierwsza (potrzeby i możliwości), Olsztyn 1994, p. 211-223.

890 (J. Mirski) JM, Z literatury filmowej, omówienie pracy W.H.George'a „The Cinema in School", London 1935, „Oświata i Wychowanie" 1937, p. 405-407.

891 W. Sierakowski, Kinoteatr a młodzież, „Miesięcznik Pedagogiczny" 1916, p. 16.

did not serve well the proposal of the possible introduction of film classes in school. It also hampered the film business entrepreneurs, running the cinemas, harassed by all types of commands and prohibitions, as to which category of recipients specific screenings should be directed. However, bypassing by cinema owners many rules concerning the distribution of films to general public and care about proper attitudes of youth, prompted the Ministry of Internal Affairs of the Austrian Empire already in 1912 to issue a regulation on the cinema theaters. It enacted censorship committee, which task was to opinion on films. In addition, it forbade the admission of film projections, "[...] if the thing presented justifies the essence of misdeed, if it may endanger the public tranquility and order or violates decency and good manners." However, for viewers under 16 years of age, it was recommended to prohibit the screenings if the film could have negative moral and intellectual effect[892]. Probably most of these interventions, efforts and concerns directed towards the protection of endangered moral education of young people were ineffective against the spontaneous development of cinema networks and the increasing popularity of leisure in the cinema. Therefore, in 1918, educator Ludwik Skoczylas (1881-1961), stated with regret, admitting at the same time educational defeat: "Educational systems of famous authors of pedagogy, are today replaced by cinema entrepreneurs. Who does not believe, let him do the test. Let him visit all cinema theater businesses, let him be informed by entrepreneurs. Who mainly visits their halls? The audience is our school youth"[893]. The quoted author emphasized in the characteristic stylistic manner of contemporary publications that cinema does not develop feelings but wild instincts, it simplifies and strips of the value of the adapted literary works, chasing sensationalism and thanks to it attracts a young recipient susceptible to the influence. The study conducted by Skoczylas among junior secondary school pupils largely confirmed his opinions on film, because students admitted the fascination with the cinema and the desire to imitate the characters and watched motion pictures. They said that it would cosmopolitanise tastes and habits of youth, destroy respect for the values and moral standards. Only one of the students of the upper class of secondary school expressed the belief that the film entertains and teaches intelligent young people resourceful-

892 Cited after: B. Kulka, Media a młodzież, [in:] Wyzwania pedagogiki medialnej – nowe perspektywy XXI wieku, (edit.) M. Sokołowski, Olsztyn 2000, p. 287.
893 L. Skoczylas, Kinoteatr. Nowy wróg młodzieży, Lwów 1918, p. 6.

ness, and thus does not pose a threat to them.

In such a specific atmosphere, shaped in the sense of fight with the enemy threatening the pupils, most educational debates were carried out during the interwar period. Another thing was the fact that the contemporary artistic offer of the Polish cinema was miserable and could not compete with the outstanding works of world cinematography. This resulted in part from the fact that Polish cinematography was a completely private industry, oriented only to gain maximum profit in the shortest possible time. Its main task was primarily providing unsophisticated entertainment, preferably in the form of simple in the making comedy films, which had a significant impact on the shape of the entire domestic film production, negatively evaluated by critics[894]. Another limitation resulted from technology, an audio breakthrough that accompanied the cinematography in the thirties was a technical phenomenon, thanks to which the Polish cinema of those years became obsolete. The rapid development of the economic crisis, which started in 1929, has caused the sound revolution in Poland to take place with several years of delay in comparison to other countries and European cinematographies[895]. At the same time, the thirties brought to Poland a new type of cinema, called "industry cinema", oriented to meet the expectations of the domestic audience, not expecting artistic ecstasy, but a solid portion of simple entertainment, created by the heads of shooting stages, producers and cinema owners, and not the environment of filmmakers, i.e., directors and cinematographers, screenwriters and actors. As novelist and screenwriter Ludwik Starski (1903-1984), reminisced after years: "The industry has not enjoyed a good reputation. Neither of the authorities, of which the matter of cinematography came under control, nor of the social circles interested in film as an art form [...]". The industry was accused of profiteering, fabricating trash art on an industrial scale, cynicism and lack of competence, in total - the devastation of art, which in other countries managed to achieve the level worthy of recognition"[896]. Hence, it is not hard to understand that when the only choice was this type of production, many educators assumed that it is safer to isolate young people from the film in order not to be subject to criticism and listen to

894 T. Lubelski, Ilustrowana historia kina polskiego, Chorzów 2008, p. 62.
895 See M. Hendrykowska, Kronika kinematografii polskiej 1895-1997, Poznań 1999.
896 L. Starski, Niedokończone wspomnienia [in:] Starski, droga do Oscara. Historia dwóch pokoleń filmowych, (edit.) S. Zawiślański, Warszawa 1998, p. 25.

statements about the dissemination of kitsch, the destruction of aesthetic values and the promotion of entertainment of dubious quality.

The issue of film education, known in the early publications as application of the film in school, despite the discussion that began in the post-war period in Western Europe, passed over the Polish pedagogical thought of the fifties, highly ideological and subjected to indoctrination. However, the emergence of new trends and directions in film, such as Italian neorealism, showing a natural outdoor-scenery, non-professional actors, portrayed in the works revealing previously unknown picture of Italy, full of conflict, poverty and human dramas, the Russian formalist school, American "film noir" portraying gangsters, police and private investigators, the French "new wave" and in the end the Polish film school caused that the artistic, aesthetic and educational role of cinema has been recognized. The diversity of genres and film types, narrative methods, craftsmanship of acting, the role of scenery and costumes, lighting of the set, the use of music in film, camera work, personality of film director, seen as the main creator of a film, caused that a sense of the value of the film was raising, it was not underestimated anymore, and increasingly appreciated. The reception of film, like any work of art in the form of music, painting, theater or literature, had to be learned.

3. Bolesław W. Lewicki (1908- 1981)

The initiative in this regard came from the circle of film scholars, a part of the Polish center of film studies at the Lodz Film School, where under the supervision of Professor Bolesław W. Lewicki began to shape the foundations of the future model of film education of youth, seen as education to become a part of the curriculum of the aesthetic education of students[897].

Bolesław Włodzimierz Lewicki (1908-1981), studied Polish philology at the Jan Kazimierz University in Lviv in 1926-1931. Already at the start of his studies, he was interested in film, and despite a classical philological education, he transitioned fairly smoothly into film research, proving with his earlier works, "Młodzież przed ekranem" ["Youth in front of the screen"] (1934) and "Film w nauce i szkole" ["Film in learning and school"] (1938), that cinema, not literature, had become the object of

897 Z. Gawrak, Wychowanie a wulgarny dydaktyzm w filmie, „Kwartalnik Filmowy" 1955, no. 1, and by the same author: Spór łódzki, czyli o różnych funkcjach społecznych kina, „Kwartalnik Filmowy" 1955, no. 4.

his scholarly passion, to which he dedicated several decades of his life.

As Jan Rek states[898] in the extensive essay devoted to the figure of B.W. Lewicki, which became the basis for this study on the Professor, the above-mentioned works were an example of "applied film studies", since Lewicki perceived film not only as a new art, but also as one of the tools or instruments that could change the traditional character of the didactic process. This conviction came from the experience gained from school practice, since Lewicki worked as a teacher of Polish in the Lviv middle and secondary school in 1933-1938. He was a member of and an editor of a number of magazines, as well as a theatre and film reviewer. He served in the role of a film critic beginning in 1930, discussing the repertoire of Lviv cinemas in *Słowo Polskie* and *Gazeta Lwowska*. In 1932-1939, he had a regular radio show about film on Polish Radio in Lviv. Thanks to Lewicki's efforts, the film club "Awangarda" was established in Lviv in 1932, with the young cinema enthusiast becoming first secretary and then president. "Awangarda" alluded to the traditions of French film clubs of the 1920s, attempting to promote artistic, mature, and cognitively valuable cinema. At the same time, an academic seminar on the art of film began at the Jan Kazimierz University, led by Roman Ingarden. Lewicki's article, "Budowa utworu filmowego" ["The construction of a cinematographic work"], published in 1935, introduced for the first time the foundations of the concept of layered organisation of a film, a theory the scholar improved and modified over the years, all the while maintaining its scheme until the end.

After the war, in 1947, he was appointed programme director of the Łódź Film Studio. In 1948, the Łódź Film School was founded, and Lewicki was one of its founders and lecturers, serving many functions until he became its rector in 1968-1971. However, it was not the administrative roles that decided the importance and position of B.W. Lewicki in Polish film education, but the start of his career at the University of Łódź, where as a professor in 1970, he became the director of the Department of Film Knowledge, proving that research work was his true vocation and the great passion of his life.

In 1964, Lewicki's most important work was published – *Wprowadzenie do wiedzy o filmie* [*The Introduction to Film Knowledge*]. Along with *Gramatyka języka filmowego* [*Grammar of the Film Language*] (1959)

898 J. Rek, Profesor Bolesław Włodzimierz Lewicki – między filmem i literaturą, „Acta Universitatis Lodzensis, Folia Litteraria Polonica", no. 9, Łódź 2007, p. 333-340.

and *Problematyka rodzajów i gatunków w sztuce filmowej* [*Discussion of Film Types and Genres*] (1960), as well as the book *Scenariusz. Literacki program struktury filmowej* [*Screenplay: The Literary Programme of Film Structure*] (1960) and the paper "Obrazowość poetycka. Uwagi z pogranicza teorii poezji i filmu" ["Poetic imagery: notes from the border of theory of poetry and film"] (1976), it comprised the basic interpretation of his views of film as a work of art, deeply rooted in contemporary culture. Throughout the entire period of his professional activity, Lewicki was interested in the issue of reception of film by youth, and the use of film both as a teaching aid and an autonomic work, analysed and interpreted, for example in the context of Polish language classes. He devoted a manual addressed to teachers to this issue – *Kino i telewizja* [*Cinema and Television*] (1977) – which included the paper "Filmoznawstwo – nauka i kierunek kształcenia" ["Film Studies: the science and direction of education"]. Beginning in 1978, when he retired, until his death in 1981, he was a lecturer at the University of Gdańsk. It was thanks to his efforts that film became a subject of professional research in Poland, entering the curriculum of secondary schools (film adaptations of literary classics), and film studies became an independent academic discipline.

